ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ՆՈՅԵՄԲԵՐ 2018

Լիահոնա

Գերագույն Համաժողովի Ելույթները

Հիսուս Քրիստոս. Հիմնական դերը մեր կյանքում և Եկեղեցու անունը

Նոր ուսումնական ծրագիրը և կիրակի օրվա օրակարգը. Տանը և Եկեղեցում ավետարանի ուսուցումը հավասարակշռելու նոր մոտեցում

Հայտարարվել են 12 նոր տաճարներ

Դարձ ի շրջանս յուր,
Ջենեդի Փեյջ

«Այսօր, իմ սրտի ողջ հույսով, հորդորում եմ ձեզ աղոթել, որպեսզի ճանաչեք ձեր հոգևոր պարգևները՝ *զարգացնելով, կիրառելով և մեծացնելով դրանք ավելի շատ, քան երբևէ ունեցել եք: Այդպես վարվելով, դուք կփոխեք աշխարհը:*

Իմ սիրելի քույրեր, մենք ձեր *կարիքն ունենք: Մենք* ձեր *ուժի,* ձեր *դարձի,* ձեր *համոզմունքի,* ձեր *ղեկավարելու ունակության,* ձեր *իմաստության և* ձեր *ձայների կարիքն ունենք: Մենք, պարզապես, չենք կարող հավաքել Իսրայելն առանց ձեզ:*

Ես սիրում եմ ձեզ, շնորհակալություն եմ հայտնում ձեզ և օրհնում եմ, որ կարողանաք հեռու մնալ աշխարհիկից՝ այս կարևոր և հրատապ աշխատանքին աջակցելիս: Միասին մենք կարող ենք անել այն ամենը, ինչ մեր Երկնային Հայրն է ակնկալում մեզանից, որպեսզի աշխարհը նախապատրաստենք Նրա Որդու Երկրորդ Գալուստին»:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոն, «Քույրերի մասնակցությունը Իսրայելի հավաքման գործում», 69, 70:

© JENEDY PAIGE, ԲԱԶՄԱՑՆԵԼՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

Բովանդակություն Նոյեմբեր 2018

Հատոր 19 • Համար 4

Շաբաթ առավոտյան նիստ

6 **Ներածական ելույթ**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

8 **Հաստատուն և հարատև դարձ դեպի Երկնային Հայրը և Տեր Հիսուս Քրիստոսը**
Երեց Քվենթին Լ. Քուք

12 **Բարձրացրու գլուխդ և ուրախացիր**
Մ. Ջոզեֆ Բրոու

15 **Դնելով մեծ աշխատանքի հիմքը**
Երեց Սթիվեն Ռ. Բանգերթեր

18 **Մի խռովվեք**
Երեց Ռոնալդ Ա. Ռասբանդ

21 **«Որ ամեն բան բովանդակուի Քրիստոսումը»**
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար

25 **Ճշմարտությունը և ծրագիրը**
Նախագահ Դալլին Հ. Օուքս

Շաբաթ ցերեկային նիստ

28 **Եկեղեցու պաշտոնյաների հաստատում**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

30 **Կայուն և հաստատուն Քրիստոսի հավատքում**
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն

34 **Եկ, լսիր ձայնը մարգարեի**
Եպիսկոպոս Դին Մ. Դեյվիս

37 **Մեկ ենք Քրիստոսում**
Երեց Ուլիսես Սոարես

40 **Մեր հավատի կրակը**
Երեց Ջերիթ Վ. Գոնգ

43 **Բոլոր մարդիկ պետք է իրենց վրա վերցնեն անունը, որը տրված է Հորից**
Երեց Փոլ Բ. Փայփեր

46 **Հավատացեք, սիրեք, գործեք**
Երեց Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Կանանց գերագույն նիստ

50 **Նրա համար**
Ջոյ Դ. Ջոնս

52 **Սուրբ դժգոհություն**
Միշել Դ. Քրեյգ

55 **Անշահախնդիր ծառայության ուրախությունը**
Քրիստինա Բ. Ֆրանկո

58 **Կանայք և ավետարանի տնային ուսումնասիրությունը**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

61 **Ծնողները և երեխաները**
Նախագահ Դալլին Հ. Օուքս

68 **Քույրերի մասնակցությունը Իսրայելի հավաքման գործում**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Կիրակի առավոտյան նիստ

71 **Մահացածների փրկագնման տեսիլքը**
Նախագահ Մ. Ռասսել Բալլարդ

74 **Հովիվ դառնալ**
Բոնիի Հ. Քորդոն

77 **Հաշտության սպասավորությունը**
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

80 **Մորմոնի Գրքի դերը դարձի գալու գործում**
Երեց Շեյն Մ. Բոուեն

83 **Խոցվածը**
Երեց Նիլ Լ. Անդերսեն

87 **Եկեղեցու ճիշտ անունը**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Կիրակի ցերեկային նիստ

90 **Փորձիր, փորձիր, փորձիր**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

93 **Հայրը**
Բրայըն Ք. Էշթոն

97 **Մեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը**
Երեց Ռոբերտ Ք. Գայ

101 **Կամենու՞մ ես առողջ լինել**
Երեց Մեթյու Լ. Քարփենթեր

104 **Ընտրեք այս օրը**
Երեց Դեյլ Գ. Ռենլանդ

107 **Հիմա է ժամանակը**
Երեց Ջեք Ն. Ջերարդ

110 **Հոգիներին հովվություն անել**
Երեց Գարի Ի. Սթիվենսոն

113 **Դառնալ օրինակելի Վերջին Օրերի Սրբեր**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

64 **Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորները և Բարձրագույն Պաշտոնյաները**

115 **Համաժողովի պատմությունների ցուցիչ**

116 **Եկեղեցու նորությունները**

121 ***Եկ, հետևիր ինձ. Երեցների Քվորումի և Սփոփող Միության համար***

188-րդ կիսամյա գերագույն համաժողով

Շաբաթ առավոտ, 6 հոկտեմբերի, 2018թ., գերագույն նիստ
Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացման աղոթք՝ Երեց Քրեյգ Ա. Քարդոն
Փակման աղոթք՝ Երեց Աղիլսոն դե Փոլա Պարելլա
Երաժշտությունը՝ Տաճարային Հրապարակի Թաբերնաքլի երգչախումբ, խմբավարներ. Մաք Վիլբերգ և Ռայան Մըրֆի, երգեհոնահարներ. Բրայան Մաթիաս և Ռիչարդ Էլիոթ. “Guide Us, O Thou Great Jehovah,” *Hymns,* no. 83; “The Morning Breaks,” *Hymns,* no. 1, arr. Wilberg; “If I Listen with My Heart,” DeFord, arr. Murphy; “High on the Mountain Top,” *Hymns,* no. 5; “I Will Follow God’s Plan,” *Children’s Songbook,* 164–65, arr. Hofheins; “Come, Come, Ye Saints,” *Hymns,* no. 30, arr. Wilberg.

Շաբաթ ցերեկ, 6 հոկտեմբերի, 2018թ., գերագույն նիստ
Վարող՝ Նախագահ Դալլին Հ. Օուքս
Բացման աղոթք՝ Շերոն Լ. Յուբանկ
Փակման աղոթք՝ Երեց Ջոնի Լ. Քոչ
Երաժշտությունը՝ Պրովոյի Միսիոներների Պատրաստման Կենտրոնի միացյալ երգչախումբ, խմբավարներ՝ Ռյան Էգեթ և Էլմո Քեկ, երգեհոնահարներ՝ Լինդա Մարգեթս և Բոննի Գուդլիֆ, “Hark, All Ye Nations!” *Hymns,* no. 264, arr. Schank; medley: “I Will Be Valiant,” *Children’s Songbook,* 162, and “The Church of Jesus Christ,” *Children’s Songbook,* 77, arr. Warby; “Called to Serve,” *Hymns,* no. 249; “Hope of Israel,” *Hymns,* no. 259, arr. Schank.

Շաբաթ երեկո, 6 հոկտեմբերի, 2018թ., կանանց գերագույն նիստ
Վարող՝ Ջին Բ. Բինգհեմ
Բացման աղոթք՝ Մեմնեթ Լոպեզ
Փակման աղոթք՝ Ջեննեֆեր Ֆրի
Երաժշտությունը՝ Երիտասարդ կանանց երգչախումբ Փլեզանթ Գրով (Յուտա) ցցերից, խմբավար. Թրեյսի Վորբի, երգեհոնահար. Բոննի Գուդլիֆ. “Come, Ye Children of the Lord,” *Hymns,* no. 58, arr. Warby; “This Is the Christ,” Faust, Pinborough, and Moody; “Now Let Us Rejoice,” *Hymns,* no. 3; “We’ll Bring the World His Truth,” *Children’s Songbook,* 172–73, arr. Warby.

Կիրակի առավոտ, 7 հոկտեմբերի, 2018թ., գերագույն նիստ
Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացման աղոթք՝ Երեց Ալլան Ֆ. Փաքեր
Փակման աղոթք՝ Երեց Դոնալդ Լ. Հոլսթրոմ
Երաժշտությունը՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավար. Մաք Վիլբերգ, երգեհոնահարներ՝ Ռիչարդ Էլիոթ և Էնդրյու Անսվորթ. “Rejoice, the Lord Is King!” *Hymns,* no. 66; “Redeemer of Israel,” *Hymns,* no. 6, arr. Wilberg; “Choose the Right,” *Hymns,* no. 239, arr. Wilberg; “We Thank Thee, O God, for a Prophet,” *Hymns,* no. 19; “His Voice as the Sound,” American folk hymn, Walker, arr. Wilberg; “It Is Well with My Soul,” Spafford and Bliss, arr. Wilberg.

Կիրակի ցերեկ, 7 հոկտեմբերի, 2018թ., գերագույն նիստ
Վարող՝ Նախագահ Դալլին Հ. Օուքս
Բացման աղոթք՝ Երեց Գարի Բ. Սաբին
Փակման աղոթք՝ Երեց Մայքլ Ջոն Ու. Թեհ
Երաժշտությունը՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավարներ. Մաք Վիլբերգ և Ռյան Մըրֆի, երգեհոնահարներ՝ Էնդրյու Անսվորթ և Բրայան Մաթիաս. “In Hymns of Praise,” *Hymns,* no. 75, arr. Murphy; “I Believe in Christ,” *Hymns,* no. 134, arr. Wilberg; “Glory to God on High,” *Hymns,* no. 67; “Our Prayer to Thee,” Nelson and Parry, arr. Wilberg.

Համաժողովի ելույթները մատչելի են
Գերագույն համաժողովի ելույթները տարբեր լեզուներով մատչելի են համացանցում՝ conference.lds.org կայքում, որտեղ կարող եք ընտրել լեզուն: Ելույթները մատչելի են նաև Gospel Library բջջային հավելվածում: Գերագույն համաժողովի մասին տեղեկությունները հաշմանդամություն ունեցող անդամների համար հասանելի ձևաչափերով առկա են disability.lds.org-ում:

Կազմի վրա
Դիմերեսի կազմ. *Աշխարհի Լույսը* (2015), ըստ Վորթեր Ռեյնի, կրկնօրինակման ենթակա չէ:
Դարձերեսի կազմ. Լուսանկարը՝ Քոդի Բելլի

Համաժողովի լուսանկարները
Սոլթ Լեյք Սիթիում լուսանկարել են. Քոդի Բել, Ջանե Բինգհեմ, Մեյսոն Քոբերլի, Վեսթոն Քոլթոն, Բրայան Նիքլսոն, Լեսլի Նիլսոն, Մեթ Ռեյեր և Քրիստինա Սմիթ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018 ՀԱՏՈՐ 19 ՀԱՄԱՐ 4
ԼԻԱՀՈՆԱ 14853 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Հենրի Բ. Այրինգ

Տասներկու Առաքյալների Քվորում. Մ. Ռասսել Բալլարդ, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն, Ռոնալդ Ա. Ռասբանդ, Գարի Է. Սթիվենսոն, Դեյլ Գ. Ռենլանդ, Գերիթ Վ. Գոնգ, Ուլիսես Սոարես

Խմբագիր. Ռենդի Դ. Ֆանկ
Խորհրդատուներ. Բրայան Ք. Էշթոն, Ռանդալ Ք. Բաններթ, Բեքի Քրեյվեն, Շերոն Յուբենկ, Քրիստինա Բ. Ֆրանկո, Դոնալդ Լ. Հոլսթրոմ, Էրիկ Վ. Կոպիչկե, Լին Գ. Ռոբինս

Գլխավոր տնօրեն. Ռիչարդ Ի. Հիթն
Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Ալան Ռ. Լոյբորգ
Գործարար ղեկավար. Գարֆ Քենոն

Գլխավոր խմբագիր. Աղամ Ս. Օլսոն
Գլխավոր խմբագրի օգնական. Ռայան Քար
Հրապարակման օգնական. Ֆրանսիսկա Օլսոն
Գրողներ և խմբագրողներ. Մարիսա Դենսիս, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Լորի Ֆուլեր, Գարեթ Հ. Գարֆ, Ջոն Ռայան Ջենսեն, Շաղլոտ Լարկաբալ, Մայքլ Ռ. Մորիս, Էրիկ Բ. Մըրդոք, Սալի Ջոնսոն Օդեքիրկ, Ջոշուա Ջ. Փերկի, Յան Փինբորո, Ռիչարդ Մ. Ռոմնի, Մինդի Սելու, Չեյքել Ուորդլեյ, Մարիսա Վիդիսոն

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն
Արվեստի տնօրեն. Թեդ Ռ. Փեթերսոն
Ձևավորում. Ջանեթ Էնդրյուս, Ֆեյ Պ. Անդրուս, Մենդի Բենթլի, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Չայլդ, Ջոշուա Դենիս Դեյվիդ Գրին, Քուլին Հինքլի, Էրից Պ. Ջոնսեն, Սյուզան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մույ, Էմիլի Չիկո Ռեմինգտոն, Մարք Վ. Ռոբիսոն, Բրեդ Թիըր, Կ. Նիկոլ Վոլկենհորստ

Մտավոր սեփականության համակարգող.
Քոլեթ Նեբեքեր Օն
Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս
Հրատարակում. Իռա Գլեն Ադեյր, Ջուլի Բըրդեթ, Թոմաս Գ. Քրոնին, Բրայըն Վ. Գիջի, Գինսի Ջ. Նիլսոն, Մարիսա Մ. Սմիթ
Նախատպագրություն. Ջոշուա Դենսիս, Ամմոն Հարիս
Տպագրության տնօրեն. Ստիվեն Տ. Լյուիս
Բաշխման տնօրեն. Թրոյ Ռ. Բարքեր

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար այցելեք store.lds.org կամ դիմեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոն կամ ծխի/ճյուղի ղեկավարին:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝ liahona.lds.org; էլ-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ *Liahona,* Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թամիլ, թայերեն, թելուգու, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, լատիշերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորերեն, հաիթերեն, հայերեն, հինդի, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամորեն, սինհալա, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբերվում է ըստ լեզուների:)

© 2018 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Հեղինակային իրավունք. Եթե հատուկ նշված չէ, Լիահոնայի նյութերը կարելի է բազմացնել անձնական ոչ կոմերցիոն նպատակով օգտագործելու համար (այդ թվում Եկեղեցու կոչումների համար): Այդ իրավունքը կարող է ցանկացած ժամանակ սահմանափակվել: Տեսողական նյութերը չեն կարող բազմացվել, եթե սահմանափակումներ են նշված տվյալ աշխատանքի նկարագրական տողում: Հեղինակային իրավունքի հետ կապված հարցերը պետք է ուղղել. Intellectual Property Office, 50 E. North Temple St., L13, Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada: November 2018 Vol. 19 No. 4. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address must be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 507.1.5.2). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

Խոսնակների ցուցիչ

Այրինգ, Հենրի Բ., 28, 58, 90
Անդերսեն, Նիլ Լ., 83
Բալլարդ, Մ. Ռասսել, 71
Բանգերթեր, Սթիվեն Ռ., 15
Բեդնար, Դեյվիդ Ա., 21
Բոուեն, Շեյն Մ., 80
Բրոու, Մ. Զոզեֆ, 12
Գայ, Ռոբերտ Ս., 97
Գոնգ, Ջերիթ Վ., 40
Դեյվիս, Դին Մ., 34
Էշթոն, Բրայըն Կ., 93
Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 77
Նելսոն, Ռասսել Մ., 6, 68, 87, 113
Ուխդորֆ, Դիտեր Ֆ., 46
Ջերարդ, Ջեք Ն., 107
Ջոնս, Ջոյ Դ., 50
Ռասբենդ, Ռոնալդ Ա., 18
Ռենլանդ, Դեյլ Գ., 104
Սթիվենսոն, Գարի Ի., 110
Սոարես, Ուլիսես, 37
Փայփեր, Փոլ Բ., 43
Քարփենթեր, Մեթյու Լ., 101
Քորդոն, Բոննի Հ., 74
Քուք, Քվենթին Լ., 8
Քրեյգ, Միշել Դ., 52
Քրիստոֆերսոն, Դ. Թոդ, 30
Օուքս, Դալլին Հ., 25, 61
Ֆրանկո, Քրիստինա Բ., 55

Թեմաների ցուցիչ

Ակտիվացում, 110
Աղոթք, 58
Անհատական արժանավորություն, 74, 97
Աշակերտություն, 12, 43, 46, 52
Ապաշխարություն, 25, 101, 104
Առաջնահերթություններ, 107
Աստվածային էություն, 68
Ավանդույթներ, 15
Բարություն, 61
Բժշկում, 46, 83, 97, 101
Գթություն, 55, 58, 90
Դատել, 97
Դարձ, 8, 21, 30, 37, 80
Եկեղեցու անունը, 87, 113
Երեխաներ, 15, 25, 61
Երիտասարդներ, 74
Երկնային Հայր, 25, 40, 93, 104
Զոհաբերություն, 55
Ընկերակցություն, 37
Ընկերություն, 37, 74
Ընտանեկան երեկո, 8
Ընտանիք, 6, 8, 15, 25, 58, 61, 113
Իսրայելի հավաքումը, 21, 68, 74, 80
Իսրայելի տուն, 68
Լրատվամիջոցներ, 68
Խաղաղություն, 18, 77, 83
Ծառայություն, 37, 40, 50, 52, 55, 74, 97
Ծնողներ, 15, 61
Կամքի ազատություն, 25, 104
Կատարելագործում, 40
Հալածանք, 83
Հաղորդություն, 8, 43, 90
Հայտնություն, 18, 34, 80
Հանգստության օր, 8
Հաշտվել, 77
Հավատք, 6, 15, 18, 21, 25, 30, 40, 52, 83, 90, 104, 113
Հարություն, 71, 93
Հեռանկար, 68, 107
Հետևել մարգարեին, 34
Հիսուս Քրիստոս, 6, 8, 12, 15, 18, 21, 25, 30, 34, 37, 40, 43, 46, 50, 52, 55, 58, 71, 74, 77, 80, 83, 87, 90, 93, 97, 101, 104, 107, 110, 113
Հոգիների աշխարհ, 71
Հույս, 46, 90
Հուշումներ, 52
Զախորդություն, 12, 18, 30, 46, 55, 71, 83, 101
Ճշմարտություն, 25, 107
Մահ, 71
Մայրություն, 58, 61, 68
Մարգարեներ, 18, 34
Մկրտություն, 43
Մորմոնի Գիրք, 34, 68, 80
Նախաերկրային կյանք, 93
Ներում, 12, 77
Նորադարձների պահպանումը, 37
Շնորհ, 40, 52, 97
Ուխտեր, 30, 43, 80, 107
Ուսումնական ծրագիր, 6, 8, 113
Ուսուցանել, 15, 58, 68
Ուսուցում, 58, 113
Ուրախություն, 12, 40, 46
Պահպանում, 30, 83
Զոզեֆ Սմիթ, 34, 52, 80, 107
Սեր, 18, 37, 40, 46, 50, 55, 58, 61, 74, 77, 90, 93, 97, 110
Սուրբ Հոգի, 18, 43, 80, 93
Սուրբ գրությունների ուսումնասիրություն, 8, 37, 58
Սպասավորություն, 37, 40, 46, 50, 68, 74, 77, 97, 110
Ստեղծագործություն, 40
Սփոփող Միություն, 68
Վախ, 18, 101
Վերականգնում, 87
Վկայություն, 80
Տաճարային աշխատանք, 68, 113
Տաճարներ, 18, 34, 113
Տեխնոլոգիաներ, 61
Տուն, 6, 8, 15, 18, 21, 58, 113
Փորձություններ, 83, 90
Փրկության ծրագիր, 25, 61, 71, 93, 104
Օրինակ, 113

188-րդ կիսամյա գերագույն համաժողովի ամփոփում

Կրկին անդրադարձ՝ զգալի փոփոխություններ հայտարարվեցին գերագույն համաժողովին: Թեև հայտարարությունները տարբերվում էին այս անգամ, դրանց հիմքում ընկած նպատակները մնում են նույնը. Աստծո մարգարեն հրատապություն է զգում՝ պատրաստելու մեզ Տիրոջ Երկրորդ Գալուստին և հրավիրում է մեզ ամրապնդել մեր հավատքը Երկնային Հոր և Նրա Որդի՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ:

Ստորև՝ համաժողովի ընթացքում Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի կողմից շեշտադրված հիմնական հրավերներն ու խոստումները:

Տունն ավելի սուրբ դարձրեք

Իր ներածական ելույթում Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը խոսեց մեր կյանքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին, որոնք մեր տները կկենտրոնացնեն ավետարանի ուսումնասիրության վրա: Ժամանակն է ունենալ *տնակենտրոն Եկեղեցի*, որն աջակցվում է այն ամենով, ինչը տեղի է ունենում ճյուղերի, ծխերի և ցցերի շինությունների ներսում:

- Կարդացեք առաջարկվող փոփոխությունների մասին տան վերաբերյալ և դրանց աջակցող ճշգրտումների վերաբերյալ, որոնք կկատարվեն Եկեղեցում (տես էջ 8):
- Լրացուցիչ տեղեկություններ կան (էջ 117-ում)՝ «Փոփոխություններ, որոնք կօգնեն հավասարակշռել ավետարանի ուսուցումը տանը և Եկեղեցում»:

«Հետևում թողեք աշխարհը»

Նախագահ Նելսոնը կանանց գերագույն նիստին քույրերին հրավիրեց մասնակցել «*ամենամեծ* գործին . . . այսօր երկրի վրա»: Նա խոստացավ՝ «Միասին մենք կարող ենք անել այն ամենը, ինչ մեր Երկնային Հայրն է ակնկալում մեզանից, որպեսզի աշխարհը նախապատրաստենք [Հիսուս Քրիստոսի] Երկրորդ Գալուստին»:

- Կարդացեք քույրերին ուղղված Նախագահ Նելսոնի չորս հրավերները (տես էջ 68):

«Վերականգնել Տիրոջ Եկեղեցու ճիշտ անունը»

Նախագահ Նելսոնը կոչ է արել անդամներին անվանել Փրկիչի Եկեղեցին այն անունով, որը Փրկիչն է տվել: «Ես խոստանում եմ ձեզ, որ եթե մեր ուժերի չափով ձգտենք վերականգնել Տիրոջ Եկեղեցու ճիշտ անունը, ապա Նա, ում Եկեղեցին է սա, Իր զորությունն ու օրհնությունները կհեղի Վերջին Օրերի Սրբերի գլխին այնպես, ինչպես մենք երբեք չենք տեսել»:

- Կարդացեք Նախագահ Նելսոնի հրահանգը Եկեղեցու անվան վերաբերյալ (տես էջ 87):

«Եղեք Նրա Սուրբ տանը»

Նախագահ Նելսոնը եզրափակել է համաժողովը, հայտարարելով 12 նոր տաճարների մասին և հրավերով՝ «կանոնավորապես . . . լինել Նրա Սուրբ տանը»: Նա ասել է. «Ես ձեզ խոստանում եմ, որ երբ զոհաբերություններ կատարեք, ծառայեք և երկրպագեք Տիրոջ տաճարներում, Նա ցույց կտա հրաշքներ, որոնք, Նրա կարծիքով, ձեզ անհրաժեշտ են»:

- Հայտարարված տաճարների գտնվելու վայրերը (տես էջ 113, 116):

THE CHURCH OF JESUS

THE CHURCH OF JESUS CHRIST OF LATTER-DAY SAINTS
CONFERENCE CENTER

Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Երաժշտական ելույթ

Այժմ տնակենտրոն Եկեղեցու ժամանակն է, որին աջակցում է այն, ինչ տեղի է ունենում մեր ճյուղերի, ծխերի և ցցերի շենքերի ներսում։

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, անհամբեր սպասել ենք Եկեղեցու հոկտեմբեր ամսվա գերագույն համաժողովին ձեզ հետ հանդիպելու համար։ Մենք սրտանց ողջունում ենք բոլորիդ։ Մենք շատ երախտապարտ ենք ձեր աջակցող աղոթքների համար։ Մենք զգում ենք դրանց ազդեցությունը։ Շնորհակալություն։

Մենք երախտապարտ ենք վեց ամիս առաջ գերագույն համաժողովի ժամանակ տրված խորհուրդներին հետևելու ձեր վիթխարի ջանքերի համար։ Ցցերի նախագահությունները ամբողջ աշխարհումձգտել են ստանալ անհրաժեշտ հայտնությունը երեցների քվորումները վերակազմավորելու համար։ Այդ քվորումի տղամարդիկ, մեր նվիրյալ Սփոփող Միության քույրերի հետ միասին, ջանասիրաբար աշխատում են մեր եղբայրներին ու քույրերին սպասավորել ավելի բարձր ու սուրբեղանակով։ Մենք ոգեշնչված ենք ձեր բարությամբ և արտասովոր ջանքերով, որոնցով ձեր ընտանիքներին, հարևաններին և ընկերներին եք հասցնում Փրկիչի սերը և սպասավորում եք նրանց, ինչպես Նա կաներ։

Ապրիլյան համաժողովից հետո Քույր Նելսոնը և ես հանդիպել ենք

չորս մայրցամաքների և ծովային կղզիների անդամների հետ։ Երուսաղեմից մինչև Հարարե, Վինդիպեգից մինչև Բանգկոկ մենք զգացել ենք ձեր մեծ հավատքի և ձեր վկայությունների ուժը։

Մենք անչափ ուրախ ենք երիտասարդների այն թվի համար, ովքեր միացել են Տիրոջ երիտասարդների գումարտակին, որպեսզի օգնեն հավաքել ցրված Իսրայելը։[1] Մենք շնորհակալ ենք ձեզ։ Շարունակելով հետևել երիտասարդների համաշխարհային հավաքի ժամանակ իմ առաջարկած հրավերին, դուք չափանիշ եք սահմանում բոլորիս համար։ Եվ դուք՝ երիտասարդներդ, շատ մեծ փոփոխություն եք կատարում։

Վերջին տարիներին Եկեղեցու նախագահող խորհուրդը փորձում

էր պատասխանել հիմնարար մի հարցի. Ինչպե՞ս կարող ենք ավետարանը իր պարզ մաքրությամբ և արարողություններն իրենց հավերժական արդյունավետությամբ հասցնել Աստծո *բոլոր* զավակներին:

Որպես Վերջին Օրերի Սրբեր, մենք վարժվել ենք մտածել «եկեղեցու» մասին որպես մի բանի, որը տեղի է ունենում մեր ժողովատներում, որին աջակցում է մեր տանը կատարվածը: Մենք պետք է ճշգրտումներ անենք այդ օրինաչափության մեջ: Այժմ *տնակենտրոն Եկեղեցու* ժամանակն է, որին աջակցում է այն, ինչ տեղի է ունենում մեր ճյուղերի, ծխերի և ցցերի շենքերի ներսում:

Քանի որ Եկեղեցին շարունակում է տարածվել ամբողջ աշխարհում, անդամներից շատերն ապրում են այնտեղ, որտեղ մենք չունենք հավաքատներ և, հնարավոր է, չունենանք մոտ ապագայում: Հիշում եմ մի ընտանիքի, որը նման հանգամանքների պատճառով ստիպված էր հավաքվել իրենց տանը: Ես հարցրի այդ ընտանիքի մորը՝ արդյո՞ք նրան դուր է գալիս եկեղեցի հաճախել իր տանը: Նա Պատասխանեց, «Ինձ դուր է գալիս: Ամուսինս ավելի պարկեշտ բառապաշար է օգտագործում, քանի որ գիտի, որ ամեն կիրակի այդտեղ պիտի հաղորդություն օրհնի»:

Եկեղեցու երկարատև նպատակն է՝ օգնել բոլոր անդամներին մեծացնել իրենց հավատքը մեր Տեր Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ, օգնել նրանց Աստծո հետ ուխտեր կապել և պահել դրանք, ինչպես նաև ամրապնդել և կնքել իրենց ընտանիքները: Այսօրվա դժվարին աշխարհում դա այնքան էլ հեշտ չէ: Հակառակորդը մեծ արագությամբ ավելացնում է հարձակումները հավատքի վրա, մեզ վրա և ընտանիքների վրա: Հոգևորապես գոյատևելու համար մեզ անհրաժեշտ են հակառակորդի ռազմավարությանը դեմ և այն կանխարգելող ծրագրեր: Հետևաբար, մենք այժմ ցանկանում են ենք կազմակերպչական փոփոխություններ կատարել, որոնք ավելի կամրապնդեն մեր անդամներին և նրանց ընտանիքներին:

Տարիներ շարունակ Եկեղեցու ղեկավարներն աշխատել են միացյալ ուսումնական ծրագրերի վրա, որպեսզի *տնակենտրոն* և *Եկեղեցու կողմից աջակցվող* ծրագրերի շնորհիվ

ամրապնդեն ընտանիքներին և անհատներին՝ սովորելու ավետարանը, ամրացնելու հավատքը և խրախուսելու ավելի շատ անձնական երկրպագություն կատարել: Այս վերջին տարիներին Հանգստության օրը սուրբ պահելու՝ այն բերկրանք դարձնելու, և մեր սերը Աստծո համար անձնական նշան դարձնելու մեր ջանքերն ավելի կբարելավվեն այն ճշգրտումների արդյունքում, որոնք այժմ կներկայացնենք:

Այս առավոտ մենք հայտարարելու ենք տանը և Եկեղեցում ավետարանի ուսուցումը հավասարակշռելու և փոխկապակցելու նոր մոտեցման մասին: Մենք յուրաքանչյուրս պատասխանատու ենք մեր հոգևոր աճի համար: Եվ սուրբ գրությունները հստակ ասում են, որ երեխաներին վարդապետությունն ուսուցանելու առաջնային պարտականությունը ծնողներինն է:[2] Եկեղեցին պատասխանատվություն է կրում օգնել յուրաքանչյուր անդամին հասնելու ավետարանի մասին իր գիտելիքները մեծացնելու աստվածայնորեն սահմանված նպատակին:

Երեց Քվենթին Լ. Քուքն այժմ կբացատրի այս կարևոր ճշգրտումները: Առաջին Նախագահության Խորհրդի և Տասներկու Առաքյալների Քվորումի բոլոր անդամները միաձայն հաստատել են այս ուղերձը: Մենք երախտապարտ ենք Տիրոջ ոգեշնչման համար, որն օգնել է մշակել այն ծրագրերն ու ընթացակարգերը, որոնք Երեց Քուքը կներկայացնի:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ես գիտեմ, որ Աստված ապրում է: Հիսուսը Քրիստոսն է: Սա Նրա Եկեղեցին է, որը Նա մարգարեությամբ ու հայտնությամբ առաջնորդում է Իր խոնարհ ծառաների միջոցով: Ես վկայում եմ այս մասին Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ռասել Մ. Նելսոն և Վենդի Վ. Նելսոն, «Իսրայելի Հույսը» (երիտասարդների համաշխարհային հավաք, հունիս 3, 2018), broadcasts.lds.org:
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 93.40, Մովսես 6.58–62:

Երեց Քվենթին Լ. Քուք
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հաստատուն և հարատև դարձ դեպի Երկնային Հայրը և Տեր Հիսուս Քրիստոսը

Մեր նպատակն է հավասարակշռել Եկեղեցու և տան փորձն այնպես, որ մեծանա հավատքը, հոգևորը և ամրապնդվի դարձը:

Ինչպես Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը գեղեցիկ ու համոզիչ ներկայացրեց, Եկեղեցու ղեկավարները երկար ժամանակ աշխատել են «տնակենտրոն և *Եկեղեցու կողմից աջակցվող* ծրագրի վրա, որպեսզի սովորեն վարդապետությունը, զորացնեն հավատքը և խրախուսեն անձնական ավելի ակտիվ երկրպագություն»: Այնուհետև Նախագահ Նելսոնը հայտարարեց մի փոփոխության մասին, որը միտված է հավասարակշռելու և կապակցելու «ավետարանի ուսումնասիրությունը տանը և եկեղեցում»:[1]

Այս նպատակներին հասնելու համար, որոնց մասին խոսել է Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը և որոնք կատարվում են նրա անմիջական ղեկավարությամբ, ինչպես նաև Առաջին Նախագահության Խորհրդի և Տասներկու Առաքյալների Քվորումի որոշման համաձայն, սկսած 2019 թվականի հունվարի 1-ից, կիրակնօրյա ժողովների օրակարգը կփոխվի հետևյալ կերպ:

Կիրակնօրյա ժողովների ժամանակացույցը

Եկեղեցու կիրակնօրյա ժողովները կընթանան այսպես՝ յուրաքանչյուր կիրակի կլինի 60-րոպեանոց հաղորդության ժողով, կենտրոնացած Փրկիչի, հաղորդության արարողության և հոգևոր ուղերձների վրա: Դասարանների բաժանվելու ժամանակից հետո Եկեղեցու անդամները կմասնակցեն 50-րոպեանոց դասի, որն ամեն կիրակի կփոխվի:

- Կիրակնօրյա դպրոցը տեղի կունենա ամսվա առաջին և երրորդ կիրակի օրերին:
- Քահանայության քվորումների, Սփոփող Միության և Երիտասարդ Կանանց ժողովները տեղի կունենան ամսվա երկրորդ և չորրորդ կիրակի օրերին:

- Հինգերորդ կիրակի օրվա ժողովները տեղի կունենան եպիսկոպոսի ղեկավարության ներքո:

Երեխաների Միության դասը կանցկացվի ամեն կիրակի այս նույն 50-րոպեանոց ժամանակահատվածում և կներառի երգեցողություն ու դասեր:

Կիրակնօրյա ժողովների ժամանակացույցի առումով Եկեղեցու ավագ ղեկավարները տարիներ շարունակ նկատել են, որ մեր որոշ թանկագին անդամների համար երեքժամյա կիրակնօրյա օրակարգը Եկեղեցում դժվար է լինում: Սա հատկապես վերաբերում է փոքր երեխաներ ունեցող ծնողներին, Երեխաների Միության մանուկներին, տարեց անդամներին, նորադարձներին և այլոց:[2]

Սակայն այս փոփոխությունը շատ ավելին է, քան պարզապես հավաքատան կիրակնօրյա ժամանակացույցի կրճատում: Նախագահ Նելսոնը երախտագիտություն է հայտնել այն ձեռքբերումների համար, որ ունեցել ենք նախորդ հրավերներին ձեր ցուցաբերած հավատարմության արդյունքում: Նա և Եկեղեցու ամբողջ ղեկավարությունը ցանկանում են ավետարանի ավելի մեծ ուրախություն պարգևել ծնողներին, երեխաներին, երիտասարդներին, ամուրիներին, տարեցներին, նորադարձներին և այն մարդկանց, ում միսիոներներն ուսուցանում են տնակենտրոն, Եկեղեցու կողմից աջակցվող հավասարակշռված ջանքերի միջոցով: : Այս փոփոխության և վերջերս տեղի ունեցող մյուս փոփոխությունների հետ կապված նպատակներն ու օրհնությունները ներառում են հետևյալը.

- Հաստատուն դարձնել դարձը դեպի Երկնային Հայրը և Տեր Հիսուս Քրիստոսը և ամրապնդել հավատքը Նրանց հանդեպ:
- Ամրապնդել անհատներին և ընտանիքներին տնակենտրոն, Եկեղեցու կողմից աջակցվող ուսումնական ծրագրի միջոցով, որը կնպաստի ավետարանով ուրախ ապրելուն:

- Պատվել Հանգստության օրը՝ կենտրոնանալով հաղորդության արարողության վրա:
- Օգնել Երկնային Հոր բոլոր զավակներին վարագույրի երկու կողմում, միսիոներական աշխատանքի միջոցով և տաճարում արարողություններ, ուխտեր կապելու և օրհնություններ ստանալու գործում:

Ավետարանի ուսումնասիրությունը տնակենտրոն, Եկեղեցու կողմից աջակցվող ուսումնական ծրագրով

Այս կիրակնօրյա ժամանակացույցը թույլ է տալիս ավելի շատ ժամանակ տրամադրել տնային երեկոներին, ինչպես նաև կիրակի օրը ավետարանի տնային ուսումնասիրությանը, կամ դա անել մի ուրիշ օր՝ անհատների և ընտանիքների ընտրությամբ: Ընտանեկան միջոցառման երեկո կարելի է անցկացնել երկուշաբթի օրը կամ մեկ այլ օր: Այդ նպատակով ղեկավարները պետք է շարունակեն երկուշաբթի երեկոյան չկազմակերպել եկեղեցու ժողովներ և միջոցառումներ: Այնուամենայնիվ, տնային երեկոների, ավետարանի ուսումնասիրության և անհատների ու ընտանիքների միջոցառումների ժամանակը կարող է ծրագրվել ըստ իրենց անհատական հանգամանքների:

Ավետարանի ընտանեկան և անհատական տնային ուսումնասիրությունը զգալիորեն կբարելավվի ներդաշնակ ծրագրի և նոր՝ *Եկ, հետևիր ինձ.* Անհատների և ընտանիքների համար նյութի շնորհիվ, որը համակարգվում է նրա հետ, ինչն ուսուցանվում է կիրակնօրյա դպրոցում և Երեխաների Միությունում:[3] Հունվարին Եկեղեցու երիտասարդների և չափահասների Կիրակնօրյա Դպրոցի և Երեխաների Միության դասարանները կուսումնասիրեն Նոր Կտակարանը: Տնային ուսումնասիրության համար նախատեսված, նոր՝ *Եկ, հետևիր ինձ.* Անհատների և ընտանիքների համար նյութը, նույնպես պարունակելով Նոր Կտակարանը, նախատեսված է օգնել անդամներին տանը սովորել ավետարանը: Այնտեղ ասվում է. «Այս ուսուցողական նյութը նախատեսված է Եկեղեցու յուրաքանչյուր անհատի և ընտանիքի համար: Այն նախատեսված է օգնել [մեզ] սովորել ավետարանը ինքնուրույն և ընտանիքով: . . . Այս ուսուցողական նյութում տրված համառոտ շարադրանքը կազմված է համաձայն շաբաթական . . . ժամանակացույցի»:[4]

Եկ, հետևիր ինձ. Երեխաների Միության համար նոր նյութի դասերը, որոնք ուսուցանվում են Եկեղեցում, կունենան նույն շաբաթական ժամանակացույցը: Չափահասների և երիտասարդների կիրակնօրյա դպրոցի դասերը՝ առաջին և երրորդ կիրակի օրերին, կհամակարգվեն այնպես, որ նույնպես աջակցեն *Եկ, հետևիր ինձ* տնային ուսումնասիրության նյութին: Երկրորդ և չորրորդ կիրակի օրերին Քահանայության և

Սփոփող Միության չափահասները կշարունակեն ուսումնասիրել Եկեղեցու ղեկավարների ուսմունքները, հատուկ ուշադրություն դարձնելով ժամանակակից մարգարեների ներկայիս ուղերձներին:[5] Երիտասարդ կանայք և Ահարոնյան քահանայության երիտասարդ տղամարդիկ այդ կիրակի օրերին կուսումնասիրեն ավետարանի թեմաները:

Տնային ուսումնասիրության այս նոր նյութը պարունակում է «գաղափարներ սուրբ գրությունների ընտանեկան ուսումնասիրության և ընտանեկան երեկոների համար»:[6] Յուրաքանչյուր շաբաթվա համառոտ շարադրանքը պարունակում է օգտակար գաղափարներ և վարժություններ անհատների և ընտանիքների համար: *Եկ, հետևիր ինձ.* Անհատների և ընտանիքների համար նյութը հագեցած է նկարազարդումներով, որոնք կնպաստեն անհատական և ընտանեկան ուսուցմանը, հատկապես երեխաների համար:[7] Այս նոր նյութը կտրամադրվի բոլոր ընտանիքներին մինչև այս տարվա դեկտեմբեր ամիսը:

Նախագահ Նելսոնը հունվարին Եկեղեցու անդամներին ուղղված իր սկզբնական ուղերձում հորդորել էր նախապատրաստվել Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին՝ քայլելով ուխտի ճանապարհով:[8]

Աշխարհի պայմաններն ավելի ու ավելի են պահանջում հաստատուն դարձնել անհատական դարձը և ամրապնդել հավատքը Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի ու Նրա Քավության հանդեպ: Տերը պատրաստել է մեզ տող առ տող՝ այսօր մեզ հանդիպող չար ժամանակների համար: Վերջին տարիներին Տերն առաջնորդել է մեզ հաղթահարել հիմնական մտահոգությունները կատարելով հետևյալը.

- Պատվել Հանգստության օրը և հաղորդության սուրբ արարողությունը, որոնք բազմիցս շեշտվել են վերջին երեք տարիներին:
- Եպիսկոպոսի ղեկավարությամբ, ամրապնդված երեցների քվորումներն ու Սփոփող Միությունները կենտրոնանում են Եկեղեցու նպատակի և աստվածայնորեն նշանակված պարտականությունների շուրջ[9] և օգնում անդամներին կապել և պահել սուրբ ուխտերը:
- Ավելի բարձր և սուրբ եղանակով սպասավորելը ուրախությամբ ընդունվել է:
- Երբ մտքում պահում ենք մեր վերջնական նպատակը, տաճարային ուխտերը և ընտանեկան պատմության ծառայությունը դառնում են ուխտի ճանապարհի իմաստալից մասը:

Այս առավոտ հայտարարված փոփոխությունը թերևս մեր այս օրերի դժվարությունների համար առաջնորդության ևս մեկ օրինակ է:

Եկեղեցու ավանդական ժամանակացույցն ընդգծում է Եկեղեցու կիրակնօրյա փորձառությունը: Մենք գիտենք, որ երբ ունենք լավ ուսուցում և հոգևորապես պատրաստված դասարանի անդամներ, ապա մենք ունենում ենք Եկեղեցու կիրակնօրյա լավ փորձառություն: Մենք օրինված ենք, որ Հոգու ազդեցությունը հաճախ մեծանում է և ամրապնդում Եկեղեցում դարձի գործընթացը:

Տնակենտրոն և Եկեղեցու կողմից աջակցվող նոր ուսումնական ծրագիրը պետք է ավելի ազդեցիկ լինի ընտանիքի կրոնական ապրելակերպի ու վարքի վրա, ինչպես նաև՝ անհատական կրոնական ապրելակերպի ու վարքի: Մենք գիտենք, թե հոգևոր ինչպիսի ազդեցություն կարող է լինել և հաստատուն ու տևական ինչպիսի դարձ կարող է տեղի ունենալ տան միջավայրում: Տարիներ առաջ մի ուսումնասիրություն էր հաստատվել, որ երիտասարդ տղամարդկանց և կանանց համար Սուրբ Հոգու ազդեցությունն առավել հաճախ է դրսևորվում սուրբ գրությունների անհատական տնային ուսումնասիրության և աղոթքի ժամանակ: Մեր նպատակն է հավասարակշռել Եկեղեցու և տան փորձն այնպես, որ մեծանա հավատքը, հոգևորը և ամրապնդվի դարձը դեպի Երկնային Հայրը և Տեր Հիսուս Քրիստոսը:

/Տնակենտրոն, Եկեղեցու կողմից աջակցվող ծրագրի այս փոփոխության մի մասն է ճկունությունը՝ յուրաքանչյուր անհատ կամ ընտանիք աղոթքով կորոշի, թե ինչպես և երբ այն կիրառվի: Օրինակ, այսպիսով մեծապես օրհնվում են բոլոր ընտանիքները, ելնելով տեղական կարիքներից, ինչպես նաև ընդունելի է, որ երիտասարդ ամուրիները, չափահաս ամուրիները, միայնակ ծնողները, ընտանիքները, որտեղ ոչ բոլորն են Եկեղեցու անդամներ, նոր անդամները[10] և մյուսները հավաքվեն խմբերով կիրակնօրյա սովորական երկրպագությունից դուրս՝ վայելելու շփումը, խոսելով ավետարանի մասին, և ամրապնդվելու՝ միասին ուսումնասիրելով տնակենտրոն, Եկեղեցու կողմից աջակցվող նյութը: Դա կիրականացվի ոչ պաշտոնական ձևով, նրանց կողմից, ովքեր կցանկանան:

Աշխարհի շատ մասերում մարդիկ գերադասում են կիրակնօրյա սովորական օրակարգից հետո մնալ հավաքատանը և վայելել շփումը միմյանց հետ: Այս հայտարարված փոփոխության մեջ, ամեն դեպքում, ոչինչ չկա, որ խանգարի այդ հրաշալի և օգտակար սովորույթին:

Որոշ ծխեր, որպեսզի օգնեն անդամներին պատրաստվել Հանգստության օրվան, շաբաթվա կեսին արդեն էլեկտրոնային նամակ են ուղարկում, տեքստային կամ լրատվական հաղորդագրություն: Այս փոփոխության շրջանակներում մենք խորհուրդ ենք տալիս կիրառել այդպիսի հաղորդակցությունը: Այդ հրավերները կհիշեցնեն անդամներին տվյալ շաբաթվա կիրակնօրյա ժամանակացույցի մասին, ներառյալ անցկացվող դասի թեման և կպարունակեն ավետարանի շուրջ տանը զրուցելու համար օգտակար նյութեր: Բացի այդ, կիրակի օրվա չափահասների ժողովներին կտրամադրվի տեղեկատվություն, թե ինչպես փոխկապակցել այդ շաբաթվա Եկեղեցու և տնային ուսումնասիրությունները:

Հաղորդության ժողովին և դասի ժամանակ կպահանջվի աղոթքով խորհել, համոզվելու համար, որ հոգևոր առաջնահերթությունները գերակա են վարչական

գործառույթների համեմատ: Օրինակ, հայտարարությունները հիմնականում կարող են արվել շաբաթվա կեսերին ուղարկվող հրավերների տեքստերում կամ տպագիր տրամադրվեն: Մինչ հաղորդության ժողովը պետք է ունենա բացման և փակման աղոթքներ, երկրորդ ժողովը կարող է ունենալ միայն փակման աղոթք:[11]

Ինչպես ավելի վաղ արդեն նշվել էր, կիրակնօրյա նոր ժամանակացույցը չի կիրառվելու մինչև 2019 թվականի հունվար ամիսը: Դրա համար կան մի քանի պատճառներ: Երկու կարևոր պատճառներից են. առաջինը՝ ժամանակ է հարկավոր բաժանելու համար *Եկ, հետևիր ինձ.* Անհատների և ընտանիքների համար նյութը և, երկրորդ, պետք է հնարավորություն տալ ցցի նախագահներին և եպիսկոպոսներին կազմել ժողովների օրակարգերը, նպատակ ունենալով ավելի շատ ծխեր ներգրավել օրվա առաջին կեսի համար:

Երբ ղեկավարները հայտնություն են փնտրել, վերջին մի քանի տարիների ընթացքում ստացած առաջնորդությունն է՝ ամրապնդել հաղորդության ժողովը, պատվել Հանգստության օրը և խրախուսել ու աջակցել ծնողներին և անհատներին՝ դարձնել իրենց տները հոգևոր ուժի և ավելի զորեղ հավատքի աղբյուր, ուրախության ու երջանկության մի վայր:

Զարմանալի օրհնություններ

Ի՞նչ կտան այս փոփոխությունները Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներին: Մենք վստահ ենք, որ անդամները կօրհնվեն զարմանալի ձևով: Կիրակին կլինի ավետարանն ուսուցանելու և սովորելու օր եկեղեցում և տանը: Երբ անհատներն ու ընտանիքները ներգրավվեն ընտանեկան խորհուրդներում, ընտանեկան պատմության աշխատանքում, սպասավորության, ծառայության, անձնական երկրպագության և ընտանիքով ուրախ ժամանակ անցկացնելու մեջ, Հանգստության օրը իսկապես բերկրանք կլինի:

Բրազիլիայից մի ընտանիք այն ցցերից մեկի անդամն է, որտեղ փորձարկվել է *Եկ, հետևիր ինձ* նյութը: Հայրը՝ Ֆերնանդոն, վերադարձած միսիոներ է: Կնոջ՝ Նենսիի հետ նրանք չորս երիտասարդ երեխաների ծնողներ են: Ֆերնանդոն գրել է. «Երբ մեր ցցում ներկայացվեց *Եկ, հետևիր ինձ* ծրագիրը, ես այնքան ոգևորված էի և մտածում էի, որ «սուրբ գրությունների տնային ուսումնասիրության ձևը փոխվելու է»: Դա իսկապես տեղի ունեցավ իմ տանը և որպես Եկեղեցու ղեկավար, ես տեսել եմ, որ դա տեղի է ունեցել նաև այլ տներում: . . . Դա օգնել է մեզ քննարկել սուրբ գրությունները մեր տանը: Ես և կինս ավելի լավ սկսեցինք հասկանալ ուսումնասիրվող թեման: . . . Դա օգնել է մեզ . . . ընդլայնել ավետարանի մասին մեր գիտելիքը և զորացնել մեր հավատքն ու վկայությունը: . . . Ես վկայում եմ, . . . որ ես գիտեմ, որ դա ոգեշնչված է Տիրոջ կողմից, որպեսզի սուրբ գրություններում պարունակվող սկզբունքների և վարդապետությունների հետևողական ու արդյունավետ ուսումնասիրությունը ընտանիքներին բերի ավելի մեծ հավատք, վկայություն և լույս . . . օրեցօր ընկնող աշխարհում»:[12]

Աշխարհով մեկ փորձարկում անցնող ցցերում շատ բարենպաստ արձագանք է եղել *Եկ, հետևիր ինձ* տնային նյութի վերաբերյալ: Շատերն են արձանագրել, որ իրենք առաջադիմել են՝ սուրբ գրությունները կարդալու փոխարեն իրական ուսումնասիրություն է տեղի ունենում: Հիմնականում զգացվել է, որ փորձառությունը հավատ խթանող է և հրաշալի ազդեցություն է ունեցել ծխի վրա:[13]

Հաստատուն և հարատև դարձ

Այս փոփոխությունների նպատակն է, որ չափահասներն ու աճող սերունդը հաստատուն և հարատև դարձ ունենա: Անհատական և ընտանեկան նյութի առաջին էջում գրված է. «Ավետարանն ուսանելու և ուսուցանելու նպատակն է՝ խորացնել մեր դարձը, որպեսզի ավելի նմանվենք Հիսուս Քրիստոսին: . . . Սա նշանակում է՝ ապավինելով Քրիստոսին փոխել մեր սրտերը»:[14] «Այն տարածվում է դասարանից դուրս և մտնում անհատների սրտերն ու տները: Ամենօրյա հետևողական ջանքեր են պահանջվում ավետարանը հասկանալու և դրանով ապրելու համար: Ճշմարիտ դարձը պահանջում է Սուրբ Հոգու ազդեցությունը»:[15]

Հաստատուն և հարատև դարձի ամենակարևոր նպատակն ու մեծագույն օրհնությունն է՝ արժանիորեն ստանալ ուխտի ճանապարհի ուխտերն ու արարողությունները:[16]

Մենք վստահում ենք ձեզ՝ խորհրդակցել միմյանց հետ և հայտնություն փնտրել այս փոփոխությունները կիրառելու համար, միևնույն ժամանակ չենք նայում նշանակետից այն կողմ կամ թելադրում, թե անհատներն ու ընտանիքները ինչ պետք է անեն: Լրացուցիչ տեղեկատվություն կտրվի գալիք հաղորդագրություններում, այդ թվում՝ Առաջին Նախագահության նամակում և ներդիրում:

Ես վկայում եմ, որ Առաջին Նախագահության Խորհրդի և Տասներկու Առաքյալների Քվորումի տաճարային քննարկումներում և այն բանից հետո, երբ մեր սիրելի մարգարեն խնդրանքով դիմեց Տիրոջը հայտնության համար, որպեսզի առաջ շարժվեինք այս փոփոխություններով, հզոր հաստատում ստացան բոլորը: Ռասսել Մ. Նելսոնը մեր ապրող նախագահն ու մարգարեն է: Այսօր արված հայտարարությունները կհանգեցնեն հրաշալի օրհնությունների նրանց համար, ովքեր ոգևորությամբ ընդունում են փոփոխությունները և փնտրում Սուրբ Հոգու առաջնորդությունը: Մենք ավելի կմոտենանք մեր Երկնային Հորը և մեր Տեր ու Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսին, ում հաստատուն վկան եմ ես: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ռասսել Մ. Նելսոն, «Ներածական ելույթ», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 8
2. Մենք նաև տեղյակ ենք, որ հասարակության մեջ, ընդհանուր առմամբ, տեղեկատվության, կրթության և նույնիսկ զվարճանքի միջոցառումների մեծ մասը զգալի կրճատվել են:
3. Այս ծրագիրը առկա կլինի և՛ թվային, և՛ տպագիր տարբերակներով:
4. *Եկ, հետևիր ինձ. Անհատների և ընտանիքների համար* (2019), vi.
5. Տես «Եկ, հետևիր ինձ. Երեցների Քվորումի և Սփոփող Միության համար», *Լիահոնա*, մայիս 2018, 140 Երկրորդ և երրորդ կիրակիների փոխարեն

գերագույն համաժողովի ուղերձները կքննարկվեն երկրորդ և չորրորդ կիրակի օրերին:

6. Տես *Եկ, հետևիր ինձ. Անհատների և ընտանիքների համար,* 4. Անհատներն ու ընտանիքները որոշում են, թե ավետարանի տնային ուսումնասիրության, տնային երեկոյի և ընտանեկան միջոցառումների որ մասը լինի ընտանեկան երեկոն (որը շատերը կոչում են *տնային երեկո*): Քանի որ անհատներն ու ընտանիքներն են կայացնելու այս որոշումը, *տնային երեկո* և *ընտանեկան երեկո* եզրույթները փոխադարձաբար օգտագործվել են հայտարարված ճշգրտումների մեջ:
7. Տես *Եկ, հետևիր ինձ. Անհատների և ընտանիքների համար,* 29.
8. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Միասին առաջ ընթանալով», *Լիահոնա,* ապրիլ 2018, 7
9. Տես *Handbook 2: Administering the Church* (2010), 2.2. Աստվածայնորեն նշանակված պարտականությունները «ներառում են՝ օգնել անդամներին ապրել Հիսուս Քրիստոսի ավետարանով, հավաքել Իսրայելը միսիոներական աշխատանքի միջոցով, հոգ տանել աղքատների և կարիքավորների մասին, և հնարավորություն տալ մահացածներին փրկվել՝ տաճարների կառուցման և զանազան արարողությունների միջոցով»: Տես նաև Վարդապետություն և Ուխտեր 110 գլուխը, որը պարունակում է կարևոր բանալիների վերականգնման պատմությունը:
10. Հատուկ ուշադրություն դարձրեք այն երեխաներին, ում ծնողները անդամ չեն կամ կանոնավորապես չեն հաճախում Եկեղեցի: Միայնակները և ուրիշները կարող են նաև հավաքվել որևէ ընտանիքի հետ, եթե դա օգտակար կլինի բոլորի համար:
11. Բացման օրհներգն ու աղոթքը սովորաբար երկրորդ ժողովի դեպքում հարկավոր չեն:
12. Ֆերնանդո և Նենսի դե Կարվալհո ընտանիք, Բրազիլիա
13. Այն անհատներն ու ընտանիքները, որոնք ներգրավված են եղել ծրագրի փորձարկման մեջ, միջինում ավելի հաճախ են ուսումնասիրել ավետարանը, սուրբ գրությունների ավելի իմաստալից ընթերցանություն են ունեցել և ավետարանի իմաստալից քննարկումներ՝ տանը: Նրանք հաղորդել են, որ քննարկումներ են ունեցել ընտանիքի և ծխի անդամների հետ և գնահատում են սուրբ գրությունների հատվածների ուսումնասիրությունը ընտանիքով: Սա հատկապես ողջունելի է եղել երիտասարդների դեպքում:
14. *Եկ, հետևիր ինձ. Անհատների և ընտանիքների համար,* v; տես նաև Բ Կորնթացիս 5.17
15. *Եկ, հետևիր ինձ. Անհատների և ընտանիքների համար,* v.
16. Ռասսել Մ. Նելսոն, «Միասին առաջ ընթանալով», 7

Մ. Զոզեֆ Բրոու
Երիտասարդ Տղամարդկանց Գերագույն Նախագահության երկրորդ խորհրդական

Բարձրացրու գլուխդ և ուրախացիր

Անցնելով դժվարությունների միջով Տիրոջ ձևով, եկեք բարձրացնենք մեր գլուխը և ուրախանանք:

1981 թվականին ես, հայրս և մեր երկու մտերիմ ընկերները նախաձեռնեցինք արշավ դեպի Ալյասկա: Մենք պետք է վայրէջք կատարեինք մի հեռավոր լճում, ապա բարձրանայինք մի գեղեցիկ բարձրադիր տեղանք: Որպեսզի թեթևացնեինք այն բեռը, որն ամեն մեկս պետք է կրեր, մենք տեղավորեցինք մեր պարագաները արկղերում, փրփուրով փակեցինք դրանք, տուփերի վրա փակցրեցինք գունավոր մեծ ժապավեններ և մեր փոքր ինքնաթիռի պատուհանից նետեցինք դեպի մեր վայրէջքի վայրը:

Տեղ հասնելուց հետո փնտրեցինք ու փնտրեցինք, սակայն ցավոք, չկարողացանք գտնել այդ արկղերից ոչ մեկը: Վերջապես գտնվեց մի արկղ: Այն պարունակում էր փոքրիկ գազի վառարան, դանակ, մի բուռ կոնֆետ և մի քանի փաթեթ համեմունք՝ «համբուրգերի օգնական», բայց ոչ համբուրգերներ: Մենք ոչ մի կերպ չէինք կարող շփվել արտաքին աշխարհի հետ, իսկ մեր բարձրանալու պլանավորած օրը մի շաբաթ հետո էր:

Այս փորձառությունից ես երկու կարևոր դաս սովորեցի: Առաջինը, մի՛ շպրտեք ձեր ուտելիքը պատուհանից դուրս: Երկրորդ՝ երբեմն մենք

պետք է կանգնենք դժվարությունների առաջ:

Հաճախ դժվարությունների հանդիպելիս, մեր առաջին արձագանքը հետևյալն է՝ «Ինչո՞ւ ես»: Սակայն «ինչո՞ւ» հարցը տալով դժվարությունը չի անցնում: Տերը պատվիրում է մեզ հաղթահարել դժվարությունները, ուստի Նա ասել է, որ «այս բոլոր բաները փորձառություն կտան [մեզ] և կլինեն [մեր] օգտի համար»:[1]

Երբեմն Տերն է խնդրում է մեզ դժվար բան անել, երբեմն էլ մարտահրավերները ստեղծվում են մեր սեփական կամ ուրիշների ազատ կամքի դրսևորումից: Նեփիին այս երկու իրավիճակներում էլ հայտնվել է: Երբ Լեքին խնդրեց իր որդիներին վերադառնալ և Լաբանից վերցնել թիթեղները, նա ասաց. «ահա քո եղբայրները տրտնջում են՝ ասելով, որ այն, ինչ պահանջում եմ նրանցից, դժվար բան է. բայց ահա, ես չեմ պահանջում դա նրանցից, այլ դա պատվիրան է Տիրոջից»:[2] Մեկ ուրիշ անգամ Նեփիի եղբայրները օգտագործեցին իրենց ազատ կամքը՝ սահմանափակելով նրա կամքը. «Նրանք ձեռք բարձրացրեցին ինձ վրա, քանզի ահա, նրանք չափազանց զայրացած էին, և կապեցին ինձ պարաններով, քանի որ ջանում էին զրկել ինձ կյանքից»:[3]

Ջոզեֆ Սմիթը դժվարության հանդիպեց Լիբերթի բանտում: Օգնություն չստանալով և հուսահատվելով, նա աղաղակեց. «Ո՜վ Աստված, ո՞րտեղ ես դու»:[4] Անկասկած, ոմանք զգացել են նույն բանը, ինչ Ջոզեֆն էր զգում:

Յուրաքանչյուրն է հայտնվում դժվարին իրավիճակում՝ սիրելիի մահվան, ամուսնալուծության, քմահաճ երեխայի, հիվանդության, հավատի փորձությունների, աշխատանքի կորստի կամ այլ դժվարությունների:

Ես անվերադարձ փոխվեցի, երբ լսեցի Տասներկուսի Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելի այս խոսքերը, որոնք նա արտաբերել էր այն ժամանակ, երբ պայքարում էր լեյկեմիա հիվանդության դեմ: Նա ասել է. «Ես խորը մտորումների մեջ էի, երբ մտքիս եկան այս հրահանգող և հուսադրող 13 բառերը. «Ես քեզ լեյկեմիա եմ տվել, որ դու կարողանաս ուսուցանել իմ ժողովրդին հավատի կերպով»: Այնուհետև նա շարունակեց պատմել, թե ինչպես է այդ փորձությունն օրհնել իրեն «հավերժության մեծ իրողությունների հեռանկարով . . . Հավերժության վերաբերյալ այդպիսի ակնթարթները օգնում են մեզ անցնել հաջորդ 100 յարդ ճանապարհը, որը կարող է շատ դժվար լինել»:[5]

Որպես օգնություն, որ ճամփորդենք դժվար ժամանակների միջով և հաղթահարենք դրանք հավերժության այդպիսի ակնթարթներով, թույլ տվեք առաջարկել երկու բան: Մենք պետք է դիմավորենք դժվարությունները, նախ՝ ներելով ուրիշներին, և, երկրորդ, տալով մեր անձը Երկնային Հորը:

Շատ դժվար է ներել մարդկանց, ովքեր, գուցե, պատճառել են մեզ այդ դժվարությունները և հաշտվել «Աստծո կամքի հետ»:[6] Ամենացավոտն այն է, երբ դժվարությունը պատճառել է ընտանիքի անդամը, մտերիմ ընկերը կամ ինքներս ենք մեզ պատճառել:

Երբ երիտասարդ եպիսկոպոս էի, ես հասկացա, թե ինչ է ներողամտությունը, երբ իմ ցցի նախագահը՝ Բրյուս Մ. Քուքը, կիսվեց հետևյալ պատմությամբ: Նա ասաց.

«1970-ականների վերջին ես և մի քանի գործընկերներ ձեռնարկեցինք մի գործ: Թեև մենք անօրինական ոչինչ չէինք արել, բայց մի քանի սխալ որոշումներ, զուգակցվելով տնտեսական ծանր ժամանակաշրջանի հետ, հանգեցրին մեր ձախողմանը:

Որոշ ներդրողներ դատական գործ սկսեցին մեր դեմ՝ իրենց վնասները վերականգնելու համար: Նրանց փաստաբանը պատահաբար իմ ընտանիքի եպիսկոպոսության խորհրդականն էր: Ինձ համար շատ դժվար էր աջակցել մեկին, ով կարծես ուզում էր ոչնչացնել ինձ: Նրա հանդեպ ես թշնամությամբ լցվեցի և նրան համարում էի իմ թշնամին: Հինգ տարի իրավական պատերազմներից հետո մենք կորցրինք մեր ամբողջ ունեցվածքը, այդ թվում՝ մեր տունը:

2002 թվականին ես ու կինս ականատես եղանք, թե ինչպես է վերակազմավորվում ցցի նախագահությունը, որտեղ ես ծառայում էի որպես խորհրդական: Այդ ժամանակ կոչումից հետո կանչվելուց առաջ արձակուրդում էինք և երբ ճամփորդում էինք, կինս ինձ հարցրեց, թե ում կընտրեմ որպես խորհրդականներ, եթե նոր ցցում կանչվեմ որպես նախագահ: Ես չէի ցանկանում խոսել այդ մասին, բայց նա համառեց: Վերջապես, մի անուն եկավ միտքս: Ապա նա տվեց փաստաբանի անունը, որի հետ կապված էր 20 տարի առաջ մեր դժվարությունների կենտրոնում գտնվելու փաստը: Երբ կինս խոսեց նրա մասին, Հոգին հաստատեց, որ նա էր լինելու մյուս խորհրդականը: Կարողացե՞լ էի ես ներել նրան:

Երբ Երեց Դեյվիդ Ա. Սորենսենը ինձ առաջարկեց ծառայել որպես ցցի նախագահ, նա ինձ մեկ ժամ ժամանակ տվեց ընտրելու խորհրդականներ: Արցունքներն աչքերիս ես նշեցի, որ Տերն արդեն տվել է ինձ այդ հայտնությունը: Երբ ես տվեցի այդ մարդու անունը, որին համարել էի իմ թշնամին, նրա հանդեպ զայրույթը, թշնամանքն ու ատելությունը անհետացան: Այդ պահին ես զգացի այն խաղաղությունը, որը գալիս է ներման հետ Քրիստոսի Քավության միջոցով:

Այլ կերպ ասած, իմ ցցի նախագահը «անկեղծորեն ներեց» նրան, ինչպես հնում՝ Նեփիին:[7] Ես գիտեի Նախագահ Քուքին և նրա խորհրդականին որպես երկու արդար քահանայություն կրողներ, ովքեր սիրում էին միմյանց: Ես որոշեցի լինել նրանց նման:

Տարիներ առաջ, Ալյասկայում մեր ձախողված արշավի ժամանակ ես շատ արագ հասկացել էի, որ մեր հանգամանքների համար ուրիշներին մեղադրելը լուծում չէ՝ օրինակ, օդաչուին, որ մեր սնունդը դուրս էր նետել մթագնող լույսի պայմաններում: Այնուամենայնիվ, երբ մենք ֆիզիկապես տանջվեցինք սննդի պակասից, հիվանդությունից և զետնին քնեցինք ուժգին փոթորիկի ժամանակ, ունենալով միայն բրեզենտե ծածկ, ես հասկացա, որ «Աստուծոյ առաջին ոչ մի բան անկարելի չէ»:[8]

Երիտասարդնե՛ր, Աստված ձեզանից դժվար բաներ է ակնկալում: Մի

14-ամյա աղջիկ մասնակցեց բասկետբոլի մրցումներին: Նա երազում էր խաղալ ավագ դպրոցի բասկետբոլի թիմում իր ավագ քրոջ նման: Այնուհետև նա իմացավ, որ իր ծնողներին կանչել են նախագահելու Գվատեմալայի միսիաներից մեկը:

Երբ նրա ընտանիքը ժամանեց նոր վայր, աղջիկը պարզեց, որ իր դասերից մի քանիսն իսպաներեն լեզվով են լինելու, որին նա դեռևս ծանոթ չէր: Եվ այդ դպրոցում չկար աղջիկների որևէ սպորտային թիմ: Նա ապրում էր շենքի 14-րդ հարկում, որի անվտանգությունն ապահովված էր: Եվ այդ ամենից բացի, նա չէր կարող մենակ դուրս իջնել՝ անվտանգության նկատառումներից ելնելով:

Ծնողներն ամիսներ շարունակ լսում էին նրա հեկեկոցի ձայները քնելուց առաջ: Դա կոտրում էր նրանց սիրտը: Վերջապես նրանք որոշեցին տուն ուղարկել իրենց դստերը՝ տատիկի մոտ, որ այնտեղ գնա ավագ դպրոց:

Երբ կինս մտավ դստերս սենյակ, որպեսզի հայտնի նրան մեր որոշման մասին, նա տեսավ մեր աղջկան աղոթքով ծնկի եկած, իսկ Մորմոնի Գիրքը բաց դրված էր մահճակալին: Հոգին շշնջաց կնոջս. «Նա լավ կլինի» և կինս հանգիստ հեռացավ սենյակից:

Մենք այլևս չլսեցինք նրա լացի ձայնը քնելուց առաջ: Վճռականությամբ և Տիրոջ օգնությամբ նա քաջաբար դիմացավ այդ երեք տարիներին:

Մեր միսիայի ավարտին, ես հարցրեցի իմ դստերը, թե արդյոք մտադրություն ունի՞ միսիայում ծառայելու: Նա պատասխանեց. «Ո՛չ, հայրիկ, ես արդեն ծառայել եմ»:

Ինձ բավարարեց այդ պատասխանը: Սակայն վեց ամիս անց, Հոգին ինձ արթնացրեց գիշերվա կեսին այս մտքով. «Ես կանչել եմ քո դստերը միսիայում ծառայելու»:

Իմ արձագանքն էր՝ «Երկնային Հա՛յր, նա շատ բան է տվել»: Հոգին արագորեն շտկեց ինձ և հասկացա, որ նրա միսիոներական ծառայությունը պահանջվում էր Տիրոջից:

Ես շուտով վերցրի աղջկաս, որ միասին նախաճաշենք: Սեղանի

շուրջ ես նրան ասացի. «Գանգի, դու գիտե՞ս, թե մենք ինչու ենք այստեղ»:

Նա ասաց. «Այո, հայրիկ: Գիտե՞ս, ես պետք է միսիայում ծառայեմ: Ես չեմ ուզում գնալ, բայց գնում եմ»:

Քանի որ նա ենթարկեց իր կամքը Երկնային Հորը, նա ծառայեց Նրան իր ողջ սրտով, զորությամբ, մտքով և ուժով: Աղջիկս սովորեցրեց իր հորը, թե ինչպես է պետք անել դժվար բանը:

Երիտասարդների համաշխարհային հոգևոր երեկոյի ժամանակ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը երիտասարդներին որոշ դժվար բաների մասին խնդրեց: Նախագահ Նելսոնն ասաց. «Իմ հինգերորդ հրավերն է ձեզ՝ առանձնացեք, տարբերվեք աշխարհից: . . . Տերը ցանկանում է, որ դուք նմանվեք, խոսեք, գործեք և հագնվեք Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտի պես»:[9] Դա դժվար է լինելու, սակայն ես գիտեմ, որ դուք կարող եք դա անել ուրախությամբ:

Հիշեք, որ «մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն»:[10] Այն ամենից հետո, ինչի հանդիպել էր Լեքին, նա դեռ ուրախություն էր գտնում: Հիշո՞ւմ եք այն պահը, երբ Ալման «կքած [էր] վշտից»[11] Ամմոնիայի ժողովրդի պատճառով: Հրեշտակը ասաց նրան. «Օրհնվա՛ծ ես դու, Ալմա. հետևաբար, բարձրացրու գլուխդ և ուրախացիր. . . քանի որ դու հավատարիմ եղար Աստծո պատվիրանները պահելիս»:[12] Ալման մեծ ճշմարտություն սովորեց. մենք միշտ կարող ենք ուրախանալ, երբ պահում ենք պատվիրանները: Հիշենք, որ Զորավար Մորոնիի օրոք, այդ պատերազմների ու մարտահրավերների ընթացքում «երբեք չէր եղել ավելի երջանիկ ժամանակ Նեփիի ժողովրդի մեջ»:[13] Մենք կարող ենք և պետք է ուրախություն գտնենք այն ժամանակ, երբ դժվար իրավիճակներում ենք:

Փրկիչը տեսել է դժվարություններ. «Եվ աշխարհը . . . կդատի նրան՝ որպես ոչ պիտանի մի բանի. ուստի, նրանք կխարազանեն նրան, և նա կտանի դա. և նրանք կզարկեն նրան, և նա կտանի դա: Այո, նրանք կթքեն նրա վրա, և նա դա կտանի՝ մարդկանց զավակների հանդեպ իր ողորմության և երկայնամտության պատճառով»:[14]

Իր այդ ողորմության շնորհիվ Հիսուս Քրիստոսը տարավ Քավությունը: Արդյունքում, Նա ասում է յուրաքանչյուրիս. «Աշխարհքում նեղություն կունենաք. բայց քաջացեք, ես հաղթել եմ աշխարհքին»:[15] Քրիստոսի շնորհիվ, մենք նույնպես կարող ենք հաղթել աշխարհին:

Անցնելով դժվարությունների միջով Տիրոջ ձևով, եկեք բարձրացնենք մեր գլուխը և ուրախանանք: Աշխարհին վկայելու այս սուրբ հնարավորությամբ, ես հայտարարում եմ, որ մեր Փրկիչն ապրում է և առաջնորդում է Իր Եկեղեցին: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 122.7
2. 1 Նեփի 3.5
3. 1 Նեփի 7.16
4. Վարդապետություն և Ուխտեր 121.1
5. Neal A. Maxwell, “Revelation,” *First Worldwide Leadership Training Meeting,* Jan. 11, 2003, 6.
6. 2 Նեփի 10.24
7. 1 Նեփի 7.21
8. Ղուկաս 1.37
9. Russell M. Nelson, “Hope of Israel” (worldwide youth devotional, June 3, 2018), HopeofIsrael.lds.org.
10. 2 Նեփի 2.25
11. Ալմա 8.14
12. Ալմա 8.15
13. Ալմա 50.23
14. 1 Նեփի 19.9
15. Հովհաննես 16.33

Երեց Սթիվեն Ռ. Բանգերթեր
Յոթանասունից

Դնելով մեծ աշխատանքի հիմքը

Դասերը, որոնք ուսուցանվում են մեր տներում հաստատված ավանդույթների միջոցով, փոքր ու հասարակ են, սակայն գնալով ավելի կարևոր են դառնում ներկայիս աշխարհում։

Որպես Սիոնի ծնողներ, մենք սրբազան պարտականություն ունենք մեր զավակների մեջ ցանկություն ու պարտականություն արթնացնել ուրախության, լույսի և Հիսուս Քրիստոսի ավետարանի ճշմարտությունների հանդեպ։ Մեր զավակներին մեծացնելիս, մենք մեր տներում ավանդույթներ ենք հիմնում և ստեղծում շփման ու վարքագծի կանոններ մեր ընտանեկան հարաբերությունների սահմաններում։ Այդպես վարվելով, մեր հիմնած ավանդույթները մեր զավակների մեջ պետք է հաստատեն բարության ուժեղ, անսասան հատկանիշներ, որոնք նրանց կօժտեն կյանքի դժվարություններին դիմակայելու զորությամբ։

Երկար տարիներ մեր ընտանիքում ավանդույթ է եղել ամեն տարի ճամբարել հյուսիս-արևելյան Յուտայի Յունիտա լեռների բարձունքում։ Քարքարոտ ճանապարհով մենք ճամփորդում ենք 20 մղոն (32 կմ), որպեսզի հասնենք մի գեղեցիկ կանաչ հովիտ, որը գտնվում է շատ բարձր պատերով կիրճում, իսկ կիրճով հոսում է մի գետ, որի ջուրը սառն է ու մաքուր։ Ամեն տարի, հույս ունենալով վերահաստատել ավետարանի վարդապետության ու սկզբունքների արժեքը մեր զավակների և թոռների սրտերում, ես և Սյուզանը խնդրում ենք մեր վեց որդիներին և նրանց ընտանիքներին պատրաստել մի կարճ ուղերձ այնպիսի թեմայով, որն, ըստ նրանց, հանդիսանում է Քրիստոսակենտրոն ընտանիքի հիմքի կարևոր տարրը։

Հետո նախատեսված տեղում մենք հավաքվում ենք ընտանեկան հոգևոր երեկոյի և յուրաքանչյուրը ներկայացնում է իր ուղերձը։

Այս տարի մեր թոռները իրենց ուղերձի թեման գրեցին քարերի վրա, իսկ հետո մեկ առ մեկ թաղեցին դրանք կողք կողքի, ներկայացնելով հաստատուն հիմքը, որի վրա հիմնվում է երջանիկ կյանքը։ Նրանց բոլոր վեց ուղերձներում ընդգրկված է անփոփոխ, հավերժական ճշմարտությունը, որ Հիսուս Քրիստոսը այդ հիմքի անկյունաքարն է։

Եսայիայի խոսքերով. «Վասն որոյ այսպէս է ասում Եհովայ Տէրը. Ահա ես եմ որ Սիօնումը դրել եմ վէմը, ընտիր վէմ, պատուական անկիւն, հաստատահիմն հիմունք»։[1] Հիսուս Քրիստոսը այդ թանկարժեք անկյունաքարն է Սիոնի հիմքում։ Այդ Նա էր, որ հայտնությամբ ասաց Ջոզեֆ Սմիթին. «Ուստի, մի ձանձրացեք բարին գործելուց, քանզի դուք դնում եք հիմքը մի մեծ գործի։ Եվ փոքր բաներից է առաջանում այն, ինչը մեծ է»։[2]

Դասերը, որոնք ուսուցանվում են մեր տներում հաստատված ավանդույթների միջոցով, փոքր ու հասարակ են, սակայն գնալով ավելի կարևոր են դառնում ներկայիս աշխարհում։ Որո՞նք են այն փոքր ու հասարակ բաները, որոնք հաստատվելուց հետո մեծ գործ կկատարեն մեր զավակների ընտանիքում։

Ուղերձներ, որոնք ներկայացնում են երջանիկ կյանքի հիմքը, և Հիսուս Քրիստոսը այդ հիմքի անկյունաքարն է։

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը վերջերս ելույթով դիմել է Կանադայի Տորոնտո քաղաքի մոտ գտնվող մի մեծ համայնքի և հուզմունքով հիշեցրել է ծնողներին սուրբ պարտականության մասին, որ մենք պետք է ուսուցանենք մեր զավակներին: Նշված կարևոր պարտականությունների թվում Նախագահ Նելսոնը շեշտեց, որ մենք, որպես ծնողներ, պարտավոր ենք ուսուցանել մեր զավակներին հասկանալ, թե մենք ինչու ենք հաղորդություն ընդունում, ուխտի մեջ ծնվելու նշանակությունը, հայրապետական օրհնությունն ընդունելու և դրան պատրաստվելու կարևորությունը: Նա նաև խրախուսեց ծնողներին ոգեշնչել և ներգրավել ընտանիքի անդամներին սուրբ գրությունների ընթերցանության մեջ:[3] Մեր սիրելի մարգարեն խրախուսում է մեզ այս ջանքերի միջոցով մեր տները դարձնել «հավատքի սրբավայրեր»:[4]

Մորմոնի Գրքում Ենովսը գրառել է խորը երախտագիտություն, որը նա զգում էր իր հոր օրինակի հանդեպ, ով «[նրան] սովորեցրել էր իր լեզվով և նաև Տիրոջ խրատով ու ուսմունքով»: Մեծ հուզմունքով Ենովսը բացականչել է. «Եվ օրհնված լինի իմ Աստծո անունը դրա համար»:[5]

Ես փայփայում եմ փոքր ու հասարակ ավանդույթները, որոնք հաստատվել են մեր ընտանիքում մեր ամուսնության 35 տարիների ընթացքում: Մեր ավանդույթներից շատերը փոքր են, սակայն՝ իմաստալից: Օրինակ.

- Այն երեկոների ընթացքում, երբ ես հեռու էի տնից, ես միշտ գիտեի, որ Սյուզանի ղեկավարությամբ մեր ավագ որդին տանն էր և առանց զգուշացնելու իր վրա կվերցներ պարտականությունը՝ առաջնորդելով ընտանիքը սուրբ գրությունների ուսումնասիրության և աղոթքի ժամանակ:[6]
- Մեկ այլ ավանդույթ. մենք երբեք չենք հեռանում տնից կամ ավարտում հեռախոսային խոսակցությունը, առանց ասելու. «Ես սիրում եմ քեզ»:
- Մեր կյանքը օրհնվել է, քանի որ կանոնավոր կերպով ժամանակ ենք հատկացրել, որ վայելենք անհատական հարցազրույցը մեր որդիներից յուրաքանչյուրի հետ: Հարցազրույցներից մեկի ժամանակ ես հարցրի մեր որդիներից մեկին միսիա ծառայելու նրա ցանկությունների և պատրաստության մասին: Քննարկումից հետո մի պահ մտածկոտ լռություն տիրեց, հետո նա առաջ եկավ և մտախոհ հայտարարեց. «Հայրի՛կ, հիշու՞մ ես, երբ ես փոքր էի, մենք սկսեցինք անցկացնել հայրիկի հարցազրույցները»: Ես ասացի՝ «Այո»: «Դե,- ասաց նա,- ես այն ժամանակ խոստացա քեզ, որ ծառայելու եմ միսիայում, իսկ դու խոստացար ինձ, որ դու և մայրիկը նույնպես կծառայեք միսիայում, երբ ծերանաք»: Ապա եղավ ևս մեկ դադար: «Դուք ինչ-որ խնդի՞ր ունեք, որը ձեզ հեռու կպահի միսիայում ծառայելուց, միգուցե ես կարո՞ղ եմ օգնել»:

Ընտանեկան հաստատուն և օգտակար ավանդույթները, ինչպիսիք են՝ աղոթքը, սուրբ գրությունների ընթերցանությունը, ընտանեկան երեկոն և մասնակցությունը Եկեղեցու ժողովներին, թվում են փոքր և հասարակ, սակայն ստեղծում են սիրո, հարգանքի, միաբանության և ապահովության մշակույթը: Այս ջանքերին ուղեկցող ոգով մեր զավակները պաշտպանված են հակառակորդի կրակոտ նետերից, որոնցով լցված է արդի աշխարհիկ մշակույթը:

Իր որդուն ուղղված Հելամանի իմաստուն խորհուրդը հիշեցնում է մեզ. «Եվ, այժմ, իմ որդինե՛ր, հիշեք, հիշեք, որ դա մեր Քավիչի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը. որ, երբ դևն առաջ ուղարկի իր զորեղ քամիները, այո, իր նետերը պտտահողմում, այո, երբ նրա ողջ կարկուտը և զորեղ փոթորիկը հարվածի ձեզ, այն զորություն չի ունենա ձեր վրա՝ քաշելու ձեզ վար՝ դեպի թշվառության ու անվերջ վայի անդունդը, այն վեմի շնորհիվ, որի վրա դուք կառուցված եք, որը հաստատուն հիմք է, հիմք, որի վրա, եթե մարդիկ կառուցեն, նրանք չեն ընկնի»:[7]

Տարիներ առաջ, երբ ես երիտասարդ եպիսկոպոս էի, մի ծեր պարոն հանդիպում խնդրեց ինձ հետ: Նա պատմեց, թե ինչպես է հեռացել Եկեղեցուց և նկարագրեց իր ծնողների արդար ավանդույթները, երբ ինքը դեռ պատանի էր: Նա մանրամասն նկարագրեց սրտի ցավը, որը զգացել էր իր կյանքի ընթացքում, մինչ զուր տևական ուրախություն էր փնտրում վաղանցիկ երջանկության մեջ, որն աշխարհը պետք է առաջարկեր: Հիմա, իր կյանքի վերջին տարիներին, նա զգում էր Աստծո Հոգու քնքուշ, երբեմն համառ շշնջացող հուշումները, որոնք առաջնորդում էին նրան ետ՝ դեպի իր դասերը, գործելակերպը, զգացումները և իր մանկության հոգևոր անվտանգությունը: Նա իր երախտագիտությունն էր արտահայտում իր ծնողների ավանդույթների համար և ժամանակակից խոսքերով նա արտահայտեց Ենովսի հայտարարությունը. «Օրհնված լինի իմ Աստծո անունը դրա համար»:

Իմ փորձից ելնելով, կարող եմ ասել, որ այս թանկագին մարդու վերադարձը նման է շատերի փորձառությանը, և հաճախ է կրկնվում Աստծո զավակների մեջ, ովքեր որոշ ժամանակով դադարում են հետևել Քրիստոսի ուսմունքներին, որպեսզի կրկին վերադառնան իրենց պատանեկության ուսմունքներին ու գործելակերպին: Այդ պահերին մենք վկա ենք լինում Առակաց գրքի հեղինակի իմաստությանը, ով հորդորում է ծնողներին. «Կրթիր երեխային իր ճանապարհին համեմատ, որ ծերացած էլ՝ չի հեռանալ նորանից»:[8]

Երեխաներին դաստիարակելիս, բոլոր ծնողները էլ ունենում են հուսահատության պահեր և բախվում վճռականության և ուժի տարբեր մակարդակների հետ: Սակայն, երբ ծնողները հավատք են գործադրում, մշտապես, անկեղծորեն, սիրով ուսուցանելով իրենց զավակներին և իրենց ուժերի ներածին չափով օգնում նրանց իրենց ճանապարհին, նրանք ավելի մեծ հույս կունենան, որ իրենց ցանած սերմերը արմատներ կձգեն իրենց զավակների սրտերում և մտքերում:

Մովսեսը լավ էր հասկացել հիմնարար կարիքը մշտական ուսուցման համար: Նա խորհուրդ է տվել. «Եւ կրկնիր Տիրոջ խոսքերը քո որդկանցը, խօսիր նորանց վերայ քո տան մէջ նստած ժամանակդ եւ ճանապարհ գնացած ժամանակդ, եւ պառկելիս եւ վեր կենալիս»:[9]

Ընտանեկան աղոթքների ժամանակ մենք ծնկի ենք գալիս մեր զավակների կողքին, հոգում ենք նրանց մասին մեր ջանքերի միջոցով, որպեսզի սուրբ գրությունների ընթերցանությունը իմաստալից լինի, մենք համբերությամբ, սիրով հոգ ենք տանում նրանց մասին, երբ միասին մասնակցում ենք ընտանեկան երեկոյին, և անհանգստանում ենք նրանց համար, երբ ծնկի ենք իջնում՝ մեր անձնական աղոթքները երկինք ուղղելով: Օ՜հ, որքան ենք մենք ցանկանում, որ այն սերմերը, որոնք մենք ցանում ենք, արմատներ գցեն նրանց սրտերում և մտքերում:

Կարծում եմ, որ պակաս կարևոր հարց է, որ մենք անհանգստանանք՝ արդյո՞ք մեր զավակները հասկանում են ամեն բան մեր ուսուցման ընթացքում, ինչպես օրինակ՝ դժվարանում են կարդալ սուրբ գրությունները, անցկացնել ընտանեկան երեկոներ կամ մասնակցել Հոգևոր երեկոներին և Եկեղեցու այլ ժողովներին: Պակաս կարևոր հարց է, թե արդյո՞ք այդ պահերին նրանք հասկանում են այդ միջոցառումների կարևորությունը, սակայն ավելի կարևոր հարց է, թե արդյո՞ք մենք՝ որպես ծնողներ, բավականաչափ հավատք ենք գործադրում՝ հետևելու Տիրոջ խորհրդին՝ ջանասիրաբար ապրելով, ուսուցանելով և հաստատելով ակնկալիքներ, որ մենք ոգեշնչված ենք Հիսուս Քրիստոսի ավետարանով: Այս ջանքի մղիչ ուժը մեր հավատքն է, մեր համոզմունքը, որ մի օր նրանց պատանեկության տարիներին ցանված սերմերը արմատ կձգեն, կծլարձակեն ու կաճեն:

Այն ամենը, ինչի մասին մենք խոսում ենք, ինչ մենք քարոզում ենք և ուսուցանում, որոշում են, թե ինչ կպատահի մեր միջև: Երբ մենք հաստատում ենք օգտակար ավանդույթներ, որոնք ուսուցանում են Քրիստոսի վարդապետությունը, Սուրբ Հոգին վկայություն է բերում մեր ուղերձի ճշմարտացիության մասին և սնուցում է ավետարանի սերմերը, որոնք մեր ջանքերով ցանվել են մեր զավակների սրտերում ամբողջ ճանապարհին: Ես վկայում եմ այս մասին Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Եսայիա 28.16
2. Վարդապետություն և Ուխտեր 64.33
3. Տես՝ Neil L. Andersen's Facebook page, post from Aug. 19, 2018, facebook.com/lds.neil.l.andersen:
4. Sarah Jane Weaver, "President Nelson Urges Members in British Columbia to 'Teach the Children,'" *Church News,* Sept. 23, 2018, 11.
5. Ենովս 1.1
6. Տես Դալլին Հ. Օուքս, "Priesthood Authority in the Family and the Church," *Liahona,* Nov. 2005, 24–27.
7. Հելաման 5.12
8. Առակաց 22.6
9. Երկրորդ Օրինաց 6.7

Երեց Ռոնալդ Ա. Ռասբանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Մի խռովվեք

Լավատես եղեք, եղբայրնե՛ր և քույրե՛ր։ Այո, մենք ապրում ենք «չար ժամանակներում», բայց երբ կանգնում ենք ուխտի արահետին, մենք չպիտի վախենանք։

Ես ավելացնում եմ իմ վկայությունը Նախագահ Նելսոնի և Երեց Քուքի ուղերձներին Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի խորհրդի ներդաշնակության և համաձայնության մասին։ Ես գիտեմ, որ այս բացահայտող հայտարարությունները Տիրոջ մտքի ու կամքի համաձայն են և կօրհնեն ու կզորացնեն անհատներին, ընտանիքներին և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին գալիք շատ սերունդների համար։

Մի քանի տարի առաջ մեր նորապսակ դուստրը և նրա ամուսինը ինձ և Քույր Ռասբանդին մի շատ կարևոր հարց տվեցին. «Մի՞թե դեռևս ապահով և խելամիտ է երեխաներ ունենալ այս ամբարիշտ և վախեցնող աշխարհում, որտեղ մենք ապրում ենք»։

Այժմ, մոր և հոր համար կարևոր էր քննարկել այդ հարցը իրենց սիրելի ամուսնացած զավակների հետ։ Մենք վախ զգացինք նրանց ձայնի մեջ, վախ զգացինք նաև նրանց սրտերում։ Նրանց տրված մեր պատասխանը վճռական «Այո, ավելի քան այո» էր, մինչ մենք կիսվում էինք ավետարանի հիմնարար ուսմունքներով, մեր անկեղծ տպավորություններով և կյանքի փորձառություններով։

Վախը նոր երևույթ չէ։ Հիսուս Քրիստոսի աշակերտները Գալիլեայի ծովում նույնպես վախենում էին «քամու[ց] եւ ալիքներ[ից]»։[1] Որպես նրա աշակերտներ, մենք նույնպես վախեր ունենք։ Մեր չափահաս ամուրիները վախենում են պարտավորություններ ստանձնելուց, ինչպես օրինակ՝ ամուսնությունից։ Մեր զավակների նման, նորապսակները կարող են վախենալ երեխաներ ունենալուց հարաճուն չարացող աշխարհում։ Միսիոներները վախենում են շատ բաներից, հատկապես, անծանոթների հետ խոսելուց։ Այրիները վախենում են միայնակ ապրելուց։ Դեռահասները վախենում են իրենց հասակակիցների կողմից ընդունված չլինելուց, տարրական դասարանի աշակերտները վախենում են դպրոցի առաջին օրվանից, համալսարանի ուսանողները վախենում են թեստի արդյունքները ստանալուց։ Մենք վախենում ենք ձախողումից, մերժումից, հիասթափությունից և անհայտությունից։ Մենք վախենում ենք փոթորիկներից, երկրաշարժերից, հրդեհներից, որոնք կործանում են երկիրն ու մեր կյանքը։ Մենք վախենում ենք, երբ մեզ չեն ընտրում, մեկ այլ իրավիճակում վախենում ենք, որ մեզ կընտրեն։ Վախենում ենք, որ բավականաչափ լավը չենք լինի, վախենում ենք, որ Տերը մեզ համար օրհնություններ չունի։ Մենք վախենում ենք փոփոխությունից և մեր վախերը կարող են վերածվել խուճապի։ Արդյո՞ք ես ընդգրկեցի բոլորին։

Հին ժամանակներից սկսած, վախը սահմանափակել է Աստծո զավակների հեռանկարը։ Ես միշտ սիրել եմ Եղիսեի պատմությունը Բ Թագավորաց գրքում։ Ասորիների թագավորը բանակ էր ուղարկել, որոնք «գիշերը եկան ու քաղաքը պաշարեցին»[2] Նրանց նպատակն էր գերեվարել և սպանել Եղիսե մարգարեին։ Մենք կարդում ենք.

«Եւ Աստուծոյ մարդի ծառան առաւօտանց կանուխ վեր կացաւ եւ դուրսը եկաւ, եւ ահա զօրքը պատել էր քաղաքը՝ նաեւ ձիերն ու կառքերը։ Եւ նորա ծառան ասեց նորան. Վա՜յ, տէր իմ, ի՞նչ անենք»։[3]

Նա վախեցած էր խոսում։

«Եվ [Եղիսեն] ասեց. Մի վախենար. Որովհետեւ մեզ հետ եղողները շատ են քան թէ նորանց հետ եղողները»։[4]

Բայց նա այդտեղ կանգ չառավ։

«Բայց Եղիսէն աղօթք արաւ Տիրոջը եւ ասեց. Ով Տէր, սորանց աչքերը բաց որ տեսնեն։ Եւ Տէրը բացաւ ծառայի աչքերը եւ նա տեսաւ, եւ ահա սարը լիքն էր հրեղէն ձիերով եւ կառքերով Եղիսէի շուրջը»։[5]

Մենք կարող ենք չունենալ հրեղեն կառքեր, որ ուղարկված են թեթևացնելու մեր վախերը և հաղթելու մեր դևերին, բայց դասը պարզ է։ Տերը մեզ հետ է, մտածում է մեր մասին և օրհնում է մեզ այնպիսի եղանակներով, որ միայն Նա կարող է անել։ Աղոթքը կարող է օժտել զորությամբ և հասանելի դարձնել հայտնությունը, որն անհրաժեշտ է մեզ մեր մտքերը Հիսուս Քրիստոսի և Նրա քավիչ զոհաբերության վրա կենտրոնացնելու համար։ Տերը գիտե, որ մենք երբեմն վախեր ենք ունենում։ Ես նույնպես վախեցել եմ որոշակի իրավիճակներում, և դուք նույնպես, ահա ինչու սուրբ գրությունները լի են Տիրոջ խորհուրդներով.

«Ուստի, ուրախ եղեք, և մի վախեցեք»։[6]

«Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում. մի կասկածեք, մի վախեցեք»:[7]

«Մի վախեցիր փոքր հոտ»:[8] Սիրում եմ այս քնքուշ արտահայտությունը՝ «փոքր հոտ»: Հնարավոր է մենք թվով շատ չենք, որպեսզի մեր ազդեցությունը նշանակալից լինի այս աշխարհում, բայց երբ մենք բացում ենք մեր հոգևոր աչքերը, ապա «մեզ հետ եղողները շատ են քան թէ նորանց հետ եղողները»:[9] Մեր սիրառատ Հովիվը՝ Հիսուս Քրիստոսը, այնուհետև շարունակում է. «Թող երկիրն ու դժոխքը միանան քո դեմ, քանզի, եթե դու կառուցված ես իմ վեմի վրա, նրանք չեն կարող զերիշխել»:[10]

Ինչպե՞ս ցրել վախը: Երիտասարդ տղայի համար այսպես էր՝ նա կանգնած էր Եղիսեի կողքին, ով Աստծո մարգարեն էր: Մենք ունենք այս նույն խոստումը: Երբ մենք լսում ենք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին, երբ մենք ականջ ենք դնում նրա խորհրդին, մենք կանգնում ենք Աստծո մարգարեի հետ: Հիշեք Ջոզեֆ Սմիթի խոսքերը. «Եվ արդ, բազմաթիվ վկայություններից հետո, որ տրվել են նրա մասին, սա է վկայությունը, ամենավերջինը, որ մենք տալիս ենք նրա մասին. Որ նա ապրո՛ւմ է»:[11] Հիսուս Քրիստոսն ապրում է: Նրա ու Նրա ավետարանի հանդեպ մեր սերը ցրում է վախը:

«Նրա Հոգին միշտ [մեզ] հետ ունենալու» մեր ցանկությունը[12] կհեռացնի վախը մահկանացու կյանքի ավելի մեծ հավերժական տեսադաշտի համար: Նախագահ Նելսոնը նախազգուշացրել է. «Գալիք օրերում հնարավոր չի լինի հոգևորապես գոյատևել առանց Սուրբ Հոգու առաջնորդության, ուղղորդման և մշտապես սփոփող ազդեցության»:[13]

Խարազանների վերաբերյալ, որոնք կպատեն երկիրը ու կկարծրացնեն շատերի սրտերը, Տերն ասել է «Իմ աշակերտները պիտի կանգնեն սուրբ տեղերում և չեն շարժվի»:[14]

Իսկ հետո տրվում է այս աստվածային խորհուրդը՝ «Եվ ես ասացի նրանց. Մի՛ խռովվեք, քանզի, երբ բոլոր այս բաները տեղի ունենան, դուք կարող եք իմանալ, որ խոստումները, որոնք տրվել էին ձեզ, կկատարվեն»:[15]

Կանգնեք սուրբ տեղերում, մի խռովվեք, և խոստումները կկատարվեն: Եկեք դիտարկենք սրանցից յուրաքանչյուրը՝ ձեր վախերի հետ կապված:

Նախ, կանգնեք սուրբ տեղերում: Երբ մենք կանգնում ենք սուրբ տեղերում մեր արդար տներում, մեր նվիրագործված ժողովատներում, մեր սրբագործված տաճարներում, մենք զգում ենք Տիրոջ Հոգին մեզ հետ: Մենք գտնում ենք հարցերի պատասխանները, որոնք անհանգստացնում են մեզ, կամ գտնում ենք խաղաղություն՝ պարզապես դադարելով անհանգստանալ դրանց համար: Դա Հոգին է գործողության մեջ: Այս սուրբ տեղերը երկրի վրա Աստծո արքայության մեջ պահանջում են մեր ակնածանքը, մեր հարգանքը ուրիշների հանդեպ, ավետարանով ապրող մեր լավագույն եսը և մեր հույսերը, որպեսզի անտեսենք մեր վախերը և փնտրենք Հիսուս Քրիստոսի բժշկող զորությունը Նրա Քավության միջոցով:

Աստծո այս սուրբ տեղերում և Նրա զավակների սրտերում տեղ չկա վախի համար: Ինչո՞ւ: Միրո շնորհիվ: Աստված միշտ սիրում է մեզ և մենք սիրում ենք նրան: Մեր սերը Աստծո հանդեպ ժխտում է բոլոր վախերը, իսկ Նրա սերը առատությամբ է լցնում սուրբ տեղերը: Մտածեք այդ մասին: Երբ մենք անվստահ ենք Տիրոջ հանդեպ մեր հանձնառություններում, երբ շեղվում ենք դեպի հավերժական կյանք տանող Նրա ճանապարհից, երբ կասկածի տակ ենք դնում մեր նշանակությունը Նրա աստվածային ծրագրում, երբ թույլ ենք տալիս, որ վախը բացի բոլոր դռները հուսահատության, բարկության, ձախորդության ու հիասթափության առջև, այդժամ Հոգին լքում է մեզ, և մենք մնում ենք առանց Տիրոջ աջակցության: Եթե դուք գիտեք, թե դա ինչպես է լինում, ուրեմն գիտեք, որ դա լավ տեղ չէ գտնվելու համար: Փոխարենը, երբ մենք կանգնում ենք սուրբ տեղերում, կարող ենք զգալ Աստծո սերը, «քանզի կատարյալ սերը հեռացնում է ամեն վախ»:[16]

Հաջորդ խոստումն է՝ «Մի՛ խռովվեք»:[17] Անկախ այն բանից, թե որքան շատ են ամբարշտությունն ու քաոսն աշխարհում, մեզ խոստացվել է «Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամեն մտքից վեր է», եթե մենք հավատարիմ մնանք Հիսուս Քրիստոսին:[18] Եվ երբ Քրիստոսը գա իր ողջ զորությամբ ու փառքով, չարը, խռովությունը և անարդարությունը կվերանան:

Շատ վաղուց Պողոս Առաքյալը մարգարեացել է մեր ժամանակների մասին՝ ասելով երիտասարդ Տիմոթեոսին.

«Սա գիտացիր, որ յետի օրերումը չար ժամանակներ կ՚գան։

Որովհետեւ մարդիկ կլինին ինքնասէր, արծաթասէր, ամբարտաւան, հպարտ, հայհոյիչ, ծնողների անհնազանդ, ապերախտ, անսուրբ,

. . . աւելի ցանկասէր քան թէ աստուածասէր»։[19]

Հիշեք, որ վարագույրի երկու կողմերում «մեզ հետ եղողները», ովքեր սիրում են Տիրոջը իրենց ողջ սրտով, զորությամբ, մտքով և ուժով, ավելի «շատ են քան թէ նորանց հետ եղողները»։[20] Եթե մենք վստահում ենք Տիրոջը և նրա ուղիներին, եթե մենք եռանդունորեն ընդգրկված ենք Նրա աշխատանքում, մենք չենք վախենա աշխարհի փոփոխություններից և չենք մտահոգվի դրանցով։ Ես խնդրում եմ ձեզ անտեսել աշխարհիկ ազդեցություններն ու մտահոգությունները և հոգևորություն փնտրել ձեր առօրյա կյանքում։ Սիրեք այն, ինչ Տերն է սիրում, որը ներառում է՝ Նրա պատվիրանները, Նրա սուրբ տները, Նրա հետ կապած մեր սուրբ ուխտերը, հաղորդությունը ամեն Հանգստության օրը, մեր հաղորդակցությունը աղոթքի միջոցով, և դուք երբեք չեք անհանգստանա։

Վերջին խորհուրդը. Վստահեք Տիրոջը և Նրա խոստումներին։ Ես գիտեմ, որ Նրա խոստումները կիրականանան։ Ես գիտեմ դա այնքան հաստատ, որքանով որ կանգնած եմ ձեր առջև այս սուրբ ժողովին։

Տերը հայտնությամբ ասել է. «Քանզի նրանք, ովքեր իմաստուն են և ընդունել են ճշմարտությունը, և վերցրել են Սուրբ Հոգին որպես իրենց ուղեկից, և չեն խաբվել,– ճշմարիտ ասում եմ ձեզ, նրանք չպիտի կտրվեն և կրակի մեջ գցվեն, այլ պիտի մնան այդ օրը»։[21]

Ահա թե ինչու մեզ չպիտի անհանգստացնի այս օրերի խառնաշփոթը, որը ստեղծվում է մեծ ու ընդարձակ շենքում գտնվողների կողմից, նրանց կողմից, ովքեր ծաղրում են ազնիվ ջանքերը և Տեր Հիսուս Քրիստոսին նվիրված ծառայությունը։ Լավատեսությունը, քաջությունը, նույնիսկ գթությունը գալիս են այն սրտից, որը ծանրաբեռնված չէ անհանգստություններով ու խառնաշփոթով։ Նախագահ Նելսոնը, ով «լավատես է ապագայի վերաբերյալ», հիշեցրել է մեզ. «Եթե պիտի որևէ հույս ունենանք անհամար ձայների և մարդկանց փիլիսոփայությունների միջից մաղել ճշմարտությունը, մենք պետք է սովորենք հայտնություն ստանալ»։[22]

Անձնական հայտնություն ստանալու համար մենք պետք է առաջնահերթությունը տանք ավետարանով ապրելուն և խրախուսենք հավատարմությունն ու հոգևորությունը՝ թե՛ մեր, թե՛ ուրիշների մեջ։

Սպենսեր Վ. Քիմբալն իմ պատանեկության տարիների մարգարեներից մեկն էր։ Առաքյալ կանչվելուց հետո վերջին մի քանի տարիների ընթացքում ես խաղաղություն գտա նրա առաջին ելույթի մեջ, որը նա տվել էր 1943թ. գերագույն համաժողովին։ Նա ամբողջովին տոգորված էր իր կոչումով, և ես գիտեմ, թե դա ինչ է նշանակում։ Երեց Քիմբալն ասել է. «Ես շատ մտածեցի, աղոթեցի, ծոմ պահեցի և աղոթեցի։ Կային հակասական մտքեր, որոնց մասին ես չէի կարող չմտածել, թվում էր՝ ձայներն ասում էին. «Դու չես կարող կատարել այդ աշխատանքը։ Դու արժանավոր չես։ Դու չունես այդ կարողությունը», բայց վերջում միշտ գալիս էր հաղթական միտքը. «Դու պետք է կատարես հանձնարարված աշխատանքը, պետք է դառնաս կարողունակ, արժանավոր և կատարելագործված»։ Եվ պայքարը թեժանում էր»։[23]

Ես քաջալերվեցի այս Առաքյալի անկեղծ վկայությունից, ով այնուհետև դարձավ այս հզոր Եկեղեցու 12-րդ նախագահը։ Նա հասկացավ, որ պետք է հետևում թողնի իր վախերը «որպեսզի կատարի հանձնարարված աշխատանքը» և զորության համար պետք է ապավինի Տիրոջը, որպեսզի դառնա «կարողունակ, արժանավոր և կատարելագործված»։ Մենք նույնպես կարող եք։ Պայքարը դեռ կշարունակվի, բայց մենք կբախվենք դրանց Տիրոջ Հոգով։ Մենք «չենք խռովվի», քանի որ երբ կանգնում ենք Տիրոջ կողքին, և պաշտպանում ենք Նրա հավերժական ծրագիրը, մենք կանգնում ենք սուրբ հողին։



Այժմ, ինչ եղավ այդ դստեր և նրա ամուսնու հետ, ովքեր տվեցին այդ անկեղծ, մանրամասն ու վախկոտ հարցը տարիներ առաջ: Նրանք լրջորեն քննարկեցին մեր հարցազրույցը այդ երեկո, աղոթեցին, ծոմ պահեցին և հանգեցին իրենց սեփական եզրակացությանը: Ի երջանկություն և ուրախություն իրենց և մեզ, հիմա նրանք օրհնված են յոթ հրաշալի զավակներով և առաջ են ընթանում հավատով ու սիրով:

Լավատես եղեք, եղբայրնե՛ր և քույրե՛ր: Այո, մենք ապրում ենք «չար ժամանակներում», բայց երբ կանգնում ենք ուխտի արահետին, մենք չպիտի վախենանք: Ես օրհնում եմ ձեզ, որ երբ դուք այդպես վարվեք, ձեզ չեն անհանգստացնի այն իրադարձությունները, որոնք կատարվում են ձեր շուրջը կամ դժվարությունները, որոնք հանդիպում են ձեր ճանապարհին: Ես օրհնում եմ ձեզ, որ դուք ընտրեք կանգնել սուրբ տեղերում և «չշարժվեք»: Ես օրհնում եմ ձեզ, որ դուք հավատաք Հիսուս Քրիստոսի խոստումներին, որ Նա ապրում է, Նա հսկում է մեզ, հոգ է տանում մեր մասին և կանգնած է մեր կողքին: Մեր Տեր և Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մարկոս 4.37
2. Բ Թագավորաց 6.14
3. Բ Թագավորաց 6.15
4. Բ Թագավորաց 6.16
5. Բ Թագավորաց 6.17
6. Վարդապետություն և Ուխտեր 68.6
7. Վարդապետություն և Ուխտեր 6.36
8. Վարդապետություն և Ուխտեր 6.34
9. Բ Թագավորաց 6.16
10. Վարդապետություն և Ուխտեր 6.34
11. Վարդապետություն և Ուխտեր 76.22
12. Վարդապետություն և Ուխտեր 20.77
13. Ռասսել Մ. Նելսոն,«Հայտնություն եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Լիահոնա,* մայիս 2018, 96
14. Վարդապետություն և Ուխտեր 45.32
15. Վարդապետություն և Ուխտեր 45.35
16. Մորոնի 8.16
17. Վարդապետություն և Ուխտեր 45.35
18. Փիլիպպեցիս 4.7
19. 2 Տիմոթեոս 3.1–2, 4
20. Բ Թագավորաց 6.16
21. Վարդապետություն և Ուխտեր 45.57
22. Ռասսել Մ. Նելսոն, «Հայտնություն եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», 96
23. Spencer W. Kimball, in Conference Report, Apr. 1943, 16–17.

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Տասներկու Առաքյալների Քվորումից

«Որ ամեն բան բովանդակուի Քրիստոսումը»

Փրկիչի ավետարանի մեզ փոխակերպելու և օրհնելու զորությունը բխում է Նրա վարդապետությունը, սկզբունքները և գործառույթները ճանաչելուց և կիրառելուց:

Պարանը մի կարևոր գործիք է, որի հետ մենք բոլորս ծանոթ ենք: Պարանները պատրաստվում են հյուսվածքի, բույսերի, մետաղալարի կամ այլ նյութերի փնջերից, որոնցից յուրաքանչյուրը ոլորվում է, ապա միահյուսվում միմյանց հետ: Հետաքրքիր է, որ նյութերը, որոնք կարող են լինել միանգամայն ոչ բացառիկ, կարող են միահյուսվել և դառնալ բացառիկ ուժեղ: Այսպիսով, սովորական նյութերի արդյունավետ միացումը և կապակցումը միմյանց հետ կարող է ստեղծել մի արտասովոր գործիք:

Ինչպես պարանը իր ուժը ձեռք է բերում բազմաթիվ ներհյուսված առանձին փնջերից, այդպես էլ Հիսուս Քրիստոսի ավետարանը տալիս է ճշմարտության մեծագույն հեռանկարը և առաջարկում ամենահարուստ օրհնությունները, երբ մենք ականջ ենք դնում Պողոսի հորդորին. «որ ամեն բան բովանդակուի Քրիստոսումը, ինչ որ երկնքումն է՝ եւ ինչ որ երկրումը, նորանում»:[1] Կարևորն այն է, որ ճշմարտության այս կենսականորեն կարևոր հավաքումը կենտրոնացած և ամփոփված է Տեր Հիսուս Քրիստոսի վրա, որովհետև Նա է «ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը»:[2]



Աղոթում եմ, որ Սուրբ Հոգին լուսավորի մեզանից յուրաքանչյուրին, երբ մենք մտածենք, թե առօրյա կյանքում հետևյալ սկզբունքը՝ *ամեն բան բովանդակուի Քրիստոսումը,* գործնական ուղիներով ինչպես է վերաբերում Նրա վերականգնված ավետարանը սովորելուն և դրանով ապրելուն:

Բացահայտող ժամանակաշրջան

Մենք ապրում ենք Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցու ուշագրավ և բացահայտող ժամանակաշրջանում: Այսօր հայտարարված պատմական ճշգրտումներն ունեն միայն մեկ ընդհանուր նպատակ՝ զորացնել հավատք Երկնային Հոր և Նրա ծրագրի, Նրա Որդի Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ: Կիրակնօրյա ժողովի օրակարգը պարզապես չի կարճացել: Այլ, այժմ մենք որպես անհատներ և ընտանիքներ ունենք ավելի մեծ հնարավորություններ ու պատասխանատվություն տանը և Եկեղեցում մեր ժամանակն օգտագործել Հանգստության օրը վեհացնելու և բերկրանք դարձնելու համար:

Անցյալ ապրիլին փոխվեց քահանայության քվորումների ոչ միայն կազմակերպչական կառուցվածքը: Ավելի շուտ շեշտադրում և զորություն տրվեց մեր քույրերին և եղբայրներին ավելի բարձր և ավելի սուրբ ձևով սպասավորման համար:

Պարանի ոլորված փնջերի նման, որից առաջանում է հզոր և դիմացկուն գործիք, այս բոլոր փոխկապակցված գործողությունները մաս են հանդիսանում միացյալ ջանքերի, որպեսզի կիզակետը, ռեսուրսները և Փրկիչի վերականգնված եկեղեցու աշխատանքը ավելի լավ համաձայնեցնեն նրա հիմնական առաքելության հետ՝ օգնել Աստծուն իրականացնել Իր զավակների փրկության ու վեհացման աշխատանքը: Խնդրում ենք հիմնականում մի կենտրոնացեք հայտարարվածի տեխնիկական կողմի վրա: Մենք չպիտի թույլ տանք, որ ընթացակարգային մանրամասները մթագնեն համապարփակ հոգևոր

պատճառները, որոնք առաջացնում են այդ փոփոխություններն այժմ:

Մեր ցանկությունն է, որ հավատքը Հոր ծրագրի և Փրկիչի քավիչ առաքելության հանդեպ կարողանա մեծանալ երկրագնդի վրա, և Փրկիչի հավիտենական ուխտը կարողանա հաստատվել:[3] Մեր միակ նպատակն է նպաստել դեպի Տերը շարունակվող դարձին և լիարժեք սիրել ու ավելի արդյունավետ ծառայել մեր եղբայրներին ու քույրերին:

Մասնատում և բաժանում

Երբեմն մենք՝ որպես Եկեղեցու անդամներ, մասնատում ենք, առանձնացնում և կիրառում ավետարանը մեր կյանքում՝ ստեղծելով անձնական ուսումնասիրության թեմաների երկար ցուցակներ և իրականացնելով հանձնարարություններ: Բայց այդպիսի մոտեցումը, հնարավոր է, սահմանափակի մեր ընբռնումը և հեռանկարը: Մենք պետք է զգույշ լինենք, որովհետև փարիսեցիական կենտրոնացումը ցուցակների վրա կարող է շեղել մեզ Տիրոջն ավելի մոտենալուց:

Նպատակը և մաքրագործումը, երջանկությունն ու ուրախությունը և շարունակվող դարձն ու պաշտպանվածությունը, որը գալիս է «[մեր] սրտերը Աստծուն ենթարկելուց»[4] և «Նրա [պատկերը] [մեր] դեմքերին [ստանալուց]»,[5] չի կարող ձեռք բերվել միայն կատարելով և ստուգելով բոլոր հոգևոր բաները, որոնք մենք պետք է անենք: Ավելի շուտ Փրկիչի ավետարանի մեզ փոխակերպելու և օրհնելու զորությունը տեղի է ունենում նրա վարդապետությունը, սկզբունքները և գործառույթները ճանաչելուց և կիրառելուց: Միայն այն ժամանակ, երբ «ամեն բան բովանդակուի Քրիստոսումը», ամուր կենտրոնանալով Նրա վրա, ավետարանի ճշմարտությունները փոխհամաձայնությամբ կարող են հնարավորություն տալ մեզ դառնալ այն, ինչ Աստված է ցանկանում, որ մենք դառնանք[6] և համբերենք արիաբար մինչև վերջ:[7]

Սովորել և կապակցել ավետարանական ճշմարտությունները

Հիսուս Քրիստոսի ավետարանը ճշմարտության «նրբակերտորեն ձևավորված» և միմյանց միահյուսված[8] հոյակապ գոբելեն է: Երբ մենք սովորում ենք և միմյանց կապակցում բացահայտված ավետարանական ճշմարտությունները, մենք օրհնվում ենք՝ ստանալով անգին հեռանկար և աճող հոգևոր ունակություն՝ աչքերի միջոցով, որոնք կարող են տեսնել Տիրոջ ազդեցությունը մեր կյանքում և ականջներով, որոնք կարող են լսել Նրա ձայնը:[9] *Այսինքն՝ Նրանում միասին հավաքելու* սկզբունքը կարող է օգնել մեզ փոխել ավանդական ստուգացուցակները՝ դարձնելով դրանք միավորված, միակցված և կատարյալ ամբողջություն: Թույլ տվեք ներկայացնել ինչպես վարդապետական, այնպես էլ Եկեղեցու մի օրինակ այն բանի վերաբերյալ, ինչ ես եմ առաջարկում:

Օրինակ 1: Հավատքի չորրորդ հանգանակը հրաշալի լուսաբանում է «ամեն բան բովանդակուի Քրիստոսումը» սկզբունքը. «Մենք հավատում ենք, որ Ավետարանի առաջնային սկզբունքներն ու արարողություններն են. առաջին՝ Հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս. երկրորդ՝ Ապաշխարություն. երրորդ՝ ընկղմումով Մկրտություն մեղքերի թողության համար. չորրորդ՝ Ձեռնադրում Սուրբ Հոգու պարգևի համար»:[10]

Ճշմարիտ հավատքը կենտրոնացած է Տեր Հիսուս Քրիստոսի

վրա և մեջ. Նրա մեջ՝ որպես Հոր Աստվածային և Միածին Որդի, և Նրա վրա և Նրա կատարած քավիչ առաքելության վրա: «Քանզի նա բավարարել է օրենքի պահանջները, և նա պահանջում է բոլոր նրանց, ովքեր հավատք ունեն առ նա. և նրանք, ովքեր հավատք ունեն առ նա, կհարեն այն ամենին, ինչ բարի է. ուստի, նա բարեխոսում է մարդկանց զավակների գործի համար»:[11] Հավատք գործադրել Քրիստոսում նշանակում է *վստահել* և հավատալՆրան՝ որպես մեր Փրկիչ, Նրա անվանը և Նրա խոստումներին:

Փրկիչին վստահելու առաջին և բնական հետևանքը ապաշխարելն ու չարից հեռանալն է: Երբ հավատք ենք գործադրումՏիրոջ հանդեպ, մենք բնականաբար շրջվում ենք և գալիս դեպի Նա ու կախված լինում Նրանից: Այսպիսով, ապաշխարությունը Քավիչին *վստահելն* ու *ապավինելն է*, որ մեզ համար անի այն, ինչ մենք չենք կարող անել ինքներս մեզ համար: Մեզանից յուրաքանչյուրը պետք է «ամբողջովին [*ապավինի*] նրա արժանիքներին, որը հզոր է փրկելիս»[12] որովհետև միայն «Սուրբ Մեսիայի արժանիքների, ողորմության և շնորհի միջոցով»[13] մենք կարող ենք դառնալ նոր արարածներ Քրիստոսում[14] և, ի վերջո, վերադառնալ և ապրել Աստծո ներկայության մեջ:

Մեղքերի թողության համար ընկղմումով մկրտության արարողությունը պահանջում է մեզանից *վստահել* Նրան, *ապավինել* Նրան և *հետևել* Նրան: Նեփին հայտարարեց. «Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ, ես գիտեմ, որ եթե դուք հետևեք Որդուն սրտի ողջ նվիրվածությամբ, չգործելով ոչ կեղծավորություն, ոչ էլ խաբեություն Աստծո առաջ, այլ իսկական վճռականությամբ, ապաշխարելով ձեր մեղքերից, վկայելով Հորը, որ դուք կամենում եք վերցնել ձեզ վրա Քրիստոսի անունը մկրտությամբ,— այո, հետևելով ձեր Տիրոջը և ձեր Փրկչին, մտնելով ջուրը, համաձայն նրա խոսքի, ահա, այն ժամանակ, դուք կստանաք Սուրբ Հոգին. այո, այն ժամանակ կգա կրակով և Սուրբ Հոգով մկրտությունը»:[15]

Սուրբ Հոգու պարգևի համար ձեռնադրման արարողությունը պահանջում է մեզանից *վստահել* Նրան, *ապավինել* Նրան, *հետևել* Նրան և *առաջ շարժվել* Նրանով և Նրա Սուրբ Հոգու օգնությամբ: Ինչպես հայտարարեց Նեփին. «Եվ արդ, . . . ես գիտեմ, որ մինչև մարդ չհամբերի մինչև վերջ, հետևելով կենդանի Աստծո Որդու օրինակին, նա չի կարող փրկվել»:[16]

Հավատո հանգանակի չորրորդ կետը չի նշում պարզապես վերականգնված ավետարանի հիմնական սկզբունքներն ու արարողությունները: Ավելի շուտ, համոզմունքների այս ոգեշնչված հռչակումը «ամեն բան բովանդակում է Քրիստոսումը». *վստահելով* Նրան, *ապավինելով* Նրան, *հետևելով* Նրան և *առաջ շարժվելով* Նրա հետ:

Օրինակ 2: Այժմ ես կկամենայի նկարագրել, թե ինչպես են Եկեղեցու բոլոր ծրագրերն ու նախաձեռնությունները բովանդակվում Քրիստոսում: Լրացուցիչ շատ լուսաբանումներ կարող են ներկայացվել, ես կօգտագործեմ միայն մի քանի ընտրվածները:

1978 թվականին Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը հրահանգեց Եկեղեցու անդամներին զորացնել Սիոնը ողջ աշխարհում: Նա խորհուրդ տվեց Սրբերին մնալ իրենց հայրենի հողում և հաստատել ուժեղ ցցեր՝ հավաքելով Աստծո ընտանիքը և ուսուցանելով նրանց Տիրոջ ուղիները: Այնուհետև նա նշեց, որ ավելի շատ տաճարներ են կառուցվելու և խոստացավ օրհնություններ սրբերին, որտեղ էլ որ նրանք ապրեն աշխարհում:[17]

Երբ ցցերի թիվը մեծացավ, անդամների տների համար մեծացավ կարիքը «դառնալու [վայրեր], որտեղ ընտանիքի անդամները [սիրում էին] լինել, որտեղ նրանք [կարող էին] հարստացնել իրենց կյանքը և գտնել փոխադարձ սեր, աջակցություն, գնահատանք և քաջալերանք»:[18] Հետևաբար, 1980 թվականին կիրակնօրյա ժողովները, միացվեցին երեքժամյա օրակարգի մեջ «վերաշեշտադրելու անձնական և ընտանեկան պատասխանատվությունը՝ ավետարանը սովորելու, ապրելու և ուսուցանելու համար»:[19] Ընտանիքի և տան վրա այս շեշտադրումը կրկին հաստատվեց «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» փաստաթղթում, որը ներկայացվեց Գորդոն Բ. Հինքլիի կողմից 1995 թվականին:[20]

1998 թվականի ապրիլին Նախագահ Հինքլին հայտարարեց ավելի փոքր բազմաթիվ տաճարների կառուցման մասին, դրանով Տիրոջ Տան սրբազան արարողություններն ավելի մոտեցնելով Վերջին Օրերի Սուրբ անհատներին և ընտանիքներին ողջ աշխարհում:[21] Եվ այս ընդլայնված հնարավորությունները հոգևոր աճի և զարգացման համար լրացվեցին նյութական ինքնապահովմանն առնչվող աճով՝ Կրթության մշտական հիմնադրամի ներդրման միջոցով 2001 թվականին:[22]

Իր ղեկավարման ընթացքում Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հաճախակի հորդորում էր սրբերին գնալ «օգնության» և շեշտում աղքատների ու կարիքավորների մասին հոգ տանելու կարևորությունը, որպես Եկեղեցու աստվածայնորեն

հանձնարարված պարտականություններ: Շարունակելով շեշտադրումը նյութական նախապատրաստվածության վրա, 2012 թվականին իրականացվեց Ինքնապահովման ծառայությունների նախաձեռնությունը:

Անցած մի քանի տարիների ընթացքում Հանգստության օրը բերկրանք դարձնելու հիմնական սկզբունքները տանը և Եկեղեցում շեշտադրվեցին և ամրացվեցին,[23] այսպիսով նախապատրաստելով մեզ Կիրակնօրյա ժողովի ժամանակացույցի ճշգրտմանը, որը հայտարարվեց զերագույն համաժողովի այս նիստում:

Իսկ վեց ամիս առաջ Մելքիսեդեկյան քահանայության քվորումները զորացվեցին և արդյունավետորեն համապատասխանեցվեցին օժանդակ կազմակերպությունների հետ՝ իրականացնելու ավելի բարձր և ավելի սուրբ մոտեցում սպասավորմանը:

Հավատում եմ, որ այս գործողությունների հաջորդականությունն ու ժամկետները շատ տասնամյակների ընթացքում կարող են օգնել մեզ տեսնել մեկ միասնական և համապարփակ աշխատանք և ոչ թե մի շարք անկախ և առանձին նախաձեռնություններ: «Աստված հայտնել է հոգևոր առաջընթացի ձևը անհատների և ընտանիքների համար՝ տնակենտրոն և Եկեղեցու կողմից աջակցվող արարողությունների, ուսուցման, ծրագրերի և միջոցառումների միջոցով: Եկեղեցու կազմակերպությունները և ծրագրերը գոյություն ունեն՝ օրհնելու անհատներին և ընտանիքներին և ինքնանպատակ չեն»:[24]

Ես աղոթում եմ, որ մենք ճանաչենք Տիրոջ աշխատանքը որպես մեկ համաշխարհային մեծ աշխատանք, որը դառնում է տնակենտրոն և աջակցվում է Եկեղեցու կողմից: Ես գիտեմ և վկայում եմ, որ Տերը հայտնում է և դեռ շատ մեծ ու կարևոր բաներ է հայտնելու Աստծո Արքայության վերաբերյալ:[25]

Խոստում և վկայություն

Ես սկսեցի իմ ուղերձը՝ լուսաբանելով այն ուժը, որը ստեղծվում է, երբ նյութի առանձին փնջերը ոլորվում են կամ հյուսվում միմյանց հետ՝ դառնալով պարան: Նույն ձևով ես խոստանում եմ, որ մեծացող հեռանկարը, նպատակը և զորությունը ակնհայտ կլինի, երբ սովորենք ու ապրենք Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանով, և ձգտենք ամեն բան բովանդակել Քրիստոսում՝ այսինքն Նրա մեջ:

Հավերժական հետևանքի բոլոր հնարավորություններն ու օրհնություններն առաջանում են, հնարավոր են և ունեն նպատակ՝ հարատևել շնորհիվ Տեր Հիսուս Քրիստոսի և Նրա միջոցով: Ինչպես Ալման է վկայել. «Չկա ոչ մի ուրիշ ճանապարհ կամ միջոց, որով մարդ կարողանա փրկվել՝ միայն Քրիստոսի մեջ է և Նրա միջոցով: Ահա, նա է կյանքն ու լույսն աշխարհի»:[26]

Ես ուրախությամբ եմ հռչակում իմ վկայությունը Հավերժական Հոր և Նրա Սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի աստվածային և կենդանի իրողության մասին: Մեր Փրկիչի մեջ ենք մենք գտնում ուրախություն: Եվ Նրա մեջ ենք մենք գտնում երաշխիք՝ «խաղաղություն այս աշխարհում և հավերժական կյանք գալիք աշխարհում»:[27] Այսպես եմ ես վկայում Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Եփեսացիս 1.10
2. Հովհաննես 14.6
3. Տես Վարդապետություն և Ուխտեր 1.21–22:
4. Հելաման 3.35
5. Ալմա 5.14
6. Տես Մատթեոս 5.48, 3 Նեփի 12.48:
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.29:
8. Եփեսացիս 2.21
9. Տես Վարդապետություն և Ուխտեր 136.32:
10. Հավատո Հանգանակ 1.4
11. Մորոնի 7.28
12. 2 Նեփի 31.19
13. 2 Նեփի 2.8
14. Տես Բ Կորնթացիս 5.17:
15. 2 Նեփի 31.13, շեշտադրումն ավելացված է:
16. 2 Նեփի 31.16:
17. See Spencer W. Kimball, “The Fruit of Our Welfare Services Labors,” *Ensign,* Nov. 1978, 76.
18. Instructions for stake presidencies and bishoprics, in “Church Consolidates Meeting Schedules,” *Ensign,* Mar. 1980, 73.
19. Instructions, in “Church Consolidates Meeting Schedules,” 73.
20. Տես «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա, մայիս* 2017, 145:
21. Տես Gordon B. Hinckley, “New Temples to Provide ‘Crowning Blessings’ of the Gospel,” *Ensign,* May 1998, 87–88:
22. Տես Գորդոն Բ. Հինքլի, «Կրթության մշտական հիմնադրամ», *Լիահոնա,* հուլիս 2001:
23. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Կիրակին բերկրանք է», *Լիահոնա*, մայիս, 2015, 129–32:
24. *Ձեռնարկ 2. Սպասավորել Եկեղեցում* (2010), 1.4, շեշտադրումն ավելացված է:
25. Հավատո Հանգանակ 1.9
26. Ալմա 38.9
27. Վարդապետություն և Ուխտեր 59.23

Նախագահ Դալլին Հ. Օուքս
Առաջին Նախագահության առաջին խորհրդական

Ճշմարտությունը և ծրագիրը

Երբ կրոնի մասին ճշմարտություն ենք փնտրում, պետք է օգտագործենք այդ որոնմանը համապատասխան հոգևոր մեթոդներ։

Ժամանակակից հայտնությունը ճշմարտությունը սահմանում է որպես. «գիտություն բաների մասին, ինչպես որ կան, և ինչպես որ կային, և ինչպես որ կլինեն» (ՎևՈւ 93.24)։ Դա կատարյալ սահմանում է փրկության ծրագրի և «Ընտանիք. հայտարարություն աշխարհին» հռչակագրի համար։

Մենք ապրում ենք մեծ տարածում ունեցող տեղեկատվության դարում։ Բայց այդ տեղեկություններից ոչ բոլորն են ճշմարիտ։ Մենք պետք է զգույշ լինենք ճշմարտությունը փնտրելիս և դա գտնելու համար անհրաժեշտ աղբյուրներն ընտրելիս։ Մենք չպետք է աշխարհիկ հռչակը կամ իշխանությունը համարենք ճշմարտության որակյալ աղբյուրներ։ Մենք պետք է զգույշ լինենք այն տեղեկատվությանը կամ խորհրդին վստահելիս, որոնք առաջարկում են ժամանցային աստղերը, հայտնի մարզիկները կամ համացանցի անանուն աղբյուրները։ Մասնագիտական ունակությունը մեկ ոլորտում չի կարելի շփոթել մեկ այլ ոլորտում ճշմարտության մասին մասնագիտական ունակության հետ։

Պետք է նաև զգուշանալ, թե որն է տեղեկությունը տրամադրողի շարժառիթը։ Ահա թե ինչու են սուրբ գրությունները զգուշացնում քահանանենգության մասին (տես 2 Նեփի 26.29)։ Եթե աղբյուրը անանուն կամ անհայտ է, ապա տեղեկատվությունը նույնպես կարող է կասկածելի լինել։

Մեր անձնական որոշումները պետք է հիմնված լինեն այն աղբյուրների տվյալների վրա, որոնք առնչվում են թեմային և զերծ են եսասեր շարժառիթներից։

I.

Երբ կրոնի մասին ճշմարտություն ենք փնտրում, պետք է օգտագործենք այդ որոնմանը համապատասխան հոգևոր մեթոդներ. աղոթք, Սուրբ Հոգու վկայություն, սուրբ գրությունների ուսումնասիրություն և ժամանակակից մարգարեների խոսքերը։ Ես միշտ տխրում եմ, երբ լսում եմ մի մարդու, ով պատմում է, որ աշխարհիկ ուսմունքների պատճառով կորցրել է կրոնական հավատքը։ Այն մարդիկ, ովքեր մի անգամ հոգևոր տեսլական են ունեցել, կարող են տառապել իրենք իրենց հասցրած հոգևոր կորությունից։ Ինչպես Նախագահ Հենրի Բ. Այրինգը ասել է. «Նրանց խնդիրը նրանում չէ, որ իրենք կարծում են թե տեսնում են, այլ նրանում է, ինչ իրենք դեռ չեն կարող տեսնել»։[1]

Գիտության մեթոդները մեզ առաջնորդում են դեպի այն, ինչ մենք անվանում են գիտական ճշմարտություն։ Սակայն, «գիտական ճշմարտությունը» ողջ կյանքը չէ։ Նրանք, ովքեր չեն սովորում «ուսումնասիրելով և նաև հավատքով» (Վարդապետություն և Ուխտեր 88.118), ճշմարտության մասին իրենց պատկերացումները սահմանափակում են նրանով, ինչը կարող են ստուգել գիտական միջոցներով։ Դա արհեստական սահմանափակումներ է առաջացնում ճշմարտությունը որոնելու նրանց ճանապարհին։

Նախագահ Ջեյմս Ե. Ֆաուստն ասել է. «Նրանք, ովքեր [մկրտվել] են, իրենց հավերժական հոգին վտանգի են ենթարկում, երբ հետևում են միայն աշխարհիկ աղբյուրի ուսուցմանը։ Մենք հավատում ենք, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ունի Քրիստոսի ավետարանի լրիվությունը, որի ավետարանը ճշմարտության և հավերժական գիտելիքի էությունն է»։[2]

Մենք ճշմարիտ և հարատև ուրախություն ենք գտնում, երբ իմանում և գործում ենք ըստ այն ճշմարտության, թե ովքեր ենք մենք, որն է մահկանացու կյանքի իմաստը և ուր ենք գնալու մահից հետո։ Այդ ճշմարտությունները հնարավոր չէ սովորել գիտական կամ աշխարհիկ մեթոդներով։

II.

Այժմ, ես կխոսեմ վերականգնված ավետարանի ճշմարտությունների մասին, որոնք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու վարդապետության հիմքն են կազմում: Խնդրում եմ, ուշադիր ուսումնասիրեք հետևյալ ճշմարտությունները: Դրանք շատ բան են բացատրում մեր վարդապետության և սովորույթների մասին, այդ թվում այնպիսի բաներ, որոնք դեռևս չեն հասկացվում:

Կա մի Աստված, ով սիրառատ Հայրն է բոլորի հոգիների, ովքեր երբևէ ապրել են կամ կապրեն:

Մեռը հավերժական է: Երկրի վրա ծնվելուց առաջ մենք բոլորս ապրում էինք որպես արական կամ իգական սեռի հոգիներ Աստծո ներկայության մեջ:

Մենք նոր լսեցինք, թե ինչպես է Տաճարային Հրապարակի Թաբերնաքլի երգչախումբը երգում «Ես կհետևեմ Աստծո ծրագրին» օրհներգը:[3] Դա Աստծո հաստատած ծրագիրն է, որ Նրա բոլոր հոգևոր զավակները կարողանան հավերժ զարգանալ: Այդ ծրագիրը կարևոր է մեզանից յուրաքանչյուրի համար:

Համաձայն այդ ծրագրի, Աստված ստեղծել է այս Երկիրը, որտեղ Նրա սիրելի հոգևոր զավակները կարող են ծնվել մահկանացու կյանքում, որպեսզի ստանան ֆիզիկական մարմին և արդար ընտրություններ կատարելով հավերժական առաջընթացի հնարավորություն ունենան:

Որպեսզի այդ ամենում իմաստ լիներ, անհրաժեշտ էր, որ մահկանացու ընտրությունները կատարվեին բարու և չարի հակառակ ուժերի միջև: Պետք է լիներ ընդդիմություն, այսինքն՝ հակառակորդ, ով ապստամբության պատճառով դուրս էր գցվել, թույլատրվել գայթակղել և փորձել Աստծո ժողովրդին, որպեսզի հակադրվեր Աստծո ծրագրին:

Աստծո ծրագրի նպատակն էր Իր զավակներին հնարավորություն տալ ընտրել հավերժական կյանքը: Դրան կարելի էր հասնել միայն մահկանացու կյանքի փորձառության, իսկ մահից հետո՝ հոգևոր աշխարհում հետմահկանացու առաջընթացի շնորհիվ:

Մահկանացու կյանքի ընթացքում մենք բոլորս պետք է աղտոտվեինք մեղքի պատճառով, երբ ենթարկվեինք հակառակորդի չար գայթակղություններին և վերջապես մահանայինք: Մենք ընդունեցինք, որ այդ դժվարությունները կլինեն ծրագրի մի մասը, վստահ լինելով, որ Աստված՝ մեր Հայրը, կուղարկի մի Փրկիչ՝ Նրա Միածին Որդուն, ով կփրկի մեզ համընդհանուր հարության միջոցով և մահից հետո կշնորհի մարմնավորված կյանք: Նաև, Փրկիչը պետք է քավություն ապահովեր, որպեսզի Իր սահմանած պայմաններով բոլորի համար վճարեր մեղքից մաքրվելու գինը: Այդ պայմաններն էին՝ հավատք առ Քրիստոսը, ապաշխարություն, մկրտություն, Սուրբ Հոգու պարգևը և քահանայության իշխանությամբ կատարված այլ արարողությունները:

Աստծո երջանկության մեծ ծրագիրն ապահովում է կատարյալ հավասարակշռություն հավերժական արդարության և ողորմության միջև, որը մենք կարող ենք ձեռք բերել Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Այն նաև հնարավորություն է տալիս մեզ վերափոխվել և դառնալ նոր արարածներ Քրիստոսում:

Սիրառատ Աստված հասնում է մեզ բոլորիս: Մենք գիտենք, որ Նրա սիրո և Նրա Միածին Որդու քավության շնորհիվ, «*բոլոր* մարդիկ կարող են փրկվել՝ հնազանդվելով Իր Ավետարանի օրենքներին և արարողություններին»: (Հավատո Հանգանակ 1.3, շեշտադրումն ավելացված է):

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին հայտնի է որպես ընտանիքակենտրոն Եկեղեցի: Բայց չի հասկացվում, որ ընտանիքի վրա մեր կենտրոնացումը չի կենտրոնանում պարզապես մահկանացու հարաբերությունների վրա: Հավերժական հարաբերությունները նույնպես հիմնարար են մեր հավատքի համար: «Ընտանիքը հաստատված է Աստծո կողմից»:[4] Մեր սիրառատ Արարիչի մեծ ծրագրի համաձայն, Նրա վերականգնված Եկեղեցու առաքելությունն է՝ օգնել Աստծո զավակներին ձեռք բերել վեհացման գերբնական օրհնությունը սելեստիալ արքայությունում, որին կարելի է հասնել միայն տղամարդու և կնոջ միջև հավերժական ամուսնության շնորհիվ (տես Վարդապետություն և Ուխտեր 131.1–3): Մենք հաստատում ենք Տիրոջ այն ուսմունքները, որ «սեռն անհատի հիմնական բնութագիրն է նախաերկրային, երկրային և հավերժական կյանքի և նպատակի» և «տղամարդու և կնոջ ամուսնությունը հիմնական մասն է Նրա հավիտենական ծրագրի»:[5]

Ի վերջո, Աստծո սերն այնքան մեծ է, որ Նա փառքի ճակատագիր է տվել Իր բոլոր զավակներին, բացառությամբ այն մի քանիսի, ովքեր միտումնավոր դարձան կորուստի որդիներ: «Իր բոլոր զավակների» թվում են նաև բոլոր նրանք, ովքեր մահացել են: Մենք նրանց համար փոխարինող արարողություններ ենք կատարում մեր տաճարներում: Հիսուս Քրիստոսի Եկեղեցու նպատակը Աստծո զավակներին փառքի ամենաբարձր աստիճանին արժանի դարձնելն է, որը վեհացումը կամ հավերժական կյանքն է: Նրանց համար, ովքեր չեն ցանկանում կամ արժանի չեն դրան, Աստված տվել է այլ, ավելի փոքր փառքի թագավորություններ:

Բոլոր այն մարդիկ, ովքեր հասկանում են այս հավերժական ճշմարտությունները, կհասկանան, թե ինչու ենք մենք՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները, նման կերպ մտածում և վարվում:

III.

Այժմ, կնշեմ այդ հավերժական ճշմարտությունների որոշ կիրառումներ, որոնք կարելի հասկանալ միայն Աստծո ծրագրի լույսի ներքո:

Առաջինը, մենք պատվում ենք անհատի ազատ կամքը: Շատերը տեղյակ են ամբողջ աշխարհում կրոնական ազատության խթանման վերականգնված Եկեղեցու կատարած մեծ ջանքերի մասին: Այդ ջանքերը նպաստում են ոչ միայն մեր սեփական շահերին, այլև, ըստ Նրա ծրագրի, ձգտում են օգնել Աստծո բոլոր զավակներին վայելել ընտրելու ազատությունը:

Երկրորդը, մենք միսիոներ ժողովուրդ ենք: Երբեմն մեզ հարցնում են, թե ինչու ենք միսիոներներ ուղարկում այդքան շատ երկրներ, նույնիսկ քրիստոնեական բնակչության շրջաններ: Մենք նույն հարցն ենք ստանում, թե ինչու ենք միլիոնավոր դոլարների հասնող մարդասիրական օգնություն տրամադրում Եկեղեցու անդամ չհանդիսացող անձանց և ինչու այդ օգնությունը չենք համախմբում միսիոներական ջանքերի հետ: Մենք դա անում ենք, քանի որ մենք բոլոր մահկանացուներին հարգում ենք որպես Աստծո զավակներ, մեր եղբայրներ և քույրեր, և ցանկանում ենք մեր հոգևոր և աշխարհիկ առատությամբ կիսվել բոլորի հետ:

Երրորդը, մահկանացու կյանքը սուրբ է մեզ համար: Աստծո ծրագրին մեր նվիրվածությունը պահանջում է, որ մենք դեմ լինենք վիժեցմանը և էվթանազիային (գիտակցաբար վերջ դնել հիվանդի կյանքին):

Չորրորդը, ոմանք անհանգստացած են ամուսնության և երեխաների մասին մեր Եկեղեցու ունեցած դիրքորոշմամբ: Աստծո հայտնի դարձրած փրկության ծրագրի մասին մեր գիտելիքները պահանջում են, որ մենք հակառակվենք ներկայիս իրավական և սոցիալական ճնշումներին, որոնք վերաբերում են ավանդական ամուսնությունից նահանջելուն և այն փոփոխություններին, որոնք շփոթեցնում կամ վերափոխում են սեռը, կամ հավասարեցնում են տղամարդկանց և կանանց միջև սեռային տարբերությունները: Մենք գիտենք, որ տղամարդկանց և կանանց հարաբերությունները, ինքնությունը և գործառույթները կարևոր են Աստծո մեծ ծրագիրն իրականացնելու համար:

Հինգերորդը, մենք նաև, առանձնահատուկ հեռանկար ունենք երեխաների համար: Երեխաների լույս աշխարհ գալն ու դաստիարակությունը մենք համարում ենք Աստծո ծրագրի մասը և որպես հաճելի ու սրբազան պարտականություն նրանց համար, ում տրված է դրան մասնակցելու զորությունը: Մեր կարծիքով, երկրի և երկնքի ամենամեծ գանձերը մեր երեխաներն ու մեր սերունդներն են: Հետևաբար, մենք

պետք է ուսուցանենք և պայքարենք այն սկզբունքների և սովորույթների համար, որոնք լավագույն պայմաններն են ապահովում երեխաների, բոլոր երեխաների, զարգացման և երջանկության համար:

Վերջապես, Մենք Երկնային Հոր սիրելի զավակներն ենք, ով սովորեցրել է մեզ, որ արական ու իգական սեռը, տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը, և երեխաներ ծնելն ու դաստիարակելը կարևոր են Նրա երջանկության մեծ ծրագրում: Այս հիմունքների վերաբերյալ մեր դիրքորոշումները հաճախ հակադրվում են Եկեղեցուն: Մենք համարում ենք, որ դա անխուսափելի է: Ընդդիմությունը ծրագրի մի մասն է, և սատանայի ամենաուժեղ ընդդիմությունն ուղղված է այն ամենին, ինչը կարևոր է Աստծո ծրագրի համար: Նա ձգտում է կործանել Աստծո աշխատանքը: Նրա հիմնական մեթոդները Փրկիչին և Նրա աստվածային իշխանությունը վարկաբեկելն է, Հիսուս Քրիստոսի Քավության հետևանքները ջնջելն է, ապաշխարությունը խափանելն է, հայտնությունը կեղծելը և անձնական պատասխանատվությունը ժխտելն է: Նա նաև փորձում է խառնել սեռերը, խեղաթյուրել ամուսնությունը և խանգարել ծննդաբերություններին, հատկապես, այն ծնողների մոտ, ովքեր կմեծացնեն երեխաներին ճշմարտության մեջ:

IV.

Տիրոջ աշխատանքն առաջ է գնում, չնայած կազմակերպված և շարունակական ընդդիմությանը, որը դիմադրում է մեզ, երբ փորձում ենք կիրառել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ուսմունքները: Նրանց համար, ովքեր վարանում են այդ ընդդիմության ներքո, ես ունեմ այս առաջարկները:

Հիշեք ապաշխարության սկզբունքը, որը հնարավոր եղավ Հիսուս Քրիստոսի Քավության զորության շնորհիվ: Ինչպես Երեց Նիլ Ա. Մաքսվելն է հորդորել, մի եղեք նրանց թվում «ովքեր ավելի շուտ կփորձեն փոխել Եկեղեցին, քան իրենք կփոխվեն»:[6]

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը հորդորել է.

«Ամուր կառչեք նրանից, ինչ արդեն գիտեք և ամուր կանգնեք այնքան ժամանակ, մինչև լրացուցիչ գիտելիք կստանաք: . . .

«. . . Այս եկեղեցում այն, ինչ մենք գիտենք, միշտ ավելի կարևոր է նրանից, ինչ մենք չգիտենք»: [7]

Հավատք գործադրենք առ Տեր Հիսուս Քրիստոսը, որը ավետարանի առաջին սկզբունքն է:

Ի վերջո, օգնություն փնտրեք: Մեր Եկեղեցու ղեկավարները սիրում են ձեզ և հոգևոր առաջնորդություն են փնտրում, որպեսզի օգնեն ձեզ: Մենք բազմաթիվ միջոցներ ենք ներկայացնում, որոնք դուք կգտնեք LDS.org կայքում և տանը կատարած ավետարանի ուսումնասիրությունների արդյունքում: Մենք նաև ունենք սպասավորող եղբայրներ և քույրեր, որոնք կանչված են սիրալիր օգնություն ցուցաբերելու համար:

Մեր սիրող Երկնային Հայրը ցանկանում է, որ Իր զավակներն ունենան ուրախություն, որը մեր ստեղծման նպատակն է: Այդ ուրախ ճակատագիրը հավերժական կյանքն է, որը մենք կարող ենք ձեռք բերել առաջ ընթանալով այն ուղիով, որը մեր մարգարե Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հաճախ անվանում է «ուխտի ճանապարհ»: Որպես Եկեղեցու Նախագահ, ահա թե ինչ է ասել նա իր առաջին ուղերձի ժամանակ. «Մնացեք ուխտի ճանապարհի վրա: Փրկիչին հետևելու ձեր պարտավորվածությունը՝ ուխտեր կապելով Նրա հետ և պահելով այդ ուխտերը, դուռ կբացի տղամարդկանց, կանանց և երեխաների համար նախատեսված հոգևոր բոլոր օրհնությունների և արտոնությունների առաջ»:[8]

Ես հանդիսավոր կերպով վկայում եմ, որ այն, ինչ ասել եմ, ճշմարիտ են, և դրանք հնարավոր են դարձել Հիսուս Քրիստոսի Քավության և ուսմունքների շնորհիվ, ով այդ ամենը կատարում է Աստծո, մեր Հավերժական Հոր, մեծ ծրագրի ներքո: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Henry B. Eyring, *To Draw Closer to God: A Collection of Discourses* (1997), 143.
2. James E. Faust, "The Abundant Life," *Ensign,* Nov. 1985, 9.
3. "I Will Follow God's Plan," *Children's Songbook,* 164–65.
4. «Ընտանիք. հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2017, 145:
5. «Ընտանիք. հայտարարություն աշխարհին», 145
6. Neal A. Maxwell, *If Thou Endure It Well* (1996), 101.
7. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Տեր, ես հավատում եմ», *Լիահոնա,* մայիս 2013, 94, շեշտադրումն ավելացված է:
8. Ռասսել Մ. Նելսոն, «Միասին առաջ ընթանալով», *Լիահոնա,* ապրիլ 2018, 7:

Ներկայացնող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Եկեղեցու պաշտոնյաների հաստատում

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, այժմ ես ձեր հաստատմանը կներկայացնեմ Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորներին, Տարածքային Յոթանասունականներին և օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահություններին:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Ռասսել Մ. Նելսոնին՝ որպես մարգարե, տեսանող և հայտնող և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, Դալլին Հարիս Օուքսին՝ որպես Առաջին Նախագահության Առաջին

Խորհրդական, և Հենրի Բենիոն Այրինգին՝ որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական։

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել։

Ովքեր դեմ են, եթե այդպիսիք կան, կարող են արտահայտել դա։

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Դալլին Հ. Օուքսին որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ և Մ. Ռասսել Բալլարդին՝ որպես Տասներկու Առաքյալների Քվորումի գործող Նախագահ։

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել։

Ովքեր դեմ են, կարող են քվեարկել։

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներին՝ Մ. Ռասսել Բալլարդին, Ջեֆրի Ռ. Հոլանդին, Դիտեր Ֆ. Ուխդորֆին, Դեյվիդ Ա. Բեդնարին, Քուենթին Լ. Քուքին, Դ. Թոդ Քրիստոֆերսոնին, Նիլ Լ. Անդերսենին, Ռոնալդ Ա. Ռասբենդին, Գարի Է. Սթիվենսոնին, Դեյլ Գ. Ռենլանդին, Գերրիտ Վ. Գոնգին և Ուլիսես Սոարեսին։

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել։

Ովքեր դեմ են, նույնպես կարող են քվեարկել։

Առաջարկվում են հաստատման Առաջին Նախագահության Խորհրդականները և Տասներկու Առաքյալները՝ որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ։

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվերակել։

Դեմ լինելու դեպքում, եթե այդպիսիք կան, արտահայտեք նույն կերպ։

Առաջարկվում է, որ հաստատենք Բրուկ Փ. Հեյլսին, ով կանչվել է որպես Յոթանասունի Բարձրագույն Իշխանավոր։

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել։

Ովքեր դեմ են, եթե այդպիսիք կան, կարող են արտահայտել դա։

Առաջարկվում է, որ իրենց նշանակալից ծառայության համար խորին երախտագիտությամբ Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունականների կոչումներից ազատենք՝ Երեցներ Մերվին Բ. Առնոլդին, Քրեյգ Ա. Քարդոնին, Լարի Ջ. Էքո Հոքին, Ս. Սքոթ Գրոուին, Ալլան Ֆ. Փաքերին, Գրեգորի Ա. Շվայցերին և Կլաուդիո Դ. Զիվիկին և շնորհել նրանց պատվավոր անդամի կոչում։

Ովքեր ցանկանում են միանալ մեզ և իրենց շնորհակալությունը հայտնել այս եղբայրներին իրենց կատարած հիանալի ծառայության համար, խնդրում ենք քվեարկել։

Առաջարկվում է, որ ազատենք հետևյալ եղբայրներին Տարածքային Յոթանասունականների կոչումներից՝ Բ. Մերջիո Անտունես, Ալան Կ. Բատ, Ռ. Ռանդալ Բլյուտ, Հանս Թ. Բում, Ֆերնանդո Ի. Քալդերոն, Հ. Մարսելո Կարդուս, Փոլ Ռ. Քուարդ, Մարիոն Բ. Դե Անտունանո, Ռոբերտ Ա. Դրայդեն, Դանիել Ֆ. Դանիգան, Ջեֆրի Դ. Էրեքսոն, Մերվին Ս. Գիդդի, Ջոան Ռոբերտո Գրալ, Ռիչարդ Կ. Հանսեն, Թոդ Բ. Հանսեն, Մայքլ Ռ. Ջենսեն, Դանիել Վ. Ջոնս, Սթիվեն Օ. Լայն, Ակսել Հ. Լեյմեր, Թասարա Մակասի, Ալվին Ֆ. Մերիդիտ III, Ադոնայ Ս. Օբանդո, Կացույուկի Օտահարա, Ֆրեդ Ա. Փարկեր, Խոսե Ս. Պինեդա, Գարի Ս. Փրայս, Միգել Ա. Ռեյես, Ալֆրեդո Լ. Սալաս, Նացաուլկոյոտլ Սալինաս, Մայքլ Լ. Սաութվորդ, Գ. Լոուրենս Սպաքման, Վիլյամ Հ. Սթոդդարդ, Սթիվեն Ի. Թոմփսոն, Դեյվիդ Ջ. Թոմսոն, Ջորջ Ջ. Թոբիաս, Ժակ Ա. Վան Ռեյենը, Ռաուլ Էդգարդո Ա. Վիչենցիո, Քեյթ Պ. Ուոլքեր և Դանիել Յիրենյա-Տավիա։

Ովքեր ցանկանում են միանալ մեզ և իրենց շնորհակալությունը հայտնել նրանց կատարած հիանալի ծառայության համար, խնդրում ենք քվեարկել։

Առաջարկվում են հաստատման մյուս Բարձրագույն Իշխանավորները, Տարածքային Յոթանասունականները և գերագույն օժանդակ կազմակերպությունների նախագահությունները ներկա կազմով։

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվերակել։

Դեմ լինելու դեպքում, եթե այդպիսիք կան, արտահայտեք նույն կերպ։

Ովքեր դեմ քվեարկեցին որևէ առաջադրմանը, խնդրում ենք զրուցել ձեր ցցի նախագահի հետ։

Եղբայրներ և քույրեր, երախտապարտ ենք ձեզ Եկեղեցու ղեկավարների հանդեպ ձեր մշտական հավատքի և աղոթքների համար։ ■

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Կայուն և հաստատուն Քրիստոսի հավատքում

Քրիստոսի հավատքում կայուն և հաստատուն լինելու համար անհրաժեշտ է, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը ներթափանցի մարդու սիրտը և հոգին։

Հին Կտակարանի պատմության մեջ կարդում ենք հաջորդող ժամանակաշրջանների մասին, երբ Իսրայելի զավակները պատվում էին Եհովայի հետ կապած իրենց ուխտը և երկրպագում էին Նրան, իսկ ուրիշ ժամանակներում անտեսում էին այդ ուխտը և երկրպագում էին կուռքերին կամ Բահաղին։[1]

Աքաաբի թագավորությունը Իսրայելի հյուսիսային թագավորությունում ուրացության ժամանակաշրջաններից մեկն էր։ Մի անգամ մարգարե Եղիան Թագավոր Աքաաբին պատվիրեց Իսրայելի ժողովրդին և Բահաղի մարգարեներին ու քահանաներին հավաքել Կարմեղոս սարի վրա։ Երբ մարդիկ հավաքվեցին, Եղիան ասաց նրանց. «Մինչև ե՞րբ դուք պիտի կաղաք երկու կողմի վրա։ [կամ այլ կերպ ասած, «Ե՞րբ կորոշեք մեկնդմիշտ»], եթե Տերն է Աստված, հետևեք նրան, բայց եթե Բահաղն է, ապա հետևեք նրան։ Եվ ժողովուրդը նրան մի բան պատասխան չտվավ»։[2] Այսպիսով, Եղիան ասաց, որ ինքը և Բահաղի մարգարեները մորթեն մի մատղաշ ցուլ և դնեն իրենց զոհասեղանների փայտերի վրա, բայց «կրակ չդնեն»։[3] Ապա, «դուք կանչեցէք ձեր աստուծոյ անունը, իսկ ես կկանչեմ Եհովայի անունը։ Եւ կլինի՝ այն աստուածը, որ կրակով պատասխան կտայ, նա է Աստուածը։ Եւ բոլոր ժողովուրդը պատասխանեց՝ եւ ասեցին. Լաւ խօսք է»։[4]

Դուք հիշում եք, որ Բահաղի քահանաները իրենց աներևույթ աստծուն ժամերով կանչում էին, որ կրակ ուղարկի, բայց «Բայց ոչ ձայն կար, ոչ պատասխան տուող և ոչ լսող»։[5] Երբ հերթը հասավ Եղիային,նա վերականգնեց Տիրոջ կոտրված զոհասեղանը, փայտը և զոհը դրեց դրա վրա, այնուհետև հրամայեց, որ դրանց վրա ջուր լցնեն և ոչ թե մեկ, այլ՝ երեք անգամ։ Կասկածից վեր էր, որ նա, կամ որևէ այլ մարդկային ուժ կարող էր կրակը վառել։

«Ով Եհովայ՝ Աբրահամի, Իսահակի եւ Իսրայէլի Աստուածը. թող այսօր իմացուի, որ դու ես Աստուած Իսրայէլի մէջ, եւ ես քո ծառան եմ, եւ թէ ես քո խօսքովն եմ արել այս բոլոր բաները։ . . .

Եւ Եհովայի կրակը վայր իջաւ եւ կերաւ ողջակէզը եւ փայտերը եւ քարերը եւ հողը, եւ փոսի միջի ջուրն էլ լափեց։

Եւ բոլոր ժողովուրդը տեսաւ եւ վայր ընկան իրանց երեսների վերայ եւ ասեցին. Եհովան է Աստուած, Եհովան է Աստուած»։[6]

Այսօր, Եղիան կարող է ասել.

- Կամ մեր Երկնային Հայրն ապրում է, կամ չի ապրում, բայց եթե Նա ապրում է՝ երկրպագեք Նրան։
- Կամ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է՝ մարդկության հարությունն առած Փրկիչը, կամ դա այդպես չէ, բայց եթե դա այդպես է՝ հետևեք Նրան։
- Կամ էլ, Մորմոնի Գիրքն Աստծո խոսքն է, կամ ոչ, բայց եթե այն Աստծո խոսքն է, ապա «ապրելով ըստ դրա ցուցումների [և

ուսումնասիրելով այն] ավելի շատ մոտեցեք Աստծուն»։[7]

- Կամ Ջոզեֆ Սմիթը 1820 թվականի այդ գարնան օրը տեսավ և հաղորդակցվեց Հոր և Որդու հետ, կամ ոչ, բայց եթե դա տեղի ունեցավ, ապա հետևեք մարգարեական թիկնոցին, այդ թվում՝ կնքման բանալիներին, որոնք ես՝ Եղիաս, շնորհեցի նրան։

Վերջին զերագույն համաժողովի ժամանակ Մարգարե Ռասսել Մ. Նելսոնը հայտարարեց. «Դուք չպետք է կասկածեք նրա վերաբերյալ, ինչը ճշմարիտ է [տես Մորոնի 10.5]։ Դուք չպետք է կասկածեք նրան, ում կարող եք ապահովությամբ վստահել։ Անձնական հայտնության միջոցով դուք կարող եք ստանալ ձեր վկայությունը, որ Մորմոնի Գիրքն Աստծո խոսքն է, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե է, և սա Տիրոջ Եկեղեցին է։ Անկախ նրանից, թե ինչ կարող են ասել կամ անել մյուսները, ոչ ոք չի կարող երբևէ վերացնել վկայությունը, որը բերվել է ձեր սրտին և մտքին այն մասին, ինչը ճշմարիտ է»։[8]

Երբ Հակոբոսը խոստացավ, որ Աստված «տալիս է առատությամբ» այն մարդկանց, ովքեր փնտրում են Նրա իմաստությունը,[9] նա նաև զգուշացրեց.

«Միայն թե թող հավատքով խնդրէ առանց երկմտելու, որովհետեւ երկմտողը նման է ծովի հողմակոծուած եւ տատանուած ալիքին։

Այն մարդը թող չկարծէ, որ Տէրիցը մի բան կ'առնէ։

Երկմիտ մարդը անհաստատ է իր բոլոր ճանապարհներումը»։[10]

Մյուս կողմից, մեր Փրկիչը կայունության կատարյալ օրինակ էր։ Նա ասել է. «Ինձ մենակ չի թողել Հայրը, որովհետև ես *միշտ* նրան հաճելի բաներ եմ անում»։[11] Սուրբ գրություններից դիտարկեք տղամարդկանց և կանանց այս նկարագրությունները, ովքեր Փրկիչի նման կայուն ու հաստատուն էին.

Նրանք «դարձի էին բերվել ճշմարիտ հավատքի. և նրանք չկամեցան հեռանալ դրանից, քանզի նրանք կայուն էին և հաստատուն և անսասան, հոժար լինելով ողջ

ջանասիրությամբ պահելու Տիրոջ պատվիրանները»։[12]

«Նրանց միտքն անսասան է, և նրանք շարունակ դնում են իրենց վստահությունը Աստծո վրա»։[13]

«Եվ ահա, դուք ինքներդ գիտեք, քանզի դուք ականատես եք եղել դրան, որ բոլոր նրանք, ովքեր բերվել են ճշմարտության իմացությանը . . . կայուն ու հաստատուն են հավատքում, և այն բանում, որի միջոցով իրենք դարձել են ազատ»։[14]

«Եւ միշտ հետեւում էին առաքեալների վարդապետութեանը եւ հաղորդութեանը եւ հացի կտրելին՝ եւ աղօթքներին»։[15]

Քրիստոսի հավատքում կայուն և հաստատուն լինելու համար անհրաժեշտ է, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը ներթափանցի մարդու սիրտը և հոգին, որը նշանակում է, որ ավետարանը ոչ միայն պիտի դառնա այդ մարդու կյանքի ազդակներից մեկը, այլև նրա կյանքի ու բնավորության որոշիչ կիզակետը։ Տերն ասում է.

«Եւ ես ձեզ նոր սիրտ պիտի տամ, եւ նոր հոգի պիտի դնեմ ձեր միջումը, եւ վեր պիտի առնեմ ձեր մարմնիցը քարեղէն սիրտը։

Եւ իմ հոգին պիտի դնեմ ձեր միջումը, եւ պիտի անեմ, որ իմ օրէնքների մէջ վարուիք եւ իմ դատաստանները պահէք եւ նորանց կատարէք։

«Եվ . . . դուք իմ ժողովուրդը լինեք, և ես ձեր Աստվածը լինեմ»։[16]

Այդ ուխտն ենք մենք կապում մեր մկրտության և տաճարային արարողությունների ժամանակ։ Սակայն, ոմանք, դեռևս ամբողջովին չեն ընդունել Հիսուս Քրիստոսի ավետարանն իրենց կյանքում։ Թեև, ինչպես Պողոս Առաքյալն է ասում, նրանք «Մկրտությունով [Քրիստոսի] հետ թաղվեցան», նրանց մոտ դեռևս բացակայում է նմանատիպ մի մաս, որ «ինչպես Քրիստոսը . . . մեռելների միջից հարություն առավ, այնպես մենք էլ կյանքի նորոգության մեջ ման գանք»։[17] Ավետարանը դեռևս չի բնորոշում նրանց։ Նրանք դեռ կենտրոնացած չեն Քրիստոսի վրա։ Նրանք խտրականությամբ են հետևում վարդապետություններին և պատվիրաններին և այն հարցին,

թե երբ և որ կոչման մեջ կծառայեն Եկեղեցում: Ի տարբերություն նրանց, ովքեր «ընտրված են ուխտի համաձայն»[18] և ճշգրտությամբ պահում են ուխտերը, խուսափում են խաբեությունից և մնում կայուն Քրիստոսի հավատքում:

Մեզանից շատերն այս պահին գտնվում են երկու ծայրահեղ բևեռների միջև. մի կողմից՝ սոցիալական դրդապատճառներից ելնելով՝ մասնակցում են ավետարանին առնչվող գործերին, իսկ մյուս կողմից՝ լիովին հասունացած Քրիստոսանման հանձնառությամբ կատարում են Աստծո կամքը: Ինչ-որ մի տեղ այդ միջանկյալ դիրքում Հիսուս Քրիստոսի ավետարանի բարի լուրը թափանցում է մեր սիրտը և տիրում մեր հոգուն: Հնարավոր է, դա տեղի չունենա մի ակնթարթում, բայց մենք բոլորս պիտի շարժվենք այդ օրհնված վիճակի ուղղությամբ:

Դժվար է կայուն ու հաստատուն մնալ, երբ զտվում ենք «չարչարանքի վառարանում»,[19] մի բան, որ վաղ թե ուշ պատահում է բոլորիս հետ այս մահկանացու կյանքում: Առանց Աստծո, այդ դժգույն փորձառությունները հակված են վհատության, հուսահատության և նույնիսկ դառնության: Աստծո հետ, սփոփանքը փոխարինում է ցավին, խաղաղությունը փոխարինում է խառնաշփոթին և հույսը փոխարինում է վշտին: Մնալով կայուն Քրիստոսի հավատքում, մենք կստանանք Նրա անսպառ շնորհին ու աջակցությունը:[20] Նա փորձությունը կդարձնի օրհնություն և Եսայիայի խոսքերով՝ «փառք տրվի մոխրի տեղ»:[21]

Թույլ տվեք իմ անձնական փորձից կիսվել երեք օրինակով.

Կա մի կին, ով տառապում է թուլացնող, խրոնիկ հիվանդությամբ, և չնայած բժշկական ուշադրությանը, քահանայության օրհնություններին, ծոմապահությանը և աղոթքին, հիվանդությունը չի նահանջում: Այնուամենայնիվ, աղոթքի զորության և իր հանդեպ Աստծո սիրո իսկության մասին նրա հավատքը չի նվազում: Նա առաջ է շարժվում օր-օրի (իսկ երբեմն էլ ժամ-առ-ժամ), ծառայելով Եկեղեցում իր կոչման մեջ և ամուսնու հետ միասին հոգ է տանում իր երիտասարդ ընտանիքի մասին՝ ժպտալով այնքան, որքան ինքը կարող է: Ուրիշների հանդեպ նրա կարեկցանքը շատ խորն է և զտված է իր տառապանքների գնով, և նա, երբեմն, ինքնամոռաց սպասավորում է ուրիշներին: Նա հաստատուն կերպով առաջ է շարժվում և մարդիկ երջանիկ են զգում նրա կողքին:

Մի մարդ, ով մեծացել է Եկեղեցում, ծառայել է լիաժամկետ միսիա և ամուսնացել մի գեղեցիկ կնոջ հետ, զարմանում է, երբ իր հարազատ եղբայրներից ու քույրերից ոմանք սկսում են քննադատաբար խոսել Եկեղեցու և Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին: Ժամանակի ընթացքում նրանք հեռացան Եկեղեցուց և փորձեցին համոզել նրան նույնպես հեռանալ: Ինչպես հաճախ է նման դեպքերում պատահում, նրանց վրա սկսեց նամակների, հեռարձակումների ու տեսանյութերի տարափ տեղալ քննադատների կողմից, որոնց մեծ մասը Եկեղեցու նախկին դժգոհ անդամներ էին: Նրա հարազատ եղբայրներն ու քույրերը ծաղրում էին նրա հավատքը և ասում, որ նա դյուրահավատ է ու խաբված: Նա պատասխան չուներ բոլոր նրանց պնդումների համար, և նրա հավատքը սկսեց տատանվել անողոք ընդդիմության ներքո: Նա մտածում էր Եկեղեցի չգնալու մասին: Նա խոսեց իր կնոջ հետ: Նա խոսեց իր վստահելի մարդկանց հետ: Նա աղոթեց: Երբ խորհում էր այդ մտահոգ վիճակում, նա հիշեց պահեր, երբ զգացել էր Սուրբ Հոգին և Հոգու կողմից վկայություն ստացել: Նա եզրափակեց. «Եթե ազնիվ լինեմ ինքս ինձ հետ, պետք է խոստովանեմ, որ Հոգին շատ անգամներ է դիպչել ինձ և Հոգու վկայությունը ճշմարիտ է»: Նա ունի երջանկության և խաղաղության նորացված զգացում, որը կիսում են իր կինն ու երեխաները:

Ամուսինն ու կինը, ովքեր հետևողականորեն և երջանիկ հետևել են Եղբայրների խորհուրդներին իրենց կյանքում, վշտացած էին երեխաներ ունենալու դժվարության պատճառով: Նրանք էական միջոցներ էին ծախսել բանիմաց բժշկական մասնագետների հետ աշխատելիս, և մի որոշ ժամանակ անց որդի ունեցան: Բայց, ցավոք, մեկ տարի անց երեխան դարձավ դժբախտ պատահարի զոհ, որտեղ ոչ-ոք մեղավոր չէր, բայց այն թողեց նրան անգիտակից վիճակում՝ ուղեղի զգալի վնասվածքով: Նա լավագույն խնամքն էր ստացել, բայց բժիշկները չէին կարող կանխագուշակել, թե բուժումն ինչպես կընթանա: Այդ երեխայի լույս աշխարհ գալու համար զույգերկար էր աշխատել և աղոթել, որոշ իմաստով երեխային վերցրել էին նրանցից, և վերջիններս չգիտեին՝արդյոք հետ կստանային: Այժմ, իրենց պարտականությունների հետ մեկտեղ, նրանք պայքարում են հոգ տանել իրենց երեխայի կենսական կարիքների մասին: Այդ ամենադժվար պահին

նրանք դիմում են Տիրոջը: Նրանք ապավինում են Տիրոջից ստացած «օրվա հացին»: Նրանց օգնում են կարեկից ընկերներն ու ընտանիքի անդամները, և նրանք ամրապնդվում են քահանայության օրհնությունների շնորհիվ: Ամուսիններն ավելի են մոտեցել իրար, նրանց միասնությունը, թերևս, այժմ ավելի խորն ու ավելի ամբողջական է, քան երբևէ:

1837 թվականի հուլիսի 23-ին Տերը հայտնություն տվեց այդ ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ Թոմաս Բ. Մարշին: Այն պարունակում էր հետևյալը.

«Եվ աղոթիր Տասներկուսի քո եղբայրների համար: Խստորեն խրատիր նրանց՝ հանուն իմ անվան, և թող նրանք խրատվեն իրենց բոլոր մեղքերի համար, և հավատարիմ եղիր իմ առաջ՝ իմ անվան համար:

Եվ նրանց գայթակղություններից և շատ նեղությունից հետո, ահա, ես՝ Տերս, կփնտրեմ նրանց, և եթե նրանք կարծրացրած չլինեն իրենց սրտերը և խստացրած չլինեն իրենց պարանոցներն իմ դեմ, նրանք դարձի կգան, և ես կբժշկեմ նրանց»:[22]

Հավատացած եմ, որ այս հատվածներում արտահայտված սկզբունքները վերաբերում են մեզ բոլորիս: Մեր գայթակղությունները և նեղությունները, ինչպես նաև բոլոր այն փորձությունները, որոնք Տերը նպատակահարմար է գտնում մեզ համար, կարող է ամբողջովին դարձի բերել և բուժել մեզ: Բայց դա տեղի է ունենում, եթե չենք կարծրացնում մեր սրտերը կամ խստացնում մեր պարանոցները Նրա դեմ: Եթե մնանք կայուն ու հաստատուն, անկախ նրանից՝ ինչ կպատահի, մենք ձեռք կբերենք այն դարձը, որի մասին Փրկիչն ասաց Պետրոսին, «դու երբոր դառնաս, եղբայրներիդ հաստատիր»,[23] մի ամբողջական դարձ, որը հնարավոր չէ կործանել: Խոստացված բուժումը մեղքից վիրավոր մեր հոգիների մաքրումն ու սրբագործումն է, որը դարձնում է մեզ սուրբ:

Հիշում եմ մեր մայրիկների խորհուրդը. «Կեր բանջարեղենը, այն քեզ համար օգտակար է»: Մեր մայրերը ճշմարիտ են և հավատքի հաստատակամության համատեքստում

«կեր բանջարեղենը» նշանակում է՝ շարունակ աղոթել, ամեն օր սնվել սուրբ գրություններով, Եկեղեցում ծառայել ու երկրպագել, յուրաքանչյուր շաբաթ արժանի հաղորդություն ընդունել, սիրել ձեր մերձավորին և կրել ձեր խաչը՝ ամեն օր հնազանդվելով Աստծուն:[24]

Միշտ հիշեք այն խոստումը, որ թե՛ հիմա, թե՛ դրանից հետո, լավ բաներ են ստանում նրանք, ովքեր ամուր են և հաստատուն Քրիստոսի հավատքում: Հիշեք «հավերժական կյանքի և սրբերի ուրախության» մասին:[25] «Ո՜վ դուք, բոլորդ, որ մաքուր եք սրտով, բարձրացրեք ձեր գլուխները և ընդունեք Աստծո հաճելի խոսքը և վայելեք նրա սերը. քանզի ձեզ թույլ է տրված, եթե ձեր մտքերը կայուն են հավիտյան»:[26] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. See Bible Dictionary, “Baal.”
2. Գ Թագավորաց 18.21
3. Գ Թագավորաց 18.23
4. Գ Թագավորաց 18.24
5. Գ Թագավորաց 18.29
6. Գ Թագավորաց 18.36, 38–39
7. Մորմոնի Գրքի նախաբանը:
8. Ռասսել Մ. Նելսոն,«Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Լիահոնա,* մայիս 2018, 95:
9. Տես Յակոբոս 1.5:
10. Հակոբոս 1.6–8
11. Հովհաննես 8.29, շեշտադրումն ավելացված է:
12. 3 Նեփի 6.14, տես նաև Ալմա 27.27
13. Ալմա 57.27
14. Հելաման 15.7–8
15. Գործք Առաքելոց 2.42
16. Եզեկիել 36.26–28, տես նաև Բ Կորնթացիս 3.3
17. Հռովմայեցիս 6.4
18. Տես Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1.22–23, տես նաև Մատթեոս 24.24–25:
19. 1 Նեփի 20.10, տես նաև Եսայիա 48.10:
20. Տերն ասաց 22 տարեկան Ջոզեֆ Սմիթին, երբ նա կորցրեց Մորմոնի Գրքի մի մասի թարգմանությունը. «դու մարդուց չպետք է ավելի շատ վախենայիր, քան Աստծուց: . . . Նա կմեկներ իր ձեռքը և կաջակցեր քեզ՝ հակառակորդի բոլոր կրակոտ նետերի դեմ. և նա քեզ հետ կլիներ բոլոր փորձանքների ժամանակ» (Վարդապետություն և Ուխտեր 3.7–8): Ալման վկայեց, որ իր դարձից հետո «Ես սատարվել եմ ամեն տեսակի փորձանքների և տագնապների ներքո, այո, և ամեն ձևի չարչարանքների մեջ. այո, Աստված ազատել է ինձ բանտից և կապանքներից, և մահից. այո, և ես դնում եմ իմ վստահությունը նրա վրա, և նա դեռ կազատի ինձ: Եվ ես գիտեմ, որ նա կբարձրացնի ինձ վերջին օրը՝ ապրելու վերջին օրը» (Ալմա 36.27–28):
21. Եսայիա 61.3
22. Վարդապետություն և Ուխտեր 112.12–13
23. Ղուկաս 22.32
24. Տես Ղուկաս 9.23: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հիշեցնում է մեզ. «Ոչ մի բան այնպես չի բացում երկինքները, ինչպես աճող մաքրության համակցությունը՝ ճշգրիտ հնազանդությունը, անկեղծ որոնումը, Մորմոնի Գրքից Քրիստոսի խոսքերով ամենօրյա սնուցումը, [տես 2 Նեփի 32.3], և տաճարային ու ընտանեկան պատմության աշխատանքին կանոնավոր ժամանակ տրամադրելը» («Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», 95):
25. Ենովս 1.3
26. Հակոբ 3.2

Եպիսկոպոս Դին Մ. Դեյվիս
Նախագահող Եպիսկոպոսության Առաջին Խորհրդական

Եկ, լսիր ձայնը մարգարեի

Երբ մենք մեր կյանքում հաստատենք ապրող մարգարեներին լսելու և նրանց ձայնին ականջ դնելու սովորությունը, մենք կստանաքհավերժական օրհնությունները։

Խոսելով Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահի մասին՝ Տերը հայտարարել է.

«Եվ բացի այդ, Բարձրագույն Քահանայության պաշտոնի Նախագահի պարտականությունն է՝ նախագահել ողջ եկեղեցու վրա և լինել Մովսեսի պես,—

. . . Այո, լինել տեսանող, հայտնող, թարգմանիչ և մարգարե, *ունենալով Աստծո բոլոր պարգևները, որոնք նա շնորհում է եկեղեցու գլխավորին»* (Վարդապետություն և Ուխտեր 107.91–92, շեղագրերն ավելացված են)։

Ես օրհնվել եմ ականատեսը լինել Աստծո որոշ պարգևների, որոնք տրվում են Նրա մարգարեներին։ Թույլ տվեք կիսվել ձեզ հետ նման մի սրբազան փորձառությամբ։ Նախքան իմ ներկայիս կոչում ստանալը, ես աջակցում էի տաճարների համար տարածքներ գտնելու և առաջարկելու ծրագրին։ ԱՄՆ սահմանն անցնելը 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո ավելի վերահսկելի դարձավ։ Արդյունքում Եկեղեցու շատ անդամներից պահանջվում էր երկուսից երեք ժամ, որպեսզի կարողանային անցնել Վանկուվերը (Կանադա), մինչ գնում էին Սիեթլ Վաշինգտոն Տաճարը։ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին, ով այդ ժամանակ Եկեղեցու Նախագահն էր, առաջարկեց, որ Վանկուվերում տաճար ունենալը կօրհներ Եկեղեցու անդամներին։ Տարածք փնտրելու թույլտվություն տրվեց և Եկեղեցուն պատկանող մի քանի տարածքներ քննելուց հետո ուսումնասիրվեցին

նաև Եկեղեցուն չպատկանող այլ տարածքներ։

Կրոնական շինությունների համար նախատեղված մի գեղեցիկ տարածք գտնվեց Կանադայի հիմնական մայրուղու մոտ։ Տարածք կարելի էր հեշտությամբ մուտք գործել, որը լի էր կանադական գեղեցիկ սոճիներով և գտնվում էր այնպիսի մի վայրում, որը տեսանելի էր այդտեղով անցնող հազարավոր վարորդների համար։

Տարածքի նկարները և քարտեզները մենք ներկայացրինք Տաճարների տարածքների կոմիտեի ամենամսյա ժողովի ժամանակ։ Նախագահ Հինքլին լիազորեց մեզ կնքել պայմանագրերը և ավարտել անհրաժեշտ ուսումնասիրությունները։ Այդ տարի դեկտեմբերին մենք զեկուցեցինք կոմիտեին, որ ուսումնասիրություններն ավարտված էին, և մենք թույլտվություն խնդրեցինք վճարումներ կատարելու համար։ Մեր զեկույցը լսելուց հետո Նախագահ Հինքլին ասաց. «Զգում եմ, որ պիտի տեսնեմ այդ տարածքը»։

Այդ ամսվա վերջին՝ Սուրբ Ծննդից երկու օր անց, մենք մեկնեցինք Վանկուվեր Նախագահ Հինքլիի, Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի և Բիլ Վիլյամսի՝ տաճարի ճարտարապետի հետ։ Մեզ դիմավորեց Պոլ Քրիսթենսենը՝ տեղի ցցի նախագահը, ով տարավ մեզ այդ տարածքը։ Այդ օրը մի փոքր խոնավ ու մռայլ էր, սակայն Նախագահ Հինքլին արագ դուրս եկավ մեքենայից ու սկսեց քայլել այդ տարածքով մեկ։

Որոշ ժամանակ այդ տարածքում անցկացնելուց հետո ես հարցրի Նախագահ Հինքլիին, թե արդյոք նա կցանկանար տեսնել քննարկվող մի քանի այլ տարածքներ։ Նրան դուր եկավ այդ առաջարկը, և նա դրական պատասխան տվեց։ Մյուս տարածքները դիտելու արդյունքում մենք կարողացանք համեմատել դրանք։

Մենք մեծ պտույտ կատարեցինք Վանկուվերի շուրջը, դիտելով այլ տարածքներ, և ի վերջո վերադարձանք առաջին տարածքը։ Նախագահ Հինքլին ասաց. «Սա գեղեցիկ վայր է»։ Ապա նա հարցրեց. «Կարո՞ղ ենք գնալ եկեղեցուն պատկանող

ժողովատունը, որը գտնվում է մեկ քառորդ մղոն (0.4 կմ) հեռավորության վրա»:

«Իհարկե, Նախագահ»,- պատասխանեցինք մենք:

Մենք նորից նստեցինք մեքենա և մեկնեցինք մոտակա հավաքատուն: Տեղ հասնելուն պես, Նախագահ Հինքլին ասաց. «Աստեղից թեքվեք ձախ»: Մենք թեքվեցինք և հրահանգի համաձայն շարունակեցինք այդ փողոցով: Փողոցը գնալով բարձրանում էր:

Ամենաբարձր կետին հասնելուն պես, Նախագահ Հինքլին ասաց. «Կանգնեցրո՛ւ մեքենան, կանգնեցրո՛ւ մեքենան»: Ապա նա ցույց տվեց աջ կողմում գտնվող հողակտորը և ասաց. «Ի՞նչ կասեք այս տարածքի մասին: Սա այն վայրն է, որտեղ պիտի կառուցվի տաճարը: Սա այն վայրն է, որը Տերը նախատեսել է տաճարի համար: Կարո՞ղ եք ձեռք բերել այն: Կարո՞ղ եք ձեռք բերել այն»:

Մենք ուշադրություն չէինք դարձրել այդ տարածքին: Այն մայրուղուց բավականին հեռու էր և նշված չէր վաճառվող հողատարածքների ցանկում: Երբ անորոշ պատասխան տվեցինք, Նախագահ Հինքլին ցույց տվեց տարածքը և կրկին ասաց. «Սա այն վայրն է, որտեղ պիտի կառուցվի տաճարը»: Մի քանի րոպե անց մենք մեկնեցինք օդանավակայան, որպեսզի տուն վերադառնանք:

Հաջորդ օրը Եղբայր Վիլյամսին և ինձ կանչեցին Նախագահ Հինքլիի գրասենյակ: Նա թղթի վրա գծագրել էր ամեն բան. ճանապարհները, հավաքատունը, դեպի ձախ թեքվելու տեղ, տաճարի վայրը՝ նշված *X*-երով: Նա հարցրեց, թե ինչ նորություններ ունենք: Մենք ասացինք նրան, որ նա չէր կարող ավելի դժվար մի տարածք ընտրել: Այն պատկանում էր երեք անձնավորությունների. մեկը Կանադայից էր, մյուսը՝ Հնդկաստանից, իսկ երրորդը՝ Չինաստանից: Եվ այն նախատեսված չէր կրոնական շինությունների համար:

«Գործի դրեք ձեր հնարավորությունները»,- ասաց նա:

Ապա հրաշքներ տեղի ունեցան: Մի քանի ամիսների ընթացքում մենք ձեռք բերեցինք այդ սեփականությունը, իսկ ավելի ուշ Լանգլեյ

(Բրիտանական Կոլումբիա) քաղաքում մենք թույլտվություն ստացանք կառուցել տաճարը:

Այս փորձառության շուրջ խորհելն ինձ խոնարհեցնում է, երբ գիտակցում եմ, որ չնայած ես ու Եղբայր Վիլյամսն ունեինք համապատասխան կրթություն և տարիների փորձ անշարժ գույքի ու տաճարաշինության ոլորտում, իսկ Նախագահ Հինքլին չուներ համապատասխան կրթություն, սակայն նա ուներ շատ ավելի կարևոր մի բան՝ տեսանողի մարգարեական պարգևը: Նա կարողացավ տեսնել, թե որտեղ պիտի կառուցվեր տաճարը:

Երբ Տերը պատվիրեց այս տնտեսության վաղ օրերի Սրբերին տաճար կառուցել, Նա հայտարարեց.

«Այլ թող իմ անվան համար տունը կառուցվի այն օրինակով, որը ես ցույց կտամ նրանց:

Եվ եթե իմ ժողովուրդը չկառուցի այն օրինակով, որը ես ցույց կտամ . . . , ես այն չեմ ընդունի նրանց ձեռքից» (Վարդապետություն և Ուխտեր 115.14–15):

Ինչպես վաղ շրջանի Սրբերի ժամանակներում, այնպես էլ հիմա, Տերը հայտնել է և շարունակում է հայտնել Եկեղեցու Նախագահին, թե ինչպես պետք է առաջնորդվի Աստծո թագավորությունը մեր օրերում: Եվ նա անհատապես առաջնորդում է, թե ինչպես պետք է մեզանից յուրաքանչյուրն ապրի իր կյանքը, որ մեր արարքները նույնպես ընդունելի լինեն Տիրոջ համար:

2013թ. ապրիլին ես խոսեցի յուրաքանչյուր տաճարի հիմքի նախապատրաստման ժամանակ ներդրվող ջանքերի մասին, համոզվելու համար, որ այն կարող է դիմակայել գալիք փոթորիկներին ու աղետներին: Սակայն հիմքը միայն սկիզբն է: Տաճարը կազմված է բազում աղյուսներից, որոնք միացվում են ըստ նախատեսված օրինաչափության: Եթե մեր կյանքը պիտի լինի տաճարի պես, որ մեզանից յուրաքանչյուրը ձգտում է կառուցել համաձայն Տիրոջ ուսմունքների (տես Ա Կորնթացիս 3.16–17), մենք կարող ենք հարցնել ինքներս մեզ. «Ի՞նչ աղյուսներ պետք է օգտագործենք, որպեսզի մեր կյանքը դարձնենք զեղեցիկ, վեհ և դիմակայուն աշխարհի փոթորիկների դեմ»:

Այս հարցի պատասխանը մենք կարող ենք գտնել Մորմոնի Գրքում: Մորմոնի Գրքի վերաբերյալ Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Ես ասացի եղբայրներին, որ Մորմոնի Գիրքն ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից և մեր կրոնի պորտաքարն է, և ապրելով ըստ դրա ցուցումների, մարդ ավելի շատ կմոտենա Աստծուն, քան ըստ որևէ այլ գրքի ցուցումների» (Մորմոնի

Գրքի նախաբան)։ Մորմոնի Գրքի նախաբանում մեզ ուսուցանվում է, որ «նրանք, ովքեր ձեռք են բերում աստվածային վկայություն Սուրբ Հոգուց, [որ Մորմոնի Գիրքն Աստծո խոսքն է,] կգան նաև իմացության, նույն զորությամբ, որ Հիսուս Քրիստոսն աշխարհի Փրկիչն է, որ Ջոզեֆ Սմիթը Նրա հայտնողն ու [մարգարեն է Վերականգնման տնտեսությունում,] և որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին կրկին վերահաստատված Տիրոջ թագավորությունն է երկրի վրա»։

Ուստի, ահա մեր անձնական հավատքի և վկայության որոշ հիմնական աղյուսները.

1. Հիսուս Քրիստոսը աշխարհի Փրկիչն է։
2. Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է։
3. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Աստծո թագավորությունն է երկրի վրա։
4. Ջոզեֆ Սմիթը մարգարե է, և մենք այսօր երկրի վրա ունենք ապրող մարգարեներ։

Վերջին ամիսների ընթացքում ես լսել եմ գերագույն համաժողովի յուրաքանչյուր ելույթ, որ Նախագահ Նելսոնը տվել է Առաքյալ կանչվելու օրվանից։ Այդ փորձառությունը փոխել է իմ կյանքը։ Մինչ ես ուսումնասիրում և խորհում էի Նախագահ Նելսոնի 34 տարիների իմաստության շուրջ, պարզ ու հետևողական թեմաներ ի հայտ եկան նրա ուսմունքներում։ Այդ թեմաներից յուրաքանչյուրը կապված է այն աղյուսների հետ, որոնք ես նոր նշեցի, կամ մեկ այլ կարևոր աղյուս է մեր անձնական տաճարների համար։ Դրանք ներառում էին հավատք առ Տեր Հիսուս Քրիստոսը, ապաշխարություն, մկրտություն մեղքերի թողության համար, Սուրբ Հոգու պարգևը, մահացածների փրկագնումը և տաճարային աշխատանքը, Հանգստության օրը սուրբ պահելը, նպատակասլաց լինելը, ուխտի արահետից չշեղվելը։ Նախագահ Նելսոնը խոսել է այդ թեմաների շուրջ սիրով ու նվիրվածությամբ։

Եկեղեցու և մեր կյանքի պորտաքարը և կարևորագույն աղյուսը Հիսուս Քրիստոսն է։ Սա Նրա Եկեղեցին է։ Նախագահ Նելսոնը Նրա մարգարեն է։ Նախագահ Նելսոնի ուսմունքները մեզ օգնելու համար վկայում և հայտնում են Հիսուս Քրիստոսի կյանքի և հատկանիշների մասին։ Նա սիրով ու գիտակցորեն է խոսում Փրկիչի էության և Նրա առաքելության մասին։ Նա հաճախակի և ջերմեռանդորեն վկայել է նաև ապրող մարգարեների՝ Եկեղեցու Նախագահների աստվածային կոչման մասին, որոնց ղեկավարության ներքո նա ծառայել է։

Այժմ, այսօր մենք արտոնություն ունենք հաստատել *նրան* որպես Տիրոջ ապրող մարգարե երկրի վրա։ Մենք վարժված ենք հաստատել Եկեղեցու ղեկավարներին աստվածային օրինաչափության համաձայն՝ մեր ձեռքի բարձրացումով, ցույց տալով, որ ընդունում ու աջակցում ենք։ Մենք արեցինք դա մի քանի րոպե առաջ։ Սակայն ճշմարիտ հաստատումը շատ ավելին է, քան այս ֆիզիկական նշանը։ Ինչպես նշված է Վարդապետություն և Ուխտերի 107.22-ում, Առաջին Նախագահությունը պետք է «աջակցվի եկեղեցու վստահությամբ, հավատքով և աղոթքով»։ Մենք լիովին և իսկապես հաստատում ենք ապրող մարգարեին, երբ զարգացնում ենք նրա խոսքերին ապավինելու սովորույթը, հավատք ունենալով գործելու դրանց համաձայն, ապա աղոթելով, որ Տիրոջ օրհնությունները մշտապես ուղեկցեն նրան։

Երբ ես մտածում եմ Նախագահ Նելսոնի մասին, մխիթարություն եմ գտնում Փրկիչի հետևյալ խոսքերում. «Եվ եթե իմ ժողովուրդն ականջ դնի իմ ձայնին, և իմ ծառաների ձայնին, որոնց ես նշանակել եմ առաջնորդելու իմ ժողովրդին, ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ, նրանք չեն հեռացվի իրենց տեղից» [ՎևՈւ 124.45]։

Ապրող մարգարեներին լսելն ու ականջ դնելը կունենա խորը ազդեցություն, նույնիսկ մեր կյանքը կարող է փոխել։ Մենք ավելի ուժեղ ենք։ Մենք ավելի համոզված ու վստահ ենք Տիրոջում։ Մենք լսում ենք Տիրոջ խոսքը։ Մենք զգում ենք Աստծո սերը։ Մենք կիմանանք, թե ինչպես առաջնորդվել մեր կյանքում՝ նպատակ ունենալով։

Ես սիրում և հաստատում եմ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին և մյուսներին, ովքեր կանչվել են որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ։ Ես վկայում եմ, որ նա ունի պարգևներ, որոնք Տերն է շնորհել նրան, և նաև վկայում եմ, որ եթե մեր կյանքում հաստատենք ապրող մարգարեների ձայնը լսելու և դրան ականջ դնելու սովորություն, մեր կյանքը կկառուցենք համաձայն մեզ համար նախատեսված Տիրոջ օրինաչափության և կստանանք հավերժական օրհնությունները։ Հրավերը հղված է բոլորին։ Եկ, լսիր ձայնը մարգարեի. այո, եկեք Քրիստոսի մոտ և ապրեք։ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն։ ■

Երեց Ուլիսես Սարես
Տասներկու Առաքյալների Քվորումից

Մեկ եք Քրիստոսում

Տիրոջ աշխատանքի իմ սիրելի՛ գործընկերներ, հավատում եմ, որ կարող ենք և պետք է անենք ավելին՝ ողջունելու նոր ընկերներին Եկեղեցում։

Բարի օր, իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր։ Ինչպես ասում ենք իմ մայրենի բրազիլական պորտուգալերենով, «Բոա թարդե»։ Օրհնված ենք, որ կարող ենք միասին հավաքվել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու այս հրաշալի գերագույն համաժողովին՝ մեր սիրելի մարգարե Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի ղեկավարության ներքո։ Ես հիանում եմ այն մեծ հնարավորության համար, որ մեզանից յուրաքանչյուրը պետք է լսի Տիրոջ ձայնը երկրի ծառաների միջոցով, այս վերջին օրերում։

Իմ հայրենի Բրազիլիան շատ հարուստ է բնական պաշարներով։ Դրանցից մեկն Ամազոն գետն է, ամենամեծ և ամենաերկար գետերից մեկն աշխարհում։ Այն սկիզբ է առնում երկու տարբեր գետերից՝ Սոլիմեոսից և Նեգրոից։ Հետաքրքիր է, որ մինչև խառնվելը ջրերը միասին հոսում են մի քանի կիլոմետր, քանի որ գետերի սկզբնաղբյուրները, արագությունները, ջերմաստիճանները և քիմիական բաղադրությունները տարբեր են։ Մի քանի կիլոմետր հոսելուց հետո ջրերը վերջապես խառնվում են իրար, դառնալով մի գետ, որը տարբեր է իր առանձին մասերից։ Այդ հատվածների միաձուլումից հետո է միայն Ամազոն գետը դառնում այդքան ուժեղ, որ երբ այն հասնում է Ատլանտյան օվկիանոս, հետ է մղում ծովի ջրերն այնպես, որ քաղցրահամ ջուրը կարելի է գտնել շատ մղոններ օվկիանոսի ներսում։

Նմանապես, ինչպես Սոլիմեոս և Նեգրո գետերը միասին հոսում են և կազմում Ամազոն գետը, տարբեր սոցիալական ծագումով, ավանդույթների և մշակույթների տեր Աստծո զավակները հավաքվում են միասին Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցում և ձևավորում Քրիստոսի Սրբերի այս հրաշալի համայնքը։ Ի վերջո, երբ մենք խրախուսում, աջակցում և սիրում ենք միմյանց, մենք միավորվում և ստեղծում ենք բարու մի հզոր ուժ աշխարհում։ Որպես Հիսուս Քրիստոսի հետևորդներ, հոսելով միասին բարության այս գետով, մենք կկարողանանք ապահովել ավետարանի «քաղցրահամ ջուրը» ծարավ աշխարհին։

Տերը ոգեշնչել է, որ Իր մարգարեներն ուսուցանեն մեզ, թե ինչպես կարող ենք աջակցել և սիրել միմյանց, որպեսզի Հիսուս Քրիստոսին հետևելիս կարողանանք միասնական լինել հավատքի և նպատակների մեջ։ Նոր Կտակարանի Առաքյալ Պողոսն ուսուցանել է, որ նրանք, «ովքեր Քրիստոսում մկրտվեցին, Քրիստոսին հագած են . . . որովհետև դուք ամենքդ *մեկ եք Քրիստոս Հիսուսումը*»։[1]

Երբ մկրտության ժամանակ խոստանում ենք հետևել Փրկիչին, մենք վկայում ենք Հոր առաջ, որ կամենում ենք մեզ վրա վերցնել Քրիստոսի անունը։[2] Երբ ձգտում ենք ձեռք բերել Նրա աստվածային հատկությունները մեր կյանքում, մենք փոխվում ենք Տեր Քրիստոսի Քավության միջոցով, և բոլորի հանդեպ մեր սերը բնականաբար աճում է։[3] Մենք անկեղծ մտահոգվում ենք բոլորի բարօրությամբ ու երջանկությամբ։ Միմյանց համար դառնում ենք եղբայրներ և քույրեր՝ աստվածային ծագում, հատկանիշներ և ներուժ ունեցող Աստծո զավակներ։ Մենք



Ինչպես հզոր Ամազոն գետն է հետ մղում ծովի ջուրը, երբ այն հասնում է Ատլանտյան Օվկիանոսին, այնպես էլ Հիսուս Քրիստոսի հետևորդները ծարավ աշխարհին են տրամադրում ավետարանի «քաղցրահամ ջուրը»։

ցանկանում ենք հոգ տանել միմյանց մասին և կրել միմյանց բեռները:[4]

Պողոս առաքյալը դա նկարագրել է որպես գթություն:[5] Մորմոնը՝ Մորմոնի Գրքի մարգարեն, նկարագրել է դա որպես «Քրիստոսի մաքուր սեր»,[6] որը սիրո ամենավեհ, ազնիվ և ուժեղ ձևերից է: Մեր ներկայիս մարգարե, Նախագահ Ռասել Մ. Նելսոնը վերջերս նկարագրել է Քրիստոսի այդ մաքուր սիրո դրսևորումը որպես սպասավորություն, որը սիրո և հոգատարության ավելի կենտրոնացած և սրբազան վերաբերմունքն է ուրիշ մարդկանց հանդեպ, ինչպես Փրկիչը ցույց տվեց:[7]

Եկեք, Փրկիչի նման այդ սիրո և հոգատարության սկզբունքը դիտարկենք խրախուսելու, օգնելու և այն մարդկանց աջակցելու համատեքստում, ովքեր նորադարձներ են և ովքեր սկսում են հետաքրքրություն ցուցաբերել մեր Եկեղեցու ծառայություններին մասնակցելու համար:

Երբ այդ նոր ընկերները դուրս են գալիս աշխարհից, ընդունում են Հիսուս Քրիստոսի ավետարանը և միանում են Նրա Եկեղեցուն, նրանք դառնում են Նրա աշակերտները՝ կրկին ծնվելով Նրա միջոցով:[8] Նրանք հետևում թողնում են իրենց ճանաչած աշխարհը և որոշում են սրտի ողջ նվիրվածությամբ հետևել Հիսուս Քրիստոսին՝ միանալով նոր «գետի», մի գետի, որը բարության և արդարության քաջարի ուժ է, որը հոսում է Աստծո ներկայություն: Պետրոս Առաքյալը դա նկարագրել է, որպես «ընտիր ազգ, թագավորական քահանայութիւն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ»:[9] Երբ այդ նոր ընկերները խառնվեն այդ նոր և անծանոթ գետին, սկզբում նրանք մի քիչ մոլորված կզգան: Հայտնվելով գետի մեջ, այդ նոր ընկերները գետի մեջ յուրահատուկ ծագում, ջերմաստիճան և քիմիական բաղադրություն կզգան՝ մի գետ, որն ունի իր սովորույթները, մշակույթն ու բառապաշարը: Այս նոր կյանքը Քրիստոսում կարող է ծանր թվալ նրանց: Մի պահ մտածեք, թե ինչպիսի զգացում կունենան, երբ առաջին անգամ լսեն «ԸԵ», «ԵԵՀ», «ծոմի կիրակի», «մկրտություններ

մահացածների համար», «եռահատոր» և այլն:

Հեշտ է հասկանալ, թե ինչու կարող են օտար զգալ: Այդպիսի իրավիճակներում նրանք կմտածեն, «Արդյո՞ք այստեղ տեղ կա ինձ համար»: Արդյո՞ք ես համապատասխանում եմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն: Արդյո՞ք Եկեղեցին իմ կարիքն ունի: Արդյո՞ք ես կգտնեմ նոր ընկերներ, ովքեր կօգնեն և կաջակցեն ինձ:

Իմ սիրելի՛ ընկերներ, նման պահերին, մեզանից յուրաքանչյուրը, ով աշակերտության երկար ճամփորդության տարբեր դիրքերում է գտնվում, պետք է ընկերության ձեռք մեկնի մեր նոր ընկերներին, ընդունի նրանց իրենց գիտելիքներով հանդերձ և օգնի, սիրի և ընդունի իրենց կյանք: Բոլոր այդ նոր ընկերներն Աստծո թանկագին որդիներն ու դուստրերն են:[10] Մենք չենք կարող թույլ տալ կորցնել նրանցից որևէ մեկին, քանի որ Ամազոն գետի նման, որը կախված է իրեն սնուցող վտակներից, մենք նրանց կարիքն ունենք այնքան, որքան նրանք ունեն մեր կարիքը, որպեսզի դառնանք մի հզոր ուժ՝ աշխարհում բարու համար:

Մեր նոր ընկերներն իրենց հետ բերում են Աստծո տված տաղանդները, ոգևորությունն ու բարությունը: Ավետարանի նկատմամբ նրանց ոգևորությունը կարող է վարակիչ լինել, դրանով իսկ օգնելով մեզ վերականգնել մեր սեփական վկայությունները: Նրանք նաև նոր հեռանկարներ են բացում կյանքի և ավետարանի մասին ունեցած մեր հասկացողությանը:

Մենք վաղուց սովորել ենք, թե ինչպես կարող ենք օգնել մեր նոր ընկերներին զգալ ընդունված և սիրված Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցում: Նրանց պետք է երեք բան, որպեսզի նրանք կարողանան մնալ ուժեղ և հավատարիմ իրենց կյանքում.

Նախ, Եկեղեցում նրանց անհրաժեշտ են եղբայրներ և քույրեր, ովքեր անկեղծորեն հետաքրքրվում են նրանցով, իսկական և հավատարիմ ընկերներ են, որոնց նրանք կարող են անընդհատ դիմել, ովքեր կքայլեն նրանց կողքին, և ովքեր կպատասխանեն նրանց հարցերին: Որպես անդամներ, մենք միշտ պետք է ուշադիր լինենք և փնտրենք նոր դեմքեր, երբ հաճախենք Եկեղեցու միջոցառումներին ու ժողովներին, անկախ մեր ունեցած պատասխանատվությունից, հանձնարարություններից կամ մտահոգություններից: Մենք կարող ենք անել պարզ գործողություններ, որոնք կօգնեն այս նոր ընկերներին ընդունված զգալ Եկեղեցում, ինչպիսիք են՝ ջերմորեն ողջունել, անկեղծորեն ժպտալ նրանց, միասին նստել երգելու և երկրպագելու համար, ծանոթացնել նրանց մյուս անդամների հետ և այլն: Երբ նման ձևով բացենք մեր սրտերը մեր նոր ընկերների առաջ, մենք կգործենք սպասավորության ոգով: Երբ ծառայենք նրանց Փրկիչի նման, նրանք չեն զգա «օտարական մեր դռան մեջ»: Նրանք կզգան, որ համապատասխանում են և կարող են նոր ընկերներ ձեռք բերել և ամենակարևորը, մեր անկեղծ հոգատարության շնորհիվ նրանք կզգան Փրկիչի սերը:

Երկրորդը, նոր ընկերներին անհրաժեշտ է հանձնարարություն տալ, օրինակ՝ ուրիշներին ծառայելու հնարավորություն: Ծառայությունը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հրաշալի կողմերից մեկն է: Դա մի գործընթաց է, որով մեր հավատքն ավելի է ամուր է դառնում: Յուրաքանչյուր նոր ընկեր արժանի է այդպիսի հնարավորության: Թեև եպիսկոպոսը և ծխի խորհուրդը ուղղակիորեն պատասխանատվություն

են կրում նրանց մկրտվելուց անմիջապես հետո հանձնարարություններ տալու համար, ոչինչ չի խանգարում, որ անդամներով հրավիրենք մեր նոր ընկերներին, որպեսզի օգնեն մեզ ոչ պաշտոնական կամ ծառայության ծրագրերի միջոցով ծառայել ուրիշներին:

Երրորդ, նոր ընկերները պետք է «սնուցվեն Աստծո բարի խոսքով»:[11] Մենք կարող ենք օգնել նրանց սիրել և ծանոթանալ սուրբ գրություններին, երբ նրանց հետ կարդանք և քննարկենք ուսմունքները, նախօրոք ծանոթացնելով պատմությունների բովանդակությանը և բացատրելով բարդ բառերը: Մենք կարող ենք նաև սովորեցնել նրանց, թե ինչպես ստանալ անձնական առաջնորդություն սուրբ գրությունների կանոնավոր ուսումնասիրության միջոցով: Բացի այդ, Եկեղեցու ծրագրված ժողովներից ու միջոցառումներից դուրս մենք կարող ենք այցելել մեր նոր ընկերներին իրենց տներում և հրավիրել նրանց մեր տները՝ օգնելով նրանց խառնվել Սրբերի համայնքի հզոր գետին:

Աստծո ընտանիքի անդամներ դառնալու մեր եղբայրների ու քույրերի կատարած փոփոխությունների և մարտահրավերների մասին իմանալով, մենք կարող ենք մեր նոր ընկերների հետ կիսվել, թե ինչպես ենք մենք հաղթահարել նմանատիպ մարտահրավերները մեր կյանքում: Դա կօգնի նրանց իմանալ, որ նրանք միայնակ չեն, և Աստված օրհնում է նրանց, երբ նրանք հավատում են Նրա խոստումներին:[12]

Երբ Սոլիմեոս և Նեգրո գետերը խառնվում են իրար, Ամազոն գետը դառնում է հզոր և ուժեղ: Նույն ձևով, երբ մենք և մեր նոր ընկերներն իսկապես միավորվում ենք, Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցին դառնում է ավելի ուժեղ և կայուն: Ես և իմ սիրելի Ռոզանան այնքան շնորհակալ ենք բոլոր նրանց համար, ովքեր օգնել են մեզ մի քանի տարի առաջ խառնվել այս նոր գետին, երբ մեր հայրենիք Բրազիլիայում ընդունեցինք Հիսուս Քրիստոսի ավետարանը: Տարիների ընթացքում այդ հրաշալի մարդիկ իսկապես սպասավորել են մեզ և օգնել են մեզ անընդհատ հոսել արդարությամբ: Մենք շատ երախտապարտ ենք նրանց համար:

Արևմտյան կիսագնդի մարգարեները լավ գիտեին, թե ինչպես կարելի է նոր ընկերներին օգնել հավատարմորեն միասին հոսել դեպի հավերժական կյանք տանող բարության այս նոր գետը: Օրինակ, տեսնելով մեր օրերը և իմանալով, որ կհանդիպենք նմանատիպ դժվարությունների,[13] Մորմոնի Գրքում Մորոնին գրել է այդ կարևոր քայլերից մի քանիսը.

«Եվ հետո, երբ նրանք մկրտության էին ընդունվում, և ներգործվում ու մաքրվում էին Սուրբ Հոգու զորությամբ, նրանք համարվում էին Քրիստոսի եկեղեցու ժողովրդի թվում. և նրանց անունները գրի էին առնվում, որպեսզի հիշվեին և սնուցվեին Աստծո բարի խոսքով՝ պահելու նրանց ճշմարիտ ուղու վրա, շարունակ պահելու նրանց արթուն աղոթքում, ապավինելով միմիայն Քրիստոսի արժանիքներին, որը նրանց հավատքի հեղինակն ու ամբողջացնողն էր:

Եվ եկեղեցին հաճախ հավաքվում էր՝ ծոմ պահելու ու աղոթելու, և խոսելու մեկը մյուսի հետ, իրենց հոգիների բարօրության վերաբերյալ»:[14]

Տիրոջ աշխատանքի իմ սիրելի՛ գործընկերներ, հավատում եմ, որ կարող ենք և պետք է անենք ավելին՝ ողջունելու նոր ընկերներին Եկեղեցում: Ես ձեզ հրավիրում եմ մտածել, թե ինչ կարող ենք անել, որպեսզի ավելի հանդուրժող, ընդունող և օգտակար լինենք նրանց՝ սկսած այս կիրակի օրվանից: Ուշադիր եղեք, որ ձեր Եկեղեցու հանձնարարությունները չխանգարեն ձեզ ողջունել նոր ընկերներին Եկեղեցու ժողովների և միջոցառումների ժամանակ: Ի վերջո, այդ հոգիները թանկ են Աստծո աչքում և շատ ավելի կարևոր են, քան ծրագրերը և միջոցառումները: Եթե մեր նոր ընկերներին սպասավորենք Փրկիչի մաքուր սիրով լցված սրտերով, ես Նրա անունից խոստանում եմ ձեզ, որ Նա կօգնի մեր ջանքերում: Եթե Փրկիչի նման լինենք հավատարիմ սպասավորներ, մեր նոր ընկերները կստանան այն օգնությունը, որի շնորհիվ նրանք մինչև վերջ կմնան ուժեղ, նվիրված և հավատարիմ: Երբ դառնանք Աստծո հզոր ժողովուրդ, նրանք կմիանան մեզ, և կօգնեն քաղցրահամ ջուր մատակարարել աշխարհին, որին անհապաղ անհրաժեշտ է Հիսուս Քրիստոսի ավետարանի օրհնությունները: Աստծո այդ զավակները կզգան, որ նրանք «Այսուհետև այլևս օտար և պանդուխտ չեն, այլ սուրբերի հետ քաղաքացիներ են»:[15] Ես խոստանում եմ ձեզ, որ նրանք կզգան մեր Փրկիչի, Հիսուս Քրիստոսի ներկայությունն Իր Եկեղեցում: Որպես գետ, նրանք կշարունակեն մեզ հետ հոսել դեպի ամեն բարության աղբյուրը, մինչև որ գրկեն Տեր Հիսուս Քրիստոսին և լսեն Հորն ասելիս՝ «Դուք *կունենաք* հավերժական կյանք»:[16]

Ես հրավիրում եմ փնտրել Տիրոջ օգնությունը՝ սիրել ուրիշներին, ինչպես Նա սիրեց ձեզ: Թող բոլորը հետևեն Մորմոնի խորհրդին. «Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ և [քույրեր], աղոթեք Հորը, սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով, որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն են»:[17] Այս ճշմարտությունների մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Գաղատացիս 3.27–28, շեշտադրումն ավելացված է:
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.37:
3. Տես Մոսիա 3.19:
4. Տես Մոսիա 18.8:
5. Տես Ա Կորնթացիս 13:
6. Մորոնի 7.47
7. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Սպասավորել Աստծո զորությամբ և իշխանությամբ», *Լիահոնա,* մայիս 2018, 68–75:
8. Տես Մոսիա 27.25:
9. Ա Պետրոս 2.9
10. Տես Վարդապետություն և Ուխտեր 18.10:
11. Մորոնի 6.4, տես նաև «Ինչպես եմ աշխատում Ծխերի և ծխերի ղեկավարների հետ»: *Քարոզիր իմ ավետարանը. Միսիոներական ծառայության ուղեցույց*, փոփ. հրտ. (2018), lds.org/manual/missionary:
12. Տես 1 Նեփի 7.12:
13. Տես Մորմոն 8.35:
14. Մորոնի 6.4–5
15. Եփեսացիս 2.19
16. 2 Նեփի 31.20, շեշտադրումն ավելացված է:
17. Մորոնի 7.48

Երեց Ջերիթ Վ. Գոնգ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Մեր հավատի կրակը

Նրանք ովքեր փնտրում են այն, ընդունում են և ապրում են դրա համար, հավատը, երբեմն դանդաղ, բայց կծագի նրանց մեջ կամ կվերադառնա։

Թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, արդյո՞ք հրաշալի չէ շարունակ հայտնություններ ստանալ երկնքից Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի և մեր Եկեղեցու ղեկավարների կողմից, ովքեր հրավիրում են մեզ ապրել նոր և սուրբ ձևով,[1] տանը և եկեղեցում, մեր ողջ սրտով, մտքով և ուժով։

Երբևէ հնարավորություն ունեցե՞լ եք անել մի բան, որի համար անպատրաստ կամ անհամապատասխան եք զգացել, սակայն օրհնվել եք փորձելու համար։

Ես ունեցել եմ։ Ահա մի օրինակ։

Տարիներ առաջ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներից Երեց Ռիչարդ Գ. Սքոթը սիրով հրավիրեց ինձ. «Ջերիթ, կցանկանա՞ք ջրաներկով նկարել ինձ հետ»։

Երեց Սքոթն ասաց, որ նկարելն օգնել է իրեն նկատել շատ բաներ և ստեղծագործել։ Նա գրել է. «Փորձեք ստեղծագործել, նույնիսկ եթե համեստ արդյունքներ ստացվեն։ . . . Ստեղծագործելը կարող է առաջ բերել երախտագիտության ոգի կյանքի և այն ամենի համար, որ Տերը դրել է ձեր մեջ։ . . . Եթե դուք իմաստուն ընտրություններ կատարեք, դա երկար ժամանակ չի պահանջի»։[2]

Նախագահ Հենրի Բ. Այրինգը իր գեղարվեստական մտորումները նկարագրում է որպես «սիրո զգացումից» մղված, ներառյալ «Արարչի սիրով, ով ակնկալում է, որ Իր զավակները դառնան Իր նման՝ արարեն ու կառուցեն»։[3] Նախագահ Այրինգի ստեղծագործական աշխատանքներն ապահովում են «յուրահատուկ, հոգևոր հեռանկար վկայության և հավատքի վերաբերյալ»։[4]

Նախագահ Բոյդ Ք. Փաքերի արվեստի գործերը լուսաբանում են ավետարանի հիմնարար ուղերձը. «Աստված Արարիչն է երկինքների և երկրի և բոլոր բաների, որ դրանցում են, որ ողջ բնությունը վկայում է Աստծո կողմից ղեկավարված արարման մասին և որ լիարժեք ներդաշնակություն կա բնության, գիտության և Հիսուս Քրիստոսի ավետարանի միջև»։[5]

Ալման վկայում է. «Բոլոր բաները մատնանշում են, որ կա Աստված»։[6] Երեխաների Միությունում երգում են. «Երբ լսում եմ թռչնակի երգը կամ նայում կապուտակ երկնքին, . . . ուրախանում եմ, որ ապրում եմ այս գեղեցիկ աշխարհում, որը Երկնային Հայրն արարել է ինձ համար»։[7] Վիկտոր Հյուգոն փառաբանում է «այս անսպառ տիեզերքում արարածների և իրերի միջև հրաշալի հարաբերությունները, արևից մինչև ամենափոքր միջատը։ . . . Բոլոր թռչունները, որոնք թռչում են, հավերժության մասնիկ ունեն իրենց թևերում։ . . . Մշուշը աստղակույտ է»։[8]

Այս մտքերը վերադարձնում են մեզ Երեց Սքոթի հրավերին։

«Երեց Սքոթ,- պատասխանեցի ես,- ես կցանկանայի դառնալ ավելի ուշադիր և ստեղծագործող։ Ես հրճվում եմ՝ պատկերացնելով, թե ինչպես է Երկնային Հայրը նկարում ամպերը և գունավորում երկինքն ու ջուրը։ Սակայն (այստեղ երկար դադար տիրեց), Երեց Սքոթ,- ասացի ես,- ես չունեմ նկարելու ոչ մի հմտություն։ Անհանգստանում եմ, որ ինձ սովորեցնելու փորձերը կարող են նյարդայնացնել ձեզ»։

Երեց Սքոթը ժպտաց և հանդիպում նշանակեց։ Պայմանավորված օրը նա նախապատրաստել էր թուղթը, ներկերը և վրձինները։ Նա մի

Կրակ մայրամուտին *Երեց Ռիչարդ Գ. Սքոթ*

քանի ուրվագծեր կատարեց և օգնեց ինձ խոնավացնել թուղթը:

Որպես օրինակ մենք օգտագործում էինք նրա *Կրակ մայրամուտին* ջրաներկով նկարը: Մինչ նկարում էինք, խոսում էինք հավատի մասին, թե ինչպես ենք կրակի լույսի և ջերմության ներքո ազատվում խավարից և անորոշությունից, ինչպես երբեմն երկար, միայնակ գիշերներին հավատի մեր կրակը կարող է հույս և վստահություն ներշնչել: Եվ գալիս է արևածագը: Հավատի մեր կրակը՝ մեր հուշերը, փորձառությունները և հավատի ժառանգությունը, կապված մեր կյանքում Աստծո բարության և գորովագութ ողորմության հետ, ուժ է տալիս մեզ գիշերը:

Ես վկայում եմ, որ ովքեր փնտրում են այն, ընդունում են և ապրում են դրա համար, հավատը, երբեմն դանդաղ, բայց կծագի նրանց մեջ կամ կվերադառնա: Լույսը կծագի, երբ մենք ցանկանանք և փնտրենք այն, երբ մենք համբերենք և հնազանդվենք Աստծո պատվիրաններին, երբ մենք տեղ տանք Աստծո ողորմությանը, բժշկմանը և ուխտերին:

Երբ սկսեցինք նկարել, Երեց Սքոթը խրախուսեց. «Ջերիթ, նույնիսկ մի դասի ժամանակ դու կնկարես մի բան, ինչը կցանկանաս պահել և հիշել»: Երեց Սքոթը ճիշտ էր: Ես փայփայում եմ ջրաներկով նկարած մեր հավատի կրակը, որ Երեց Սքոթն օգնեց ինձ նկարել: Նկարչի իմ հմտությունները սահմանափակ էին և մնում են այդպիսին, բայց մեր հավատի կրակի հիշողությունը կարող է խրախուսել մեզ հինգ եղանակներով:

Առաջինը, մեր հավատի կրակը կարող է խրախուսել մեզ ուրախություն գտնել օգտակար ստեղծագործական աշխատանքում:

Ուրախություն կարելի է գտնել արժանապատիվ նոր բաներ պատկերացնելու, սովորելու և անելու մեջ: Սա հատկապես ճիշտ է, երբ մենք խորացնում ենք հավատը և վստահությունն առ Երկնային Հայրը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը: Մենք չենք կարող բավականաչափ սիրել մեզ, որպեսզի փրկենք ինքներս մեզ: Բայց Երկնային Հայրն ավելի շատ է սիրում մեզ և ավելի լավ է ճանաչում

մեզ, քան մենք ենք սիրում ու ճանաչում ինքներս մեզ: Մենք կարող ենք վստահել Տիրոջը, և չենք ապավինում մեր իսկ հասկացողությանը:[9]

Երբևէ եղե՞լ եք այն միակ մարդը, ով չի հրավիրվել ինչ-որ մեկի ծծնդյան տոնին:

Երբևէ եղե՞լ եք վերջին ընտրվածը կամ չեք ընտրվել, երբ թիմեր են կազմվել:

Պատրաստվե՞լ եք դպրոցի քննության, աշխատանքի հարցազրույցի, որևէ հնարավորության համար, որը շատ եք ցանկացել և զգացել, որ ձախողվել եք:

Աղոթե՞լ եք հարաբերության համար, որն ինչ-որ պատճառով չի ստացվել:

Ունեցե՞լ եք խրոնիկ հիվանդություն, լքվել ամուսնու կողմից, տառապել ընտանիքի համար:

Մեր Փրկիչը գիտի մեր իրավիճակները: Մինչ մենք կիրառում ենք Աստծուց տրված ազատ ընտրությունը և մեր բոլոր հմտությունները խոնարհաբար և հավատքով, մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, կարող է օգնել մեզ կյանքի դժվար և ուրախ պահերին: Հավատը ներառում է հավատալու ցանկություն և ընտրություն: Հավատը նաև բխում է Աստծո պատվիրաններին հնազանդվելուց, որոնք տրված են մեզ օրհնելու համար, մինչ մենք հետևում ենք Նրա ուխտի արահետին:

Եթե մենք զգացել ենք կամ զգում ենք անվստահություն, միայնակություն, զայրույթ, բարկություն, ընկճվածություն, հիասթափություն կամ օտարացած ենք Աստծուց կամ Նրա վերականգնված Եկեղեցուց, գուցե լրացուցիչ ջանքեր և հավատ պահանջվեն կրկին Նրա ուխտի ուղուն վերադառնալու համար: Բայց արժե դա անել: Խնդրում ենք, եկեք, կամ կրկին եկեք Տեր Հիսուս Քրիստոսի մոտ: Աստծո սերն ավելի ուժեղ է, քան մահվան կապանքները՝ լինեն դրանք ֆիզիկական, թե հոգևոր:[10] Մեր Փրկիչի Քավությունն անսահման է և հավերժական: Մեզանից յուրաքանչյուրն էլ ունենում է կասկածներ և սխալներ է գործում: Գուցե մենք որոշ պահերի կորցնում ենք մեր ուղին: Աստված սիրով վստահեցնում է մեզ, անկախ այն բանից, թե որտեղ ենք մենք կամ ինչ ենք արել, որ պատճառ չկա չվերադառնալու: Նա միշտ գրկաբաց սպասում է մեզ:[11]

Երկրորդը, մեր հավատի կրակը կարող է խրախուսել մեզ ծառայել նոր, ավելի բարձր և ավելի սրբազան, Հոգով ոգեշնչված եղանակներով:

Նման ծառայությունը բերում է հրաշքներ և ուխտերի հետ կապված օրհնություններ, որոնց շնորհիվ մենք զգում ենք Աստծո սերը և ձգտում ծառայել ուրիշներին այդ հոգով:

Վերջերս ես և Քույր Գոնզը ծանոթացանք մի հոր և ընտանիքի հետ, օրհնված հավատարիմ քահանա եղբոր կողմից, ով եկել էր իրենց եպիսկոպոսի մոտ և հարցրել, թե կարող էր լինել տնային ուսուցման զուգընկեր այդ հոր հետ: Այդ հայրն ակտիվ չէր և հետաքրքրված չէր տնային ուսուցմամբ: Բայց երբ հոր սիրտը փոխվեց, նա և իր սիրելի քահանա եղբայրը սկսեցին այցելել «իրենց» ընտանիքներին: Նման մի այցելությունից հետո, նրա կինը, ով այդ ժամանակ ինքն էլ չէր հաճախում եկեղեցի, հարցրեց իր ամուսնուն, թե ինչպես են անցնում այցելությունները: Հայրը խոստովանեց. «Ես գուցե ինչ-որ բան եմ

զգացել»,- ապա գնաց խոհանոց գարեջուր վերցնելու:[12]

Սակայն մի փորձառությանը հաջորդեց մյուսը. հոգևոր փորձառություններ, սպասավորման ծառայություն, սրտերի փոփոխություն, տաճարի նախապատրաստության դասեր, այցելություն եկեղեցի, սուրբ տաճարում կնքվելը որպես ընտանիք: Պատկերացրեք, թե որքան շնորհակալ են երեխաներն ու թոռնիկները իրենց հայրիկից ու մայրիկից և սպասավորող եղբորից, ով եկավ որպես ընկեր և զուգընկեր իրենց հայրիկի հետ՝ ծառայելու և սիրելու ուրիշներին:

Հավատի երրորդ կրակը խրախուսանքն է. ավետարանի ուրախությունը և օրհնությունները գալիս են, երբ մենք ձգտում ենք սիրել Տիրոջը և ուրիշներին մեր ողջ սրտով և հոգով:

Սուրբ գրությունները հրավիրում են մեզ դնել մեր բոլոր ջանքերը սիրո և ծառայության զոհասեղանի վրա: Հին Կտակարանի Երկրորդ Օրինաց գրքում մեզ խորհուրդ է տրվում՝ «սիրիր քո Եհովայ Աստուծուն», մեր ողջ սրտով, հոգով և զորությամբ:[13] Հեսուն հորդորում է. «ձեր Տէր Աստուծուն սիրէք, . . . նորա ամեն ճանապարհներումը գնաք, . . . նորան յարիք, եւ . . . նորան պաշտէք ձեր բոլոր սրտովը եւ ձեր բոլոր հոգիովը»:[14]

Նոր Կտակարանում մեր Փրկիչը նշում է երկու մեծ պատվիրանները. «Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտիցը, և քո բոլոր անձիցը, քո բոլոր զորութիւնիցը . . . եւ քո ընկերին քո անձի պէս»:[15]

Մորմոնի Գրքում, որը ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին, Բենիամին թագավորը տքնում է «իր մարմնի ողջ զորությամբ և իր հոգու ողջ ունակությամբ» և խաղաղություն հաստատում երկրում:[16] Վարդապետություն և Ուխտերում, ինչպես գիտի յուրաքանչյուր միսիոներ, Տերը խնդրել է մեզ ծառայել Իրեն մեր ողջ «սրտով, զորությամբ, մտքով և ուժով»:[17] Երբ սրբերը մտան Ջեկսոն գավառ, Տերը պատվիրեց նրանց սուրբ պահել Հանգստության օրը, սիրելով «Տիրոջը՝ քո Աստծուն, քո ողջ սրտով, քո ողջ զորությամբ, մտքով և ուժով. և Հիսուս Քրիստոսի անունով ծառայիր նրան»:[18]

Մենք հրճվում ենք հրավերով, նվիրելու մեր ողջ հոգին ավելի բարձր և ավելի սուրբ եղանակներ փնտրելուն, որ սիրենք Աստծուն և մեր շրջապատի մարդկանց և ամրացնենք մեր հավատքն առ Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը մեր սրտերում, մեր տներում և եկեղեցում:

Չորրորդ, մեր հավատի կրակը խրախուսում է մեզ հաստատել կանոնավոր օրինաչափություններ կապված արդար ապրելակերպի հետ, որը խորացնում է հավատքը և հոգևորությունը:

Այդ սուրբ սովորությունները, արդար վարվելակերպը կամ աղոթքով հաստատված օրինաչափությունները կարող են ներառել աղոթք, սուրբ գրությունների ուսումնասիրություն, ծառայություն, հաղորդության արարողության միջոցով մեր Փրկչին և ուխտերը հիշելը, ավետարանի օրհնություններով կիսվելը միսիոներական, տաճարային և ընտանեկան պատմության և այլ ծառայությունների միջոցով, ջանասիրաբար անձնական օրագիր պահելը և այլն:

Երբ միանում են արդար ապրելակերպի օրինաչափությունները և հոգևոր ձգտումները, միավորվում են նաև ժամանակն ու հավերժությունը: Հոգևոր լույսը և ապրելակերպը գալիս են, երբ կանոնավոր հոգևորությունը մեզ ավելի է մոտեցնում մեր Երկնային Հորը և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին: Երբ մենք սիրենք օրենքի հոգին և տառը, հավերժության բաները կիջնեն մեր հոգիների վրա, ինչպես ցողը երկնքից:[19] Ամենօրյա հնազանդության և թարմացնող կենդանի ջրի շնորհիվ մենք գտնում ենք պատասխաններ, հավատք և ուժ՝ կանգնելու ամենօրյա մարտահրավերների և հնարավորությունների առջև ավետարանական համբերությամբ, հեռանկարով և ուրախությամբ:

Հինգերորդը, երբ մենք լավագույնս պահում ենք ծանոթ օրինաչափությունները, մինչ փնտրում ենք նոր և ավելի սուրբ ուղիներ Աստծուն սիրելու, մեզ օգնելու, ուրիշներին նախապատրաստելու Նրա հետ հանդիպման համար, մեր հավատի կրակը կարող է խրախուսել մեզ հիշել, որ կատարելությունը Քրիստոսի մեջ է և ոչ թե մեր կամ աշխարհի կատարելության:

Աստծո հրավերները լի են սիրով և հնարավորություններով, քանի որ Հիսուս Քրիստոսն է «ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը»:[20] Նրանք, ովքեր բեռնված են, Նա հրավիրում է. «Ինձ մօտ եկէք», և նրանք, ովքեր գալիս են Իր մոտ, Նա խոստանում է. «Ես հանգիստ կ'տամ ձեզ»:[21] «Եկեք Քրիստոսի մոտ և կատարելագործվեք նրանում, . . . սիրեք Աստծուն, ձեր ողջ զորությամբ, մտքով և ուժով, ապա նրա շնորհը բավական է ձեզ, որպեսզի նրա շնորհով դուք կատարյալ լինեք Քրիստոսում»:[22]

«Նրա շնորհով դուք կատարյալ լինեք Քրիստոսում» խոսքերը պարունակում են նաև մխիթարություն, խաղաղություն և խոստում, որ մենք կարող ենք շարունակել առաջ գնալ հավատքով և Տիրոջն ապավինելով նույնիսկ այն ժամանակ, երբ մեր հույսերը, սպասումները չեն արդարացվում հավանաբար և ոչ մեր մեղքով, նույնիսկ երբ մենք ներդնում ենք մեր լավագույն ջանքերը:

Տարբեր ժամանակներում և ձևերով մենք բոլորս անհամապատասխան, անորոշ, թերևս անարժան ենք զգում: Սակայն, Աստծուն սիրելու և մեր մերձավորին ծառայելու մեր հավատարիմ ջանքերում մենք կարող ենք զգալ Աստծո սերը և անհրաժեշտ ոգեշնչում՝ նրանց և մեր կյանքի համար նոր և ավելի սուրբ եղանակներով:

Մեր Փրկիչը կարեկցանքով խրախուսում և խոստանում է, որ մենք կարող ենք «առաջ մղվել Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ, ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր՝ Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ»:[23] Քրիստոսի վարդապետությունը, մեր Փրկիչի Քավությունը և մեր ողջ հոգով Նրա ուխտի արահետին հետևելու ջանքերը կարող են օգնել մեզ իմանալ Նրա ճշմարտությունները և դարձնել մեզ ազատ:[24]

Ես վկայում եմ, որ Նրա ավետարանի ամբողջությունը և Նրա երջանկության ծրագիրը վերականգնվել են և ուսուցանվում են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում, սուրբ գրություններում և մարգարեների կողմից՝ սկսած Ջոզեֆ Սմիթից մինչև Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն այսօր: Ես վկայում եմ, որ Նրա ուխտի արահետը տանում է դեպի ամենամեծ պարգևը, որ խոստացել է մեր սիրելի Երկնային Հայրը. «Դուք կունենաք հավերժական կյանք»:[25]

Թող Նրա օրհնությունները և տևական ուրախությունը մերը լինեն, մինչ մենք կջերմացնենք մեր սրտերը և հույսերն ու նվիրվածությունը մեր հավատի կրակով, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի սուրբ ու նվիրական անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Սպասավորություն», *Լիահոնա,* մայիս 2018, 100:
2. Richard G. Scott, *Finding Peace, Happiness, and Joy* (2007), 162–63; quoted in *Elder Richard G. Scott Art Exhibit: A Self-Guided Tour* (pamphlet, 2010).
3. *A Visual Journal: Artwork of Henry B. Eyring* (booklet, 2017), 2.
4. *A Visual Journal,* 28.
5. Boyd K. Packer, *The Earth Shall Teach Thee: The Lifework of an Amateur Artist* (2012), ix.
6. Ալմա 30.44
7. «Իմ Երկնային Հայրը սիրում է ինձ», *Մանկական Երգարան,* 228–29:
8. Վիկտոր Հյուգո, *Թշվառները,* թարգմանությունը Ջուլի Ռոսի, (Նյու Յորք. Ռենդոմ Հաուս, 2008), 728:
9. Տես Առակաց 3.5–6:
10. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.44:
11. Տես Ղուկաս 15.20:
12. Փորձառությունը մեջբերվում է թույտվությամբ:
13. Երկրորդ Օրինաց 6.5
14. Հեսու 22.5
15. Ղուկաս 10.27
16. Մորմոնի Խոսքերը 1.18
17. Վարդապետություն և Ուխտեր 4.2
18. Վարդապետություն և Ուխտեր 59.5
19. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.45–46:
20. Հովհաննես 14.6
21. Մատթեոս 11.28
22. Մորոնի 10.32
23. 2 Նեփի 31.20
24. Տես Հովհաննես 8.32:
25. 2 Նեփի 31.20

Երեց Փոլ Բ. Փայփեր
Յոթանասունից

Բոլոր մարդիկ պետք է իրենց վրա վերցնեն անունը, որը տրված է Հորից

Փրկիչի անունը եզակի և էական ուժ ունի: Այն միակ անունն է, որի միջոցով փրկությունը հնարավոր է:

Մի քանի շաբաթ առաջ ես մասնակցեցի ութ տարեկան մի քանի երեխաների մկրտությանը: Հիսուս Քրիստոսի ավետարանը նրանք սկսել էին սովորել իրենց ծնողներից և ուսուցիչներից: Նրա հանդեպ հավատքի սերմը սկսել էր աճել: Եվ այժմ նրանք ցանկություն ունեին հետևել Նրան, մտնելով մկրտության ջրերը, որպեսզի դառնան Նրա վերականգնված Եկեղեցու անդամները: Նկատելով նրանց հետաքրքրությունը, ես սկսեցի մտածել, թե որքանով էին նրանք հասկանում իրենց մկրտության ուխտի կարևոր գործոններից մեկը՝ Հիսուս Քրիստոսի անունը իրենց վրա վերցնելու պարտավորությունը:

Աստված ի սկզբանե հայտարարել է Հիսուս Քրիստոսի անվան գերակայությունը Իր ծրագրում: Հրեշտակը մեր առաջին հորը՝ Ադամին ուսուցանել է. «Դու պետք է ամեն ինչ անես Որդու անունով, և դու պետք է ապաշխարես և կանչես առ Աստված առհավետ՝ Որդու անունով»:[1]

Մորմոնի գրքի մարգարե Բենիամին թագավորը ուսուցանել է իր ժողովրդին. «Տրված չի լինի ո՛չ ուրիշ անուն, ո՛չ ուրիշ ճանապարհ, ո՛չ էլ միջոց, որի շնորհիվ կարող է փրկություն գալ»:[2]

Տերը այս ճշմարտությունը կրկնել է մարգարե Ջոզեֆ Սմիթին. «Ահա, Հիսուս Քրիստոսն այն անունն է,

որը տրված է Հորից, և ուրիշ անուն չկա տրված, որով մարդ կարողանա փրկվել»:[3]

Մեր օրերում՝ նախագահ Դալլին Հ. Օուքսը ուսուցանել է, որ «նրանք, ովքեր հավատք են գործադրում Հիսուս Քրիստոսի անվան հանդեպ . . . և ուխտի մեջ են մտնում . . . կարող են հայցել Հիսուս Քրիստոսի քավիչ զոհաբերությունը»:[4]

Մեր Երկնային Հայրը ցանկանում է բացարձակապես պարզ դարձնել, որ Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունը բազմաթիվ անուններից պարզապես մեկը չէ: Փրկիչի անունը եզակի և էական ուժ ունի: Այն միակ անունն է, որի միջոցով փրկությունը հնարավոր է: Յուրաքանչյուր տնտեսության ժամանակ այդ ճշմարտությունը շեշտելով՝ մեր սիրառատ Հայրը Իր բոլոր զավակներին հավաստիացնում է, որ Իր մոտ վերադառնալու ուղի կա: Սակայն երաշխավորված ուղու առկայությունը չի նշանակում, որ մեր վերադարձը ինքնաբերաբար ապահովված է: Աստված մեզ ասում է, որ մեզանից գործողություն է պահանջվում. «Ուստի, բոլոր մարդիկ պետք է իրենց վրա *վերցնեն* անունը, որը տրված է Հորից»:[5]

Միայն Քրիստոսի անունով եկող փրկիչ զորությանը հասու լինելու համար մենք պետք է «[մեզ] խոնարհեցնենք Աստծո առաջ . . . և առաջ գանք կոտրված սրտով և փշրված հոգով . . . և հոժար լինենք *[մեզ] վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը*» և այդպիսով, արժանի լինենք, ինչպես իմ ութ տարեկան ընկերները, որպեսզի «մկրտությամբ ընդունվենք իր եկեղեցին»:[6]

Բոլորը, ովքեր անկեղծորեն փափագում են իրենց վրա վերցնել Փրկիչի անունը, պետք է արժանի լինեն և ստանան մկրտության արարողությունը՝ որպես իրենց որոշման ֆիզիկական վկայություն Աստծո առաջ:[7] Սակայն մկրտությունը միայն սկիզբն է:

Վերցնել բառը պասիվ բառ չէ: Այն գործողություն արտահայտող բառ է՝ բազմակի սահմանումներով:[8] Նմանապես, Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա վերցնելու

պարտավորությունը պահանջում է գործողություն և ունի բազում չափորոշիչներ:

Օրինակ, *վերցնել* բառի իմաստներից մեկն է *օգտագործել*, կամ յուրացնել, ինչպես օրինակ, երբ մենք ջուր ենք *օգտագործում*: Քրիստոսի անունը վերցնելով, մենք պարտավորվում ենք *օգտագործել* Նրա ուսմունքները, Նրա հատկանիշները և, ի վերջո, Նրա սերը, յուրացնելով այն մեր մեջ այնպես, որ դրանք մեր մասն են դառնում: Ուստի, Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի՝ չափահաս երիտասարդներին ուղղած հրավերը շատ կարևոր է՝ «աղոթքով ու ջանասիրաբար [փնտրել], որպեսզի հասկանալ, թե [Փրկիչի] տարբեր կոչումներից ու անուններից յուրաքանչյուրը ինչ նշանակություն ունի *անձամբ* [իրենց] համար»[9] և սնվել Քրիստոսի խոսքերով սուրբ գրություններում, հատկապես Մորմոնի Գրքում:[10]

Վերցնել բառի մեկ այլ իմաստ մարդուն իր դերում ընդունելն է կամ գաղափարի և սկզբունքի ճշմարտության ընդունումը: Երբ մեզ վրա ենք վերցնում Քրիստոսի անունը, մենք ընդունում ենք Նրան՝ որպես մեր Փրկիչ և մշտապես ընդունում ենք Նրա ուսմունքները՝ որպես մեր կյանքի ուղեցույց: Յուրաքանչյուր իմաստալից որոշմամբ մենք կարող ենք *ընդունել* Նրա ավետարանի ճշմարտացիությունը և ապրել նրանով հնազանդորեն մեր ողջ սրտով, զորությամբ, մտքով և ուժով:

Վերցնել բառը կարող է նշանակել նաև կոչումը ստանձնել կամ գործը հանձն առնել: Շատերս պատասխանատվություն *ստանձնելու* կամ գործը, նախաձեռնությունը *հանձն առնելու* փորձ ունենք աշխատանքի ընթացքում: Երբ վերցնում ենք Քրիստոսի անունը, մենք ստանձնում ենք ճշմարիտ հետևորդի պարտականությունները, մենք պաշտպանում ենք Նրա գործը՝ «կանգնելու որպես [Նրա] վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում, որ [մենք] կարող է լինենք»:[11] Նախագահ Ռասսել Նելսոնը *յուրաքանչյուր* երիտասարդ կնոջ և *յուրաքանչյուր* երիտասարդ տղամարդու . . . կոչ է արել ընդգրկվել Իսրայելը հավաքելու Տիրոջ երիտասարդների գումարտակում»:[12] Եվ բոլորս երախտապարտ ենք հետևել մարգարեական կոչին՝ վերականգնված Եկեղեցու անունն արտահայտել այնպես, ինչպես ինքը Փրկիչն է հայտնի դարձրել՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի:[13]

Փրկիչի անունը մեզ վրա վերցնելիս, պետք է գիտակցենք, որ Քրիստոսի և Նրա Եկեղեցու գործը մեկ և

անբաժան գործ է: Նրանց հնարավոր չէ առանձնացնել: Նմանապես անբաժան են նաև Փրկչին հետևելու մեր անձնական աշակերտությունը և Նրա Եկեղեցու ակտիվ անդամակցությունը: Ճիշտ ինչպես գիշերվան հաջորդում է ցերեկը, եթե մենք թերանում ենք մեկի հանդեպ մեր նվիրվածության մեջ, մյուսի հանդեպ մեր նվիրվածությունը նույնպես նվազում է:

Ոմանք դժկամությամբ են ընդունում Հիսուս Քրիստոսի անունը և Նրա գործը, քանի որ համարում են չափազանց նեղ, չափավորված ու սահմանափակ: Իրականում, Քրիստոսի անունը վերցնելը ազատագրող է և ընդարձակող: Այն արթնացնում է այն ցանկությունը, որ մենք զգացինք, երբ Փրկիչի հանդեպ հավատքի միջոցով ընդունեցինք Աստծո ծրագիրը: Երբ այդ ցանկությունը արթուն է մեր սրտերում, մենք կարող ենք բացահայտել Աստծո կողմից տրված պարգևների ու շնորհների իրական նպատակը, զգալ Նրա զորացնող սերը և զարգացնել մեր մտահոգությունը մարդկանց բարօրության համար: Երբ մեզ վրա ենք վերցնում Փրկիչի անունը, մենք իսկապես կառչած ենք մնում ամեն բարի բանից և նմանվում ենք Նրան:[14]

Կարևոր է հիշել, որ Փրկիչի անունը մեզ վրա վերցնելը ուխտի հանձնառություն է, որը սկսվում է մկրտության ժամանակ կապած մեր ուխտով: Նախագահ Նելսոնը ուսուցանել է. «Փրկչին հետևելու [մեր] պարտավորվածությունը՝ ուխտեր կապելով Նրա հետ և պահելով այդ ուխտերը, դուռ կբացի հոգևոր բոլոր օրհնությունների և արտոնությունների առաջ»:[15] Մկրտության միջոցով Փրկիչի անունը վերցնելու գերաշնորհ արտոնություններից մեկը ուխտի ճանապարհին հանդիպող հաջորդ արարողությունն է՝ մեր հաստատումը: Երբ ութամյա իմ այդ ընկերներից մեկին հարցրի, թե իր համար Քրիստոսի անունը վերցնելը ինչ է նշանակում, նա պարզապես պատասխանեց. «Դա նշանակում է, որ կարող եմ ունենալ Սուրբ Հոգին»: Նա ճիշտ էր:

Սուրբ Հոգու պարգևը ստանում ենք հաստատման ձեռնադրությամբ՝ մկրտության արարողությունը ստանալուց հետո: Այդ պարգևը Սուրբ Հոգին որպես մշտական ուղեկից ունենալու իրավունք է և հնարավորություն: Եթե լսենք ու հնազանդվենք Նրա մեղմ, բարակ ձայնին, Նա կպահի մեզ մկրտության միջոցով ընդունած ուխտի ճանապարհին, կզգուշացնի մեզ, երբ մեզ փորձեն հեռացնել ուղուց, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կխրախուսի մեզ ապաշխարել ու փոխվել: Մկրտությունից հետո մեր ուշադրությունը պետք է կենտրոնանա Սուրբ Հոգին միշտ մեզ հետ պահելու վրա, որպեսզի կարողանանք շարունակել առաջխաղացումը ուխտի ճանապարհով: Սուրբ Հոգին կարող է մեզ հետ լինել միայն այն չափով, ինչ չափով մենք պահում ենք մեր կյանքը մաքուր և մեղքից զերծ:

Այդ պատճառով է Տերը մեզ հնարավորություն տվել մշտապես թարմացնել մեր մկրտության մաքրող ազդեցությունը մեկ այլ արարողության՝ հաղորդության միջոցով: Ամեն շաբաթ մենք կարող ենք «վկայել. . . . որ *հոժար ենք [մեր] վրա վերցնել անունը . . . Որդու*»[16] ձեռք մեկնելով և, կրկին, *վերցնելով* Տիրոջ մարմնի և արյան խորհրդանիշները՝ հացն ու ջուրը, և *ընդունելով* դրանք մեր հոգում: Փոխարենը, Փրկիչը կատարում է մեզ մաքրելու հրաշքը ևս մեկ անգամ և մեզ արժանի է դարձնում շարունակ վայելելու Սուրբ Հոգու ազդեցությունը: Մի՞թե դա անսահման ողորմության ապացույց չէ, որ կարելի է գտնել միայն Հիսուս Քրիստոսի անունով: Ճիշտ ինչպես մենք ենք վերցնում Նրա անունը *մեզ* վրա, նմանապես *Նա* մեր մեղքերն ու տառապանքները վերցնում է *Իր* վրա, և Նրա «ողորմության բազուկը մեկնված է»,[17] որ օգակի մեզ Իր սիրո բազուկներում:[18]

Հաղորդությունը շաբաթական հիշեցնում է, որ Հիսուս Քրիստոսի անունը մեր վրա *վերցնելը* կենդանի և շարունակական պարտավորություն է, ոչ թե մի իրադարձություն, որը տեղի է ունենում միայն մեկ անգամ՝ մեր մկրտության օրը:[19] Մենք կարող ենք շարունակաբար, կրկին ու կրկին վայելել այն «սուրբ զոհաբերությունը սրբազան, որ քիչ ենք հասկանում, մեր մեղքերի թողության համար նրա մարմինն ու արյունը ճաշակում»:[20] Ուստի, զարմանալի չէ, որ երբ Աստծո զավակները հասկանում են հզոր, հոգևոր օրհնությունները, որոնք կարող են գալ իրենց վրա Քրիստոսի անունը վերցնելուց, նրանք միշտ ուրախության զգացում են ապրում և միշտ ցանկություն են զգում ուխտի մեջ մտնել իրենց Աստծո հետ:[21]

Երբ հետևենք աստվածային այս ուխտի ճանապարհին, Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա վերցնելու հանձնառությունը և ջանքերը մեզ ուժ կտան «պահել [Նրա] անունը միշտ գրված [մեր] սրտերում»:[22] Մենք կսիրենք Աստծուն և մեր մերձավորներին և ցանկություն կզգանք ծառայել նրանց: Մենք կպահենք Նրա պատվիրանները և կձգտենք ավելի շատ մոտենալ նրան՝ լրացուցիչ ուխտեր կապելով Նրա հետ: Եվ երբ զգանք, թե թուլացել ենք ու կորցրել ենք մեր արդար ցանկությունների համաձայն գործելու ունակությունը, մենք ուժ կխնդրենք, որը գալիս է միայն Նրա անունով, և Նա կգա մեզ օգնության: Երբ հավատարմությամբ համբերենք, օրը կգա, որ մենք կտեսնենք Նրան և Նրա հետ կլինենք, և կտեսնենք, որ նմանվել ենք Նրան, այդպիսով արժանի լինելով վերադառնալ Հոր ներկայության մեջ:

Քանզի Փրկիչի խոստումը հավաստի է. ովքեր «հավատան Հիսուս Քրիստոսի անվանը և երկրպագեն Հորը՝ նրա անունով, և հավատքով առ նրա անունը համբերեն մինչև վերջ»,[23] կփրկվեն Աստծո արքայությունում: Ձեզ հետ միասին ես ուրախանում եմ, որ այս անզուգական օրհնությունները հնարավոր են դարձել Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա վերցնելու շնորհիվ, ում մասին և ում անունով ես վկայություն եմ բերում, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մովսես 5.8
2. Մոսիա 18.30
3. Վարդապետություն և Ուխտեր 18.23
4. Dallin H. Oaks, “Taking upon Us the Name of Jesus Christ,” *Ensign,* May 1985, 82.
5. Վարդապետություն և Ուխտեր 18.24, շեշտադրումն ավելացված է:
6. Վարդապետություն և Ուխտեր 20.37, շեշտադրումն ավելացված է:

7. Նախագահ Դալլին Հ. Օուքսը ուսուցանել է. «Մենք վերցնում ենք մեր Փրկիչի անունը, երբ մենք դառնում ենք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ: . . . Որպես Քրիստոսի ճշմարիտ հավատացյալներ՝ որպես քրիստոնյաներ, մենք ուրախությամբ ենք մեր վրա վերցրել նրա անունը» («Taking upon Us the Name of Jesus Christ», 80):
8. The Merriam-Webster online dictionary lists 20 meanings of the transitive form of the verb *take,* which is the form in which the verb is used in the phrase "take upon us the name of Jesus Christ" (see merriam-webster.com/dictionary/take).
9. Նախագահ Ռասսել Մ. Նելսոն, «Մարգարեներ, առաջնորդություն և աստվածային օրենքներ» (Համաշխարհային հոգևոր հավաք չափահաս երիտասարդների համար, Հունվ 8, 2017):
10. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Մորմոնի Գիրքը. Ինչպիսի՞ն կլիներ ձեր կյանքն առանց նրա»: *Լիահոնա,* նոյեմբեր 2017, 60–63:
11. Մոսիա 18.9:
12. Russell M. Nelson, "Hope of Israel" (worldwide youth devotional, June 3, 2018), HopeofIsrael.lds.org.
13. «Տերը ինձ հուշում է տվել անվանման կարևորության մասին, որը Նա հայտնությամբ տվել է Իր Եկեղեցու համար, այն է՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի: Մեր առջև աշխատանք է դրված՝ ներդաշնակել մեր կամքը Նրա կամքի հետ» (Russell M. Nelson, in "The Name of the Church" [official statement, Aug. 16, 2018], mormonnewsroom.org):
14. Տես Մորոնի 7.19:
15. Ռասսել Մ. Նելսոն, «Միասին առաջ ընթանալով», *Լիահոնա,* ապրիլ 2018, 7:
16. Վարդապետություն և Ուխտեր 20.77, շեշտադրումն ավելացված է:
17. 3 Նեփի 9.14, տես նաև Ալմա 5.33–34:
18. Տես 2 Նեփի 1.15:
19. «Երբ մենք ցույց ենք տալիս Հիսուս Քրիստոսի անունը մեր վրա վերցնելու *պատրաստակամությունը*, մենք հայտնում ենք մեր նվիրվածությունը՝ անել այն ամենը, ինչ կարող ենք, որպեսզի ձեռք բերենք հավերժական կյանք մեր Հոր արքայությունում: Մենք արտահայտում ենք մեր թեկնածությունը՝ մեր վճռականությունը, որ ձգտում ենք վեհացման սելեստիալ արքայությունում. . . .

    Մենք ցույց չենք տալիս, որ մեզ վրա ենք *վերցնում* նրա անունը, այլ որ *պատրաստ* ենք դա անել: Այս իմաստով մեր վկայությունը վերաբերում է ապագա իրադարձությանը կամ կարգավիճակին, որի ձեռքբերումը ինքնաբերաբար չէ, այլ կախված է Փրկիչի իշխանության կամ նախաձեռնության վրա» (Դալլին Հ. Օուքս, «Taking upon Us the Name of Jesus Christ», 82–83):
20. «Ով հայր հավիտենական», *Հիմներ և մանկական երգեր*, էջ 18:
21. Տես Մոսիա 5, 6, 18, 3 Նեփի 19:
22. Մոսիա 5.12
23. Վարդապետություն և Ուխտեր 20.29:

Երեց Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հավատացեք, սիրեք, գործեք

Մենք առատ կյանքը ձեռք ենք բերում դառնալով Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտները՝ հետևելով Նրա ուղուն և զբաղվելով Նրա գործով:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ի՞նչ հրաշալի առիթ է այսօր ձեզ հետ լինել այս հրաշալի գերագույն համաժողովի նիստում. լսել ոգեշնչված ուղերձները, լսել այս զարմանահրաշ և սքանչելի միսիոներների երգչախմբին, որը ներկայացնում է աշխարհի հազարավոր միսիոներներին, մեր դուստրերին, մեր որդիներին, և հատկապես միավորված լինել մեր հավատում և կրկին հաստատել մեր սիրելի Նախագահ և մարգարե՝ Նախագահ Ռասել Մ. Նելսոնին, Առաջին Նախագահությանը և Եկեղեցու Բարձրագույն պաշտոնյաներին: Ի՞նչ հրաշալի օր է ձեզ հետ լինելու համար:

Հին դարերում ապրող Մորոմոն թագավորը պատմության մեջ արտաքնապես ամենահաջողակ մարդկանցից մեկն էր:[1] Նա, կարծես թե, ամեն ինչ ուներ՝ փող, իշխանություն, սեր, պատիվ: Բայց տասնամյակների ընթացքում ապրելով ապահով և շռայլ կյանքով, ինչպե՞ս Մորոմոն թագավորն ամփոփեց իր կյանքը:

«Բոլորը ունայն է»,-[2] ասաց նա:

Այդ մարդը, ով ամեն ինչ ուներ, ամփոփեց իր կյանքը հիասթափված, հոռետեսական և տխուր, չնայած իր ունեցած առավելությանը:[3]

Գերմաներեն լեզվում կա մի բառ՝ *Weltschmerz:* Կարճ ասած, դա նշանակում է տխրություն, որը գալիս է այն մտածելակերպից, թե այս աշխարհը որքան վատն է մեր մտածած աշխարհից:

Գուցե մեր բոլորի մեջ մի քիչ *Weltschmerz* կա:

Երբ լուռ թախիծն անգիտակից պատում է մեզ: Երբ տխրությունը հագեցնում է մեր օրը և մութ ստվեր

է զցում մեր գիշերների վրա: Երբ ողբերգությունն ու անարդարությունը մտնում են մեր շրջապատ, այդ թվում՝ մեր սիրելիների կյանք: Երբ մենք քայլում ենք մեր անհատական և միայնակ դժբախտության ճանապարհով, և ցավը մթագնում է մեր հանդարտությունը և խախտում է մեր հանգստությունը, մեր մեջ կարող է ցանկություն առաջանալ համաձայնվել Սողոմոնի հետ, որ կյանքն ունայն է և զուրկ իմաստից:

Մեծ հույսը

Լավ լուրն այն է, որ հույս կա: Կա լուծում կյանքի դատարկության, ունայնության և *Weltschmerz*-ի համար: Կա լուծում, նույնիսկ, ամենախորը հուսահատության և հիասթափության համար, որը դուք կարող եք զգալ:

Այդ հույսը գտնվում է Հիսուս Քրիստոսի ավետարանի փոխակերպող զորության և Փրկիչի փրկագնման զորության մեջ, որը բուժում է մեզ մեր հոգու հիվանդություններից:

Հիսուսը հայտարարեց. «Ես եկայ որ կեանք ունենան, եւ էլ աւելի ունենան»:[4]

Մենք այդ առատ կյանքը ձեռք ենք բերում ոչ թե կենտրոնանալով մեր սեփական կարիքների և մեր սեփական ձեռքբերումների վրա, այլ, հետևելով Նրա ուղուն և զբաղվելով Նրա գործով, դառնում ենք Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտները: Մենք առատ կյանքը գտնում ենք, երբ մոռանում ենք մեզ և զբաղվում Քրիստոսի մեծ գործով:

Եվ ո՞րն է Քրիստոսի գործը: Դա՝ Նրան հավատալն է, Նրա նման սիրելը և Նրա նման գործելը:

Հիսուսը «ման եկավ բարիք գործելով»:[5] Նա քայլեց աղքատների, տարագիրների, հիվանդների և ամաչողների մեջ: Նա սպասավորեց անզորներին, թույլերին ու միայնակներին: Նա ժամանակ անցկացրեց նրանց հետ և զրուցեց նրանց հետ: «Եվ նա նորանց ամենին բժշկեց»:[6]

Ամեն տեղ գնալով, Փրկիչն ուսուցանեց ավետարանի «բարի լուրը»:[7] Նա կիսվեց հավերժական ճշմարտություններով, որոնք մարդկանց ազատում էին ինչպես հոգեպես, այնպես էլ ֆիզիկապես:

Այն մարդիկ, ովքեր իրենց նվիրեցին Քրիստոսի գործին, բացահայտեցին Փրկիչի խոստման ճշմարտությունը. «Ով որ իր անձն կորցնէ ինձ համար՝ նա կապրեցնէ նորան»:[8]

Սողոմոնը սխալ էր, իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր՝ կյանքը «ունայն» չէ: Հակառակը, այն կարող է լի լինել նպատակով, իմաստով և խաղաղությամբ:

Հիսուս Քրիստոսի բժշկող ձեռքերը պարզած են բոլորին, ովքեր փնտրում են Նրան: Առանց որևէ կասկածի, ես հասկացել եմ, որ հավատալով և սիրելով Աստծուն ու ձգտելով հետևել Քրիստոսին, մեր սրտերը կարող են փոխվել,[9] ցավը կարող է մեղմանալ և մեր հոգին լցվել «չափազանց մեծ ուրախությամբ»:[10]

Հավատացեք, սիրեք, գործեք

Իհարկե, մենք պետք է ավելին անենք, քան պարզապես ավետարանի մասին մտավոր պատկերացում ունենալ, որպեսզի այդ բժշկումը ազդի մեր կյանքում: Մենք պետք է այն ընդգրկենք մեր կյանքի մեջ, դարձնենք այն մի մասը նրա, թե ով ենք մենք և ինչ ենք անում:

Թույլ տվեք առաջարկել, որ աշակերտությունը սկսվում է երեք պարզ բառերից.

Հավատացեք, սիրեք և *գործեք:*

Աստծուն հավատալով, հավատք է ծնվում Նրա հանդեպ և Նրա խոսքի նկատմամբ վստահությունն աճում է: Հավատքի շնորհիվ մեր սրտում սերն աճում է Աստծո և մյուսների հանդեպ: Երբ այդ սերն աճում է, մենք ոգեշնչվում ենք և ընդօրինակում Փրկիչին, երբ շարունակում ենք աշակերտության մեր երկար ճամփորդությունը:

Դուք կասեք. «Բայց, դա մի փոքր պարզ է թվում: Կյանքի խնդիրները, անշուշտ իմ խնդիրները, չափազանց բարդ են նման պարզ դեղատոմսի համար: Դուք չեք կարող *Weltschmerz*-ը բուժել երեք պարզ բառերով՝ *Հավատացեք, սիրեք, գործեք*»:

Այդ խոսքերը չէ, որ բուժում են: Աստծո սերն է, որը փրկում, վերականգնում և վերակենդանացնում է:

Աստված ճանաչում է ձեզ: Դուք նրա զավակն եք: Նա սիրում է ձեզ:

Նույնիսկ, երբ դուք մտածում եք, որ արժանի չեք, Նա օգնության է հասնում ձեզ:

Այսօր, ամեն օր, Նա օգնության է հասնում ձեզ, ցանկանալով բժշկել ձեզ, բարձրացնել ձեզ և ձեր սրտում առկա դատարկությունը փոխարինել մշտական ուրախությամբ: Նա ցանկանում է ցրել ցանկացած խավար, որը մթագնում է ձեր կյանքի ամպերը և լցնել այն Իր անվերջ փառքի օրհնված և փայլուն լույսով:

Ես զգացել եմ դա:

Եվ դա իմ վկայությունն է որպես Տեր Հիսուս Քրիստոսի Առաքյալ, որ բոլոր նրանք, ովքեր գալիս են

Աստծո մոտ, բոլոր նրանք, ովքեր իսկապես *հավատում, սիրում,* և *գործում են,* կարող են նույն բանը զգալ։

Մենք հավատում ենք

Սուրբ գրություններն ուսուցանում են, որ «առանց հաւատքի անկարելի է հաճոյ լինել [Աստծոն]. Որովհետև Աստուծուն մօտեցողը պէտք է հաւատայ, թե նա կայ»։[11]

Ոմանց համար, հավատքի գործողությունը դժվար է։ Երբեմն, մեր հպարտությունը փակում է ճանապարհը։ Գուցե մենք կարծում ենք, որ խելացի, կրթված կամ փորձառու ենք և այդ պատճառով պարզապես չենք կարող հավատալ Աստծուն։ Եվ սկսում ենք կրոնին նայել որպես հիմար ավանդույթի։[12]

Իմ փորձից գիտեմ, որ հավատն այնքան էլ նման չէ նկարի, որին նայում ենք և հիանում, և որը քննարկում և տեսաբանում ենք։ Դա ավելի շատ նման է մի գութանի, որը տանում ենք դաշտ և մեր ճակատի քրտինքով մարգեր փորում, որոնց մեջ սերմերը պտուղ են տալիս և մնում։[13]

Մոտեցեք Աստծուն և Նա կմոտենա ձեզ։[14] Սա է խոստումը բոլոր նրանց, ովքեր ձգտում են հավատալ։

Մենք սիրում ենք

Սուրբ գրությունները հայտնում են, որ ինչքան շատ ենք սիրում Աստծուն և Նրա զավակներին, այնքան երջանիկ ենք դառնում։[15] Այնուամենայնիվ, Հիսուսը խոսեց այն սիրո մասին, որը նվեր քարտ չէ, որը չենք կարող դեն նետել օգտագործելուց հետո, որը չենք կարող ընդունել, իսկ հետո կենտրոնանալ ուրիշ զգացումի վրա։ Դա մի սեր չէ, որի մասին կարող ենք խոսել, իսկ հետո մոռանալ։ Դա «տեսնեմ, ինչ կարող եմ անել» տեսակի սեր չէ։

Աստված խոսում է այն սիրո մասին, որը մտնում է մեր սրտերը առավոտյան արթուն ժամանակ, ամբողջ օրը մնում է մեզ հետ և երեկոյան երախտագիտության աղոթքների ժամանակ լցնում է մեր սիրտը զոհությամբ։

Դա մի անբացատրելի սեր է, որ մեր Երկնային Հայրն ունի մեր հանդեպ։

Դա անսահման կարեկցանք է, որը թույլ է տալիս ավելի հստակ տեսնել ուրիշներին, թե ովքեր են նրանք։ Մաքուր սիրո ապակիների միջով մենք տեսնում ենք անսահման ներուժ և արժեք ունեցող անմահ էակներին և Ամենակարող Աստծո սիրելի որդիներին ու դուստրերին։

Երբ դիտում ենք այդ ապակիների միջով, մենք չենք կարող արժեզրկել, արհամարհել որևէ մեկին կամ խտրականություն դնել։

Մենք գործում ենք

Փրկիչի գործում, հաճախ փոքր և հասարակ բաներով են «իրականացվում մեծ բաները»։[16]

Մենք գիտենք, որ որևէ գործում հաջողության հասնելու համար պահանջվում են կրկնվող վարժանքներ։ Անկախ նրանից, թե արդյո՞ք կլարնետ ենք նվագում, գնդակը խփում դեպի դարպասը, վերանորոգում մեքենան կամ ինքնաթիռով թռչում, վարժանքների շնորհիվ մենք ավելի ու ավելի լավն ենք դառնում։[17]

Մեր Փրկիչի հաստատած կազմակերպությունը՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին, օգնում է մեզ դա անել։ Այն առաջարկում է վարժանքների մի վայր, որտեղ ապրում են Նրա ուսմունքներով և օրհնում ուրիշներին, ինչպես Նա է օրհնել։

Որպես Եկեղեցու անդամներ, մեզ տրվում են կոչումներ, պարտականություններ և հնարավորություններ, որոնք պահանջում են մեզանից կարեկցել և սպասավորել ուրիշներին։

Վերջերս, Եկեղեցին նոր շեշտադրում է դրել ուրիշներին սպասավորելու, ծառայելու կամ սիրելու վրա։ Շատ ենք մտածել, թե ինչպես պետք է անվանենք այդ հատուկ շեշտադրումը։

Անուններից մեկը, որի մասին մտածել էինք՝ *հոգևորություն անելն* էր, որը համապատասխանում էր Եկեղեցու «Արածացրեք իմ ոչխարները» հրավերին։[18] Սակայն, դա ուներ մեկ թերություն. այդ եզրույթի օգտագործումն ինձ (և իմ նմաններին) կդարձներ *Գերմանական հովիվ (հովվաշուն)։* Հետևաբար, բավականին գոհ եմ *սպասավորություն* բառից։

Այս աշխատանքը բոլորի համար է

Իհարկե, այդ պնդումը նոր չէ։ Այն պարզապես նորացված և զտված հնարավորություն է տալիս, որպեսզի մենք կիրառենք Փրկիչի «սիրեցեք միմյանց» պատվիրանը՝[19] Եկեղեցու նպատակի իրականացման և կիրառման մի մաքուր եղանակ։

Միայն մտածեք միսիոներական աշխատանքի մասին. խիզախորեն, խոնարհաբար և վստահորեն

կիսվելով ավետարանով, կարող եք ուրիշների հոգևոր կարիքների սպասավորման հրաշալի օրինակ ծառայել, ով էլ նրանք լինեն:

Կամ, կատարել տաճարային աշխատանքը՝ փնտրելով մեր նախնիների անունները և նրանց հավերժության օրհնություններ առաջարկել: Սպասավորության ինչպիսի՜ աստվածային եղանակ:

Դիտարկենք աղքատներին ու կարիքավորներին փնտրելու արարքը, բարձրացնելով այն ձեռքերը, որոնք կախված են, կամ հիվանդներին և տառապյալներին օրհնություն տալը: Մի՞թե դրանք սպասավորության այն գործերը չեն, որոնք Տերը կիրառեց, երբ քայլում էր Երկրի վրա:

Եթե դուք Եկեղեցու անդամ չեք, ես հրավիրում եմ ձեզ «գալ և տեսնել»:[20] Եկե՛ք և միացեք մեզ: Եթե դուք Եկեղեցու անդամ եք, բայց ներկայումս ակտիվորեն չեք մասնակցում, ես հրավիրում եմ ձեզ, խնդրում եմ վերադարձեք: Մենք ունենք ձեր կարիքը:

Եկե՛ք, ձեր ուժն ավելացրեք մերին:

Ձեր բացառիկ տաղանդների, ունակությունների և անհատականության շնորհիվ դուք կօգնեք մեզ դառնալ ավելի լավը և երջանիկ: Փոխարենը՝ մենք կօգնենք ձեզ դառնալ ավելի լավը և երջանիկ:

Եկե՛ք, օգնեք մեզ ապաքինման, բարության և ողորմության մշակույթը ամրացնել և զորացնել Աստծո բոլոր զավակների համար: Քանի որ մենք բոլորս ձգտում ենք դառնալ նոր արարածներ, որտեղ «հիները անցան» և «ամեն բան նոր եղավ»:[21] Փրկիչը ցույց է տալիս շարժվելու ուղղությունը՝ առաջ և վեր: Նա ասում է. «Եթե ինձ սիրում եք, իմ պատուիրանքները պահեցէք»:[22] Եկեք բոլորս միասին աշխատենք, որ դառնանք Աստծո նախընտրած ժողովուրդը:

Սա այն ավետարանի մշակույթն է, որը մենք ցանկանում ենք զարգացնել Հիսուս Քրիստոսի Եկեղեցու ամբողջ տարածքում: Մենք ձգտում ենք ամրապնդել Եկեղեցին և դարձնել մի վայր, որտեղ մենք ներում ենք միմյանց: Որտեղ դիմակայում ենք սխալներ գտնելու, բամբասելու և ուրիշներին նեղացնելու գայթակղությանը: Որտեղ թերությունները մատնանշելու փոխարեն, մենք բարձրացնում ենք և օգնում ենք միմյանց հասնել մեր առավելագույն ներուժին:

Թույլ տվեք նորից հրավիրել: Եկեք և տեսեք: Միացե՛ք մեզ: Մենք ունենք ձեր կարիքը:

Անկատար մարդիկ

Դուք կհասկանաք, որ այս Եկեղեցին լցված է այս աշխարհի լավագույն մարդկանցով: Նրանք՝ ընկերական, սիրող, բարի և անկեղծ են: Նրանք աշխատասեր են, ցանկանում են զոհաբերել, իսկ երբեմն էլ հերոսական են:

Նաև, նրանք շատ անկատար են:

Նրանք սխալներ են գործում:

Ժամանակ առ ժամանակ նրանք ասում են բաներ, որոնք չպետք է ասեին: Նրանք անում են բաներ, որոնք նրանք չէին ցանկանա անել:

Բայց նրանք ունեն մի ընդհանուր բան. նրանք ցանկանում են կատարելագործվել և ավելի մոտենալ Տիրոջը՝ մեր Փրկիչին, նույնիսկ՝ Հիսուս Քրիստոսին:

Նրանք փորձում են դա ճիշտ անել:

Նրանք *հավատում են:* Նրանք *սիրում են:* Նրանք *գործում են:*

Նրանք ուզում են դառնալ ավելի քիչ եսասեր, ավելի կարեկցող, ավելի մաքուր, ավելի շատ նման Հիսուսին:

Երջանկության ծրագիրը

Այո, կյանքը, երբեմն, կարող է դժվար լինել: Իհարկե, մենք բոլորս ունենք մեր հուսահատության և հիասթափության պահերը:

Սակայն, Հիսուս Քրիստոսի ավետարանն առաջարկում է հույս: Եվ Հիսուս Քրիստոսի Եկեղեցում մենք միանում ենք ուրիշներին, ովքեր փնտրում են մի վայր, որտեղ կարող ենք զգալ ինչպես մեր տանը՝ զարգացման մի վայր, որտեղ միասին կարող ենք *հավատալ, սիրել,* և *գործել:*

Անկախ մեր տարբերություններից, մենք ձգտում ենք ընդունել իրար որպես մեր սիրելի Երկնային Հոր որդիներ և դուստրեր:

Ես անչափ երախտապարտ եմ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ եմ և գիտեմ, որ Աստված բավականաչափ սիրում է իր զավակներին, որպեսզի նրանց երջանկության ծրագիր և իմաստ տա այս կյանքում, իսկ գալիք կյանքում՝ փառքի սրահներում ապրելու հավերժական ուրախության զգացում:

Ես երախտապարտ եմ, որ Աստված մեզ տվել է մի միջոց, որով կարող ենք բուժել հոգևոր հիվանդությունները և կյանքի *Weltschmerz*-ը:

Ես վկայում և թողնում եմ իմ օրհնությունը, որ երբ մենք *հավատանք* Աստծուն, երբ մենք ողջ սրտով *սիրենք* Նրան և *սիրենք* Նրա զավակներին, և ձգտենք *գործել* այնպես, ինչպես Աստված է հրահանգել, ապա մենք կգտնենք բժշկում և խաղաղություն, երջանկություն և իմաստ: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. msn.com հարցման մեջ գրված է, որ Սողոմոնը հինգերորդ ամենահարուստ մարդն է, որը երբևէ ապրել է: «Ըստ Աստվածաշնչի, Սողոմոն թագավորը ղեկավարել է մ.թ.ա. 970-ից մ.թ.ա. 931 թթ, և այդ ընթացքում նա ստացել է 25 տոննա ոսկի իր 39 տարիներից յուրաքանչյուրի համար, որը 2016 թվականին կարժենար միլիարդավոր դոլարներ: Հարկերից և առևտրից ստացած անհավանական հարստությունների հետ մեկտեղ, աստվածաշնչյան ղեկավարի անձնական հարստությունը կարող էր գերազանցել այսօրվա փողերով 2 տրիլիոն դոլարը» (“The 20 Richest People of All Time,” Apr. 25, 2017, msn.com):
2. Տես Ժողովող 1.1–2:
3. Տես Ժողովող 2.17:
4. Հովհաննես 10.10
5. Գործք Առաքելոց 10.38
6. Մատթեոս 12.15, տես նաև Մատթեոս 15.30
7. *Ամենապան* բառն իր արմատներով գալիս է հունարեն բառից, որը բառացիորեն նշանակում է «բարի լուր» (see Bible Dictionary, “Gospels”):
8. Մատթեոս 16.25
9. Տես Եզեկիել 36.26, Երեմիա 24.7:
10. 1 Նեփի 8.12
11. Եբրայեցիս 11.6
12. Տես 2 Նեփի 9.28:
13. Տես Հովհաննես 15.16:
14. Տես Հակոբոս 4.8:
15. Տես 4 Նեփի 1.15–16:
16. Ալմա 37.6
17. Արիստոտելը հավատում էր, որ «արդար գործեր անելով է արդար մարդը կերտվում» (*The Nicomachean Ethics,* trans. David Ross, rev. Lesley Brown [2009], 28):
18. Տես Հովհաննես 21.15–17:
19. Հովհաննես 15.12
20. Հովհաննես 1.39
21. Բ Կորնթացիս 5.17
22. Հովհաննես 14.15

Ջոյ Դ. Ջոնս
Երեխաների Միության գերագույն նախագահ

Նրա համար

Մարդկանց ծառայելիս, ում և ինչու հարցերի պատասխանների իմացությունն օգնում է մեզ հասկանալ, որ սիրո բարձրագույն դրսևորումը նվիրվածությունն է Աստծուն։

Այս պատմական երեկո, ես իմ սերն ու գնահատանքն եմ արտահայտում ձեզանից յուրաքանչյուրին, սիրելի՛ քույրեր։ Անկախ մեր տարիքից, գտնվելու վայրից կամ հանգամանքներից, մենք այսօր հավաքվել ենք միասնությամբ, միահամուռ ուժով, նպատակով և վկայությամբ, որ մենք սիրված ենք և առաջնորդվում ենք մեր Երկնային Հոր կողմից, մեր Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի կողմից և մեր ապրող մարգարեի՝ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի կողմից։

Երիտասարդ տարիներին ես ու ամուսինս կանչվել էինք մեր եպիսկոպոսի կողմից այցելելու և սպասավորելու մի ընտանիքի, ովքեր երկար տարիներ չէին գալիս Եկեղեցի։ Մենք հաճույքով ընդունեցինք հանձնարարությունը և մի քանի օր անց գնացինք նրանց տուն։ Մեզ համար անմիջապես պարզ դարձավ, որ նրանք չէին ցանկանում այցելուներ Եկեղեցուց։

Հաջորդ մեր այցի ժամանակ մենք նրանց տարանք թխվածք, վստահ լինելով, որ շոկոլադե թխվածքաբլիթները կհալեցնեին նրանց սրտերը։ Սակայն դա տեղի չունեցավ։ Ամուսինները մեզ հետ խոսեցին դռան ցանցի ետևից, ավելի պարզ հասկացնելով, որ մեզ չեն սպասում։ Սակայն երբ մենք տուն էինք վերադառնում, հաստատ համոզված էինք, որ հաջողության կհասնեինք, եթե շոկոլադե թխվածքաբլիթների փոխարեն առաջարկեինք նրանց խրթխրթան բրնձե թխվածքաբլիթներ։

Մեր հոգևոր թերի տեսլականը հետագա ձախողված փորձերը ջախջախիչ դարձրեց։ Մերժվելը երբեք հաճելի չէ։ Ժամանակի հետ մենք սկսեցինք հարցնել ինքներս մեզ. «*Ինչո՞ւ* ենք մենք դա անում։ Ո՞րն է մեր նպատակը»։

Երեց Քուքն այս դիտարկումն է արել. «Եկեղեցում ծառայելը . . . կարող է դժվար լինել, եթե մեզ հանձնարարվում է անել մի բան, որը վախեցնում է մեզ, եթե մենք հոգնում ենք ծառայելուց կամ եթե կանչվել ենք կատարելու այն, ինչն, ի սկզբանե, մեզ գրավիչ չի թվում»։[1] Մենք համոզվեցինք Երեց Քուքի խոսքերի ճշմարտության մեջ և որոշեցինք, որ պետք է առաջնորդություն փնտրենք Մեկից, ով ավելի լայն տեսադաշտ ունի, քան մերն է։

Այսպիսով, բազմաթիվ անկեղծ աղոթքներից և ուսումնասիրությունից հետո մենք ստացանք մեր ծառայության վերաբերյալ *ինչո՞ւ* հարցի պատասխանը։ Մենք մտածելակերպի փոփոխություն ունեցանք, սրտի փոփոխություն, որը փաստորեն հայտնության փորձառություն էր։[2] Երբ մենք ուղղորդում էինք փնտրում սուրբ գրություններում, Տերն ուսուցանեց մեզ, թե մարդկանց ծառայելու գործընթացն ինչպես դարձնել ավելի հեշտ և իմաստալից։ Ահա այն հատվածը, որը փոխեց մեր սրտերը և մեր մոտեցումը. «Սիրի՛ր Տիրոջը՝ քո Աստծուն, քո ողջ սրտով, քո ողջ զորությամբ, մտքով և ուժով. և Հիսուս Քրիստոսի անունով *ծառայիր նրան*»։[3] Թեև այս հատվածը շատ ծանոթ էր, սակայն, կարծես, խոսեց մեզ հետ մի նոր ու կարևոր ձևով։

Մենք հասկացանք, որ սրտանց ձգտում էինք ծառայել այս ընտանիքին և ծառայել մեր եպիսկոպոսին, սակայն մենք պետք է հարցնեինք ինքներս մեզ, թե արդյո՞ք ծառայում էինք Տիրոջ հանդեպ սիրուց դրդված։ Բենիամին թագավորը հստակեցրել է այս պնդումը, հայտարարելով. «Ահա, ես ասում եմ ձեզ՝ քանի որ ես ասացի, որ ես անցկացրել եմ իմ օրերը ձեզ ծառայելով, ես չեմ ցանկանում պարծենալ, *քանզի ես միայն եղել եմ Աստծո ծառայության մեջ*»։[4]

Այսպիսով, ո՞ւմ էր ծառայում Բենիամին թագավորը։ Երկնային Հորը և Փրկիչին։ Մարդկանց ծառայելիս, *ում* և *ինչու* հարցերի պատասխանների իմացությունն օգնում է մեզ հասկանալ, որ սիրո բարձրագույն դրսևորումը նվիրվածությունն է Աստծուն։

Երբ մեր կենտրոնացումն աստիճանաբար փոխվեց, նույնը տեղի ունեցավ մեր աղոթքների հետ։ Մենք սկսեցինք հաճույքով կատարել մեր այցերը այս սիրելի ընտանիքի տուն՝ Տիրոջ հանդեպ սիրուց դրդված։[5] Մենք դա անում էինք Նրա համար։ Նա պայքարը փոխեց և դա այլևս պայքար չէր։ Ամիսներ շարունակ դռան շեմին կանգնելուց հետո ընտանիքի անդամները սկսեցին մեզ ներս հրավիրել։ Վերջապես մենք կանոնավոր աղոթքներ և ավետարանի հաճելի քննարկումներ էինք ունենում միասին։ Զարգացել էին երկարատև ընկերական հարաբերություններ։ Մենք երկրպագում ու սիրում էինք Նրան՝ սիրելով Նրա զավակներին։

Կարո՞ղ եք մտաբերել այնպիսի մի ժամանակ, երբ սիրով ու սրտանց օգնության ձեռք եք մեկնել մեկին, ով կարիքի մեջ է եղել և զգացել եք, որ ձեր ջանքերն անկնկատ են անցնում կամ, գուցե, չեն գնահատվում և նույնիսկ՝ անցանկալի են: Այդ պահին, հարցականի տակ դրե՞լ եք ձեր ծառայությունը: Եթե այդպես եղել է, թող Բենիամին թագավորի այս խոսքերը փարատեն ձեր կասկածը և փոխեն ձեր սիրտը. «Դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք»:[6]

Զայրույթ կառուցելու փոխարեն մենք կարող ենք ծառայության միջոցով ավելի կատարյալ հարաբերություններ կառուցել մեր Երկնային Հոր հետ: Մեր սերը և նվիրվածությունը Նրա հանդեպ հեռացնում է ճանաչվելու կամ գնահատվելու կարիքը և թույլ է տալիս, որ Նրա սերը հոսի մեր մեջ և մեր միջոցով:

Երբեմն մենք կարող ենք ծառայել զուտ պարտականության կամ պարտավորվածության զգացումից ելնելով, սակայն նույնիսկ այդպիսի ծառայությունը կարող է արթնացնել մեր մեջ ավելի բարձր մի բան, դրդելով մեզ ծառայել «ավելի գերազանց ճանապարհով»[7]՝ ինչպես ասվում է Նախագահ Նելսոնի հրավերում «ուրիշների մասին հոգ տանելու և սպասավորելու ավելի նոր, ավելի սուրբ մոտեցումով»:[8]

Երբ մենք կենտրոնանում ենք բոլոր այն բաների վրա, որոնք Աստված արել է մեզ համար, մեր ծառայությունը բխում է երախտապարտ սրտից: Երբ մենք ավելի քիչ ենք մտահոգվում մեր ծառայության տված օգուտի մասին, գիտակցում ենք, որ ծառայությունը պետք է կենտրոնացնել Աստծուն առաջին տեղում դասելու վրա:[9]

Նախագահ Մ. Ռասսել Բալլարդն ուսուցանել է. «Միայն այն ժամանակ, երբ մենք սիրում ենք Աստծուն մեր ողջ սրտով, անձով և մտքով, մենք կարողանում ենք կիսել այս սերը մեր ընկերոջ հետ բարի գործերի և ծառայության միջոցով»:[10]

Տասը պատվիրաններից առաջինը վերահաստատում է այս աստվածային իմաստությունը. «Ես եմ Եհովան քո Աստուածը . . . Բացի

ինձանից ուրիշ աստուածներ չ՚ունենաս»:[11] Այս պատվիրանի ձևակերպումը օգնում է մեզ հասկանալ, որ *եթե* մենք Նրան դարձնենք գլխավոր առաջնահերթություն, մնացած ամեն ինչը վերջապես կընկնի իր տեղը, նույնիսկ մեր ծառայությունն ուրիշներին: Երբ Նա մեր կյանքում գերիշխող դիրք է զբաղեցնում մեր նպատակասլաց ընտրությամբ, ապա Նա կարող է օրհնել մեր գործողությունները մեր և ուրիշների բարօրության համար:

Տերը խորհուրդ է տվել. «Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում»:[12] Եվ ամեն շաբաթ մենք ուխտ ենք կապում անելով հենց դա՝ «միշտ հիշել նրան»:[13] Կարո՞ղ է արդյոք նման աստվածակենտրոն միտումը կիրառվել մեր բոլոր գործերում: Կարո՞ղ է արդյոք նույնիսկ մի փոքր հանձնարարությունը հնարավորություն դառնալ՝ ցուցադրելու մեր սերը և նվիրումը Նրան: Ես հավատում եմ, որ կարող է և կդառնա:

Մենք կարող ենք մեր անելիքների ցուցակի ամեն մի կետը դարձնել Նրան փառաբանելու մի եղանակ: Մենք կարող ենք դիտարկել այդ ցուցակի ամեն մի անելիքը որպես արտոնություն և հնարավորություն՝ ծառայելու Նրան, նույնիսկ այն ժամանակ, երբ գտնվում ենք ժամկետների, հոգսերի կամ երեխայի տակդիրների եռուզեռում:

Ամմոնն ասել է. «Այո՛, ես գիտեմ, որ ես ոչինչ եմ. ինչ վերաբերում է իմ ուժին, ես թույլ եմ. հետևաբար, ես չեմ պարծենա ինձանով, բայց ես կպարծենամ իմ Աստծով, քանզի նրա ուժով ես կարող եմ անել բոլոր բաները»:[14]

Երբ Աստծուն ծառայելը դառնում է մեր կյանքի հիմնական առաջնահերթությունը, մենք կորցնում ենք մեր անձը, բայց ճիշտ ժամանակին՝ գտնում:[15]

Փրկիչը շատ պարզ և ուղիղ ձևով ուսուցանել է այս սկզբունքը. «Հետևաբար, թող ձեր լույսն այնպես շողա այս ժողովրդի առաջ, որ նրանք կարողանան տեսնել ձեր բարի գործերը և *փառավորեն ձեր Հորը*, որը երկնքում է»:[16]

Թույլ տվեք կիսվել ձեզ հետ որոշ իմաստուն խոսքերով, որոնք գրված են եղել Կալկաթայի (Հնդկաստան) մանկատներից մեկի պատին. «Եթե բարի եք, մարդիկ կարող են մեղադրել ձեզ եսասեր, ծածուկ շարժառիթների համար: Ամեն դեպքում բարի եղեք: Այն, ինչ տարիներով կառուցել եք, ինչ-որ մեկը կարող է մի գիշերում քանդել: Ամեն դեպքում կառուցեք: Այսօր ձեր արած լավությունը մարդիկ վաղը մոռանում են: Ամեն դեպքում լավություն արեք: Տվեք աշխարհին այն լավագույնը, ինչ ունեք՝ միևնույնն է, բավարար չի լինելու: Ամեն դեպքում տվեք աշխարհին այն լավագույնը, ինչ ունեք: Վերջնական վերլուծության արդյունքում դուք կտեսնեք, որ դա ձեր և ձեր Աստծո միջև է . . . ամեն դեպքում»:[17]

Քույրե՛ր, դա միշտ մեր և Տիրոջ միջև է: Ինչպես նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստն է ասել. «Աշխարհում ինչի՞ կարիքն է ամենամեծը»: Ողջ աշխարհում յուրաքանչյուր մարդու ամենամեծ կարիքն այն չէ՞, որ անձնական, անընդհատ, ամենօրյա, շարունակական շփում ունենա Փրկիչի հետ»: Նման փոխհարաբերություն ունենալը կարող է ի հայտ բերել մեր մեջ աստվածայինը, և ոչինչ չի կարող ավելի մեծ փոփոխություն մտցնել մեր կյանք, քան երբ մենք իմանում ու հասկանում ենք Աստծո հետ մեր սուրբ փոխհարաբերությունը»:[18]

Նմանապես, Ալման բացատրել է իր որդուն. «Այո, թող բոլոր քո արարքները լինեն ի Տերը, և ուր էլ որ գնաս, թող դա լինի Տիրոջով, այո, թող քո բոլոր մտքերն ուղղված լինեն առ Տերը. այո, թող քո սրտի զորությունը դրված լինի Տիրոջ վրա հավիտյան»:[19]

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը նույն կերպ ուսուցանել է մեզ. «Երբ մենք հասկանում ենք Նրա կամավոր Քավությունը, զոհաբերության

ցանկացած զգացում մեզ մոտ ամբողջությամբ վեր է ածվում երախտագիտության խորը զգացողության՝ Նրան ծառայելու արտոնության համար»:[20]

Քույրե՛ր, ես վկայում եմ, որ երբ Հիսուս Քրիստոսն Իր Քավության զորությամբ ներգործում է մեզ *վրա* և մեր *մեջ*, Նա սկսում է ներգործել մեր *միջոցով*՝ ուրիշներին օրհնելու համար: Մենք ծառայում ենք նրանց, բայց դա անում ենք սիրելով ու ծառայելով Նրան: Մենք դառնում ենք այն, ինչ սուրբ գրություններում է ասվում. «Ամեն մարդ փնտրելով իր մերձավորի շահը, և բոլոր բաներն անելով պարզ աչքով ուղղված Աստծո փառքին»:[21]

Գուցե մեր եպիսկոպոսը գիտեր, որ դա մի դաս էր, որ ես ու ամուսինս պետք է սովորեինք, այն վաղ, բարի, բայց ոչ կատարյալ ջանքերից՝ որոնք ուղղված էին Աստծո սիրելի որդիներին ու դուստրերին սպասավորելուն: Ես բերում եմ իմ անձնական և հաստատուն վկայությունը բարության ու սիրո վերաբերյալ, որը Նա կիսում է մեզ հետ, երբ մենք ձգտում ենք ծառայել Նրա համար: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Քարլ Բ. Քուք, «Ծառայեք», *Լիահոնա,* նոյեմբեր 2016, 110
2. Տես Մոսիա 5.2
3. Վարդապետություն և Ուխտեր 59.5, շեշտադրումն ավելացված է:
4. Մոսիա 2.16, շեշտադրումն ավելացված է:
5. Տես 1 Նեփի 11.22:
6. Մոսիա 2.17
7. Ա Կորնթացիս 12.31
8. Ռասսել Մ. Նելսոն, «Սպասավորություն», *Լիահոնա,* մայիս 2018, 100
9. Տես Մատթեոս 6.1–4, 33:
10. Մ. Ռասսել Բալլարդ, «Գտնել ուրախություն ծառայությունը սիրելու միջոցով», *Լիահոնա,* մայիս 2011, 47
11. Ելից 20.2–3
12. Վարդապետություն և Ուխտեր 6.36
13. Վարդապետություն և Ուխտեր 20.77, 79
14. Ալմա 26.12
15. Տես Մատթեոս 16.24–25
16. 3 Նեփի 12.16, շեշտադրումն ավելացված է:
17. Often attributed to Mother Teresa; see Kent M. Keith, *The Paradoxical Commandments* (1968).
18. James E. Faust, "A Personal Relationship with the Savior," *Ensign,* Nov. 1976, 58.
19. Ալմա 37.36
20. Ռասսել Մ. Նելսոն, «Քավությունը», *Լիահոնա,* նոյեմբեր 1996, 35
21. Վարդապետություն և Ուխտեր 82.19

Միշել Դ. Քրեյգ
Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահության առաջին խորհրդական

Սուրբ դժգոհություն

Սուրբ դժգոհությունը մղում է մեզ գործել հավատքով, հետևել բարի գործեր անելու Փրկիչի հրավերներին և մեր կյանքը խոնարհաբար տալ Իրեն:

Երբ ես տարրական դպրոցի աշակերտուհի էի, մենք տուն էինք վերադառնում մի սալապատ ճանապարհով, որն անցնում էր լեռնալանջով: Կար նաև մի ուրիշ ճանապարհ, որը սալապատ չէր և կոչվում էր «տղաների ճանապարհ»: Տղաների ճանապարհն անցնում էր ցեխերի միջով և ուղիղ բարձրանում էր դեպի բլուրը: Այն ավելի կարճ էր, բայց շատ ավելի զառիթափ: Ես փոքր աղջիկ էի և գիտեի, որ կարող եմ ցանկացած ճանապարհ անցնել, որն անցնում են տղաները: Ավելի կարևոր էր այն, որ ես գիտեի, որ ապրում էի վերջին օրերում և պետք է դժվար բաներ անեի, ինչպես ռահվիրաները, և ցանկանում էի պատրաստ լինել: Այդպիսով, ես երբեմն հետ էի մնում սալապատ ճանապարհով քայլող իմ ընկերների խմբից, հանում էի կոշիկներս և ոտաբոբիկ բարձրանում տղաների ճանապարհով: Ես փորձում էի ուժեղացնել ոտքերս:

Որպես Երեխաների Միություն հաճախող աղջնակ, ես մտածում էի, որ այդպես կարող եմ պատրաստվել: Այժմ ես այլ կերպ եմ մտածում: Ոտաբոբիկ սարն ի վեր տանող ճանապարհով բարձրանալու փոխարեն, ես

գիտեմ, որ կարող եմ պատրաստել իմ ոտքերը քայլել ուխտի ճանապարհով, արձագանքելով Սուրբ Հոգու հրավերներին: Տերն Իր մարգարեի միջոցով կոչ է անում յուրաքանչյուրիս ապրել և հոգ տանել մարդկանց մասին «ավելի բարձր և ավելի սուրբ եղանակով» և «մի քայլ վեր անել»:[1]

Գործողության դրդող այս մարգարեական կոչերը, զուգորդվելով մեր բնածին զգացումով, որ կարող ենք ավելին անել, երբեմն մեր մեջ առաջացնում են Երեց Նիլ Ա. Մաքսվելի ասած «սուրբ դժգոհություն»:[2] Սուրբ դժգոհությունն առաջանում է այն ժամանակ, երբ մենք համեմատում ենք, թե «ով *ենք* մենք և ինչպիսին *դառնալու* ներուժ ունենք»:[3] Յուրաքանչյուրս, եթե ազնիվ ենք, մի անդունդ ենք տեսնում այս մտքերի միջև՝ որտեղ ենք և ով ենք մենք, և որտեղ ու ով ենք ցանկանում դառնալ: Մենք ձգտում ենք ավելի մեծ անձնական ունակության: Մենք ունենք այս զգացումները, քանի որ Աստծո դուստրերն ու որդիներն ենք, ծնված Քրիստոսի Լույսով, թեպետ ապրում ենք ընկած աշխարհում: Այս զգացումները աստվածատուր են և գործելու շտապողականություն են առաջացնում:

Մենք պետք է ողջունենք սուրբ դժգոհության զգացումները, որոնք մեզ կանչում են դեպի ավելի բարձր ուղի, միևնույն ժամանակ ճանաչելով և խուսափելով սատանայի կեղծիքից՝ որն է կաթվածահար անող հուսահատությունը: Սա թանկագին տարածք է, որի մեջ սատանան ձգտում է ցատկել: Մենք կարող ենք ընտրել ավելի բարձր արահետը, որը տանում է մեզ փնտրելու Աստծուն, Նրա խաղաղությունն ու շնորհը, կամ կարող ենք լսել սատանային, ով ռմբակոծում է մեզ ուղերձներով այն մասին, որ մենք երբեք հաջողակ չենք լինի, հարուստ չենք լինի, խելացի չենք լինի, գեղեցիկ չենք լինի և այլն: Մեր դժգոհությունը կարող է լինել կամ սուրբ, կամ կործանող:

Գործենք հավատքով

Սուրբ դժգոհությունը սատանայի կեղծիքից տարբերելու եղանակներից մեկն այն է, որ այն դրդում է մեզ հավատքից բխող գործողություններին: Սուրբ դժգոհությունը հրավեր չէ մնալու մեր հարմարավետության գոտում, ոչ էլ այն կտանի մեզ հուսահատության: Ես հասկացել եմ, որ երբ տարվում եմ այն մտքերով, թե ինչ ես *չեմ* կարող, ապա չեմ առաջադիմում և շատ ավելի դժվար է լինում ինձ համար զգալ և հետևել Հոգուն:[4]

Երիտասարդ Ջոզեֆ Սմիթը քաջատեղյակ էր իր թերություններից և անհանգստանում էր «մահկանացու [իր] հոգու բարօրության մասին»: Նրա խոսքերն են. «միտքս չափազանց դառնացած էր, քանի որ ես սկսում էի գիտակցել իմ մեղքերը, և . . . ես վշտացած էի թե՛ իմ մեղքերի համար, և թե՛ աշխարհի մեղքերի համար»:[5] Սա մղեց նրան «լուրջ մտախոհության ու մեծ անհանգստության»:[6] Ծանո՞թ է ինչում: Արդյո՞ք դուք ծանրության զգացում ունեք կամ մտահոգված եք ձեր թերություններով:

Եվ, Ջոզեֆն ինչ-որ բան *արեց*: Նա ասել է. «Ես հաճախ ինքս ինձ հարց էի տալիս. Ի՞նչ *անել*»:[7] Ջոզեֆը հավատքով գործեց: Նա բացեց սուրբ գրությունները, կարդաց Հակոբոս 1.5-ում պարունակվող հրավերը և դիմեց Աստծուն օգնության համար: Արդյունքում ստացված տեսիլքը վերածվեց Վերականգնման: Որքան երախտապարտ եմ ես, որ Ջոզեֆի այս սուրբ դժգոհությունը, դժվարության ու շփոթության պահերը, դրդեցին նրան հավատքով գործելու:

Հետևենք հուշումներին՝ բարի գործեր կատարենք

Աշխարհը հաճախ օգտագործում է դժգոհության զգացումը որպես ինքնամփոփության արդարացում, մեր մտքերը հետ ու առաջ մղելու և անհատապես ապրելու այն պահերը, թե ով եմ *ես*, ով չեմ *ես* և ինչ եմ *ես* ուզում: Սուրբ դժգոհությունը մղում է մեզ հետևել Փրկիչի օրինակին, ով «ման եկավ բարի անելով»:[8] Քայլելով աշակերտության ճանապարհով, մենք կստանանք հոգևոր հուշումներ, որպեսզի օգնենք ուրիշներին:

Տարիներ առաջ իմ լսած պատմությունն օգնել է ինձ ճանաչել Սուրբ Հոգու հուշումները և ապա գործել ըստ դրանց: Քույր Բոննի Դ. Փարքինը՝ Սփոփող Միության նախկին գերագույն նախագահը, կիսվել էր հետևյալ պատմությամբ.

«Սյուզանը . . . հրաշալի դերձակ էր: Նախագահ [Սպենսեր Վ.] Քիմբալը ապրում էր նրա հետ նույն ծխում: Մի կիրակի օր Սյուզանը նկատեց, որ նա նոր կոստյում է հագել: Սյուզանի հայրը վերջերս . . . նրան բերել էր մի նուրբ մետաքսե գործվածք: Սյուզանը մտածեց, որ այդ գործվածքից գեղեցիկ փողկապ կստացվի, որը հարմար կլինի նախագահ Քիմբալի նոր կոստյումին: Այդպես, երկուշաբթի նա կարեց փողկապը: Նա փաթաթեց այն փաթեթավորման թղթով և գնաց Նախագահ Քիմբալի տուն:

Շքամուտքին մոտենալով, նա հանկարծ կանգ առավ ու մտածեց. «Ո՞վ եմ ես, որ մարգարեի համար փողկապ կարեմ: Նա, հավանաբար, մի կույտ փողկապներ ունի»: Որոշելով, որ սխալվել է, Սյուզանը շրջվեց, որ հեռանա:

Հենց այդ պահին Քույր Քիմբալը բացեց դուռը և ողջունեց. «Օհ՜, Սյուզան»:

Շփոթված Սյուզանն ասաց. «Կիրակի օրը ես նախագահ Քիմբալին տեսա նոր կոստյումով: Հայրս մետաքսե կտոր էր բերել Նյու Յորքից . . . և ես որոշեցի փողկապ կարել նրա համար»:

Մինչ Սյուզանը կշարունակեր, Քույր Քիմբալը կանգնեցրեց նրան, գրկեց նրա ուսերը և ասաց. «Սյուզան, երբեք մի զսպիր մեծահոգի միտքը»:[9]

Ի՜նչ լավ է ասված: «Երբեք մի զսպիր մեծահոգի միտքը»: Երբեմն, երբ ինչ-որ մեկի համար ինչ-որ բան անելու ցանկություն եմ ունենում, ես մտածում եմ՝ արդյո՞ք դա հուշում է, թե պարզապես իմ սեփական մտքերն են: Սակայն ինձ հիշեցվում է. «Այն, ինչ Աստծուց է, շարունակ հրավիրում և հրապուրում է անել բարիք. ուստի, ամեն բան, որ հրավիրում և հրապուրում է անել բարիք, և սիրել Աստծուն, և ծառայել նրան, ոգեշնչված է Աստծուց»:[10]

Անկախ նրանից՝ դրանք ուղղակի հուշումներ են, թե օգնելու

ազդակներ, բարի գործը երբեք անտեղի չէ, քանի որ «գթությունը երբեք չի խափանվում»[11], և երբեք սխալ չէ արձագանքելը:

Ժամանակի սղության պատճառով մենք հազվադեպ ենք իմանում, թե ծառայության մեր փոքրիկ գործն ինչ արդյունք ունեցավ: Սակայն երբևիցե մենք կգիտակցենք, որ գործիք ենք եղել Աստծո ձեռքերում և երախտապարտ կլինենք իմանալ, որ երբ Սուրբ Հոգին գործում է մեր միջոցով, դա Աստծո հավանության դրսևորումն է:

Քույրեր, դուք և ես կարող ենք խնդրել, որ Սուրբ Հոգին ցույց տա մեզ «բոլոր բաները, որ [մենք] պետք է անենք»[12], նույնիսկ, երբ մեր անելիքների ցուցակն արդեն լցված է: Երբ հուշում ենք ստանում, կարող ենք թողնել սպասքը լվացարանում կամ հրատապ նամակները էլեկտրոնային փոստում, որպեսզի որևէ բան կարդանք երեխայի համար, այցելենք ընկերներից մեկին, պահենք հարևանի երեխաներին կամ ծառայենք տաճարում: Սխալ չհասկանաք ինձ, ես սիրում եմ ցուցակներ կազմել և նշել դրանցում, երբ գործերը կատարված են: Սակայն խաղաղությունը գալիս է իմանալուց, որ *լավ* մարդ լինելը պարտադիր չէ, որ հավասար լինի շատ գործեր *անելուն:* Երբ դժգոհությանն արձագանքում եմ՝ հետևելով հուշումներին, փոխվում է իմ կարծիքը ժամանակիս մասին, և ես մարդկանց նայում եմ ոչ թե որպես գործերս ընդհատողների, այլ որպես կյանքիս նպատակների:

Սուրբ դժգոհությունը տանում է մեզ դեպի Քրիստոսը

Սուրբ դժգոհությունը տանում է խոնարհության, ոչ թե խղճահարության կամ հուսահատության, որոնք գալիս են համեմատություններ անելուց, երբ մենք միշտ պարտվող ենք դուրս գալիս: Ուխտերը պահող կանայք շատ տարբեր են ամեն ինչով, տարբեր են նրանց ընտանիքները, կյանքի փորձը և նրանց հանգամանքները:

Իհարկե, յուրաքանչյուրս կթերանա մեր աստվածային ներուժն իրականացնելիս, և դրա մեջ որոշ

ճշմարտություն կա, որ *մենակ* մենք չենք կարող դա անել: Սակայն ավետարանի լավ նորությունը նրանում է, որ Աստծո շնորհով *մենք* կկարողանանք: Քրիստոսի օգնությամբ մենք կարող ենք անել բոլոր բաները:[13] Սուրբ գրությունները խոստանում են, որ մենք «շնորհք կգտնենք պատշաճ ժամանակին օգնելու»:[14]

Զարմանալի ճշմարտությունն այն է, որ մեր թերությունները կարող են օրհնություն լինել, երբ խոնարհեցնում են մեզ և շրջում են դեպի Քրիստոսը:[15] Դժգոհությունը դառնում է սուրբ, երբ մենք խոնարհաբար մոտենում ենք Հիսուս Քրիստոսին մեր ցանկություններով, այլ ոչ թե հեռանում, ինքներս մեր հանդեպ խղճահարություն զգալով:

Իրականում, Հիսուսի հրաշքները հաճախ սկսվել են այն ժամանակ, երբ հասկացվել է ցանկությունը, կարիքը, ձախողումը կամ անհամապատասխանությունը: Հիշո՞ւմ եք հացի ու ձկների պատմությունը: Ավետարանիչներից յուրաքանչյուրը պատմում է, թե Հիսուսն ինչպես հրաշքով կերակրեց հազարավորներին, ովքեր հետևեցին Նրան:[16] Բայց պատմությունը սկսվում է աշակերտների կողմից իրենց անզորության գիտակցմամբ. նրանք գիտակցեցին, որ ունեն ընդամենը «հինգ գարիէ հաց և երկու փոքր ձուկ. բայց սա ի՞նչ է այդչափ մարդկանց համար»:[17] Աշակերտները ճիշտ էին՝ նրանք *չունեին* բավականաչափ ուտելիք, սակայն նրանք տվեցին Հիսուսին այն, ինչ ունեին և ապա *Նա* հրաշք գործեց:

Դուք ունեցե՞լ եք երբևէ այնպիսի զգացում, որ ձեր տաղանդներն ու պարգևները շատ քիչ են ստացած հանձնարարությունը կատարելու համար: Ես ունեցել եմ: Բայց ես և դուք կարող ենք տալ Քրիստոսին այն, ինչ ունենք, և Նա կբազմապատկի մեր ջանքերը: Այն, ինչ դուք կարող եք տալ, ավելի քան բավարար է, նույնիսկ ձեր մարդկային գործոնով և թույլ կողմերով հանդերձ, *եթե* ապավինեք Աստծո շնորհին:

Ճշմարտությունն այն է, որ յուրաքանչյուրս Աստծո սերունդն ենք, Աստծո զավակը:[18] Եվ ինչպես Նա վարվել է մարգարեների կամ սովորական տղամարդկանց ու կանանց հետ դարեր շարունակ, Երկնային Հայրը մտադիր է նույն կերպ փոխակերպել մեզ:

Ք. Ս. Լյուիսը Աստծո փոխակերպող զորությունը բացատրել է այսպես. «Պատկերացրեք, թե դուք մի կենդանի տուն եք: Աստված գալիս է, որպեսզի վերակառուցի այդ տունը: Սկզբում, դուք գուցե հասկանում եք, թե Նա ինչ է անում: Նա վերանորոգում է ջրատար խողովակները, փակում կտուրի ճեղքերը, և այլն. դուք գիտեիք, որ տան այդ գործերը պիտի արվեին, և չեք զարմանում: Սակայն Նա սկսում է հարվածել տան չորս բոլորը և դա խիստ անհանգստացնում է: . . . [Տեսեք,] Նա կառուցում է մի այլ տուն, այն մեկից, որի մասին դուք մտածում էիք: . . . Դուք կարծում էիք, թե ձեզ դարձրեցին մի փոքր ամուր տնակ, սակայն Նա պալատ է կառուցում: Նա մտադիր է գալ և անձամբ այդտեղ ապրել»:[19]

Մեր Փրկիչի քավիչ զոհաբերության շնորհիվ մենք կարող ենք կատարել մեզ տրվող առաջադրանքները: Մարգարեները սովորեցրել են, որ բարձրանալով աշակերտության ճանապարհով, մենք կարող ենք սրբագործվել

Քրիստոսի շնորհով: Սուրբ դժգոհությունը դրդում է մեզ գործել հավատքով, հետևել բարի գործեր անելու Փրկիչի հրավերներին և մեր կյանքը խոնարհաբար տալ Իրեն: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Russell M. Nelson, in Tad Walch, "'The Lord's Message Is for Everyone': President Nelson Talks about Global Tour," *Deseret News,* Apr. 12, 2018, deseretnews.com.
2. Neal A. Maxwell, "Becoming a Disciple," *Ensign,* June 1996, 18.
3. Neal A. Maxwell, "Becoming a Disciple," 16; emphasis added.
4. «Հուսահատությունը կթուլացնի ձեր հավատը: Եթե դուք նվազեցնում եք ձեր ակնկալիքները, ձեր արդյունավետությունը կնվազի, ձեր ցանկությունը կթուլանա, և դուք ավելի կդժվարանաք հետևել Հոգուն» («Ո՞րն է իմ նպատակը որպես միսիոներ»: *Քարոզիր իմ ավետարանը. Միսիոներական ծառայության ուղեցույց*, rev. ed. [2018], lds.org/manual/missionary).
5. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Զոզեֆ Սմիթ* (2007), 28
6. Զոզեֆ Սմիթ—Պատմություն 1.8
7. Զոզեֆ Սմիթ—Պատմություն 1.10, շեշտադրումն ավելացված է:
8. Գործք 10.38
9. Bonnie D. Parkin, "Personal Ministry: Sacred and Precious" (Brigham Young University devotional, Feb. 13, 2007), 1, speeches.byu.edu.
10. Մորոնի 7.13
11. 1 Կորնթացիս 13.8
12. 2 Նեփի 32.5
13. «Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով» (Փիլիպպեցիս 4.13)
14. Եբրայեցիս 4.16
15. «Եվ եթե մարդիկ գան ինձ մոտ, ես նրանց ցույց կտամ իրենց թուլությունը. Ես մարդկանց թուլություն եմ տալիս, որպեսզի նրանք խոնարհ լինեն. Եվ իմ *շնորհը* բավական է բոլոր մարդկանց համար, ովքեր իրենց խոնարհեցնում են իմ առջև. քանզի, եթե նրանք խոնարհեցնեն իրենց իմ առջև, և հավատք ունենան ինձանում, այն ժամանակ, նրանց թույլ կողմերը ես կդարձնեմ ուժեղ» (Եթեր 12.27, շեշտադրումն ավելացված է):
16. Տես Մատթեոս 14.13–21, Մարկոս 6.31–44, Ղուկաս 9.10–17, Հովհաննես 6.1–14
17. Հովհաննես 6.9
18. Նախագահ Բոյդ Ք Փաքերն ուսուցանել է. «Անկախ նրանից, թե ձեր մահկանացու ծագումնաբանության մեջ որքան շատ են սերունդները, անկախ այն բանից, թե ինչ ռասա կամ ժողովուրդ եք դուք ներկայացնում, ձեր հոգու տոհմաբանությունը կարող է գրվել մեկ տողով: Դուք Աստծո զավակն եք»: ("To Young Women and Men," *Ensign,* May 1989, 54)
19. C. S. Lewis, *Mere Christianity* (1960), 160.

Քրիստինա Բ. Ֆրանկո
Երեխաների Միության Գերագույն Նախագահության երկրորդ խորհրդական

Անշահախնդիր ծառայության ուրախությունը

Մենք խոստացել ենք մեր Երկնային Հորը, որ մենք սիրով կծառայենք Նրան և ուրիշներին ու կկատարենք Նրա կամքը բոլոր բաներում:

Վերջին գերագույն համաժողովից հետո շատերն են մոտեցել ինձ նույն հարցով. «Այդ աթոռները հարմարավե՞տ են»: Ամեն անգամ ես տվել եմ նույն պատասխանը. «Այդ աթոռները շատ հարմարավետ են, եթե կարիք չկա խոսելու»: Դա այդպես է, չէ՞: Այս համաժողովին

իմ աթոռն այդքան էլ հարմարավետ չէր, սակայն ես իսկապես երախտապարտ եմ այս երեկո ձեզ հետ խոսելու օրհնության և պատվի համար:

Երբեմն ծառայելու ընթացքում մեզ հնարավորություն է տրվում նստելու տարբեր աթոռների: Մի քանիսը շատ հարմարավետ են, մյուսներն էլ ոչ, սակայն մենք խոստացել ենք մեր Երկնային Հորը, որ մենք սիրով կծառայենք Նրան և ուրիշներին ու կկատարենք Նրա կամքը բոլոր բաներում:

Մի քանի տարի առաջ Եկեղեցու երիտասարդները սովորեցին, որ «երբ դուք «մտնում եք Աստծո ծառայության մեջ» [Վարդապետություն և Ուխտեր 4.2], դուք միանում եք երբևէ կատարած ամենահիանալի ճամփորդությանը: Դուք օգնում եք Աստծուն արագացնել Իր աշխատանքը, և դա մեծ, ուրախ և հրաշալի փորձառություն է»:[1] Այդ ճամփորդությունը մատչելի է բոլորին, ցանկացած տարիքի համար, այն նաև ճամփորդություն է, որը տանում է մեզ, ինչպես մեր սիրելի մարգարեն է ասել, «ուխտի ուղիով»:[2]

Ինչևէ, ցավոք մենք ապրում ենք եսասեր աշխարհում, որտեղ մարդիկ շարունակ հարցնում են՝ «Ի՞նչ կա այնտեղ ինձ համար», փոխանակ հարցնեն՝ «Ո՞ւմ կարող եմ ես օգնել այսօր» կամ «Ինչպե՞ս կարող եմ ավելի լավ ծառայել Տիրոջը իմ կոչման մեջ» կամ «Արդյո՞ք ես իմ ողջ ունեցածը տալիս եմ Տիրոջը»:

Իմ կյանքում անշահախնդիր ծառայության մի հրաշալի օրինակ է Քույր Վիկտորիա Անտոնիետին: Վիկտորիան իմ ճյուղի Երեխաների Միության ուսուցիչներից մեկն էր, երբ մանուկ հասակում ես ապրում էի Արգենտինայում: Ամեն երեքշաբթի, երբ մենք հավաքվում էինք Երեխաների Միությունում, նա մեզ համար շոկոլադե տորթ էր բերում: Բոլորը սիրում էին այդ տորթը, բոլորը, բացի ինձանից: Ես տանել չէի կարողանում շոկոլադե տորթը: Եվ չնայած նա փորձում էր հյուրասիրել ինձ, ես միշտ հրաժարվում էի:

Մի օր, երբ նա հյուրասիրել էր մնացած երեխաներին, ես հարցրի նրան. «Ինչո՞ւ չեք բերում մեկ ուրիշ համով տորթ, օրինակ նարինջով կամ վանիլային»:

Նա ժպտալով հարցրեց ինձ. «Ինչո՞ւ *դու* չես փորձում մի փոքր կտոր: Այս տորթը պատրաստված է հատուկ բաղադրիչով, և ես խոստանում եմ, որ եթե դու փորձես, այն քեզ դուր կգա»:

Ես նայեցի շուրջս, և ի զարմանս ինձ, բոլորը կարծես վայելում էին տորթը: Ես համաձայնվեցի փորձել: Կարո՞ղ եք գուշակել, թե ինչ տեղի ունեցավ: Այն ինձ դուր եկավ Ես առաջին անգամ էի վայելում շոկոլադե տորթ:

Միայն տարիներ անց ես բացահայտեցի Քույր Անտոնիետի շոկոլադե տորթի գաղտնի բաղադրիչը: Իմ երեխաների հետ ես ամեն շաբաթ այցելում էի մորս: Այցելություններից մեկի ժամանակ մայրս ու ես վայելում էինք շոկոլադե տորթ, և ես պատմեցի նրան, թե ինչպես սկսեցի սիրել այդ տորթը: Այդ ժամանակ նա լուսաբանեց ինձ այս պատմության մնացած մասը:

«Գիտես, Քրիս,- ասաց մայրս,- Վիկտորիան և նրա ընտանիքը մեծ միջոցներ չունեին, և ամեն շաբաթ նա պետք է ընտրեր իր և իր չորս երեխաների ավտոբուսի համար վճարելու կամ Երեխաների Միության իր դասարանի համար շոկոլադե տորթ պատրաստելու բաղադրիչներ գնելու միջև: Նա միշտ ընտրում էր շոկոլադե տորթը, և նա իր երեխաների հետ քայլում էր ավելի քան երկու մղոն [3 կմ] յուրաքանչյուր ուղղությամբ՝ անկախ եղանակից»:

Այդ օրը ես ավելի մեծ երախտագիտություն զգացի նրա շոկոլադե տորթի համար: Ամենից կարևորն այն է, որ ես իմացա, որ Վիկտորիայի տորթի գաղտնի բաղադրիչը սերն էր, որ նա ուներ նրանց հանդեպ, ում ծառայում էր, և մեզ մատուցված նրա անշահախնդիր ծառայությունը:

Վիկտորիայի տորթի մասին մտածելն օգնում է ինձ հիշել անշահախնդիր զոհաբերության հավերժական դասերի մասին, որ Տերն ուսուցանեց Իր աշակերտներին, երբ Նա անցնում էր տաճարի գանձանակի կողքով: Դուք գիտեք պատմությունը: Երեց Ջեյմս Ի. Թալմիջն ուսուցանել է, որ այնտեղ կային 13 գանձանակներ, «և դրանց մեջ մարդիկ զցում էին իրենց նվիրատվությունները [տարբեր] նպատակներով, որոնք նշված էին արկղերի վրա»: Հիսուսը նայում էր նվիրատուների հերթերին, որոնք կազմված էին տարբեր մարդկանցից: Ոմանք նվիրատվություն էին կատարում «անկեղծ նպատակով», մինչ մյուսները զցում էին «մեծ քանակությամբ արծաթ ու ոսկի», հուսալով, որ իրենց կտեսնեն, կնկատեն և կփառաբանեն իրենց նվիրատվությունների համար:

«Շատերի մեջ կար մի աղքատ որբևայրի, ով . . . գանձանակներից մեկի մեջ զցեց երկու փոքրիկ բրոնզե մետաղադրամ, որոնք հայտնի էին որպես լումա. նրա նվիրատվությունը կազմում էր ավելի քիչ, քան ամերիկյան սենթի կեսը: Տերը կանչեց Իր աշակերտներին, նրանց ուշադրությունը հրավիրեց աղքատ որբևայրու և նրա արարքի վրա և ասաց. «Ճշմարիտ ասում եմ ձեզ. Թէ այս աղքատ որբեւայրին գանձանակը զցողների ամենից աւելի զցեց: Որովհետեւ ամենքն իրանց աւելորդիցը զցեցին. Բայց սա իր չքաւորութիւնիցը ամեն ինչ որ ունէր զցեց, իր կեանքի բոլոր ապրուստը» [Մարկոս 12.43–44]»:[3]

Որբևայրին կարծես կարևոր դիրք չէր զբաղեցնում իր ժամանակի հասարակության մեջ: Իրականում նա ուներ ավելի կարևոր մի բան, նրա մտադրությունները մաքուր էին, և նա տվեց ամեն բան, որ ուներ տալու: Հավանաբար նա տվեց ավելի քիչ, քան ուրիշները, ավելի լուռ, քան ուրիշները, այլ կերպ, քան ուրիշները: Ոմանց կարծիքով նրա տվածը մեծ բան չէր, սակայն «սրտի խորհուրդներն ու մտադրությունները զանազանող»[4] Փրկիչի կարծիքով նա տվեց իր ողջ ունեցածը:

Քույրե՛ր, արդյո՞ք մենք տալիս ենք Տիրոջն ամեն բան առանց հապաղելու: Արդյո՞ք մենք զոհաբերում ենք մեր ժամանակն ու տաղանդները, որպեսզի աճող սերունդը կարողանա սովորել սիրել Տիրոջը և պահել Նրա պատվիրանները: Արդյո՞ք մենք հոգատարությամբ

և ջանասիրությամբ ծառայում ենք թե՛ մեր շրջապատին, և թե՛ նրանց, ում հանձնարարել են, զոհաբերելով ժամանակ և ջանքեր, որոնք կարող էին այլ բաների վրա ծախսվել: Արդյո՞ք մենք պահում ենք երկու մեծ պատվիրանները՝ սիրել Աստծուն և սիրել Նրա զավակներին:[5] Հաճախ այդ սերն արտացոլվում է ծառայության մեջ:

Նախագահ Դալլին Հ. Օուքսն ուսուցանել է. «Մեր Փրկիչը նվիրվեց անձնատուր ծառայությանը: Նա սովորեցնում էր, որ մեզանից յուրաքանչյուրը պետք է հետևի Իրեն, հրաժարվելով իր եսասեր շահերից և ծառայելով ուրիշներին»:

Նա շարունակել է.

«Ուրիշներին ինքնամոռաց ծառայելու ծանոթ օրինակ է ծնողների զոհաբերությունն իրենց երեխաների համար: . . . Երեխաներ ունենալու և մեծացնելու համար մայրերը կրում են ցավ և անտեսում անձնական առաջնահերթություններն ու հարմարավետությունը: Հայրերը իրենց կյանքը և առաջնահերթությունները հարմարեցնում են ընտանիք պահելու համար: . . .

. . . Մենք նաև ուրախանում ենք նրանցով, ովքեր հոգ են տանում ընտանիքի հաշմանդամ անդամների և իրենց մեծահասակ ծնողների համար: Այս ծառայություններից ոչ մեկը չի հարցնում. «Իսկ ի՞նչ կա ինձ համար»: Այդ ամենը պահանջում է մի կողմ դնել անձնական հարմարությունը և կատարել անձնատուր ծառայություն: . . .

Այս ամենը լուսաբանում է հավերժական սկզբունքը, որ մենք ավելի երջանիկ և բավարարված կզգանք մեզ, երբ գործենք և ծառայենք ոչ թե ստանալու, այլ տալու նպատակով:

Մեր Փրկիչը մեզ սովորեցնում է հետևել Իրեն, կատարելով զոհաբերություններ, որոնք անհրաժեշտ են, որպեսզի մենք մեզ կորցնենք մյուսներին անձնատուր ծառայության մեջ»:[6]

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը նույնպես ուսուցանել է, որ «թերևս երբ մենք դեմ առ դեմ հանդիպենք մեր Արարչին, մեզ չեն հարցնի՝ «Քանի՞ պաշտոն եք դուք զբաղեցրել», այլ փոխարենը կհարցնեն՝ «Քանի՞ մարդու եք դուք օգնել»: Իրականում դուք երբեք չենք կարող իսկապես սիրել Տիրոջը, մինչև չծառայենք Նրան ուրիշներին ծառայելու միջոցով»:[7]

Այլ կերպ ասած, քույրեր, նշանակություն չունի, ժողովի ժամանակ մենք նստել ենք հարմարավետ, թե վերջին շարքում գտնվող ժանգոտած ծալովի անհարմարավետ աթոռի վրա: Նույնիսկ կարևոր չէ, եթե անհրաժեշտությունից ելնելով մենք դուրս ենք եկել միջանցք՝ լացող մանկանը հանգստացնելու համար: Կարևորն այն է, որ մենք եկել ենք ծառայելու ցանկությամբ, որ մենք նկատել ենք նրանց, ում ծառայում ենք և ուրախ ողջունել ենք նրանց և որ մենք ներկայացել ենք նրանց, ովքեր մեզ հետ նստած են մեր շարքի ծալովի աթոռներին, ընկերանալով նրանց հետ, չնայած, որ մեզ հանձնարարված *չէ* ծառայել նրանց: Եվ անշուշտ կարևոր կլինի, որ մենք ամեն բան անենք ծառայության յուրահատուկ բաղադրիչով՝ զուգորդված սիրով և զոհաբերությամբ:

Ես հասկացել եմ, որ պարտադիր չէ, որ մենք շոկոլադե տորթ պատրաստենք Երեխաների Միության հաջողակ կամ նվիրված ուսուցիչ լինելու համար, քանի որ հարցը քաղցրավենիքի մեջ չէր: Կարևորը արարքի հետևում գտնվող սերն էր:

Ես վկայում եմ, որ այդ սերը սրբագործվել է զոհաբերության շնորհիվ, ուսուցչի զոհաբերության և նույնիսկ ավելի Աստծո Որդու վերջին և հավերժական զոհաբերության շնորհիվ: Ես վկայում եմ, որ Նա ապրում է: Ես սիրում եմ նրան և ցանկանում հեռացնել եսասեր ցանկությունները, որպեսզի կարողանամ սիրել և ծառայել Նրա նման: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Young Men General Presidency, “This Marvelous Work,” *Liahona,* Jan. 2015, 49.
2. Ռասսել Մ. Նելսոն, «Միասին առաջ ընթանալով», *Լիահոնա,* ապրիլ 2018, 7:
3. James E. Talmage, *Jesus the Christ* (1916), 561.
4. Վարդապետություն և Ուխտեր 33.1
5. Տես Մատթեոս 22.37, 39:
6. Դալլին Հ. Օուքս, «Անձնատուր ծառայություն», *Լիահոնա,* մայիս 2009, 93, 96:
7. Թոմաս Ս. Մոնսոն, «Մեծ ակնկալիքներ» (Բրիգամ Յանգի Համալսարանի հավաք, հունվարի 11, 2009), 6, speeches.byu.edu:



Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության երկրորդ խորհրդական

Կանայք և ավետարանի տնային ուսումնասիրությունը

Փրկիչը ձեր կատարյալ օրինակն է, թե ինչպես կատարեք ձեր կարևոր դերը՝ շեշտը դնելով ավետարանի տնային ուսումնասիրության վրա:

Իմ սիրելի՛ քույրեր, հաճելի է հանդիպել ձեզ հետ: Այժմ հրաշալի ժամանակաշրջան է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Տերը գիտելիք է թափում Իր Եկեղեցու վրա, ինչպես խոստացել էր:

Հիշո՞ւմ եք Նա ինչ էր ասել. «Որքա՞ն կարող են հոսող ջրերն անմաքուր մնալ: Ի՞նչ զորություն պիտի ետ պահի երկինքները: Ինչպես մարդը կարող է պարզել իր չնչին ձեռքը և կանգնեցնել Միսսուրի գետի որոշված ընթացքը կամ շրջել այն դեպի վեր, այնպես էլ կարող է խանգարել Ամենազորին՝ երկնքից Վերջին Օրերի Սրբերի գլխին գիտելիք թափելիս»:[1]

Տիրոջ կողմից գիտելիքների փոխանցման ներկայիս ընթացքը դրսևորվում է Նրա ժողովրդի մտքերի ու սրտերի մեջ հավերժական ճշմարտությունը հեղելու գործընթացի արագացմամբ: Նա հայտնի է դարձրել, որ Երկնային Հոր դուստրերը առաջնային դեր են խաղալու այդ հրաշալի արագացման մեջ: Այդ հրաշքի ապացույցներից մեկն այն է, որ Նա առաջնորդում է Իր ապրող մարգարեին ավելի մեծ շեշտ դնել ավետարանի ուսուցման վրա՝ տանը և ընտանիքի սահմաններում:

Ձեզ մոտ կարող է հարց առաջանալ. «Ինչպե՞ս են հավատարիմ քույրերն առաջնային ուժ դառնում, օգնելով Տիրոջը գիտելիքներ հեղել Իր Սրբերի վրա»: Տերը տալիս է պատասխանը «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին» հռչակագրում: Դուք հիշում եք բառերը, սակայն կարող եք նոր իմաստ տեսնել և հասկանալ, որ Տերը կանխատեսել էր այս հրաշալի փոփոխությունները, որոնք այժմ տեղի են ունենում: Հռչակագրում Նա քույրերին հանձնարարություն է տվել՝ ընտանիքում լինել ավետարանի հիմնական ուսուցիչները, այսպիսի խոսքերով. «Մայրերը հատկապես պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակման համար»:[2] Սա ներառում է ավետարանի ճշմարտություններով և գիտելիքներով դաստիարակություն:

Հռչակագիրը շարունակում է. «Հայրերն ու մայրերը պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար գործընկերներ»:[3] Նրանք հավասար գործընկերներ են, հավասար են հոգևոր աճի և գիտելիքների ձեռքբերման իրենց ներուժով, և այդպիսով միավորվում են՝ օգնելով միմյանց: Նրանք հավասար են միասին վեհանալու իրենց սուրբ ճակատագրով: Տղամարդիկ և կանայք չեն կարող մենակ վեհանալ:

Ուրեմն ինչո՞ւ Աստծո դուստրը միասնական և հավասար հարաբերություններում ստանում է առաջնային պատասխանատվությունը՝ սնուցել ամենակարևոր բաղադրիչով, որը բոլորը պետք է ստանան՝ երկնքից եկող ճշմարտության գիտելիքով: Իմ տեսանկյունից ես կարող

եմ տեսնել, որ դա Տիրոջ եղանակն է սկսած այն պահից, երբ ընտանիքները ստեղծվել են այս աշխարհում:

Օրինակ, Եվան ստացավ այն գիտելիքը, որ Ադամը պետք է ճաշակեր գիտելիքի ծառի պտղից, որպեսզի նրանք պահեին Աստծո բոլոր պատվիրանները և կազմեին ընտանիք: Ես չգիտեմ, թե ինչու առաջինը Եվան տեղեկացավ, քանի որ Ադամն ու Եվան կատարելապես միասնական էին, երբ գիտելիքը տրվեց Ադամին:

Մեկ այլ օրինակ՝ ինչպես Տերն ամրապնդեց Հելամանի որդիներին, կանանց դաստիարակելու պարգևի օգնությամբ: Կոկորդս սեղմվում է, երբ ես կարդում եմ այս պատմությունը և վերհիշում իմ մոր քաջալերանքի հանդարտ խոսքերը, երբ ես զորակոչվեցի բանակ:

Հելամանը գրել է.

«Նրանք սովորեցվել էին իրենց մայրերի կողմից, որ եթե նրանք չկասկածեին, Աստված կազատեր նրանց:

Եվ նրանք կրկնեցին ինձ իրենց մայրերի խոսքերն՝ ասելով. Մենք չենք կասկածում, մեր մայրերը գիտեին դա»:[4]

Չնայած ես չգիտեմ պատճառները, թե ինչու է Տերը հավատարիմ քույրերին տվել ընտանիքում դաստիարակության առաջնային պատասխանատվությունը, կարծում եմ դա կապ ունի ձեր սիրելու ունակության հետ: Մեծ սեր է պահանջվում քեզանից բացի մեկ ուրիշի կարիքները զգալու համար: Դա է Քրիստոսի մաքուր սերը այն անձի հանդեպ, ում դաստիարակում եք: Գթասրտության այդ զգացումը գալիս է այն մարդուց, ով ընտրված է դաստիարակելու, ստանալով Հիսուս Քրիստոսի Քավության ազդեցիկ որակումները: Սփոփող Միության նշանաբանը, որը մարմնավորել է իմ մայրը, ոգեշնչված է իմ կարծիքով. «Գթությունը երբեք չի խափանվում»:

Որպես Աստծո դուստրեր, դուք բնատուր մեծ ունակություն ունեք զգալու ուրիշների կարիքները և սիրելու նրանց: Դա, իր հերթին, ձեզ ավելի զգայուն է դարձնում Հոգու շշունջների նկատմամբ: Հոգին կարող է առաջնորդել ձեզ նրանում, ինչ դուք մտածում եք, ասում և անում եք,

որպեսզի դաստիարակեք մարդկանց և որպեսզի Տերը կարողանա գիտելիքներ, ճշմարտություն և քաջություն հաղորդել նրանց:

Դո՛ւք, քույրեր, որ լսում եք իմ ձայնը, յուրահատուկ տեղ ունեք կյանքի ձեր ճանապարհում: Որոշ երիտասարդ աղջիկներ առաջին անգամ են այստեղ՝ կանանց գերագույն նիստին: Կան այնպիսի երիտասարդ կանայք, ովքեր պատրաստվում են լինել դաստիարակներ, ինչպես Աստված է ակնկալում, որ լինեն: Ոմանք նոր են ամուսնացել, դեռ չունեն երեխաներ, մյուսները՝ երիտասարդ մայրեր են՝ մեկ կամ մի քանի երեխաներով: Ոմանք դեռահասների մայրեր են, իսկ մյուսները՝ միսիոներական դաշտ մտած երեխաների մայրեր: Ոմանք ունեն այնպիսի երեխաներ, ում հավատքը թուլացել է, և նրանք տնից հեռու են: Ոմանք միայնակ են ապրում առանց հավատարիմ զուգընկերոջ: Ոմանք էլ տատիկներ են:

Այդուհանդերձ, անկախ ձեր անձնական հանգամանքներից, դուք Աստծո ընտանիքի և ձեր ընտանիքի առանցքային մասն եք, թե՛ ապագայում, թե՛ այս աշխարհում, և թե՛ հոգևոր աշխարհում: Աստված Ձեզ վստահել է դաստիարակել Իր զավակներից և ձեր ընտանիքի անդամներից այնքանին, որքանին կկարողանաք, ձեր սիրով և ձեր հավատքով Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ:

Ձեր գործնական աշխատանքն է իմանալ, թե ում դաստիարակել, ինչպես և երբ: Դուք Տիրոջ օգնության կարիքն ունեք: Նա գիտի մյուսների սրտերը, Նա գիտի, թե նրանք երբ են պատրաստ ընդունելու ձեր դաստիարակությունը: Ձեր հավատքի աղոթքը կլինի ձեր հաջողության բանալին: Դուք կարող եք Նրանից առաջնորդություն ստանալու ակնկալիք ունենալ:

Նա տվել է այս քաջալերանքը. «Խնդրեք Հորը՝ իմ անունով, հավատքով հավատալով, որ պիտի ստանաք, և դուք կունենաք Սուրբ Հոգին, որը ցույց է տալիս բոլոր բաները, որոնք նպատակահարմար են»:[5]

Աղոթքից բացի, սուրբ գրությունների լուրջ ուսումնասիրությունը կլինի ձեր մեջ դաստիարակելու աճող զորության մի մասը: Ահա խոստումը. «Ոչ էլ նախօրոք հոգ արեք, թե ինչ եք ասելու. բայց շարունակ ձեր մտքում գանձեք կյանքի խոսքերը, և հենց նույն պահին ձեզ կտրվի ամեն մարդու համար չափված բաժինը»:[6]

Այսպես, դուք ավելի շատ ժամանակ կտրամադրեք, որ աղոթեք, խորհեք և մտորեք հոգևոր բաների շուրջ: Ճշմարտության գիտելիքը կթափվի ձեր վրա և դուք կաճեք ընտանիքում մյուսներին դաստիարակելու ձեր զորությամբ:

Կլինեն պահեր, երբ դուք այնպիսի զգացում կունենաք, թե որքան լավ եք առաջադիմում ձեր ուսումով, այնքան դանդաղ է ընթանում

դաստիարակությունը: Հավատք կպահանջվի դա հաղթահարելու համար: Փրկիչն ուղարկել է ձեզ այս քաջալերանքը.

«Ուստի, մի ձանձրացեք բարին գործելուց, քանզի դուք դնում եք հիմքը մի մեծ գործի: Եվ փոքր բաներից է առաջանում այն, ինչը մեծ է:

Ահա, Տերը պահանջում է սիրտն ու պատրաստակամ միտքը. և պատրաստակամն ու հնազանդը կճաշակեն Սիոնի հողի բարիքն այս վերջին օրերին»:[7]

Ձեր ներկայությունն այսօր ապացույց է, որ դուք կամենում եք ընդունել մյուսներին դաստիարակելու Տիրոջ հրավերը: Սա վերաբերում է նույնիսկ ամենակրտսերներին, ովքեր այսօր այստեղ են: Դուք կարող եք իմանալ, թե ում դաստիարակել ձեր ընտանիքում: Եթե աղոթեք անկեղծ միտումով, անունը կամ դեմքը կգա ձեր մտքին: Եթե աղոթեք իմանալու համար, թե ինչ անել կամ ինչ ասել, դուք կզգաք պատասխանը: Ամեն անգամ, երբ հնազանդվեք, դաստիարակելու զորությունը կաճի: Դուք կպատրաստվեք այն օրվան, երբ դաստիարակելու եք ձեր սեփական երեխաներին:

Դեռահասների մայրերը կարող են աղոթել, իմանալու համար, թե ինչպես դաստիարակեն դստերը կամ որդուն, ով կարծես թե չի արձագանքում դաստիարակությանը: Դուք կարող եք աղոթել այն մասին, թե ով կարող էր հոգևոր ազդեցություն ունենալ ձեր երեխայի վրա, որի կարիքը նա ունի և կընդունի դա: Աստված լսում և պատասխանում է անհանգստացող մայրերի սրտաբուխ աղոթքներին և Նա ուղարկում է օգնություն:

Նմանապես, այստեղ գտնվող տատիկներից մեկը կարող է սրտի ցավ զգալ իր երեխաների և թոռների դժվարությունների կամ լարվածությունների համար: Դուք կարող եք քաջություն և առաջնորդություն ստանալ սուրբ գրություններում տեղ գտած ընտանիքների փորձառություններից:

Ադամի ու Եվայի ժամանակներից մինչև Իսրայել Հոր ժամանակը և նաև Մորմոնի Գրքի յուրաքանչյուր ընտանիքի դեպքում, կա մի հաստատ դաս, թե ինչ անել չլսող երեխաների դժվար պարագաներում՝ երբեք մի դադարեք սիրել:

Մենք ունենք Փրկիչի քաջալերող օրինակը, երբ Նա դաստիարակում է Իր Երկնային Հոր ապստամբ հոգևոր զավակներին: Նույնիսկ, երբ նրանք կամ մենք ցավ ենք պատճառում, Փրկիչի ձեռքը դեռ մեկնված է:[8] 3 Նեփի գրքում Նա խոսել է Իր հոգևոր քույրերի և եղբայրների մասին, ում դաստիարակելու փորձը Նրա կողմից ձախողվել է. «Ո՜վ դուք, ժողովուրդ . . . ովքեր Իսրայելի տնից եք, որքան հաճախ եմ ես հավաքել ձեզ, ինչպես հավն է իր թևերի տակ հավաքում իր ճտերին, և կերակրել ձեզ»:[9]

Կյանքի ճանապարհի ցանկացած փուլում գտնվող քույրերի համար, ընտանեկան ցանկացած իրավիճակում և աշխարհի ցանկացած մշակույթում Փրկիչը ձեր կատարյալ օրինակն է, թե ինչպես կատարեք ձեր կարևոր դերը՝ շեշտը դնելով ավետարանի տնային ուսումնասիրության վրա:

Գթության ձեր բնածին զգացումը դուք կծառայեցնեք ձեր ընտանիքի սովորույթներում և միջոցառումներում փոփոխություններ կատարելուն: Դա կնպաստի զգալի հոգևոր աճին: Երբ դուք աղոթում եք ձեր ընտանիքի անդամների հետ կամ նրանց համար, դուք կզգաք ձեր սեփական և Փրկիչի սերը նրանց նկատմամբ: Դա հետզհետե կդառնա ձեր հոգևոր պարգևը, եթե ձգտեք դրան: Ձեր ընտանիքի անդամները կզգան դա, երբ աղոթեք մեծ հավատքով:

Երբ ընտանիքը հավաքվում է միասին բարձրաձայն կարդալու սուրբ գրությունները, դուք պետք է արդեն կարդացած կլինեք դրանք և աղոթեք, որպեսզի պատրաստ լինեք: Դուք կգտնեք պահեր, աղոթելու համար, որ Հոգին լուսավորի ձեր միտքը: Այնուհետև, երբ կարդալու ձեր հերթը գա, ընտանիքի անդամները կզգան ձեր սերը Աստծո նկատմամբ և Նրա խոսքի նկատմամբ: Նրանք կդաստիարակվեն Նրա կողմից և Նրա Հոգով:

Նույն լուսավորումը տեղի կունենա ընտանեկան ցանկացած ժողովի ժամանակ, եթե դուք աղոթեք և պլանավորեք այն: Կարող է ժամանակ և ջանքեր պահանջվեն դրա համար, բայց դա հրաշքներ կծնի: Ես հիշում եմ մի դաս, որ մայրս ուսուցանեց, երբ փոքր էի: Ես դեռ հիշում եմ Պողոս Առաքյալի ճամփորդությունը պատկերող այն գունավոր քարտեզը, որ նա պատրաստել էր: Հետաքրքիր է՝ ինչպե՞ս էր նա ժամանակ և եռանդ գտել դա անելու համար: Եվ մինչ օրս ես օրհնված եմ նրա սիրով այդ հավատարիմ Առաքյալի հանդեպ:

Ձեզանից յուրաքանչյուրը եղանակ կգտնի, թե ինչպես ներդրում անել ճշմարտության դրսևորմանը ձեր ընտանիքներում, Տիրոջ վերականգնված Եկեղեցում: Յուրաքանչյուրդ կաղոթեք, կուսումնասիրեք և կխորհեք՝ իմանալու համար, թե որն է լինելու ձեր յուրահատուկ լուման: Ես գիտեմ՝ ձեզանից յուրաքանչյուրը, հավասար լծակից լինելով Աստծո որդիների հետ, կլինի ավետարանի ուսումնասիրման և դրանով ապրելու մեծ հրաշքի մասը, որը կարագացնի Իսրայելի հավաքումը և կպատրաստի Աստծո ընտանիքը Տեր Հիսուս Քրիստոսի փառավոր վերադարձին: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 121.33
2. «Ընտանիք. հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2017, 145
3. «Ընտանիք. հայտարարություն աշխարհին», 145
4. Ալմա 56.47–48
5. Վարդապետություն և Ուխտեր 18.18
6. Վարդապետություն և Ուխտեր 84.85
7. Վարդապետություն և Ուխտեր 64.33–34
8. Տես 2 Նեփի 19.12, 21:
9. 3 Նեփի 10.4

Նախագահ Դալլին Հ. Օուքս
Առաջին Նախագահության առաջին խորհրդական

Ծնողները և երեխաները

Մեր Երկնային Հոր երջանկության մեծ ծրագիրը հուշում է ձեր ինքնությունը և կյանքում ձեր նպատակը։

Սիրելի՛ քույրեր, որքան հրաշալի է անցկացնել ութ տարեկանից բարձր Եկեղեցու կանանց գերագույն համաժողովի այս նոր նիստը։ Մենք ոգեշնչված ուղերձներ լսեցինք քույր ղեկավարներից և Նախագահ Հենրի Բ. Այրինգից։ Ես և Նախագահ Այրինգը սիրում ենք աշխատել Նախագահ Ռասել Մ. Նելսոնի ղեկավարությամբ և սպասում ենք նրա մարգարեական ուղերձին։

I.

Երեխաները մեր ամենաթանկ նվերն են Աստծուց՝ մեր հավերժական աճը։ Այնուամենայնիվ, մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ շատ կանայք ցանկություն չունեն մասնակցություն ունենալ երեխաներ ծնելու և դաստիարակելու գործում։ Երիտասարդ չափահասներից շատերը հետաձգում են ամուսնությունը, մինչև նյութական կարիքները բավարարված լինեն։ Մեր Եկեղեցու ամուսնությունների միջին տարիքը աճել է ավելի քան երկու տարով, իսկ Եկեղեցում ծնելիությունը ընկել է։ Միացյալ Նահանգների և որոշ այլ ազգերի սպասվում է մի ապագա, որտեղ շատ քիչ թվով երեխաներ են հասունանում, որպեսզի լրացնեն մահացող մեծահասակների թվի պակասը։[1] Միացյալ Նահանգներում ծնվողների ավելի քան 40 տոկոսը միայնակ մայրերից է։ Այդ երեխաները խոցելի են։ Այդ միտումներից յուրաքանչյուրը գործում է մեր Հոր փրկության աստվածային ծրագրի դեմ։

II.

Վերջին օրերի սուրբ կանայք հասկանում են, որ մայր լինելն իրենց մեծագույն առաջնահերթությունն է, իրենց առավելագույն ուրախությունը։ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Մեծ մասամբ, կանայք իրենց մեծագույն դերակատարումը, իրենց մեծագույն երջանկությունը տեսնում են տանը և ընտանիքում։ Աստված կանանց մեջ սերմանել է աստվածային մի բան, որն ինքնին արտահայտվում է հանգիստ ուժով, մաքրությամբ, խաղաղությամբ, բարությամբ, առաքինությամբ, ճշմարտությամբ, սիրով։ Եվ այդ բոլոր հատկանիշներն իրենց ամենաճշմարիտ և ամենաբավ արտահայտումն են գտնում մայրության ժամանակ»։

Նա շարունակել է. «Ամենամեծ գործը, որ ցանկացած կին երբևէ կարող է անել, իր զավակներին արդարության և ճշմարտության մեջ սնուցելը, ուսուցանելը, ապրելը, խրախուսելը և դաստիարակելն է։ Չկա մեկ ուրիշ գործ, որը կարող է համեմատվել դրա հետ, անկախ նրանից, թե ինչով է այդ կինը զբաղվում»։[2]

Մայրե՛ր, սիրելի քույրե՛ր, մենք սիրում ենք ձեզ՝ ձեր դերի և այն ամենի համար, ինչ դուք անում եք բոլորիս համար։

2015 թվականի «Մեկ կարևոր խնդրանք իմ քույրերին» իր կարևոր ուղերձում, Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ասել է.

«Աստծո արքայությունը չի կարող լիարժեք լինել առանց կանանց, ովքեր սուրբ ուխտեր են կապում և ապա պահում, կանայք, ովքեր կարողանում են խոսել Աստծո զորությամբ և իշխանությամբ։

Այսօր, . . . մենք կարիք ունենք կանանց, ովքեր գիտեն ինչպես կատարել կարևոր գործեր՝ հիմնվելով իրենց հավատքի վրա, և ովքեր բարոյականության և ընտանիքի քաջարի պաշտպաններն են մեղսավոր աշխարհում։ Մենք կարիք ունենք կանանց, ովքեր Աստծո զավակներին նվիրված կառաջնորդեն ուխտի ճանապարհով դեպի վեհացում, կանայք, ովքեր գիտեն ինչպես ստանալ անձնական վկայություն, ովքեր հասկանում են տաճարային օժտման զորությունն ու խաղաղությունը, կանայք, ովքեր գիտեն ինչպես օգնություն ստանալ երկնքի զորություններից՝ պաշտպանելու և ամրացնելու իրենց զավակներին և ընտանիքները, կանայք, ովքեր ուսուցանում են աներկյուղ»։[3]

Այդ ոգեշնչված ուսմունքները հիմնված են «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին» հռչակագրի վրա, որտեղ այս վերականգնված Եկեղեցին վերահաստատում է վարդապետությունն ու գործելակերպը, որոնք գտնվում են Արարչի ծրագրի կենտրոնում։

III.

Այժմ, դիմում եմ այս լսարանի ավելի երիտասարդ խմբին։ Իմ սիրելի երիտասարդ քույրե՛ր, Հիսուս Քրիստոսի վերականգնված

ավետարանի շնորհիվ դուք յուրահատուկ եք: Ձեր գիտելիքի շնորհիվ դուք կդիմակայեք ու կհաղթահարեք հասունանալու դժվարությունները: Երիտասարդ տարիքից դուք մասնակցում եք նախագծերի և ծրագրերի, որոնք զարգացրել են ձեր տաղանդները՝ գրելը, խոսելը և ծրագրելը: Դուք պատասխանատու վարք եք ձեռք բերել և սովորել եք, թե ինչպես պետք է պայքարեք ստելու, խորամանկելու, գողանալու, ոգելից խմիչք կամ թմրամիջոցներ օգտագործելու գայթակղությունների դեմ:

Ձեր յուրահատկությունը ճանաչվել է Հյուսիսային Կարոլինայի համալսարանում ամերիկյան պատանիների և կրոնի ուսումնասիրության ժամանակ: Charlotte Observer պարբերականի հոդվածը վերնագրված էր՝ “Mormon Teens Cope Best: Study Finds They Top Peers at Handling Adolescence” (Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Մորմոն դեռահասները կարող են ավելի լավ դիմակայել պատանեկության ընկճախտին, քան իրենց հասակակիցները): Այդ հոդվածը եզրակացրեց, որ «Մորմոններն ամենալավն են խուսափում ռիսկային վարքագծից, լավ են սովորում դպրոցում և դրական վերաբերմունք ունեն ապագայի նկատմամբ»: Այդ ուսումնասիրության ժամանակ հարցազրույց վարողներից մեկն ասել է. «Մենք ուսումնասիրել ենք գրեթե բոլոր անվանակարգերում և առկա էր մեկ օրինաչափություն, մորմոններն առաջին տեղում էին»:[4]

Ինչո՞ւ եք դուք ավելի լավ դիմակայում հասունանալու դժվարություններին: Երիտասարդ աղջիկներ, դա նրա շնորհիվ է, որ դուք հասկանում եք մեր Երկնային Հոր երջանկության մեծ ծրագիրը: Այն հուշում է ձեր ինքնությունը և կյանքում ձեր նպատակը: Այն երիտասարդները, ովքեր հասկանում են դա, առաջինն են դժվարությունները հարթելիս և ճիշտն ընտրելիս: Դուք գիտեք, որ կարող եք Տիրոջ օգնությամբ հաղթահարել հասունանալու դժվարությունները:

Մյուս պատճառը, թե ինչու եք դուք առավել արդյունավետ, այն է, որ գիտակցում եք, որ դուք Երկնային Հոր զավակներն եք, ով սիրում է ձեզ: Համոզված եմ, որ դու ծանոթ եք մեր հրաշալի “Dearest Children, God is Near You” (Թանկագի՛ն երեխաներ, Աստված մոտ է ձեզ) օրհներգի հետ: Սիա առաջին հատվածը, որը երգել ենք և որին հավատացել ենք:

Սիրելի երեխաներ, Աստված ձեր կողքին է,
Հսկում է ձեզ գիշեր ու ցերեկ,
Նա հրճվում է, որ կարող է Իրենը կոչել և օրհնել ձեզ,
Եթե դուք ձգտեք անել այն, ինչ ճիշտ է:[5]

Այդ հատվածում կան երկու ուսմունքներ. Նախ, մեր Երկնային Հայրը մոտ է մեզ և գիշեր ու ցերեկ հսկում է մեզ: Մտածեք այդ մասին: Աստված սիրում է մեզ, Նա մոտ է մեզ և Նա հսկում է մեզ: Երկրորդ, Նրան հաճելի է օրհնել մեզ, երբ մենք «ձգտում ենք անել այն, ինչ ճիշտ է»: Ինչպիսի՜ մխիթարություն է մեր անհանգստությունների ու դժվարությունների ժամանակ:

Այո, երիտասա՛րդ կանայք, դուք օրհնված եք և դուք հրաշալի եք, բայց դուք նման եք Երկնային Հոր բոլոր զավակներին և պետք է «ձգտեք անել այն, ինչ ճիշտ է»:

Ես կարող էի ձեզ խորհուրդ տալ շատ տարբեր բաների վերաբերյալ, բայց ես ընտրեցի միայն երկուսը:

Իմ առաջին խորհուրդը վերաբերում է բջջային հեռախոսներին: Վերջերս անցկացված համազգային ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Միացյալ Նահանգներում դեռահասների կեսից ավելին ասում է, որ իրենք շատ ժամանակ են անցկացնում իրենց բջջային հեռախոսների վրա: Ավելի քան 40 տոկոսն ասել է, որ իրենք անհանգիստ են, երբ կտրվում են իրենց բջջային հեռախոսներից:[6] Ավելի շատ դա տարածված է աղջիկների, քան տղաների մոտ: Իմ երիտասարդ քույրե՛ր և չափահաս կանա՛յք, ձեր կյանքը կօրհնվի, եթե դուք սահմանափակեք ձեր բջջային հեռախոսների օգտագործումը և կախվածությունը դրանցից:

Իմ երկրորդ խորհուրդն ավելի կարևոր է: Ուրիշների հանդեպ բարի եղեք: Մեր երիտասարդներից շատերն արդեն բարի գործեր են անում: Որոշ համայնքներում, որոշ երիտասարդներ ցույց են տվել օրինակը: Մենք ոգեշնչվել ենք մեր երիտասարդ մարդկանց բարության գործերով՝ սիրով և օգնությամբ հասնել կարիքավորներին: Դուք բազմաթիվ եղանակներով տալիս եք այդ օգնությունը և ցույց եք տալիս այդ սերը միմյանց հանդեպ: Կուզենայինք, որ բոլորը հետևեին այդ օրինակին:

Միևնույն ժամանակ, մենք գիտենք, որ հակառակորդը փորձում է բոլորիս անբարյացակամ դարձնել, և կան շատ օրինակներ, նույնիսկ երեխաների և երիտասարդների շրջանում: Շարունակական անբարյացակամությունը հայտնի է բազմաթիվ

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորները և Բարձրագույն Պաշտոնյաները

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ


Դալլին Հ. Օուքս
Առաջին Խորհրդական

Ռասսել Մ. Նելսոն
Նախագահ


Հենրի Բ. Այրինգ
Երկրորդ Խորհրդական

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄ

Մ. Ռասսել Բալլարդ

Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Դեյվիդ Ա. Բեդնար

Քվենթին Լ. Քուք

Դ. Թոդ Քրիստոֆերսոն

Նիլ Լ. Անդերսեն

Ռոնալդ Ա. Ռասբենդ

Գարի Ի. Սթիվենսոն

Դեյլ Գ. Ռենլանդ

Ջերիթ Վ . Գոնգ


Ուլիսես Սոարես

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Լ. Ուիթնի Քլեյթոն

Պատրիկ Քիրոն

Քարլ Բ. Քուք

Որբերտ Ս. Գայ

Տերենս Մ. Վինսոն

Խոսե Ա. Թեքսեյրա

Կառլոս Ա. Գոդոյ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԻԵԽԱՆԱՎՈՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԱԿԱՆՆԵՐ



Մարկոս Ա. Այդուկայտիս · Խոսե Լ. Ալոնսո · Վիլֆորդ Վ. Անդերսեն · Յան Ս. Արդերն · Սթիվեն Ռ. Բանգերթեր · Վ. Մարկ Բասսթ · Դեյվիդ Ս. Բաքստեր · Ռանդալ Կ. Բենեթ · Շեյն Մ. Բոուեն · Մարկ Ա. Բրեգ · Մեթյու Լ. Քարփենթեր · Յուն Հվան Չոյ · Քրեյգ Ս. Քրիսչենսեն · Քիմ Բ. Քլարկ · Վեթերֆորդ Թ. Քլեյթոն · Լորենս Ե. Քոբբրիջ

Վալերի Վ. Քորդոն · Ջ. Դեվն Քորնիշ · Կլաուդիո Ռ. Մ. Կոստա · Յոքին Ի. Կոստա · Լեգրան Ռ. Քըրտիս Կրտսեր · Մասիմո Դե Ֆեո · Բենջամին դե Հոյոս · Էդվարդ Դյուբ · Քեվին Ռ. Դանքըն · Տիմոթի Ջ. Դայչես · Դեյվիդ Ֆ. Էվանս · Էնրիկե Ռ. Ֆալաբելլա · Բրեդլի Դ. Ֆոսթեր · Ռենդի Դ. Ֆանկ · Էդուարդո Գավարետտ · Ջեք Ն. Ջերարդ

Թեյլոր Ա. Գոդոյ · Քրիստոֆել Գոլդեն · Վոլթեր Ֆ. Գոնզալես · Օ. Վինսենթ Հալեք · Բրուք Պ. Հեյլս · Դոնալդ Լ. Հոլսթրոմ · Քեվին Ս. Համիլտոն · Ալլեն Դ. Հեյնի · Մատիաս Հելդ · Դեյվիդ Պ. Հոմեր · Փոլ Վ. Ջոնսոն · Լարի Ս. Քեչեր · Յորգ Քլեբինգաթ · Ջոնի Լ. Քոչ · Էրիկ Վ. Կոպիչկե · Հյուգո Ի. Մարտինես

Ջեյմս Բ. Մարտինո · Ռիչարդ Ջ. Մեյնգ · Քայլ Ս. Մակքեյ · Պիտեր Ֆ. Մըրս · Հյուգո Մոնտոյա · Մարկուս Բ. Նաշ · Կ. Բրեթ Նաթրես · Ս. Ջիֆորդ Նիլսեն · Բրենթ Հ. Նիլսոն · Ադրիան Օչոա · Ս. Մարկ Պալմեր · Ադիլսոն դե Փոլա Փարեյրա · Քեվին Վ. Փիրսոն · Էնթոնի Դ. Փերքինս · Փոլ Բ. Փայփեր · Ջոն Ք. Փինգրի Կրտսեր

Ռաֆայել Ի.Փինո · Մայքլ Տ. Ռինգվուդ · Լին Գ. Ռոբինս · Գարի Բ. Սաբին · Էվան Ա. Շմուց · Ջոզեֆ Վ. Սիտատի · Սթիվեն Ի. Մնոու · Վերն Փ. Սթենֆիլ · Բրայըն Ք. Թեյլոր · Մայքլ Ջոն Ու. Թեհ · Խուան Ա. Ուսեդա · Անդուլֆո Վալենզուելա · Խուան Պաբլո Վիլար · Տակաշի Վադա · Թանիելա Բ. Վակոլո · Սքոթ Դ. Վայթինգ

Լարի Յ. Վիլսոն · Չի Հոնգ (Սեմ) Վոնգ · Կազուհիկո Յամաշիտա · Ջորջ Ֆ. Զեբալոս

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆ



Դին Մ. Դեյվիս
Առաջին Խորհրդական

Ջերալդ Քոսե
Նախագահող Եպիսկոպոս

Վ. Քրիսթոֆեր Վաղել
Երկրորդ Խորհրդական

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ



Դեվին Գ. Դյուրան
Առաջին Խորհրդական

Թեդ Ռ. Քալիսթեր
Նախագահ

Բրայըն Ջ. Էջթոն
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՅՔ



Մայքլ Դ. Քրեյգ
Առաջին Խորհրդական

Բոննի Հ. Քորդոն
Նախագահ

Բեքի Քրեյվեն
Երկրորդ Խորհրդական

ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅՈՒՆ



Շարոն Յուբանք
Առաջին Խորհրդական

Ջին Բ. Բինգհեմ
Նախագահ

Ռեյնա Ի. Սբուրտո
Երկրորդ Խորհրդական

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ



Լիզա Լ. Հարկնես
Առաջին Խորհրդական

Ջոյ Դ. Ջոնս
Նախագահ

Քրիստինա Բ. Ֆրանկո
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԻԿ



Դուգլաս Դ. Հոլմս
Առաջին Խորհրդական

Սթիվեն Վ. Օուեն
Նախագահ

Մ. Ջոզեֆ Բրոու
Երկրորդ Խորհրդական

անվանումներով՝ ճնշել, խմբով որևէ մեկին նեղացնել, կամ մի քանի հոգով միանալով՝ մերժել մյուսներին: Այս օրինակները միտումնավոր կերպով ցավ են պատճառում դասընկերներին կամ ընկերներին: Իմ երիտասա՛րդ քույրեր, հաճելի չէ Տիրոջը, երբ մենք դաժանորեն կամ ստորաբար ենք վարվում ուրիշների հետ:

Սիա մեկ օրինակ. Ես ճանաչում եմ Յուտայում ապրող մի փախստական երիտասարդի, ում ծաղրում էին տարբեր լինելու համար, այդ թվում՝ իր մայրենի լեզվով երբեմն խոսելու համար: Երիտասարդների արտոնյալ մի խումբ հալածեց այնքան, մինչև որ նա այնպիսի պատասխան տվեց, որի պատճառով 70 օրից ավել նրան բանտում պահեցին և վտարեցին երկրից: Ես չգիտեմ, թե ինչը դրդեց երիտասարդների այդ խմբին այդպես վարվել, որոնցից շատերը ձեզ նման Վերջին օրերի սրբեր էին, սակայն ականատեսն եմ նրանց ստորության, մի ողբերգական փորձառության և Աստծո զավակներից մեկի կորուստի: Անբարյացակամության փոքրիկ գործերն անդառնալի հետևանքներ են թողնում:

Երբ լսեցի այդ պատմությունը, ես համեմատեցի այն վերջերս տեղի ունեցած երիտասարդների համաշխարհային հոգևոր հավաքի ժամանակ մեր մարգարե Նախագահ Նելսոնի խոսքերի հետ: Ձեզ և բոլոր մյուս երիտասարդներին խնդրելով հավաքել Իսրայելը, նա ասել է. «Առանձնացեք և տարբերվեք աշխարհից: Ես և դուք գիտենք, որ դուք պետք է լույս լինեք աշխարհին: Հետևաբար, Տիրոջն անհրաժեշտ է, որ դուք նմանվեք, գործեք և հագնվեք Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտի նման»:[7]

Երիտասարդների գումարտակը, որին միանալու կոչ արեց Նախագահ Նելսոնը, չպետք է *ստորաբար* վարվի ուրիշների հանդեպ: Նրանք պիտի հետևեն Փրկիչի ուսմունքին, որպեսզի օգնության հասնեն, սիրալիր և խոհեմ գտնվեն ուրիշների հանդեպ, նույնիսկ, դարձնեն մյուս այտը, երբ զգան, որ ինչ-որ մեկը սխալ է վարվել իրենց հանդեպ:

Մոտավորապես նույն ժամանակ, երբ ձեզանից շատերը ծնվեցին, մի գերագույն համաժողովի ելույթի ժամանակ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին գովաբանեց «գեղեցիկ երիտասարդ կանանց, ովքեր ձգտում են ապրել ավետարանով»: Նա նկարագրեց նրանց այնպես, ինչպես ես եմ ցանկանում նկարագրել ձեզ.

«Նրանք առատաձեռն են միմյանց հանդեպ: Նրանք ձգտում են ամրապնդել միմյանց: Նրանք պատվում են իրենց ծնողներին և այն տները, որտեղից սերում են: Նրանք դառնում են կանացի և կշռունակեն իրենց կյանքում կրել այն գաղափարները, որոնք ներկայումս ոգևորում են նրանց»:[8]

Որպես Տիրոջ ծառա, ես դիմում եմ ձեզ երիտասա՛րդ կանայք, մեր աշխարհը ձեր բարության և սիրո կարիքն ունի: Բարի եղեք միմյանց հանդեպ: Հիսուսը մեզ ուսուցանեց սիրել միմյանց և ուրիշների հետ վարվել այնպես, ինչպես մենք ենք ուզում, որ մեզ հետ վարվեն: Երբ ձգտենք բարի լինել, մենք ավելի կմոտենանք Նրան և Նրա սիրառատ ազդեցությանը:

Իմ սիրելի՛ քույրեր, եթե անձամբ կամ խմբով դուք մասնակցում եք որևէ նենգության կամ ստորության՝ այժմ փոխվելու որոշում կայացրեք և խրախուսեք ուրիշներին փոխվել: Դա իմ խորհուրդն է, և ես այն տալիս եմ ձեզ՝ որպես Տեր Հիսուս Քրիստոսի ծառա, քանի որ Նրա Հոգին հուշել է ինձ խոսել այս կարևոր թեմայի շուրջ: Ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի՝ մեր Փրկիչի մասին, ով մեզ ուսուցանեց սիրել միմյանց, ինչպես Նա սիրեց մեզ: Ես աղոթում եմ, որ մենք այդպես վարվենք, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. See Sara Berg, “Nation’s Latest Challenge: Too Few Children,” AMA Wire, June 18, 2018, wire.ama-assn.org.
2. *Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի ուսմունքները* (1997), 387, 390, տես նաև Մ. Ռասսել Բալլարդ, «Մայրեր և դուստրեր», *Լիահոնա,* մայիս 2010, 18, մեջբերված է *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* [2011], 156:
3. Ռասսել Մ. Նելսոն,«Մեկ կարևոր խնդրանք իմ քույրերին», *Լիահոնա,* նոյեմբեր 2015, 96, տես նաև՝ Ռասսել Մ. Նելսոն, “Children of the Covenant,” *Ensign*, May 1995, 33:
4. Ուսումնասիրությունը հրապարակվել է Քրիստիան Սմիթը և Մելինդա Լունդքիստ Դենտոնի Oxford University Press-ի կողմից՝ *Soul Searching: The Religious and Spiritual Lives of American Teenagers* (2005):
5. “Dearest Children, God Is Near You,” *Hymns,* no. 96.
6. See “In Our Opinion: You Don’t Need to Be Captured by Screen Time,” *Deseret News,* Aug. 31, 2018, deseretnews.com.
7. Ռասել Մ. Նելսոն, «Իսրայելի հույսը» (երիտասարդների համաշխարհային հավաք, հունիսի 3, 2018), 8, HopeofIsrael.lds.org:
8. Գորդոն Բ. Հինքլի, «Անհրաժեշտություն ավելի մեծ բարության համար», *Լիահոնա*, մայիս 2006, 60–61:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Քույրերի մասնակցությունը Իսրայելի հավաքման գործում

Եկեղեցու կանանց մարգարեական խնդրանք եմ հղում՝ օգնեք հավաքել ցրված Իսրայելը։

Շրաշալի է լինել ձեզ հետ իմ սիրելի և թանկագին քույրե՛ր։ Հավանաբար, վերջերս տեղի ունեցած դեպքը ձեզ հնարավորություն կտա հասկանալ, թե ինչ զգացում ունեմ ձեր և այն զերազանց ունակությունների մասին, որոնցով դուք օժտված եք։

Մի օր, Հարավային Ամերիկայում հավաքվածների հետ խոսելիս, ես ավելի ու ավելի ոգևորվեցի իմ թեմայով և ամենակարևոր պահին ասացի. «Լինելով 10 երեխաների *մայր,* կարող եմ ասել, որ . . .», իսկ հետո շարունակեցի ու ավարտեցի իմ ելույթը։

Ես չգիտակցեցի, որ օգտագործեցի *մայր* բառը։ Իմ թարգմանիչը, ենթադրելով, որ ես սխալ եմ արտասանել, *մայր* բառը փոխեց *հայր* բառով, այնպես որ հավաքվածները երբեք չիմացան, որ ինձ անվանեցի *մայր։* Բայց իմ կինը, Վենդին, լսեց այն և ուրախացավ իմ ոչ միտումնավոր սայթաքումով։

Այդ պահին մեծ զգացումով իմ սիրտը խորապես ձգտում էր տարբերություն մտցնել աշխարհում, ինչպես միայն մայրը կարող էր

անել։ Տարիների ընթացքում, երբ ինձ հարցնում են, թե ինչում եմ *որոշել* բժիշկ դառնալ, իմ պատասխանը միշտ եղել է նույնը. «Որովհետև, ես չէի կարող *որոշել* մայր լինել»։

Ուշադրություն դարձրեք, որ երբ արտասանում եմ *մայր* բառը, ես ոչ միայն խոսում եմ այն կանանց մասին, ովքեր ծննդաբերել կամ երեխաներ են որդեգրել այս կյանքում։ Ես խոսում եմ մեր Երկնային ծնողների *բոլոր* չափահաս դուստրերի մասին։ *Յուրաքանչյուր* կին մայր է իր Աստվածային հավերժական ճակատագրի շնորհիվ։

Այսպիսով, լինելով 10 երեխաների *հայր՝ ինը* դուստրեր և մեկ որդի, և Եկեղեցու նախագահ, այս երեկո աղոթում եմ, որ դուք հասկանաք, թե որքան շատ եմ մտածում ձեր մասին՝ ձեր ինքնության և ձեր կատարած բարի գործերի մասին։ Ոչ ոք չի կարող անել այն, ինչ կարող է անել արդար կինը։ Ոչ ոք չի կարող կրկնօրինակել մոր ազդեցությունը։

Տղամարդիկ կարող են և հաճախ փոխանցում են Երկնային Հոր և Փրկիչի սերն ուրիշներին։ Բայց կանայք դրա համար օժտված են հատուկ պարգևով՝ աստվածային օժտումով։ Դուք ունակ եք զգալու այն, ինչ անհրաժեշտ է որևէ մեկին, և *երբ է* դա անհրաժեշտ է նրան։ Դուք կարող եք հասնել, մխիթարել, ուսուցանել և ամրապնդել որևէ մեկին, երբ նա դրա կարիքը շատ ունի։

Կանայք տարբեր կերպ են տեսնում իրերը և այո, մենք որքա՜ն ձեր հեռանկարի կարիքն ունենք։ Ձեր բնույթով դուք *առաջին* հերթին մտածում եք ուրիշների մասին, մտածում եք, թե ինչ հետևանք կարող է թողել որևէ արարք ուրիշների վրա։

Ինչպես Նախագահ Այրինգն է նշել, մեր փառահեղ Մայր Եվան էր, մեր Երկնային Հոր ծրագրերի մասին իր կարևոր տեսլականով, որ նախաձեռնեց այն, ինչ մենք կոչում ենք «Անկում»։ Նրա իմաստուն և խիզախ ընտրությունը և Ադամի աջակցող որոշումը՝ Աստծո երջանկության ծրագիրն առաջ տարան։ Նրանք հնարավորություն տվեցին յուրաքանչյուրիս գալ երկիր, ստանալ մարմին, և ապացուցել, որ մենք

կպաշտպանենք Հիսուս Քրիստոսին *այժմ,* ինչպես մենք արեցինք նախաերկրային կյանքում:

Իմ սիրելի՛ քույրեր, դուք ունեք հոգևոր հատուկ պարգևներ և բնատուր հակումներ: Այսօր, իմ սրտի ողջ հույսով, հորդորում եմ ձեզ աղոթել, որպեսզի ճանաչեք *ձեր հոգևոր պարգևները*՝ զարգացնելով, կիրառելով և մեծացնելով դրանք ավելի շատ, քան երբևէ ունեցել եք: Այդպես վարվելով, դուք կփոխեք աշխարհը:

Որպես կին, դուք ոգեշնչում եք մյուսներին և օրինակելի չափանիշ սահմանում: Թույլ տվեք մի փոքր հիշեցնեմ մեր վերջին գերագույն համաժողովի երկու հիմնական հայտարարությունների մասին: Իմ սիրելի՛ քույրեր, այդ երկու դեպքում էլ դուք շատ կարևոր եք:

Առաջինը, դա սպասավորությունն է: Սպասավորության բարձրագույն չափորոշիչը մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսն է: Ընդհանրապես, կանայք մոտ են և միշտ ավելի մոտ են եղել այդ չափանիշին, քան տղամարդիկ: Երբ դուք իսկապես սպասավորում եք, դուք առաջնորդվում եք ձեր զգացմունքներով, որպեսզի մեկ ուրիշն ավելի զգա Փրկիչի սերը: Սպասավորելու հակումը բնորոշ է արդարակյաց կանանց: Ես ճանաչում եմ մի կնոջ, ով աղոթում է ամեն օր. «Ո՞ւմ ես ուզում, որ օգնեմ այսօր»:

Ուրիշների մասին ավելի բարձր և սրբազան ձևով հոգ տանելու վերաբերյալ 2018 թվականի ապրիլին արված հայտարարությունից առաջ, որոշ տղամարդիկ իրենց տնային ուսուցումը նշում էին «կատարած» և անցնում հաջորդ առաջադրանքին:

Սակայն, երբ *դուք* զգում էիք, որ ձեր այցելած քույրն օգնության կարիք ունի, դուք անմիջապես և ամբողջ ամսվա ընթացքում հետևողականորեն արձագանքում էիք: Այսպիսով, սպասավորությանն անցնելու կտրուկ փոփոխությունը ոգեշնչված է նրանով, թե *ինչպես եք* դուք այցելությամբ ուսուցում անցկացրել:

Երկրորդը, վերջին գերագույն համաժողովի ժամանակ մենք նաև վերակազմավորեցինք Մելքիսեդեկյան Քահանայության քվորումները: Երբ մենք աղոթեցինք, թե ինչպես օգնենք Եկեղեցու տղամարդկանց ավելի արդյունավետ լինել իրենց պարտականություններում, մենք ուշադիր հետևեցինք Սփոփող Միության օրինակին:

Սփոփող Միությունում տարբեր տարիքի և կոչումներ ունեցող կանայք հավաքվում են միասին: Կյանքի յուրաքանչյուր տասնամյակ յուրահատուկ մարտահրավերներ է բերում, և այնուամենայնիվ, *դուք* միշտ պատրաստ եք եղել՝ միասին հանդիպելով, միասին զարգանալով և ուսուցանելով ավետարանը և իրական փոփոխություն կատարելով աշխարհում:

Այժմ, հետևելով ձեր օրինակին, Մելքիսեդեկյան Քահանայության կրողները երեցների քվորումի անդամներ են: Այդ տղամարդկանց տարիքը տատանվում է 18-ից մինչև 98 (միգուցե ավելի) տարեկան և ունեն հավասարապես տարբեր քահանայություն և եկեղեցական փորձառություն: Այդ եղբայրներն այժմ կարող են ավելի արդյունավետ կերպով ուժեղ եղբայրական կապեր ստեղծել, սովորել միասին և օրհնել մյուսներին:

Հիշում եք, որ անցած հունիսին ես և Քույր Նելսոնը խոսեցինք Եկեղեցու երիտասարդների հետ: Մենք հրավիրեցինք նրանց ընդգրկվել Տիրոջ երիտասարդների գումարտակում, որպեսզի օգնեն հավաքել վարագույրի երկու կողմերում գտնվող Իսրայելը: Հավաքումը՝ «*մեծագույն* մարտահրավերը, *մեծագույն* նպատակը և *մեծագույն* աշխատանքն է Երկրի վրա»:[1]

Այդ նպատակը կանանց կարիքը շատ ունի, քանի որ կանայք ձևավորում են ապագան: Այս երեկո ես Եկեղեցու կանանց մարգարեական խնդրանք եմ հղում՝ օգնեք հավաքել ցրված Իսրայելը:

Որտեղի՞ց կարող եք սկսել:

Թույլ տվեք *չորս հրավեր* հղել ձեզ.

Առաջինը, ես հրավիրում եմ ձեզ 10 օր ծոմ պահել և զերծ մնալ ցանկացած տեսակի սոցիալական և այլ լրատվամիջոցներից, որոնք բացասական և անմաքուր մտքեր են հաղորդում ձեզ: Աղոթեք, որ իմանաք, թե որ ազդեցություններից

հեռու մնաք ձեր ծոմի ընթացքում: Ձեր 10-օրյա ծոմի հետևանքները կզարմացնեն ձեզ: Ի՞նչ նկատեցիք, երբ դադար վերցրեցիք աշխարհի պատկերներից, որոնք խոցում էին ձեր հոգին: Արդյո՞ք փոփոխություն եք զգում, թե որտեղ *այժմ* կցանկանայիք ծախսել ձեր ժամանակն ու եռանդը: Արդյո՞ք ձեր առաջնահերթություններից որևէ մեկը, նույնիսկ աննշան չափով, փոխվել է: Ես հորդորում եմ ձեզ գրի առնել և հետևել յուրաքանչյուր տպավորության:

Երկրորդը, ես հրավիրում եմ ձեզ այսօրվանից մինչև տարեվերջ կարդալ Մորմոնի Գիրքը: Թեև անհնար է թվում ձեր զբաղված կյանքում, եթե դուք ընդունեք այս հրավերը սրտի ողջ նվիրվածությամբ, Տերը կօգնի ձեզ գտնել դա իրականացնելու միջոցը: Եթե աղոթքով ուսումնասիրեք, խոստանում եմ, որ երկինքը կբացվի ձեզ համար: Տերը կօրհնի ձեզ մեծ ոգեշնչմամբ և հայտնությամբ:

Կարդալու ընթացքում խորհուրդ կտամ նշել այն հատվածները, որոնք խոսում են կամ մատնացույց են անում Փրկիչին: Ապա, ձեր ընտանիքների և ընկերների հետ անկեղծ խոսեք Քրիստոսի մասին, հրճվեք Քրիստոսով, և քարոզեք Քրիստոսի մասին:[2] Այդ գործընթացի շնորհիվ

դուք և նրանք ավելի կմոտենաք Փրկիչին: Եվ փոփոխություններ, նույնիսկ հրաշքներ, կսկսեն տեղի ունենալ:

Այս առավոտ հայտարարություն արվեց կիրակնօրյա նոր օրակարգի և տնակենտրոն, Եկեղեցու կողմից աջակցվող ուսումնական ծրագրի վերաբերյալ: Իմ սիրելի՛ քույրեր, դուք եք բանալին՝ նոր, հավասարակշռված և համակարգված ձևով ավետարանն ուսուցանելու այս ջանքերի բանալին: Խնդրում եմ, սուրբ գրություններից սովորած ձեր գիտելիքը ուսուցանեք ձեր սիրելիներին: Ուսուցանեք նրանց, թե ինչպես մեղք գործելիս դիմեն Փրկիչին՝ նրա բժշկող ու մաքրագործող զորությունը ստանալու համար: Եվ ուսուցանեք նրանց, թե ինչպես ամեն օր իրենց կյանքում կիրառեն Նրա զորացնող ուժը:

Երրորդը, կանոնավոր կերպով տաճար այցելելու սովորույթ ձևավորեք: Ձեր կյանքում դա կարող է մի փոքր ավելի զոհաբերություն պահանջել: Տաճարում անցկացրած կանոնավոր լրացուցիչ ժամանակը հնարավորություն կտա Տիրոջն ուսուցանել, թե ինչպես կիրառել Նրա քահանայության զորությունը, որով դուք օժտվել եք Նրա տաճարում: Ձեզանից նրանք, ովքեր չեն ապրում տաճարին մոտ, հրավիրում եմ սուրբ գրություններում և ապրող մարգարեների խոսքերում աղոթքով ուսումնասիրել տաճարների մասին նյութերը: Զգտեք *իմանալ* ավելին, *հասկանալ* ավելին և *զգալ* ավելին տաճարների մասին, քան նախկինում:

Անցած տարվա հունիսին տեղի ունեցած երիտասարդների մեր համաշխարհային հոգևոր հավաքում ես խոսեցի մի երիտասարդի մասին, որի կյանքը փոխվեց, երբ նրա ծնողները սմարթֆոնը փոխարինեցին սովորական բջջային հեռախոսով: Այդ երիտասարդ տղայի մայրը հավատացյալ անվախ կին է: Նա տեսավ, որ իր տղան մոտ է այն ընտրություններին, որոնք կարող էին նրան խանգարել միսիա ծառայել: Նա գնաց տաճար, որպեսզի իր տղայի համար աղոթի: Ապա, նա գործեց ըստ ստացած տպավորությունների:

Նա ասել է. «Ես զգացի, որ Հոգին առաջնորդում է ստուգել իմ որդու հեռախոսը որոշակի ժամերին, որպեսզի որոշակի նյութեր գտնեմ: Ես չգիտեմ, թե ինչպես օգտագործել սմարթֆոնը, բայց Հոգին առաջնորդեց ինձ բացել այն սոցիալական մեդիան, որը ես նույնիսկ չեմ օգտագործում: Ես գիտեմ, որ Հոգին օգնում է ծնողներին, որոնք ձգտում են պաշտպանել իրենց երեխաներին: [Սկզբում,] իմ որդին զայրացավ ինձ վրա . . . Բայց երեք օր անց նա ինձ շնորհակալություն հայտնեց: Նա զգում էր տարբերությունը»:

Նրա որդու պահվածքը և վերաբերմունքը կտրուկ փոխվեցին: Նա ավելի օգտակար էր տանը, ժպտում էր ավելի շատ և ավելի ուշադիր էր Եկեղեցում: Նրան դուր էր գալիս ժամանակավոր ծառայությունը տաճարի մկրտարանում և իր միսիային պատրաստվելը:

Իմ չորրորդ հրավերը նրանց, ովքեր համապատասխանում են այդ տարիքին, այն է, որ լիարժեք մասնակցություն ունենանՍփոփող Միությունում: Ես հորդորում եմ ձեզ ուսումնասիրել Սփոփող Միության նպատակների ներկայիս հայտարարությունը: Դա ոգեշնչող է: Այն կարող է առաջնորդել ձեր կյանքի նպատակներին հասնելու համար: Նաև թախանձում եմ, որ դուք կիրառեք Սփոփող Միության հայտարարության ճշմարտությունները, որոնք տպագրվել են գրեթե 20 տարի առաջ:[3] Այդ հռչակագրի շրջանակով օրինակը կախված է Առաջին Նախագահության գրասենյակում: *Ամեն* անգամ կարդալիս ես լցվում եմ ուրախությամբ: Այն նկարագրում է, թե ովքեր եք դուք և Տերն ինչ է ուզում, որ դուք դառնաք այս *որոշակի* պահին, երբ *դուք* կատարում եք ցրված Իսրայելի հավաքման գործի ձեր մասը:

Իմ սիրելի՛ քույրեր, մենք *ձեր* կարիքն ունենք: Մենք «*ձեր* ուժի, *ձեր* դարձի, *ձեր* համոզմունքի, *ձեր* ղեկավարելու ունակության, *ձեր* իմաստության, և *ձեր* ձայների կարիքն ունենք»:[4] Մենք, պարզապես, չենք կարող Իսրայելը հավաքել առանց ձեզ:

Ես սիրում եմ ձեզ, շնորհակալություն եմ հայտնում ձեզ և օրհնում եմ, որ կարողանաք հեռու մնալ աշխարհիկից՝ այս կարևոր և հրատապ աշխատանքին աջակցելիս: Միասին, մենք կարող ենք անել այն ամենը, ինչ մեր Երկնային Հայրն ակնկալում է մեզանից, որպեսզի աշխարհը նախապատրաստենք Նրա Միրելի Որդու Երկրորդ Գալուստին:

Հիսուսը Քրիստոսն է: Սա Նրա Եկեղեցին է: Սրա մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Սփոփող Միության նպատակը

Սփոփող Միությունը օգնում է պատրաստել կանանց հավերժական կյանքի օրհնություններին, երբ նրանք.

- Զորացնում են հավատքը Երկնային Հոր, Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ:
- Ամրացնում են անհատներին, ընտանիքներին և տները արարողությունների և ուխտերի միջոցով:
- Միասնաբար աշխատում են կարիքավորներին օգնելու համար:

Պատճենները կարելի է ձեռք բերել՝ lds.org/callings/relief-society/purposes or at store.lds.org:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Russell M. Nelson, “Hope of Israel” (worldwide youth devotional, June 3, 2018), HopeofIsrael.lds.org.
2. Տես 2 Նեփի 25.26:
3. Այս փաստաթղթերը հասանելի են առցանց: Սփոփող Միության նպատակների հայտարարությունը կարող եք գտնել lds.org/callings/relief-society-ում: Սփոփող Միության հռչակագրի համար, տես Մարի Էլեն Սմութ, “Rejoice, Daughters of Zion,” *Liahona,* Jan. 2000, 111–14:
4. Ռասսել Մ. Նելսոն, «Մեկ կարևոր խնդրանք իմ քույրերին», *Լիահոնա,* նոյեմբեր 2015, 96, շեշտադրումն ավելացված է:

Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորումի Գործող Նախագահ

Մահացածների փրկագնման տեսիլքը

Ես վկայում եմ, որ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի ստացած տեսիլքը ճշմարիտ է: Ես բերում եմ վկայություն, որ բոլոր մարդիկ կարող են հասկանալ, որ այն ճշմարիտ է:

Եղբայրնե՛ր և Քույրե՛ր, իմ ելույթը պատրաստվել էր իմ սիրելի կնոջ՝ Բարբարայի մահից որոշ ժամանակ առաջ: Ես և իմ ընտանիքը շնորհակալ ենք ձեզ՝ ձեր սիրո ու բարության համար: Ես աղոթում եմ, որ Տերն օրհնի ինձ, երբ ես ելույթ ունենամ այս առավոտ:

1918թ.-ի հոկտեմբերին՝ 100 տարի առաջ, Ջոզեֆ Ֆ. Սմիթը մի փառահեղ երազ տեսավ: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում Տիրոջը նվիրված 65-ամյա ծառայությունից հետո և իր մահից ընդամենը մի քանի շաբաթ առաջ՝ 1918թ.-ի նոյեմբերի 19-ին, նա նստած էր սենյակում և խորհում էր Քրիստոսի քավիչ զոհաբերության մասին և կարդում էր Պետրոս Առաքյալի նկարագրությունը Փրկիչի ծառայության վերաբերյալ, որը Նա կատարել է հոգիների աշխարհում Իր Խաչելությունից հետո:

Նա գրել է. «Երբ ես կարդում էի, մեծապես տպավորված էի: . . . Մինչ ես խորհում էի այս բաների շուրջ . . . , իմ հասկացողության աչքերը բացվեցին, և Տիրոջ Հոգին իջավ ինձ վրա, և ես տեսա մեռելների բազմությունը՝ և՛ փոքր, և՛ մեծ»:[1] Տեսիլքի ամբողջական տեքստը գրանցված է Վարդապետություն և Ուխտեր 138-րդ բաժնում:

Թույլ տվեք ներկայացնել որոշակի պատմական տեղեկություններ, որպեսզի մենք կարողանանք լիովին գնահատել Ջոզեֆ Ֆ. Սմիթի պատրաստությունը կյանքի ընթացքում այս նշանավոր հայտնությունը հասկանալու համար:

1906թ.-ին, երբ նա Եկեղեցու Նախագահն էր, այցելեց Նավու և հիշեց մի դեպք, երբ ինքը ընդամենը հինգ տարեկան էր: Նա ասաց. «Սա հենց այն տեղն է, որտեղ ես կանգնած էի, երբ [իմ հորեղբայր Ջոզեֆը և իմ հայր Հայրումը] եկան ձիերի վրա նստած՝ դեպի Քարթիջ գնալիս: Առանց ձիուց իջնելու, հայրս առաջ թեքվեց թամբի վրայից և ինձ բարձրացրեց գետնից: Նա համբուրեց ինձ, հրաժեշտ տվեց ու նորից դրեց գետնին, և ես տեսա, թե նա ինչպես ձին քշեց հեռացավ»:[2]

Հաջորդ անգամ Ջոզեֆ Ֆիլդինգը տեսավ նրանց, երբ մայրը՝ Մերի Ֆիլդինգը, բարձրացրեց նրան, որ տեսնի նահատակվածներին, որոնց դրել էին կողք կողքի 1844թ.-ի հունիսի 27-ի դաժան սպանությունից հետո:

Երկու տարի անց, Ջոզեֆ Ֆիլդինգը իր ընտանիքի և հավատարիմ մոր՝ Մերի Ֆիլդինգ Սմիթի հետ հեռացավ Նավուի իրենց տնից և մեկնեց Ուինթեր Քվորթերս: Չնայած 8 տարին դեռ չէր լրացել, Ջոզեֆ Ֆիլդինգից պահանջեցին քշել ցուլերի հոտերից մեկը Մոնտրոսից (Այովա) դեպի Ուինթեր Քվորթերս, իսկ հետո շարունակել ճանապարհը դեպի Սոլթ Լեյքի Հովիտ: Երբ տեղ հասան, նա համարյա 10 տարեկան էր: Տղանե՛ր և պատանինե՛ր, հուսով եմ, դուք լսում եք և կհասկանաք, թե ինչ մեծ պատասխանատվություն էր դրված Ջոզեֆ Ֆիլդինգի վրա իր պատանեկության տարիներին:

Ընդամենը չորս տարի անց, 1852թ.-ին, երբ նա 13 տարեկան էր, նրա սիրելի մայրը մահացավ՝ որբ թողնելով Ջոզեֆին և նրա եղբայրներին ու քույրերին:[3]

1854թ.-ին, երբ Ջոզեֆը Ֆիլդինգը 15 տարեկան էր, կանչվեց ծառայելու լիաժամկետ միսիա Հավայան կղզիներում: Այս միսիան, որը տևեց ավելի քան երեք տարի, Եկեղեցում նրա ծառայության սկիզբն էր:

Յուտա վերադառնալուն պես, Ջոզեֆ Ֆիլդինգն ամուսնացավ 1859թ.-ին:[4] Հաջորդ մի քանի տարիներին նրա կյանքը ծանրաբեռնված էր աշխատանքով, ընտանեկան պարտականություններով և երկու

1918թ. հոկտեմբերին ստացած փառավոր Տեսիլքում Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը տեսավ իր հորը՝ Հայրումին, և Նախագահ Ջոզեֆ Սմիթին։

լրացուցիչ միսիաներով։ 1866թ.-ի հուլիսի 1-ին, 27 տարեկանում Ջոզեֆ Ֆ. Սմիթի կյանքը ընդմիշտ փոխվեց, երբ նա Առաքյալ կարգվեց Նախագահ Բրիգամ Յանգի կողմից։ Հաջորդ տարի հոկտեմբերին նա լրացրեց Տասներկուսի Խորհրդի ազատ տեղը։[5] Նա ծառայեց որպես Բրիգամ Յանգի, Ջոն Թեյլորի, Վիլֆորդ Վուդրուֆի և Լորենզո Մնոուի խորհրդական, նախքան ինքը կդառնար Նախագահ 1901թ.-ին։[6]

Ջոզեֆ Ֆիլդինգը և նրա կինը՝ Ջուլինան, ողջունեցին իրենց առաջին զավակի՝ Մերսի Ջոզեֆինի ծնունդը ընտանիքում։[7] Աղջիկը մահացավ, երբ ընդամենը երկուս ու կես տարեկան էր։ Կարճ ժամանակ անց Ջոզեֆ Ֆիլդինգը գրառեց. «Երեկ լրացավ իմ . . . իմ սիրելի Ջոզեֆինի մահվան մեկ ամիսը»։ Օ՜, եթե միայն կարողանայի փրկել նրան, որ ապրեր, մեծանար ու չափահաս կին դառնար։ Ես կարոտում եմ նրան ամեն օր և ես մենակ եմ։ . . . Աստված, ներիր իմ թուլությունը, եթե սխալ է սիրել իմ փոքրիկներին այնպես, ինչպես սիրում եմ նրանց»։[8]

Իր կյանքի ընթացքում Նախագահ Սմիթը կորցրել է իր հորը, մորը, մի եղբորը, երկու քրոջը, երկու կանանց և 13 զավակներին։ Նա լավ գիտեր, թե ինչ է վիշտը և սիրելիների կորուստը։

Երբ նրա որդի Ալբերտ Ջեսսին մահացավ, Ջոզեֆ Ֆիլդինգը գրեց իր քույր Մարթա Էնին, որ ինքն աղերսել էր Տիրոջից փրկել որդուն, ապա հարցրել էր. «Ինչո՞ւ է այդպես։ Օ, Աստված, ինչո՞ւ պետք է այսպես լիներ»։[9]

Չնայած իր աղոթքներին, Ջոզեֆ Ֆիլդինգն այս անգամ այդ հարցի վերաբերյալ պատասխան չստացավ։[10] Նա ասաց Մարթա Էնին, որ «[թվում էր] երկինքները փակ էին մեր գլխավերևում» մահացածներին և հոգևոր աշխարհին վերաբերող թեմայի համար։ Այնուամենայնիվ, նրա հավատքը հաստատուն ու անսասան էր Տիրոջ հավերժական խոստումների հանդեպ։

Լրացուցիչ պատասխանները, սփոփանքը և հասկացողությունը հոգևոր աշխարհի մասին, որ Նախագահ Սմիթը փնտրում էր, եկան Տիրոջ ժամանակին մի սքանչելի տեսիլքի միջոցով, որը նա ստացավ 1918թ.-ի հոկտեմբերին։

Այդ տարին հատկապես ծանր էր նրա համար։ Նա սգում էր Առաջին Համաշխարհային Պատերազմի զոհերի մահը, որոնց թիվը հասնում էր 20 միլիոնի։ Ի լրումն դրա, գրիպի համաճարակը տարածվում էր ամբողջ աշխարհում, խլելով ավելի քան 100 միլիոն մարդու կյանք։

Տարվա ընթացքում Նախագահ Սմիթը կորցրեց իր համար շատ թանկ իր ընտանիքի ևս երեք անդամների։ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Հայրում Մաք Սմիթը՝ նրա անդրանիկ որդին, նաև իմ պապիկը, հանկարծակի մահացավ կույր աղիքի սուր բորբոքումից։

Նախագահ Սմիթը գրել է. «Ես կարկամել և [անզգայացել] եմ վշտից։ . . . Սիրտս կոտրված է, և կյանքը մեռել է իմ մեջ։ Օ՜, Ես սիրում էի նրան։ . . . Ես ավելի շատ կսիրեմ նրան ընդմիշտ։ Եվ այդպես է ու այդպես կլինի իմ բոլոր որդիների ու դուստրերի հետ, բայց նա իմ անդրանիկ որդին է, ով առաջինը ինձ բերեց ուրախություն և անմահ ու պատվարժան անվան հույս՝ մարդկանց մեջ։ . . . Իմ հոգու խորքում ես շնորհակալ եմ Աստծուն նրա համար։ Բայց . . . ավա՜ղ։ Ես ունեի նրա կարիքը։ Մենք բոլորս ունեինք նրա կարիքը։ Նա շատ օգտակար էր Եկեղեցուն։ . . . Իսկ հիմա, . . . Օ՜, ես ինչ, կարող եմ անել։ . . . Օ՜, Աստվա՜ծ, օգնիր ինձ»։[11]

Հաջորդ ամիս Նախագահ Սմիթի փեսան՝ Ալոնզո Կեսլերը, մահացավ ողբերգական վթարի հետևանքով։[12] Նախագահ Սմիթը գրեց իր օրագրում. «Այս սարսափելի և ողբերգական պատահարը մեծ վիշտ պատճառեց իմ ընտանիքին»։[13]

Յոթ ամիս անց, 1918թ. սեպտեմբերին, Նախագահ Սմիթի հարսը և իմ տատիկը՝ Իդա Բոուման Սմիթը, մահացավ հինգերորդ երեխայի՝ իմ հորեղբայր Հայրումի ծննդաբերության ժամանակ։[14]

Եվ այսպիսով, խորը վիշտ զգալով միլիոնավոր մարդկանց մահվան պատճառով, ովքեր մահացել էին պատերազմի ընթացքում և հիվանդություններից, ինչպես նաև իր ընտանիքի անդամների կորստից հետո, 1918թ.-ի հոկտեմբերի 3-ին Նախագահ Սմիթը երկնային հայտնություն ստացավ, որը

հայտնի է որպես «մահացածների փրկագնման տեսիլքը»:

Հաջորդ օրը կայացած հոկտեմբերի գերագույն համաժողովի բացման նիստին նա վկայակոչեց այս տեսիլքը: Նախագահ Սմիթը վատառողջ էր, սակայն նա համառոտ ելույթ ունեցավ. «Ես չեմ փորձի ասել այն ամենը, ինչի շուրջ մտածել եմ այս առավոտ և կիետաձգեմ ապագայում որևէ ժամանակի համար, երբ Տերը կամենա, բայց կփորձեմ պատմել ձեզ մի քանի բաների մասին, որոնք իմ մտքում են, և ես զգում եմ սրտով: Վերջին հինգ ամիսների ընթացքում ես մենակ չեմ ապրել: Ինձ հետ միշտ եղել է աղոթքի, խնդրանքի, վճռականության ոգին, և ես միշտ հաղորդակցվել եմ Տիրոջ Հոգու հետ»:[15]

Հայտնությունը, որը նա ստացել էր հոկտեմբերի 3-ին, հանգստություն բերեց նրա սրտին և տվեց շատ հարցերի պատասխանները: Մենք նույնպես կարող ենք հանգստություն գտնել և ավելի շատ բան սովորել մեր սեփական ապագայի մասին, երբ մենք և մեր սիրելիները մահանան և գնան հոգիների աշխարհ, ուսումնասիրելով այս հայտնությունը և խորհելով դրա նշանակության մասին այնպիսի ձևով, որով մենք ապրում ենք մեր կյանքն ամեն օր:

Այդ բոլոր բաների թվում Նախագահ Սմիթը տեսավ, թե հոգիների աշխարհում Փրկիչն ինչպես է այցելում հավատարիմներին Իր Խաչելությունից հետո: Մեջբերում եմ տեսիլքից.

«Այլ ահա, արդարների թվից նա կազմավորեց իր ուժերը և նշանակեց սուրհանդակներ, որոնք հանդերձավորված էին զորությամբ ու իշխանությամբ, և լիազորեց նրանց՝ առաջ գնալ և տանել ավետարանի լույսը նրանց, ովքեր խավարի մեջ էին, այսինքն՝ բոլոր մարդկային[16] հոգիներին. և այդպես ավետարանը քարոզվեց մեռելներին: . . .

Նրանց ուսուցանվել էր հավատք առ Աստված, մեղքերից ապաշխարություն, փոխարինող մկրտություն՝ մեղքերի թողության համար, Սուրբ Հոգու պարգևը ձեռնադրմամբ,

Եվ ավետարանի բոլոր մյուս սկզբունքները, որոնք նրանց անհրաժեշտ էր իմանալ, որ պատրաստվեին,

որպեսզի դատվեին, ինչպես մարդիկ մարմնի մեջ, բայց կենդանի լինեին հոգով՝ Աստծո կամքի համաձայն: . . .

Քանզի մահացածները գերություն էին համարում իրենց հոգիների երկար բացակայությունն իրենց մարմիններից:

Տերը նրանց ուսուցանեց, և նրանց զորություն տվեց, որ առաջ գան, մեռելներից իր հարությունից հետո, և մտնեն իր Հոր արքայությունը, որպեսզի այնտեղ անմահությամբ ու հավերժական կյանքով պսակվեն,

Եվ դրանից հետո շարունակեն իրենց գործը, ինչպես խոստացել էր Տերը, և ճաշակողներ լինեն բոլոր օրհնությունների, որոնք պահպանվել էին նրանց համար, ովքեր սիրում են նրան»:[17]

Տեսիլքում Նախագահ Սմիթը տեսավ իր հորը՝ Հայրումին, և Նախագահ Ջոզեֆ Սմիթին: 74 տարի էր անցել այն օրից, երբ նա վերջին անգամ տեսավ նրանց Նավուում, երբ փոքր տղա էր: Մենք միայն կարող ենք պատկերացնել նրա ուրախությունը, երբ տեսավ իր սիրելի հորն ու հորեղբորը: Նա գուցե ոգեշնչված էր և սփոփված՝ իմանալով, որ բոլոր հոգիները պահպանում են իրենց մահկանացու մարմնի նմանությունը, և որ նրանք անհամբեր սպասում են իրենց խոստացված հարության օրվան: Տեսիլքը լիովին բացահայտեց Իր զավակների համար ունեցած Երկնային Հոր ծրագրի մանրամասները, Քրիստոսի փրկագնող սերը և Նրա Քավության անսահման զորությունը:[18]

Այս հատուկ 100-րդ տարեդարձին ես հրավիրում եմ ձեզ ուշադիր կարդալ այս հայտնությունը: Երբ այդպես վարվեք, Տերը թող օրհնի ձեզ, որպեսզի լիովին հասկանաք ու գնահատեք Աստծո սերը և Նրա փրկության ու երջանկության ծրագիրը Իր զավակների համար:

Ես վկայում եմ, որ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի ստացած տեսիլքը ճշմարիտ է: Ես բերում եմ վկայություն, որ բոլոր մարդիկ կարող են կարդալ այն և հասկանալ, որ այն ճշմարիտ է: Նրանք, ովքեր չեն ստանում այս գիտելիքն այս կյանքում, անշուշտ կճանաչեն դրա ճշմարտացիությունը, երբ բոլորը հասնեն հոգիների աշխարհ: Այնտեղ բոլորը կսիրեն և կգովերգեն Աստծուն ու Տեր Հիսուս Քրիստոսին փրկության մեծ ծրագրի և խոստացված հարության օրհնության համար, երբ մարմինն ու հոգին կրկին կմիավորվեն այլևս երբեք չբաժանվելու համար:[19]

Որքա՜ն երախտապարտ եմ ես, որ գիտեմ, թե որտեղ է իմ թանկագին Բարբարան և, որ մենք կրկին միասին կլինենք մեր ընտանիքի հետ ընդմիշտ: Թող Տիրոջ ուրախությունը և խաղաղությունը մնա յուրաքանչյուրիս հետ, սա իմ խոնարհ աղոթքն է Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 138.6, 11
2. Տես Joseph F. Smith, in Preston Nibley, *The Presidents of the Church* (1959), 228:
3. Տես Joseph Fielding Smith, *Life of Joseph F. Smith* (1938), 13:
4. Նա ամուսնացել է Լեվիրա Քլարկի հետ 1859թ., Զուլինա Լամբսոնի հետ 1866թ., Սառա Ռիչարդսի հետ 1868, Էդնա Լամբսոնի հետ 1871, Ալիս Քիմբալի հետ 1883թ. և Մերի Շվարցի հետ 1884թ.:
5. Ջոզեֆ Ֆ. Սմիթը, որպես լրացուցիչ խորհրդական, կանչվել է Առաջին Նախագահություն (Բրիգամ Յանգ, Հեբեր Ս. Քիմբալ և Դանիել Հ. Վելս): Նա նաև ծառայել է որպես երկրորդ խորհրդական Առաջին Նախագահությունում Եկեղեցու երեք Նախագահների հետ, ներառյալ՝ Նախագահներ Ջոն Թեյլորը, Վիլֆորդ Վուդրուֆը և Լորենզո Սնոուն:
6. Ջոզեֆ Ֆ. Սմիթը ծառայել է որպես խորհրդական Առաջին

Նախագահությունում Բրիգամ Յանգի ղեկավարության ժամանակ և որպես Առաջին Նախագահության երկրորդ խորհրդական՝ Ջոն Թեյլորի, Վիլֆորդ Վուդրուֆի և Լորենզո Սնոուի ղեկավարության ժամանակ: Նա Եկեղեցու առաջին Նախագահն է, ով ծառայել է Առաջին Նախագահությունում, նախքան որպես Նախագահ կանչվելը:

7. Մերսի Ջոզեֆինը՝ Ջոզեֆ Ֆ. Սմիթի անդրանիկ զավակը, ծնվել է 1867թ. օգոստոսի 14-ին և մահացել է 1870թ. հունիսի 6-ին:
8. Joseph F. Smith, journal, July 7, 1870, Church History Library, The Church of Jesus Christ of Latter-day Saints, Salt Lake City, Utah.
9. Joseph F. Smith to Martha Ann Smith Harris, Aug. 26, 1883, Church History Library; see Richard Neitzel Holzapfel and David M. Whitchurch, *My Dear Sister: The Letters between Joseph F. Smith and His Sister Martha Ann* (2018), 290–91.
10. Շատ դեպքերում Տերն առաջնորդում էր Ջոզեֆ Ֆ. Սմիթին նրա անձնական կյանքում և որպես Առաքյալ և Եկեղեցու Նախագահ իր կոչումներում՝ ոգեշնչված երազների, հայտնությունների և տեսիլքների միջոցով: Տիրոջ այս թանկարժեք պարգևները հաճախ գրանցվում էին նրա օրագրերում, քարոզներում, հուշերում և Եկեղեցու պաշտոնական փաստաթղթերում:
11. Joseph F. Smith, journal, Jan. 23, 1918, Church History Library; spelling and capitalization modernized; see Joseph Fielding Smith, *Life of Joseph F. Smith,* 473–74.
12. See "A. [P.] Kesler Is Killed in Fall from a Building," *Ogden Standard,* Feb. 5, 1918, 5.
13. Joseph F. Smith, journal, Feb. 4, 1918, Church History Library.
14. See "Ida Bowman Smith," *Salt Lake Herald-Republican,* Sept. 26, 1918, 4.
15. Joseph F. Smith, in Conference Report,Oct. 1918, 2:
16. Տես հղումը «մեր փառահեղ Մայր Եվան» և «իր հավատարիմ դուստրերից շատերի հետ, որոնք . . . երկրպագել ճշմարիտ և կենդանի Աստծուն» (Վարդապետություն և Ուխտեր 138.39):
17. Վարդապետություն և Ուխտեր 138:30, 33–34, 50–52
18. The text of the vision first appeared in the November 30, 1918, edition of the *Deseret News,* 11 days after the passing of President Smith, on November 19. It was printed in the December *Improvement Era* and in January 1919 editions of the *Relief Society Magazine*, the *Utah Genealogical and Historical Magazine*, the *Young Women's Journal*, and the *Millennial Star*.
19. Չնայած կորստի որդիները հարություն կառնեն, նրանք չեն կարող սիրել ու գովաբանել Երկնային Հորն ու Հիսուս Քրիստոսին, ինչպես նրանք, ովքեր ստանում են փառքի արքայությունը: Տես Ալմա 11.41, Վարդապետություն և Ուխտեր 88.32–35:

Բոննի Հ. Քորդոն
Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահ

Հովիվ դառնալ

Հուսով եմ, որ նրանք, ում դուք ծառայում եք, ձեր մեջ կտեսնեն ընկերոջ և կգիտակցեն, որ դուք նրանց համար չեմպիոն եք և վստահելի անձ:

Մի տարի առաջ Չիլիում Երեխաների Միությունում մի փոքրիկ տղա ստիպեց ինձ ժպտալ: «Ողջույն,- ասաց նա,- Ես Դեյվիդն եմ: Գերագույն համաժողովի ժամանակ կխոսե՞ք իմ մասին»:

Լուռ պահերին ես խորհել եմ Դեյվիդի այս անակնկալ ողջույնի մասին: Մենք բոլորս էլ ցանկանում ենք լինել ճանաչված: Մենք ցանկանում ենք լինել կարևոր, հիշվել և սիրված զգալ:

Քույրե՛ր և եղբայրնե՛ր, ձեզանից յուրաքանչյուրն էլ կարևոր է: Եթե նույնիսկ ձեր մասին չեն խոսում գերագույն համաժողովին, Փրկիչը գիտի ձեզ և սիրում է ձեզ: Եթե դուք փորձում եք հասկանալ, թե արդյոք դա ճիշտ է, դուք պետք է միայն խորհեք այն մասին, որ Նա. «փորագրել է [ձեզ Իր] ձեռքերի ափերի վրա»:[1]

Իմանալով, որ Փրկիչը սիրում է մեզ, մենք կարող ենք խորհել, թե ինչպե՞ս կարող ենք լավագույնս ցուցադրել մեր սերը Նրա հանդեպ:

Փրկիչը հարցրեց Պետրոսին. «Սիրո՞ւմ ես ինձ . . . »:

Պետրոսը պատասխանում է. «Այո՛, Տէ՛ր. դու գիտես՝ որ ես սիրում եմ քեզ, նորան ասեց. Արածեցրու իմ գառները»:

Երբ երկրորդ և երրորդ անգամ Պետրոսին տրվում է «Սիրո՞ւմ ես ինձ» հարցը, Պետրոսը տրտմեց, սակայն հաստատեց, որ սիրում է. «Տէր, դու ամեն բան գիտես, դու գիտես, որ ես սիրում եմ քեզ: Յիսուսը նորան ասեց. *Արածեցրու իմ ոչխարները»:*[2]

Արդյո՞ք Պետրոսն արդեն իսկ չէր ապացուցել, որ ինքը Քրիստոսի հետևորդն է: Սկսած ծովափի իրենց առաջին հանդիպումից, նա «շուտով» թողեց իր ուռկանները և հետևեց Փրկչին:[3] Պետրոսն իսկապես դարձավ մարդկանց որսորդ: Նա Փրկիչի կողքին էր Նրա անձնական ծառայության ընթացքում և օգնում էր ուսուցանել ուրիշներին Հիսուս Քրիստոսի ավետարանը:

Սակայն այժմ հարություն առած Տերը գիտեր, որ Նա այլևս չէր լինելու Պետրոսի կողքին, ցույց տալով նրան, թե երբ և ինչպես պետք է ծառայեր: Փրկիչի բացակայության ժամանակ Պետրոսը պետք է առաջնորդություն փնտրեր Հոգուց, ինքնուրույն ստանար հայտնություններ և ապա խիզախություն և հավատ ունենար գործելու: Կենտրոնացած Իր ոչխարների վրա, Փրկիչը ցանկացավ, որ Պետրոսն աներ այն, ինչ Ինքը կաներ, եթե Նա լիներ այնտեղ: Նա խնդրեց Պետրոսին հովիվ դառնալ:

Անցած ապրիլին Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը նմանատիպ մի հրավեր հղեց մեզ, որ արածեցնենք մեր Հոր ոչխարները ավելի սուրբ ձևով և անենք դա ծառայության միջոցով:[4]

Այդ հրավերն արդյունավետ ընդունելու համար մենք պետք է զարգացնենք հովվի սիրտ և հասկանանք Տիրոջ գառների կարիքները: Այսպիսով, ինչպե՞ս ենք մենք դառնում այն հովիվները, որոնց կարիքն ունի Տերը:

Ինչպես բոլոր հարցերի դեպքում, այստեղ ևս մենք կարող ենք նայել մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին՝ Բարի Հովվին: Փրկիչը ճանաչում և հաշվում էր Իր ոչխարներին, հսկում էր նրանց, և նրանք հավաքված էին Աստծո հոտի մեջ:

Ճանաչված և հաշված

Երբ մենք ջանում ենք հետևել Փրկիչի օրինակին, մենք պետք է նախ ճանաչենք և հաշվենք Նրա գառներին: Մեզ հանձնարարվում է հոգ տանել որոշակի անհատների և ընտանիքների համար, որպեսզի վստահ լինենք, որ Տիրոջ ողջ հոտը հաշվված է, և ոչ ոք չի մոռացվել: Սակայն հաշվելը իրականում թվերի մասին չէ. դրա նպատակն է համոզված լինել, որ *յուրաքանչյուր* անձ զգում է Փրկիչի սերը մեկի միջոցով, ով ծառայում է Նրա *փոխարեն:* Այդպիսով բոլորը կարող են զգալ, որ իրենց սիրելի Երկնային Հայրը ճանաչում է իրենց:

Վերջերս ես հանդիպեցի մի երիտասարդ կնոջ, ում հանձնարարվել էր ծառայել մի քրոջ, ով գրեթե հինգ անգամ մեծ էր իրենից: Միասին նրանք բացահայտեցին, որ երկուսն էլ սիրում էին երաժշտություն: Երբ այդ երիտասարդ կինն այցելում էր, նրանք միասին երգում էին, և կիսվում էին իրենց սիրելի երգերով: Նրանք ընկերացան, որի շնորհիվ օրհնվեց նրանց երկուսի կյանքը:

Հուսով եմ, որ նրանք, ում դուք ծառայում եք, ձեր մեջ կտեսնեն ընկերոջ և կգիտակցեն, որ դուք նրանց համար չեմպիոն եք և վստահելի անձ. մեկը, ով տեղյակ է նրանց իրավիճակներից և աջակցում է նրանց՝ կապված իրենց հույսերի և ձգտումների հետ:

Վերջերս ես հանձնարարություն ստացա ծառայելու մի քրոջ, ում ոչ զուգընկերս, ոչ էլ ես լավ չէինք ճանաչում: Մինչ ես խորհրդակցեցի Ջեսի՝ իմ 16-ամյա ծառայության զուգընկերոջ հետ, նա իմաստությամբ խորհուրդ տվեց. «Մենք պետք է նախ ճանաչենք նրան»:

Մենք անմիջապես որոշեցինք, որ սելֆին և ներածական տեքստն անհրաժեշտություն են: Ես բռնել էի հեռախոսը, իսկ Ջեսը սեղմեց կոճակն ու նկարեց: Մեր առաջին ծառայելու հնարավորությունն ուղղված էր շփվելու ջանքերին:

Առաջին այցելության ժամանակ մենք հարցրինք մեր քրոջը, թե կա՞ր արդյոք որևէ բան, որի համար նա կցանկանար, որ մենք աղոթեինք: Նա կիսվեց իր անձնական դժվարություններով և ասաց, որ ուրախ կլիներ, եթե մենք հիշեինք իրեն մեր աղոթքներում: Նրա անկեղծությունն ու վստահությունը ակնթարթորեն ստեղծեցին սիրո մի օղակ: Ինչպիսի հրաշալի արտոնություն է իմ ամենօրյա աղոթքներում նրան հիշելը:

Մինչ աղոթում եք, դուք կզգաք Հիսուս Քրիստոսի սերը նրանց հանդեպ, ում դուք ծառայում եք: Կիսվեք նրանց հետ այդ սիրով: Նրա գառներն արածեցնելու ի՞նչ ավելի լավ եղանակ կարող է լինել, քան օգնել նրանց, որ զգան Նրա սերը *ձեր միջոցով*:

Հսկել

Երկրորդ ուղին, որով կարող ենք հովվի սիրտ ձեռք բերել, Նրա գառներին հսկելն է: Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, մենք կարող ենք տեղափոխել, ամրացնել, վերանորոգել և վերակառուցել գրեթե ամեն ինչ: Կարիք տեսնելիս մենք արագ արձագանքում ենք օգնող ձեռքերով կամ մի ափսե թխվածքով: Սակայն, ի՞նչ կարող ենք անել ավելին:

Արդյո՞ք մեր գառները գիտեն, որ մենք հսկում ենք իրենց սիրով և ամեն բան կանենք իրենց օգնելու համար:

Մատթեոսի 25 գլխում մենք կարդում ենք.

«Եկէք, ով իմ Հօր օրհնածները, ժառանգեցէք . . . ձեզ համար պատրաստուած թագաւորութիւնը:

Որովհետեւ սովեցի, եւ դուք տուիք ինձ ուտել. Ծարաւեցի եւ խմեցրիք ինձ. օտար էի, եւ ինձ ձեզ մօտ առաք. . . .

Այն ժամանակ արդարները կ՚պատասխանեն նորան եւ կ՚ասեն. Տէ՛ր, ե՞րբ *տեսանք* քեզ սոված, եւ կերակրեցինք, կամ ծարաւ, եւ խմեցրինք:

Ե՞րբ *տեսանք* քեզ օտար, եւ մեզ մօտ առանք»:[5]

Եղբայրներ և քույրեր, ամենակարևոր բառն է՝ *տեսանք:* Արդարները տեսան կարիքի մեջ գտնվողներին, քանի որ հսկում էին և նկատում: Մենք նույնպես կարող ենք լինել հսկող աչք, որպեսզի օգնենք և մխիթարենք, շնորհավորենք տոները և նույնիսկ նկատենք ներուժը: Երբ գործի անցնենք, մենք կզգանք Մատթեոսի ավետարանում տրված խոստման հաստատումը. «Որովհետեւ այս իմ փոքր եղբայրներից մէկին արիք, ինձ արիք»:[6]

Իմ ընկերներից մեկը (մենք կկոչենք նրան Ջոն) կիսվել է, թե ինչ կարող է պատահել, երբ մենք տեսնում ենք ուրիշի քիչ տեսանելի կարիքը. «Իմ ճյուղի քույրերից մեկը փորձել էր ինքնասպան լինել: Երկու ամիս անց ես բացահայտեցի, որ իմ քվորումից ոչ ոք չէր փորձել սատարել նրա ամուսնուն այդ ցնցումային փորձառության ընթացքում: Դժբախտաբար, ես նույնպես ոչինչ չէի ձեռնարկել: Ի վերջո, ես հրավիրեցի ամուսնուն ճաշի: Նա ամաչկոտ մարդ էր, հաճախ շատ զսպված: Սակայն, երբ ես ասացի. «Ձեր կինը փորձել է ինքնասպան լինել: Կարծում եմ, դա շատ ճնշող ազդեցություն է ունեցել ձեր վրա: Ցանկանո՞ւմ եք խոսել այդ մասին»,- նա բացահայտ արտասվեց: Մենք շատ նուրբ ու անձնական խոսակցություն

ունեցանք և նշանակալից մտերմություն ու վստահություն ձևավորվեց մեր մեջ դրոպեների ընթացքում»:

Ջոնն ավելացնում է. «Կարծում եմ, որ մենք սովորություն ունենք միայն թխվածքաբլիթներ բերել, փոխանակ պարզելու, թե ինչպես կարող ենք անկեղծորեն և սիրով կիսել նրանց հետ այդ պահը»:[7]

Մեր գառները զուցե ցավ են ապրում, մոլորվել են կամ նույնիսկ կամավոր հեռացել ճանապարհից. որպես նրանց հովիվ, մենք կարող ենք լինել առաջինների մեջ, ով կտեսնի նրանց կարիքը: Մենք կարող ենք լսել և սիրել առանց քննադատության և առաջարկել հույս և օգնություն Սուրբ Հոգու առաջնորդությամբ:

Քույրե՛ր և եղբայրնե՛ր, աշխարհն ավելի է լիանում հույսով և ուրախությամբ ձեր կատարած ոգեշնչված բարի գործերի շնորհիվ: Երբ դուք փնտրեք Տիրոջ առաջնորդությունը, թե ինչպես արտահայտեք Նրա սերը և տեսնեք նրանց կարիքները, ում դուք ծառայում եք, ձեր աչքերը կբացվեն: Ծառայելու ձեր սրբազան հանձնարարությունը տալիս է ձեզ աստվածային իրավունք ոգեշնչման համար: Դուք կարող եք վստահաբար փնտրել այդ ոգեշնչումը:

Հավաքվել Աստծո հոտում

Երրորդը, մենք ուզում ենք, որ մեր գառները հավաքվեն Աստծո հոտում: Դրա համար մենք պետք է խորհենք, թե ուխտի ուղու որ մասում են նրանք գտնվում և հոժարակամ քայլենք նրանց հետ հավատքի իրենց ճամփորդության ընթացքում: Մենք սրբազան արտոնություն ունենք տեսնելու նրանց սրտերը և առաջնորդելու նրանց իրենց Փրկիչի մոտ:

Քույր Ջոզիվինին Ֆիջիում դժվարանում էր տեսնել ուխտի իր ուղին բառիս բուն իմաստով: Նրա ընկերը նկատեց, որ Ջոզիվինին դժվարանում էր անգամ կարդալ սուրբ գրությունները: Նա կարդալու համար նոր ակնոց բերեց Ջոզիվինիին և վառ դեղին մատիտ, որ կարողանար Մորմոնի Գրքում նշել Հիսուս Քրիստոսին վերաբերող յուրաքանչյուր միտք: Այն, ինչ սկսվեց որպես ծառայելու և սուրբ գրություններ ուսումնասիրելու համար օգնելու հասարակ մի ցանկություն, արդյունքում Ջոզիվինին առաջին անգամ այցելեց տաճար մկրտվելուց 28 տարի անց:

Մեր գառները ուժեղ են, թե թույլ, ուրախ թե տխուր, մենք պետք է համոզված լինենք, որ ոչ ոք միայնակ չէ: Մենք կարող ենք սիրել նրանց, որտեղ էլ լինեն հոգևոր առումով, և աջակցել ու խրախուսել նրանց կատարելու հաջորդ քայլը: Երբ մենք աղոթենք և ձգտենք հասկանալ նրանց, ես վկայում եմ, որ Երկնային Հայրը կառաջնորդի մեզ և Նրա Հոգին կլինի մեզ հետ: Մենք հնարավորություն ունենք լինելու «հրեշտակներ [նրանց] շուրջը», մինչ Նա կգնա նրանց առջևից:[8]

Փրկիչը հրավիրում է մեզ արածեցնել Իր ոչխարներին, հոգ տանել Իր հոտի համար այնպես, ինչպես Ինքը կաներ: Նա հրավիրում է մեզ հովիվներ լինել բոլոր ազգերի, բոլոր երկրների համար: (Եվ, այո, Երեց Ուխդորֆ, մենք սիրում ենք գերմանացի հովիվներին և ունենք նրանց կարիքը:) Եվ Նա ցանկանում է, որ Իր գործը կատարելիս երիտասարդները միավորվեն:

Մեր երիտասարդները կարող են լինել ամենաուժեղ հովիվների շարքում: Նրանք, ինչպես ասել է Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը, «այն լավագույնների շարքում են, որոնց Տերը *երբևէ* ուղարկել է այս աշխարհ»: Նրանք «ազնվազարմ հոգիներ են», մեր «լավագույն խաղացողները», ովքեր հետևում են Փրկիչին:[9] Կարո՞ղ եք պատկերացնել զորությունը, որ նման հովիվը կբերի, մինչ նրանք հոգ կտանեն Նրա գառների համար: Այս երիտասարդների հետ կողք կողքի ծառայելով՝ մենք հրաշքներ ենք տեսնում:

Երիտասա՛րդ կանայք և երիտասա՛րդ տղամարդիկ, մենք ունենք ձեր կարիքը: Եթե ձեզ տրված չէ սպասավորելու հանձնարարություն, խոսեք Սփոփող Միության կամ երեցների քվորումի ձեր նախագահների հետ: Նրանք կուրախանան, տեսնելով ձեր ցանկությունը, որ ուզում եք համոզվել, որ Նրա գառներին ճանաչում և հաշվում են, հսկում և հավաքում են Աստծո հոտի մեջ:

Երբ գա օրը, երբ մենք ծնկի կիջնենք մեր սիրելի Փրկիչի առջև, արածեցնելով Նրա հոտը, ես աղոթում եմ, որ մենք կարողանանք պատասխանել Պետրոսի նման. «Այո, Տէր, դու գիտես որ ես սիրում եմ քեզ»:[10] Քո գառները *սիրված են, ապահով* և նրանք *տանն են:* Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 1 Նեփի 21.16
2. Տեսէ՛ Հովհաննես 21.15–17, շղագրումն ավելացված է:
3. Տես Մատթեոս 4.20:
4. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Սպասավորություն», *Լիահոնա,* մայիս 2018, 100:
5. Մատթեոս 25.34–35, 37–38, շղագրումն ավելացված է:
6. Մատթեոս 25.40
7. Անձնական նամակագրություն:
8. Վարդապետություն և Ուխտեր 84.88
9. Russell M. Nelson, “Hope of Israel” (worldwide youth devotional, June 3, 2018), HopeofIsrael.lds.org.
10. Հովհաննես 21.15

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հաշտության սպասավորությունը

Ես վկայում եմ, որ Աստծո և միմյանց հետ հաշտությունը կբերի հոգու խաղաղություն, եթե մենք հեզ ենք ու բավականաչափ խիզախ դրան հետամուտ լինելու համար։

Անցած ապրիլին Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը ներկայացրեց սպասավորության գաղափարը որպես մի եղանակ, որով պահում ենք մեծ պատվիրանները՝ սիրել Աստծուն և սիրել միմյանց։[1] Մենք, որպես Եկեղեցու պաշտոնյաներ, անկեղծորեն ծափահարում ու շնորհավորում ենք ձեզ այն հսկայական արձագանքի համար, որով դուք սկսեցիք այդ գործը։ Մենք շնորհակալ ենք ձեզ, որ հետևում եք մեր մարգարեին այս հրաշալի նախաձեռնության մեջ և առաջարկում ենք, որ դուք չսպասեք ավելի շատ հրահանգների։ Պարզապես ցատկեք լողավազանի մեջ և լողացեք։ Եվ գնացեք դեպի կարիքավորները։ Մի կաշկանդվեք, մտածելով՝ արդյոք պիտի մեջքի՞ վրա լողաք, թե՞ շնալող տաք։ Եթե մենք հետևենք ուսուցանված հիմնական սկզբունքներին, գործադրենք քահանայության բանալիները և փնտրենք Սուրբ Հոգու առաջնորդությունը, մենք չենք ձախողվի։

Այս առավոտ ես ցանկանում եմ խոսել սպասավորության մի անհատական տեսակի մասին, որը չի կատարվում ըստ հանձնարարության, չի ընդգրկում նախատեսված հարցազրույց, և չունի հաշվետվության պարտադրանք ինչ-որ մեկին՝ բացառությամբ երկնքից։ Թույլ տվեք կիսվել մի պարզ օրինակով այդպիսի բարի ծառայության վերաբերյալ։

Գրանտ Մորել Բոուենը, ով աշխատասեր, նվիրված ամուսին ու հայր էր, շատերի նման իր օրավուր հացը վաստակում էր հողի հետ աշխատելով, սակայն նա ֆինանսական մաքառումների մեջ էր, երբ տեղական կարտոֆիլի բերքն աղքատ էր լինում։ Նա և իր կինը՝ Նորման,

սկսեցին զբաղվել այլ աշխատանքներով և, ի վերջո, տեղափոխվեցին մեկ այլ քաղաք ու սկսեցին կայունացնել իրենց ֆինանսական դրությունը։ Սակայն մի ցավալի միջադեպի պատճառով Եղբայր Բոուենը խորապես վիրավորվեց, երբ տաճարային երաշխավորագրի հարցազրույցի ժամանակ եպիսկոպոսը թերահավատությամբ վերաբերվեց Մորելի հայտարարագրի այն կետին, որ նա լիարժեք տասանորդ վճարող էր։

Ես չգիտեմ, թե այս երկու տղամարդկանցից ո՞ր մեկն էր ավելի ճիշտ այդ օրը, բայց ես իրոք գիտեմ, որ Քույր Բոուենը այդ հարցազրույցից դուրս եկավ թարմացված տաճարային երաշխավորագրով, մինչդեռ Եղբայր Բոուենը դուրս եկավ բարկացած, և դա նրան հեռացրեց Եկեղեցուց 15 տարի։

Անկախ այն բանից, թե ով էր ճիշտ տասանորդի հարցում, ակնհայտ է, որ թե՛ Մորելը, թե՛ եպիսկոպոսը մոռացել էին Տիրոջ նախազգուշացումը, որ «քո ոսոխի հետ շուտով միաբանուիր»[2] և Պողոսի խորհուրդը՝ «թող արեգակը ձեր բարկութեան վերայ չ'մտնէ»։[3] Փաստն այն է, որ նրանք համաձայնության *չեկան* և Եղբայր Բոուենի բարկությունը դեռ երկար օրեր, շաբաթներ, ապա տարիներ շարունակվեց, ինչն էլ հաստատեց հին իմաստուն հռոմեացիներից մեկի տեսակետը. «Բարկությունը, եթե չի զսպվում, հաճախ ավելի կործանարար է, քան վիրավորանքը, որն առաջացրել է այդ բարկությունը»։[4] Բայց հաշտության հրաշքը միշտ էլ հասանելի է մեզ, և շնորհիվ սիրո, որը նա տածում էր իր ընտանիքի ու Եկեղեցու հանդեպ, որը գիտեր որ ճշմարիտ է, Մորել Բոուենը վերադարձավ Եկեղեցի։ Թույլ տվեք համառոտ պատմել, թե դա ինչպես պատահեց։

Եղբայր Բոուենի որդի Բերդը մեր լավ ընկերն է և նվիրված Տարածքային Յոթանասունական հարավային Այդահոյում։ Այդ միջադեպի ժամանակ Բրեդը 11 տարեկան էր և 15 տարի շարունակ նա հետևում էր իր հոր կրոնական նվիրվածության անկմանը, վկա լինելով, թե ինչպես էին քաղվում բարկության բերքահավաքի

պտուղներն այնտեղ, ուր ցանվել էր թյուրիմացությունը: Ինչ-որ բան պետք է արվեր: Այսպիսով, երբ մոտենում էր 1977թ.-ի Գոհաբանության տոնը, 26-ամյա Բրեդը, ով Բրիգամ Յանգ Համալսարանի ուսանող էր, նրա կինը և մանուկ որդի Միկը իրերը բեռնեցին իրենց հին մեքենայի մեջ և, չնայած վատթարացող եղանակին, ճամփա ընկան դեպի Մոնտանայի Բիլինգս քաղաքը: Վեստ Յելոուստոունի մոտ մեքենան մխրճվեց ձնաբլրի մեջ, սակայն նույնիսկ դա չխանգարեց, որ այս ընտանիքը սպասավորության այցելություն կատարեր եղբայր Բոուեն Ավագին:

Տեղ հասնելուն պես, Բրեդը և նրա քույր Պեմը իրենց հորը առանձնազրույցի հրավիրեցին մի քանի րոպեով: «Դու հրաշալի հայր ես եղել,- սկսեց Բրեդը հուզմունքով,- և մենք միշտ իմացել ենք, թե դու որքան ես սիրում մեզ: Բայց ինչ-որ բան սխալ է և արդեն երկար ժամանակ: Քանի որ դու մի անգամ վիրավորվել էիր, այս ընտանիքը ևս վիրավորված է երկար տարիներ: Մենք ընկճված ենք, և դու միակ մարդն ես, ով կարող է վերականգնել մեզ: Խնդրում ենք, այսքան ժամանակ անց, կարո՞ղ ես պատրաստակամ մի կողմ դնել այդ ցավալի միջադեպը եպիսկոպոսի հետ և առաջնորդել այս ընտանիքը ավետարանով՝ ինչպես մի ժամանակ անում էիր»:

Քար լռություն տիրեց: Ապա Եղբայր Բոուենը նայեց այս երկուսին, ովքեր իր ոսկորից ու մարմնից էին,[5] և շատ հանգիստ ասաց. «Այո, Այո, ես կգնամ»:

Հիացած, բայց զարմացած անսպասելի պատասխանից, Բրեդ Բոուենը և նրա ընտանիքը հետևում էին, թե ինչպես է իրենց ամուսինն ու հայրը գնում ներկայիս եպիսկոպոսի մոտ հաշտության ոգով, որպեսզի ամեն բան ճիշտ կարգով դասավորի իր կյանքում: Անկեղծորեն արձագանքելով այս խիզախ, բայց լիովին անսպասելի այցին, եպիսկոպոսը, ով բազմիցս հրավիրել էր Եղբայր Բոուենին վերադառնալ Եկեղեցի, իր բազուկներով գրկեց Մորելին ու նրանք երկար գրկախառնված մնացին:

Ընդամենը մի քանի շաբաթում Եղբայր Բոուենը կրկին լիովին ներգրավվեց Եկեղեցու միջոցառումներում և արժանավոր դարձավ տաճար վերադառնալուն: Շուտով նա կանչվեց նախագահելու դժվարությունների մեջ գտնվող 25 անդամից բաղկացած մի փոքր ճյուղ, որը հետո աճեց ու դարձավ 100 անդամից բաղկացած բարգավաճող համայնք: Այս ամենը տեղի է ունեցել մոտ կես դար առաջ, սակայն որդու և դստեր կողմից իրենց հորը մատուցած սպասավորության միջնորդությունը, ինչպես նաև այդ հոր ներելու և առաջ ընթանալու պատրաստակամությունը, չնայած ուրիշների թերություններին, բազմաթիվ օրհնություններ է բերել Բոուեն ընտանիքին:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, Հիսուսը խնդրել է, որ մենք «ապրե[ն]ք միասին սիրով»,[6] «[մ]եր մեջ չպիտի լինեն վիճաբանություններ»:[7] «Նա, որ ունի հակառակության ոգին, ինձանից չի»,- Նա նախազգուշացրեց նեփիացիներին:[8] Անշուշտ, մեր կապը Քրիստոսի հետ մեծապես կորոշվի կամ առնվազն դրա վրա կազդեն մեր ունեցած հարաբերությունները միմյանց հետ:

«Եթե դու . . . փափագես գալ ինձ մոտ»,- ասել է նա,- և հիշես, որ քո եղբայրը որևէ բան ունի քո դեմ,

գնա քո ճանապարհով քո եղբոր մոտ, և առաջին հերթին հաշտվիր [նրա] հետ, և հետո եկ ինձ մոտ սրտի ողջ նվիրվածությամբ, և ես կընդունեմ քեզ»:[9]

Անկասկած, մեզանից յուրաքանչյուրը կարող է նշել բազմաթիվ և տարբեր հին վերքեր, վշտեր ու ցավոտ հիշողություններ, որոնք հենց այս պահին դեռևս խախտում են մեր սրտի, մեր ընտանիքի ու շրջապատի անդորրը: Անկախ նրանից՝ մենք ենք պատճառել այդ ցավը, թե մենք ենք ընդունել այն, այդ վերքերը պետք է բժշկվեն, որպեսզի կյանքը լինի նույնքան լիարժեք, որքան Աստված է նախատեսել, որ այն լինի: Ինչպես որ ձեր թոռնիկներն են ուշադիր զննում սառնարանի պարունակությունը՝ ստուգելով ուտելիքի ժամկետը ձեր փոխարեն, այնպես էլ այդ հին վիրավորանքների ժամկետն է արդեն անցել: Խնդրում եմ, ձեր հոգու թանկագին եռանդը այլևս մի ծախսեք դրանց վրա: Ինչպես Պրոսպերոն է ասել զոջացող Ալոնսոյին *Փոթորիկը* պիեսում՝ «Եկ չծանրաբեռնենք մեր հիշողությունն անցյալով, քանի որ այլևս պատճառ չկա տխրելու դրանցով»:[10]

«Մի՛ դատեք, որպեսզի Աստված էլ ձեզ չդատի»,-[11] Քրիստոսն ուսուցանեց Լեռան քարոզում: Իսկ մեր օրերում. «Ես՝ Տերս, կներեմ, ում որ կներեմ, բայց ձեզանից պահանջվում է ներել բոլոր մարդկանց»:[12] Սակայն ձեզանից յուրաքանչյուրի համար, ովքեր իրական չարչարանքների մեջ են, կարևոր է հիշել, թե Նա ինչ *չի* ասել: Նա չի ասել. «Ձեզ չի թույլատրվում իրական ցավ կամ իրական վիշտ զգալ կործանարար փորձություններից, որոնց մեջ դուք հայտնվել եք մեկ ուրիշի պատճառով»: Նա նաև չի ասել. «Որպեսզի լիովին ներեք, դուք պետք

է շարունակեք վնասակար հարաբերությունները կամ վերադառնաք ստորացուցիչ և կործանարար վիճակին»: Բայց չնայած ամենասարսափելի անպատվություններին, որոնք կարող են պատահել մեզ հետ, մենք կարող ենք հաղթահարել ցավը, երբ ոտք դնենք ճշմարիտ բժշկման արահետի վրա: Դա ներման արահետն է, որով քայլում էր Նազովրեցի Հիսուսը, ով կոչ է անում մեզանից յուրաքանչյուրին. «Ե՛կ, հետևիր ինձ»:[13]

Իր աշակերտը դառնալու այդ հրավերով և փորձելով վարվել, ինչպես Ինքն էր վարվում, Հիսուսը խնդրում է մեզ լինել Իր շնորհի գործիքները, լինել «Քրիստոսի դեսպանները» «հաշտութեան պաշտոնի» մեջ, ինչպես Պողոսն էր նկարագրում կորնթացիներին:[14] Բոլոր վերքերի ամոքիչը, Նա, ով ուղղում է բոլոր սխալները, խնդրում է մեզ աշխատել Իր հետ խաղաղության պահպանման դժվարին աշխատանքում այն աշխարհում, որը չի գտնի խաղաղություն մեկ այլ ճանապարհով:

Ուստի, ինչպես Ֆիլիպս Բրուքսն է գրել. «Դուք, որ թույլ եք տալիս, որ չնչին թյուրիմացությունները շարունակվեն տարեց տարի, մտադրվելով հստակեցնել դրանք մի օր, դուք, որ դեռևս վիճում եք, քանի որ չեք կարող որոշել, որ այսօր է այդ օրը՝ զոհաբերելու ձեր հպարտությունը, և կարգավորելու դրանք, դուք, որ փողոցում խոժոռ դեմքով անցնում եք ուրիշների կողքով՝ նրանց վիրավորելու հիմար ցանկությամբ, . . . դուք, որ թույլ եք տալիս, որ . . . ինչ-որ մեկի սիրտը ցավի գնահատանքի կամ խղճահարության խոսքերի պակասից, որը դուք նախատեսում եք ասել . . . մի օր, . . . գնացեք և անմիջապես ասեք, քանի որ, գուցե, այլևս մեկ այլ հնարավորություն չունենաք այդ անելու»:[15]

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ես վկայում եմ, որ հին ու նոր վիրավորանքները ներելն ու դրանք մոռանալը Հիսուս Քրիստոսի Քավության կարևոր մասն են: Ես վկայում եմ, որ, ի վերջո, այսպիսի հոգևոր նորոգումը կարող է գալ միայն մեր աստվածային Քավիչից, Նրանից, ով շտապում է մեզ օգնության, «բժշկութիւն պիտի լինի նորա թևերի վերայ»:[16] Մենք շնորհակալ ենք Նրան և մեր Երկնային Հորը, ով ուղարկեց Նրան, շնորհակալ ենք, որ նորոգումն ու վերածնունդը, հին վշտերից ու անցյալի սխալներից զերծ ապագան ոչ միայն հնարավոր է, այլև ձեռք է բերվել և դրա համար վճարվել է շատ թանկ գին, որը խորհրդանշվում է Գառան արյունով, ով հեղեց այն:

Առաքելական լիազորությամբ, որը շնորհվել է ինձ աշխարհի Փրկիչի կողմից, ես վկայում եմ, որ Աստծո և միմյանց հետ հաշտությունը կբերի հոգու խաղաղություն, եթե մենք հեզ ենք ու բավականաչափ խիզախ՝ դրան հետամուտ լինելու համար: «Դադարեք հակառակվել մեկմեկու»,- ասել է Փրկիչը:[17] Եթե դուք գիտեք հին վիրավորանքի մասին, մոռացեք այն: Սիրով հոգ տարեք միմյանց մասին:

Իմ սիրելի՛ ընկերներ, ես խնդրում եմ ձեզ խաղարար լինել մեր հաշտության սպասավորության մեջ, որը բոլորս ենք կատարում: Ես խնդրում եմ սա Խաղաղության Իշխանի անունով, ով գիտե ամեն բան անմեղության ու անարդարություն մասին, «հարուածքը [իր] բարեկամների տանը» և կեղծ մեղադրանքների մասին,[18] բայց ով դեռևս ուժ գտավ ներել ու մոռանալ և բժշկել, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: Ես աղոթում եմ ձեզ համար և ինձ համար, Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Մատթեոս 22.36–40, Ղուկաս 10.25–28:
2. Մատթեոս 5.25
3. Եփեսացիս 4.26
4. Seneca, in Tryon Edwards, *A Dictionary of Thoughts* (1891), 21.
5. Տես Ծննդոց 2.23
6. Վարդապետություն և Ուխտեր 42.45
7. 3 Նեփի 11.22, 29, տես նաև 3 Նեփի 11.28
8. 3 Նեփի 11.29
9. 3 Նեփի 12.23–24; շեշտադրումն ավելացված է:
10. William Shakespeare, *The Tempest,* act 5, scene 1, line 199.
11. Ղուկաս 6.37:
12. Վարդապետություն և Ուխտեր 64.10
13. Ղուկաս 18.22
14. Տես Բ Կորնթացիս 5.18–20
15. Phillips Brooks, *The Purpose and Use of Comfort (1906), 329.*
16. Մաղաքիա 4.2, տես նաև 2 Նեփի 25.13, 3 Նեփի 25.2:
17. Վարդապետություն և Ուխտեր 136.23
18. Զաքարիա 13.6, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 45.52

Երեց Շեյն Մ. Բոուեն
Յոթանասունից

Մորմոնի Գրքի դերը դարձի գալու գործում

Մենք հավաքում ենք Իսրայելը վերջին անգամ և դա անում ենք Մորմոնի Գրքով՝ դարձի բերող ամենահզոր գործիքներից մեկով։

Այսօր շատերին է հետաքրքրում Աստծո իրական լինելը և մեր փոխհարաբերությունները Նրա հետ։ Շատերը քիչ բան գիտեն, կամ ընդհանրապես չգիտեն Նրա երջանկության մեծ ծրագրի մասին։ Ավելի քան 30 տարի առաջ Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնը նկատել էր, որ «այսօր . . . աշխարհի մեծ մասը մերժում է Փրկիչի աստվածային բնույթը։ Մարդիկ կասկածի տակ են դնում Նրա հրաշափառ ծնունդը, Նրա կատարյալ կյանքը և Նրա փառահեղ Հարության իրականությունը»։[1]

Մեր օրերում հարցերը կենտրոնացած են ոչ միայն մեր Փրկիչի, այլև Նրա Եկեղեցու վրա՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու, որը Նա վերականգնել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով։ Հարցերը հիմնականում վերաբերում են Փրկիչի Եկեղեցու պատմությանը, ուսմունքներին և գործերին։

Մորմոնի Գիրքը նպաստում է մեր վկայության աճին

Քարոզիր Իմ Ավետարանը գրքում կարդում ենք՝ «Հիշեք, որ մեր հասկացողությունն [Երկնային Հոր և երջանկության Նրա ծրագրի մասին] ընդլայնվում է ժամանակակից մարգարեների՝ Ջոզեֆ Սմիթի և նրան հաջորդողների շնորհիվ, որոնք ուղղակիորեն հայտնություններ են ստանում Աստծուց։ Ուստի, առաջին հարցը, որին ունկնդիրը պետք է պատասխանի, դա այն է, թե արդյոք Ջոզեֆ Սմիթը մարգարե էր, իսկ ունկնդիրը կարող է պատասխանել այդ հարցին, կարդալով Մորմոնի Գիրքը և աղոթելով այդ մասին»։[2]

Մարգարե Ջոզեֆ Սմիթի աստվածային կոչման վերաբերյալ իմ վկայությունն ամրապնդվեց այն ժամանակ, երբ աղոթքով ուսումնասիրեցի Մորմոնի Գիրքը։ Եվս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին։ Ես գործի դրեցի Մորոնիի հրավերը. «հարցրեք Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով» իմանալու համար Մորոնի Գրքի ճշմարտացիությունը։[3] Ես վկայում եմ, որ գիտեմ, որ այն ճշմարիտ է։ Այդ գիտելիքը տրվեց ինձ, ինչպես որ կարող է տրվել ձեզ՝ «Սուրբ Հոգու զորությամբ»։[4]

Մորմոնի Գրքի նախաբանում գրված է. «Նրանք, ովքեր ձեռք են բերում այս աստվածային վկայությունը Սուրբ Հոգուց, կգան նաև իմացության, նույն զորությամբ, որ Հիսուս Քրիստոսն աշխարհի Փրկիչն է, որ Ջոզեֆ Սմիթը նրա հայտնողն ու մարգարեն է այս վերջին օրերում, և որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին կրկին վերահաստատված Տիրոջ թագավորությունն է երկրի վրա՝ ի նախապատրաստություն Մեսիայի երկրորդ գալստյան»։[5]

Երբ որպես երիտասարդ միսիոներ մեկնում էի Չիլի, ես մի դաս սովորեցի Մորմոնի Գրքի դարձի բերող զորության մասին, որը փոխեց իմ կյանքը։ Պարոն Գոնսալեսը երկար տարիներ ծառայել էր իր եկեղեցու հարգված պաշտոններից մեկում։ Նա ստացել էր կրոնական խորացված ուսում, այդ թվում՝ ուներ աստվածաբանության գիտական աստիճան։ Նա հպարտ էր իր աստվածաշնչյան գիտելիքներով։ Մեզ համար պարզ էր, որ նա ապստամբ աշակերտ է լինելու։

Պարոն Գոնսալեսը քաջատեղյակ էր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներների մասին, երբ վերջիններս իրենց գործը կատարելով, այցելեցին նրա տունը Լիմայում (Պերու)։ Նա միշտ ցանկացել էր հանդիպել նրանց, որպեսզի դասեր տար Աստվածաշնչից։

Մի օր, ըստ նրա, կարծես նվեր լիներ երկնքից, երբ երկու միսիոներներ կանգնեցրին նրան փողոցում և հարցրին, թե արդյոք կցանկանա՞ր, որ գային իր տուն և կիսվեին իր հետ սուրբ գրություններով։ Դա նրա երազա՞նքն էր։ Նրա աղոթքները պատասխան ստացան։ Վերջապես, նա ճիշտ ուղու վրա կկանգնեցներ այս մորորված երիտասարդներին։

Պարոն Գոնսալեսն ասաց, որ ուրախ կլիներ, եթե նրանք գային իր տուն՝ քննարկելու սուրբ գրությունները։

Նա անհամբեր սպասում էր այդ հանդիպմանը։ Նա պատրաստ էր Աստվածաշնչի օգնությամբ հերքել նրանց հավատալիքները։ Պարոն Գոնսալեսը վստահ էր, որ Աստվածաշունչը հստակ ու համոզիչ կերպով կբացահայտի նրանց սխալ ուղին։ Նշանակված օրը եկավ և միսիոներները թակեցին դուռը։ Նա ոգևորված էր։ Վերջապես եկել էր ցանկալի պահը։

Նա բացեց դուռը և միսիոներներին ներս հրավիրեց։ Միսիոներներից մեկը, նրան տալով կապույտ գիրքը, անկեղծ վկայություն բերեց, որ ինքը գիտեր, որ այդ գիրքը պարունակում է Աստծո խոսքը։ Երկրորդ միսիոները իր զորավոր վկայությունն ավելացրեց գրքի մասին, վկայելով, որ այն թարգմանվել է Աստծո ժամանակակից մարգարեի կողմից, ում անունը Ջոզեֆ Սմիթ է, և որ այն պատմում է Քրիստոսի մասին։ Միսիոներները ներողություն խնդրեցին և հեռացան նրա տնից։

Պարոն Գոնսալեսը շատ շփոթված էր։ Բայց նա բացեց գիրքը և սկսեց թերթել էջերը։ Նա կարդաց առաջին էջը։ Ապա նա կարդաց մյուս էջը, հետո՝ հաջորդը և չդադարեց կարդալը մինչև հաջորդ օրվա կեսօր։ Նա կարդաց ամբողջ գիրքը և գիտեր, որ այն ճշմարիտ է։ Պարոն Գոնսալեսը գիտեր, թե ինչ պետք է աներ։ Նա կանչեց միսիոներներին, մասնակցեց նրանց զրույցներին և դադարեց իր սովորական կյանքով ապրել, դառնալով Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ։

Այդ բարի մարդը իմ ՄՊԿ-ի ուսուցիչն էր Պրովոյում (Յուտա)։ Եղբայր Գոնսալեսի դարձի գալու պատմությունը և Մորմոնի Գրքի զորությունը մեծ տպավորություն գործեցին ինձ վրա։

Երբ ես ժամանեցի Չիլի, իմ միսիայի նախագահը՝ նախագահ Ռոյդեն Ջ. Գլեյդը, մեզ հրավիրեց ամեն շաբաթ կարդալ Ջոզեֆ Սմիթ-Պատմությունում արձանագրված Մարգարե Ջոզեֆ Սմիթի վկայությունը։ Նա ուսուցանեց մեզ, որ Առաջին Տեսիլքի վկայությունը

ուղղակիորեն կազդի ավետարանի և Մորմոնի Գրքի մասին մեր սեփական վկայության վրա։

Ես ընդունեցի նրա հրավերը։ Ես կարդացել եմ Առաջին Տեսիլքի պատմությունները, կարդացել եմ Մորմոնի Գիրքը։ Ես աղոթել եմ, ինչպես ուղղորդել է Մորոնին և հարցրել եմ «Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով»[6], թե արդյո՞ք ճշմարիտ է Մորոնի Գիրքը։ Ես այսօր վկայում եմ, որ գիտեմ՝ Մորմոնի Գիրքը, ինչպես Մարգարե Ջոզեֆ Սմիթն է ասել. «ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից և մեր կրոնի պորտաքարն է, և ապրելով ըստ դրա ցուցումների, մարդ ավելի շատ կմոտենա Աստծուն, քան ըստ որևէ այլ գրքի ցուցումների»։[7] Մարգարե Ջոզեֆը նաև հայտարարել է. «Հեռացրեք Մորմոնի Գիրքը և հայտնությունները և որտե՞ղ կլինի մեր կրոնը։ Այն գոյություն չի ունենա»։[8]

Անձնական դարձի գործընթաց

Երբ մենք լավ ենք հասկանում, թե ովքեր ենք մենք և հասկանում ենք Մորմոնի Գրքի նպատակը, մեր դարձը խորանում է և դառնում ավելի հաստատուն։ Մենք վճռական ենք դառնում մեր պարտավորվածությամբ՝ պահելով մեր ուխտերը, որոնք կապել ենք Աստծո հետ։

Մորմոնի Գրքի սկզբունքային նպատակն է՝ հավաքել ցրված Իսրայելը։ Այս հավաքումը Աստծո բոլոր զավակներին հնարավորություն է տալիս կանգնել ուխտի ճանապարհի վրա և, պատվելով այդ ուխտերը, վերադառնալ Հոր ներկայությունը։ Ուսուցանելով և մկրտելով նորադարձներին, մենք հավաքում ենք ցրված Իսրայելը։

Մորմոնի Գիրքը Իսրայելի տանը վերաբերող 108 հղում ունի։ Մորմոնի Գրքի սկզբում Նեփին ասում է. «Քանզի իմ ողջ նպատակն է, որ ես կարողանամ համոզել մարդկանց՝ գալ դեպի Աբրահամի Աստվածը և Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը, և փրկվել»։[9] Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածը Հին Կտակարանի Աստվածն է՝ Հիսուս Քրիստոսը։ Մենք փրկվում ենք, երբ գալիս ենք Քրիստոսի մոտ, ապրելով Նրա ավետարանով։

Ավելի ուշ Նեփին գրել է.

«Այո, հայրս իսկապես շատ խոսեց հեթանոսների վերաբերյալ և նաև Իսրայելի տան վերաբերյալ, որ նրանց կարելի է նմանեցնել ձիթենու, որի ճյուղերը կկտրվեն և կցրվեն ողջ երկրի երեսով . . .

Եվ Իսրայելի տան ցրվելուց հետո նրանք նորից կհավաքվեն. կամ, ի վերջո, հեթանոսները Ավետարանի լրիվությունը ստանալուց հետո, ձիթենու բնական ճյուղերը, կամ Իսրայելի տան մնացորդը, կպատվաստվի կամ կգա ճշմարիտ Մեսիայի՝ իրենց Տիրոջ և իրենց Քավչի իմացությանը»:[10]

Նմանապես, Մորմոնի Գրքի վերջում Մորոնի Մարգարեն է հիշեցնում մեզ մեր ուխտերի մասին, ասելով. «Որ դու այլևս չձուլվես, որ Հավերժական Հոր ուխտերը, որոնք նա արել է քեզ հետ, ո՛վ Իսրայելի տուն, կատարվեն»:[11]

Հավերժական Հոր ուխտերը

Որո՞նք են Մորոնիի հիշատակած «Հավերժական Հոր ուխտերը»: Աբրահամի գրքում կարդում ենք.

«Իմ անունը Եհովա է, և ես ի սկզբանե գիտեմ վերջը. ուստի, իմ ձեռքը կլինի քո վրա:

Եվ ես քեզանից մեծ ազգ կշինեմ, և կօրհնեմ քեզ անչափ, և անունդ մեծ կդարձնեմ բոլոր ազգերի մեջ, և դու օրհնություն կլինես քո գալիք սերնդի համար, այնպես որ նրանք իրենց ձեռքերում կտանեն այս ծառայությունն ու Քահանայությունը բոլոր ազգերին»:[12]

Նախագահ Ռասել Մ. Նելսոնը վերջերս տեղի ունեցած համաշխարհային հեռարձակման ժամանակ ասել է. «այժմ անշուշտ վերջին օրերն *են*, և Տերն արագացնում է Իսրայելի հավաքման Իր աշխատանքը: Այդ հավաքումն այսօր երկրի վրա տեղի ունեցող ամենակարևոր իրադարձությունն է: Ոչինչ չի համեմատվի դրա հետ մեծությամբ, կարևորությամբ և փառահեղությամբ: Եվ եթե ցանկանաք՝ դուք կհանդիսանաք դրա մասը: Դուք կլինեք մասնիկը մի մեծ գործի, հսկա մի աշխատանքի և փառահեղ մի բանի:

«Երբ մենք խոսում ենք *հավաքման* մասին, մենք պարզապես ասում ենք այս հիմնարար ճշմարտությունը. մեր Երկնային Հոր զավակներից յուրաքանչյուրը, վարագույրի երկու կողմերում, արժանի է լսել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի ուղերձը: Նրանք իրենք են որոշում՝ թե արդյոք կցանկանան ավելին իմանալ»:[13]

Ահա, թե ինչ ենք մենք անում, որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ. մենք ձգտում ենք, որ աշխարհը հասկանա և դարձի գա դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը: Մենք «վերջին օրերի հավաքողներն ենք»:[14] Մեր առաքելությունը հստակ է: Եղբայրնե՛ր և քույրե՛ր, եկեք հայտնի լինենք որպես մարդիկ, ովքեր սրտանց ընդունել են Մորոնիի խոստումը և ստացել են պատասխանը, իմանալով՝ որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, և այնուհետև այդ գիտելիքով կիսվել մյուսների հետ խոսքով և, ամենակարևորը՝ գործով:

Մորմոնի Գրքի դերը դարձի գալու գործում

Մորմոնի Գիրքը պարունակում է Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը:[15] Այն տանում մեզ դեպի Հոր ուխտերը, որոնք եթե պահենք, կապահովեն, որ ստանանք Նրա մեծագույն պարգևը՝ հավերժական կյանքը:[16] Մորմոնի Գիրքը Երկնային Հոր բոլոր որդիների և դուստրերի դարձի գալու պորքատարն է:

Կրկին մեջբերեմ Նախագահ Նելսոնի խոսքերը. «Եթե դուք . . . ամեն օր կարդաք Մորմոնի Գիրքը, կիմանաք հավաքման վարդապետությունը, ճշմարտություններ Հիսուս Քրիստոսի, Նրա Քավության և Նրա ավետարանի լրիվության մասին, որոնք չկան Աստվածաշնչում: Մորմոնի Գիրքը առանցքային է Իսրայելի հավաքման գործում: Իրականում, եթե չլիներ Մորմոնի Գիրքը, Իսրայելի խոստացված հավաքումը տեղի չէր ունենա»:[17]

Թույլ տվեք ավարտել Փրկիչի խոսքերով, երբ Նա ուսուցանում էր նեփիացիներին խոստացված օրհնությունների մասին. «Դուք եք մարգարեների զավակները. և դուք Իսրայելի տնից եք. և դուք այն ուխտից եք, որ Հայրն արել էր ձեր հայրերի հետ՝ ասելով Աբրահամին. Եվ քո սերնդով երկրի բոլոր ցեղերը կօրհնվեն»:[18]

Ես վկայում եմ, որ մենք Աստծո որդիներն ու դուստրերն ենք, Աբրահամի սերունդը, Իսրայելի տունը: Մենք վերջին անգամ ենք հավաքում Իսրայելը և անում ենք դա Մորմոնի Գրքով՝ գիրք, որը Տիրոջ Հոգու հետ միասին, դարձի բերող ամենահզոր գործիքն է: Մենք առաջնորդվում ենք Աստծո մարգարե՝ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի կողմից, ով ղեկավարում է Իսրայելի հավաքումը մեր օրերում: Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Այն փոխել է իմ կյանքը: Ես խոստանում եմ, ինչպես խոստացել էր Մորոնին և շատ մարգարեներ դարերի ընթացքում, որ այն կարող է փոխել ձեր կյանքը նույնպես:[19] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Եկեղեցու նախագահների ուսմունքներ. Եզրա Թաֆթ Բենսոն* (2014), 129
2. «Ո՞րն է Մորմոնի Գրքի դերը» *Քարոզիր Իմ ավետարանը. Միսիոներական ծառայության ձեռնարկ,* rev. ed. (2018), lds.org/manual/missionary:
3. Մորոնի 10.4
4. Մորոնի 10.4
5. Մորմոնի Գրքի նախաբանը:
6. Մորոնի 10.4
7. Մորմոնի Գրքի նախաբանը:
8. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 196
9. 1 Նեփի 6.4
10. 1 Նեփի 10.12, 14
11. Մորոնի 10.31
12. Աբրահամ 2.8–9
13. Russell M. Nelson, "Hope of Israel" (worldwide youth devotional, June 3, 2018), 4, HopeofIsrael.lds.org.
14. Տես Հակոբ 5.72
15. Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ուսուցանել է. «Տերն Ինքն է հայտարարել, որ Մորմոնի Գիրքը պարունակում է «Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը» (ՎԱՈՒ 20.9): Դա չի նշանակում, որ այն պարունակում է երբևէ հայտնի դարձված ամեն ուսմունք, ամեն վարդապետություն: Ավելի շուտ դա նշանակում է, որ Մորմոնի Գրքում մենք կգտնենք այն վարդապետությունների լրիվությունը, որոնք պահանջվում են մեր փրկության համար: Եվ դրանք ուսուցանվում են հասկանալի և պարզ, որպեսզի նույնիսկ երեխաները կարողանան սովորել փրկության և վեհացման ուղիները» (*Ուսմունքներ. Եզրա Թաֆթ Բենսոն,* 131)
16. Տես Վարդապետություն և Ուխտեր 14.7
17. Russell M. Nelson, "Hope of Israel," 7.
18. 3 Նեփի 20.25
19. See, for example, Henry B. Eyring, "The Book of Mormon Will Change Your Life," *Liahona,* Feb. 2004, 12–16.

Երեց Նիլ Լ. Անդերսեն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Խոցվածը

Երկրային փորձությունների խաչմերուկում համբերությամբ առաջ գնացեք և Փրկիչի բուժիչ ուժը կբերի լույս, հասկացողություն, խաղաղություն և հույս:

2016թ. մարտի 22-ին՝ առավոտյան ժամը ութի սահմաններում, ահաբեկչական երկու ռումբ պայթեց Բրյուսելի օդանավակայանում: Քույր Ֆանի Քլեյնին պատրաստվում էր միսիայի ծառայություն իր թոռիչքին՝ դեպի Քլիվլենդ (Օհայո), և երեց Ռիչարդ Նորբին, երեց Մեյսոն Ուելսը և երեց Ջոզեֆ Էմփին ուղեկցել էին նրան Բրյուսելի օդանավակայան: Պայթյունը երեսուներկու մարդու կյանք խլեց և բոլոր միսիոներները վիրավորեցին:

Ամենալուրջ վնասվածքը ստացել էր 66-ամյա Երեց Ռիչարդ Նորբին, որը իր կնոջ՝ քույր Պամ Նորբիի հետ ծառայության մեջ էր:

Ռիչարդ Նորբին ապաքինվում է հիվանդանոցում:

Երեց Նորբին հիշում է այդ պահը.

«Ես, իսկույն, գլխի ընկա, թե ինչ է կատարվել:

Փորձեցի մի անվտանգ տեղ վազել, բայց անմիջապես վայր ընկա. . . . Նկատեցի, որ ձախ ոտքս խիստվնասվել էլ: [Նկատեցի], որ ձեռքերիս վրա սև սարդոստայնի պես՝ խեժանման մի բան սկսեց դուրս գալ: Նրբորեն փորձեցի մաքրել այն, սակայն հասկացա, որ խեժ չէր, այլ այրված մաշկս էր: Մեջքս նույնպես վնասվել էր և սպիտակ վերնաշապիկս կամաց-կամաց կարմրում էր:

Երբ տեղի ունեցածի գիտակցությունը լցրեց միտքս, ես շատ ուժեղ զգացում ունեցա, որ. . . . Փրկիչը գիտի թե որտեղ եմ ես, ինչ էր հենց նոր տեղի ունեցել, և թե ինչ էի զգում այդ պահին»:[1]

Առջևում դժվար օրեր էին Ռիչարդ Նորբիի և նրա կնոջ՝ Փամի համար: Նրան բուժական թմբիրի մեջ գցեցին, որին հետևեցին վիրահատություններ, վարակներ և մեծ անորոշության վիճակ:

Ռիչարդ Նորբին կենդանի մնաց, սակայն նրա կյանքը այլևս նույնը չի լինի: Երկու և կես տարի անց, նրա վերքերը դեռ բուժվում են. ոտքի բացակայող մասին երկաթակապ է փոխարինում. ամեն քայլ տարբերվում

Ռիչարդ և Փայմ Նորբիները։

է նրանից, ինչ Բրյուսելի օդանավակայանի այդ պահից առաջ էր։

Ինչո՞ւ այդ ամենը տեղի ունեցավ Ռիչարդ և Փամ Նորբիների հետ։[2] Նրանք հավատարիմ էին եղել իրենց ուխտերին, ևս մեկ միսիա էին ծառայել՝ Կոտ դ'Իվուարում, և հրաշալի ընտանիք էին մեծացրել։ Ինչ-որ մեկը տրամաբանելով՝ կասի, «Արդար չէ։ Պարզապես արդար չէ։ Նրանք իրենց կյանքը նվիրել էին Հիսուս Քրիստոսի ավետարանին. ինչպե՞ս կարող էր դա տեղի ունենալ»։

Սա մահկանացու կյանք է

Մանրամասները տարբերվում են, բայց ողբերգությունները, անակնկալ ստուգարքներն ու փորձությունները՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր, պատահում են յուրաքանչյուրիս հետ, քանի որ սա մահկանացու կյանք է։

Մտածելով համաժողովի միայն այս առավոտվա խոսնակների մասին, ես հասկացա, որ նրանցից երկուսի զավակներն ու երեքի թոռները անսպասելիորեն իրենց երկնային տուն են վերադարձել։ Ոչ ոք զերծ չի մնացել հիվանդությունից ու տխրությունից, և ինչպես ասվեց, հենց այս շաբաթ, երկրային հրեշտակներից մեկը, ում բոլորս սիրում ենք՝ Քույր Բարբարա Բալլարդը, մեղմորեն անցավ վարագույրի մյուս կողմը։ Նախագահ Բալլարդ, մենք երբեք չենք մոռանա այս առավոտվա ձեր վկայությունը։

Մենք երջանկություն ենք որոնում։ Մենք խաղաղություն ենք փափագում։ Մենք սիրո հույս ունենք։ Եվ Տերը զարմանահրաշ օրհնություններ է առատորեն թափում մեզ վրա։ Բայց ուրախությանն ու երջանկությանը միահյուսված մի բան կա. կլինեն պահեր, ժամեր, օրեր, երբեմն տարիներ, երբ ձեր հոգին վիրավորանք կզգա։

Սուրբ գրություններն ուսուցանում են, որ մենք ճաշակելու ենք և՛ դառնություն, և՛ քաղցրություն,[3] և որ լինելու է «հակադրություն բոլոր բաներում»։[4] Հիսուսն ասել է. «[Հայրը] իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վերայ, և անձրև է բերում արդարների և անիրաւների վերայ»։[5]

Հոգու վերքերը չեն գալիս հարստության կամ աղքատության հետ, բնորոշ չեն որևէ մշակույթի, ոչ էլ ազգի կամ սերնդի։ Նրանք հասնում են բոլորին ու այն դասերի մասն են, որ սովորում ենք այս մահկանացու փորձառության ընթացքում։

Արդարները անխոցելի չեն

Իմ այսօրվա ուղերձը հատկապես այն մարդկանց համար է, ովքեր պահում են Աստծո պատվիրանները, պահում են Աստծուն տված խոստումները և Նորբիների նման ու աշխարհասփյուռ այս լսարանի ուրիշ շատ տղամարդկանց, կանանց ու երեխաների նման, դիմակայում են անսպասելի ու ցավոտ փորձությունների ու մարտահրավերների։

Մեր վերքերը կարող են լինել բնական աղետի կամ դժբախտ պատահարի հետևանք։ Նրանք կարող են գալ անհավատարիմ ամուսնուց կամ կնոջից՝ տակնուվրա անելով արդար կողակցի ու երեխաների կյանքը։ Վերքեր կարող են հասցնել ընկճախտի խավարն ու մռայլությունը, անսպասելի հիվանդությունը, հարազատի տառապանքը կամ վաղաժամ մահը, հավատը մերժող ընտանիքի անդամի համար եկող տխրությունը, հանգամանքների բերումով հավերժական զուգընկեր չունենալու միայնակությունը կամ հարյուրավոր այլ տանջող, ցավալի «[վշտեր], որ աչքը չի տեսել»[6]։

Բոլորս հասկանում ենք, որ դժվարությունները կյանքի մի մասն են, բայց երբ անձամբ մեզ է հասնում, կարծես մեզ շնչակտուր է անում։ Առանց տագնապի՝ մենք պետք է պատրաստ լինենք։ Պետրոս առաքյալն ասել է. «Օտար բան մի համարեք այն բորբոքված նեղությունը որ ձեզ փորձելու համար լինում է, իբր թե մի օտար բան է պատահում ձեզ»։[7] Մեր Հոր ծրագրում երջանկության և ուրախության վառ գույնի թելերին միահյուսված են նաև փորձությունների և ողբերգության մուգ գույները։ Հաղթահարելը դժվար է, բայց մեր ամենամեծ դասերը հաճախ սովորում ենք հենց այդ ջանքերից։[8]

Հելամանի 2060 պատանի մարտիկների զարմանահրաշ պատմությունը հիշատակելիս, մենք սիրով վկայակոչում ենք հետևյալ սուրբ գրությունը. «Համաձայն Աստծո բարության և ի մեծ զարմանս մեզ, և նաև ի ուրախություն մեր ողջ բանակի, չկար նրանցից մեկ հոգի, որ մեռած լիներ»։

Ապա նախադասությունը շարունակվում է. «Եվ ոչ էլ կար մի հոգի նրանց մեջ, որ ստացած չլիներ շատ վերքեր»։[9] 2060 պատանիներից յուրաքանչյուրը ինչ-որ ձևով վիրավորվել էր, և յուրաքանչյուրս էլ կյանքի ճակատամարտում ինչ-որ կերպ վիրավորանք կստանանք՝ ֆիզիկական, թե հոգևոր, թե երկուսից էլ։

Հիսուս Քրիստոսը մեր բարի Սամարացին է։

Երբեք մի հանձնվեք, որքան էլ խորը լինեն ձեր հոգու վերքերը, ինչպիսին էլ լինի դրանց աղբյուրը, որտեղ և երբ էլ հասցված լինեն ձեզ, որքան էլ դրանք կարճ կամ երկար տևեն, դուք մատնված չեք հոգևոր կորստյան։ Ձեզ համար նախատեսված է հոգեպես գոյատևել և ծաղկել Աստծո հանդեպ ձեր հավատքով ու վստահությամբ։

Աստված այնպես չի ստեղծել մեր հոգիները, որ Իրենից անկախ ապրենք։ Մեր Տերը և Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, Իր Քավության անզուգական պարգևի շնորհիվ, ոչ միայն փրկում է մեզ մահից և, ապաշխարության միջոցով մեզ առաջարկում է ներում մեր մեղքերի համար, այլ նաև պատրաստ է փրկել մեզ մեր վիրավոր հոգու ցավերից ու վերքերից։[10]

Փրկիչը մեր Բարի Սամարացին է,[11] ով ուղարկված է «սրտով կոտրուածներին բժշկելու»։[12] Նա մոտենում է մեզ այն ժամանակ,

երբ մյուսները անցնում են կողքով: Կարեկից ձևով Նա բուժիչ բալասան է քսում ու փաթաթում է մեր խոցերը: Նա տանում է մեզ: Նա հոգում է մեր մասին: Նա մեզ հրավիրում է. «Եկեք ինձ մոտ . . . և ես կբժշկեմ ձեզ»:[13]

«Եվ [Հիսուսը] պիտի . . . [տանի] ցավեր և չարչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի . . . որպեսզի . . . վեր առնի իր վրա իր ժողովրդի ցավերն ու հիվանդությունները . . . [Իր վրա] վեր կառնի [մեր] թուլությունները, որպեսզի նրա սիրտը լցվի ողորմությամբ»:[14]

Եկեք անմխիթար սրտեր, որ պապակում եք.
Ողորմության գահի մոտ ջերմեռանդ աղոթեք:
Վիրավոր սիրտը բացեք, ցավերը ձեր հայտնեք:
Երկրային բոլոր վշտերը երկնային սիրով բուժեք:[15]

Մարգարե Ջոզեֆի մեծ տառապանքի ժամին Տերը նրան ասաց. «Այս բոլոր բաները փորձառություն կտան քեզ և կլինեն քո օգտի համար»:[16] Ինչպե՞ս կարող են ցավոտ վերքերը մեր բարիքի համար լինել: Երկրային փորձությունների խաչմերուկում, համբերությամբ առաջ գնացեք և Փրկիչի բուժիչ ուժը կբերի լույս, հասկացողություն, խաղաղություն և հույս:[17]

Երբեք անձնատուր մի եղեք

Աղոթեք ձեր ողջ սրտով: Ամրացրեք ձեր հավատքը Հիսուս Քրիստոսի, Նրա իրականության՝ Նրա շնորհի հանդեպ: Կառչեք նրա խոսքերից. «Բավական է քեզ իմ շնորհքը, որովհետև իմ զորությունը տկարության մեջ է կատարվում»[18]:

Հիշե՛ք, ապաշխարությունը զորավոր հոգևոր դեղամիջոց է:[19] Պահեք պատվիրանները և արժանի եղեք Մխիթարիչին, հիշելով, որ Փրկիչը խոստացել է. «Ձեզ որբ չեմ թողիլ. կգամ ձեզ մոտ»:[20]

Տաճարի խաղաղությունը բալասան է վիրավոր հոգու համար: Որքան հնարավոր է, հաճախ Տիրոջ տուն վերադարձեք վիրավոր հոգով ու ձեր տոհմածառի անուններով: Տաճարը մահկանացու կյանքի մեր կարճ ակնթարթը ներկայացնում է հավերժության լայն էկրանին:[21]

Նայեք հետ, հիշելով, որ նախաերկրային ձեր գոյավիճակում դուք ապացուցել եք ձեր արժանավորությունը: Դուք Աստծո քաջարի զավակն եք և Նրա օգնությամբ կարող եք հաղթել այս ընկած աշխարհի մարտերում: Դուք արել եք դա նախկինում և հիմա ևս կարող եք անել այդ:

Առաջ նայեք: Ձեր անհանգստություններն ու վշտերը շատ իրական են, սակայն նրանք հավերժ չեն տևի:[22] Մութ գիշերը կանցնի, քանի որ ձեր համար պիտի «Որդին բարձրանա՝ իր թևերի մեջ ունենալով բժշկություն»[23]

Նորբիները ինձ ասացին. «Ժամանակ առ ժամանակ հիասթափությունը հյուր է գալիս, բայց մենք երբեք թույլ չենք տալիս, որ այն մնա»:[24] Պողոս Առաքյալը այսպես է ասել. «Նեղուած ենք, բայց չենք ճնշուած. կարօտ ենք, բայց չենք տարակուսել. Հալածուած, բայց երեսից չ'ընկած. վայր ընկած, բայց չ'կորած»:[25] Ձեր ուժերը հնարավոր է սպառվում են, բայց մի հանձնվեք:[26]

Նույնիսկ ձեր ցավոտ վերքերի մեջ, բնազդաբար, դուք օգնության ձեռք կմեկնեք ուրիշներին, վստահելով Տիրոջ խոստմանը. «Որովհետեւ ով որ իր անձը կորցնէ ինձ համար՝ կ'գտնէ նորան»:[27] Ուրիշների խոցերը փաթաթող վիրավոր մարդիկ Աստծո հրեշտակներն են երկրի վրա:

Ընդամենը մի քանի ռոպեից մենք կլսենք մեր սիրելի մարգարեին՝



1995թ. ապրիլի գերագույն համաժողովին, խոսելով վերջերս մահացած իր դստեր՝ Էմիլիի մասին, Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը վկայեց, որ Հիսուս Քրիստոսը կրում է Հարության բանալիները:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին, մի մարդ, որը անկոտրում հավատք ունի Հիսուս Քրիստոսի հանդեպ, հույսի և խաղաղության մարդ է՝ Աստծո կողմից սիրված, բայց հոգու խոցերից զերծ չմնացած:

1995 թվականին նրա դստեր՝ Էմիլիի մոտ հղիության ժամանակ քաղցկեղ հայտնաբերեցին: Երբ նրա երեխան առողջ ծնվեց, հույսի ու երջանկության օրեր եղան: Սակայն քաղցկեղը վերադարձավ և նրա սիրելի Էմիլին հրաժեշտ տվեց այս կյանքին իր 37-րդ տարեդարձից միայն երկու շաբաթ անց՝ թողնելով իր սիրելի ամուսնուն և հինգ երեխաներին:

Նրա մահից կարճ ժամանակ անց Նախագահ Նելսոնը վստահեցրեց. «Ցավի արցունքներս հոսում էին, ցանկությունների հետ միասին, որ

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ասել է Պուերտո Ռիկոյի Սրբերին. «Պահելով Աստծո պատվիրանները, մենք կարող ենք ուրախություն գտնել նույնիսկ մեր ամենավատ հանգամանքներում»:

գուցե ավելին կարողանայի անել մեր աղջկա համար. . . . Եթե ինձ հարության զորություն տրված լիներ, գուցե ես ցանկանայի նրան ետ վերադարձնել. . . . [Բայց] այդ բանալիները տրված են Հիսուս Քրիստոսին և նա կօգտագործի այն Էմիլիի համար . . . ինչպեսև մյուս բոլոր մարդկանց համար՝ Տիրոջ ժամանակին»:[28]

Անցյալ ամիս Պուերտո Ռիկոյի Սրբերին այցելելիս, հիշելով անցյալ տարվա կործանարար փոթորիկը, Նախագահ Նելսոնը սիրո ու կարեկցանքի խոսքեր ասաց.

«[Սա] կյանքի մասն է կազմում: Մենք դրա համար ենք այստեղ: Մենք այստեղ ենք մարմին ունենալու, փորձվելու և ստուգարք անցնելու համար: Այդ ստուգարքներից մի քանիսը ֆիզիկական են. մի քանիսը հոգևոր են. այստեղ ձեր անցած փորձությունները թե՛ ֆիզիկական են եղել և թե՛ հոգևոր»:[29]

«Դուք չեք հանձնվել: Մենք [մեծապես] հպարտանում ենք ձեզանով: Դո՛ւք, հավատարիմ Սրբեր, շատ բան եք կորցրել, բայց այդ ամենով անցնելը խթանել է ձեր հավատքը Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ»:[30]

«Աստծո պատվիրանները պահելով, մենք կարող ենք ուրախություն գտնել նույնիսկ մեր ամենավատ հանգամանքներում»:[31]

Բոլորի արտասուքը կջնջվի

Իմ եղբայրնե՛ր և քույրե՛ր, խոստանում եմ ձեզ, որ Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի ավելացումը ձեզ ուժ ու ավելի մեծ հույս կհաղորդի: Մեր հոգիների բժիշկը, Իր ժամանակին և Իր ձևով կբժշկի ձեր՝ արդարներիդ վերքերը:[32] Ոչ մի անարդարություն, ոչ մի հալածանք, ոչ մի փորձություն, ոչ մի կսկիծ, ոչ մի ցավ, ոչ մի տառապանք, ոչ մի վերք՝ որքան խորը, որքան էլ ցավոտ լինի, ոչ մեկը դուրս չի մնա մխիթարությունից, խաղաղությունից և տևական հույսից Նրա, ում բաց ձեռքերն ու խոցված ձեռքերը կընդունեն մեզ Իր ներկայության մեջ: Հովհաննես Առաքյալը վկայում է, որ այն օրը արդարները, «որ գալիս են այն մեծ նեղութիւնիցը»[33] կկանգնեն «սպիտակ հանդերձներ հագած. . . . Աստուծոյ աթոռի առաջին»: Գառը կբնակվե «[մեր] մեջ և Աստուած կ՚սրբէ ամեն արտասուքը [մեր] աչքերիցը»:[34] Այդ օրը գալու է: Ես վկայում եմ այդ մասին Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Անձնական զրույց, հունվ. 26, 2018:
2. Այս տարվա սկզբին մեր զրույցում Ռիչարդ Նորբին ասաց ինձ. «Մենք պատրաստ ենք մեզ տրվածին ճիշտ արձագանքել»: Նա կիսվել է իր հուշատետրից. «Ստուգարքներն ու փորձությունները, որ գալիս են յուրաքանչյուրիս, հնարավորություն և արտոնություն են տալիս՝ ավելի լավ ճանաչելու Փրկչին և ավելի խորությամբ հասկանալ նրա քավիչ զոհաբերությունը: Նրա վրա ենք հենվում: Նրան ենք փնտրում: Նրան ենք ապավինում: Նրան ենք վստահում: Նրան ենք ողջ սրտով սիրում՝ առանց վերապահումների: Փրկիչը ծածկել է ֆիզիկական և էմոցիոնալ բոլոր ցավերը, որոնք մահկանացու կյանքի մասն են: Նա տանում է մեր ցավերը: Մեր վշտերը կուլ են գնում նրանում»:
3. Տես Վարդապետություն և Ուխտեր 29.39:
4. 2 Նեփի 2.11
5. Մատթեոս 5.45
6. “Lord, I Would Follow Thee,” *Hymns,* no. 220.
7. Ա Պետրոս 4.12
8. «Մենք նրանց կստուգենք, որպեսզի տեսնենք, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կպատվիրի նրանց»: (Աբրահամ 3.25, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 101.4–5):
9. Ալմա 57.25:
10. Ընկերներիցս մեկը գրել է ինձ. «Զգացմունքային «խավարի ու մշուշի» դեմ գրեթե հինգ տարի տևած պայքարը տարբեր աստիճանով ձեզ մոտեցնում է ձեր ունակությունների՝ վճռականության, հավատքի ու համբերության զգաթնակետին: «Տառապանքի» օրերից հետո հոգնում ես: «Տառապանքի» շաբաթներից հետո ուժերդ սպառվում են: «Տառապանքի» ամիսներից հետո գետինը փախչում է ոտքիդ տակից: «Տառապանքի» տարիներից հետո, տրվում ես այն մտքին, հնարավոր է, երբեք այլևս լավ չես զգա: Հույսը դառնում է ամենաթանկարժեք ու գրավիչ պարգևը: Կարճ ասած, վստահ չեմ, որ գիտեմ, թե ինչպես կանցնեի այս փորձության միջով, եթե չլիներ [Փրկիչը]: Դա միակ բացատրությունն է: Չեմ կարող բացատրել, թե ինչպես եմ եկել այդ հասկացողությանը, բայց եկել եմ: Նրա շնորհիվ ես հաղթահարեցի այս ամենը»:
11. Տես Ղուկաս 10.30–35
12. Ղուկաս 18.14. տես նաև Եսայիա 61.1
13. 3 Նեփի 18.32
14. Ալմա 7.11–12 «Նա, ով վեր ելավ բարձր, ինչպես և, վայր իջավ բոլոր բաներից ցած, որով և ըմբռնեց բոլոր բաները» (Վարդապետություն և Ուխտեր 88.6):
15. “Come, Ye Disconsolate,” *Hymns,* no. 115.
16. Վարդապետություն և Ուխտեր 122.7
17. «Դու գիտես Աստծո մեծությունը. և նա կնվիրագործի քո չարչարանքները քո օգտի համար»: (2 Նեփի 2.2): «Ես գիտեմ, որ ովքեր որ դնեն իրենց վստահությունն Աստծո վրա, պիտի սատարվեն իրենց փորձանքների, և իրենց տագնապների, և իրենց չարչարանքների մեջ, և պիտի բարձրացվեն վերջին օրը»: (Ալմա 36.3):
18. Բ Կորնթացիս 12.9
19. See Neil L. Andersen, “The Joy of Becoming Clean,” *Ensign,* Apr. 1995, 50–53.
20. Հովհաննես 14.18
21. «Եթէ միայն այս կեանքումն ունինք յոյս Քրիստոսի վերայ, ամեն մարդկանցից աւելի ողորմելի ենք» (Ա Կորնթացիս ԺԵ.19):
22. Մորմոնի գրքի այս հատվածում Նեփին բացատրել է, որ տեսել է. «շատ չարչարանքներ [իր] օրերի ընթացքում» (1 Նեփի 1.1): Ավելի ուշ, Նեփին ասել է. «Այնուամենայնիվ, իմ Աստծուն էի նայում ես և ողջ օրը գովք էի անում նրան. և չէի տրտնջում Տիրոջ դեմ՝ իմ չարչարանքների պատճառով»: (1 Նեփի 18.16):
23. 3 Նեփի 25.2
24. Անձնական զրույց, հունվ. 26, 2018:
25. Բ Կորնթացիս 4.8–9
26. Նախագահ Հյու Բ. Բրաունին Իսրայել այցելելու ժամանակ հարց տվեցին, թե ինչու էր Աբրահամին պատվիրվել զոհաբերել իր որդուն: Նա պատասխանել էր. «Աբրահամը պետք է ճանաչեր, թե ով է Աբրահամը» (in Truman G. Madsen, *Joseph Smith the Prophet* [1989], 93):
27. Մատթեոս 16.25
28. Russell M. Nelson, “Children of the Covenant,” *Ensign,* May 1995, 32.
29. Russell M. Nelson, in Jason Swensen, “Better Days Are Ahead for the People of Puerto Rico,” *Church News,* Sept. 9, 2018, 4.
30. Russell M. Nelson, in Swensen, “Better Days Are Ahead,” 3.
31. Russell M. Nelson, in Swensen, “Better Days Are Ahead,” 4.
32. See Russell M. Nelson, “Jesus Christ—the Master Healer,” *Liahona,* Nov. 2005, 85–88.
33. Հայտնություն 7.14
34. Տես Հայտնություն 7.13, 15, 17:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Եկեղեցու ճիշտ անունը

Հիսուս Քրիստոսը ցուցում է տվել Եկեղեցին կոչել Իր անունով, որովհետև սա Իր Եկեղեցին է՝ լցված Իր զորությամբ։

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, այս գեղեցիկ Հանգստության օրը միասին հրճվում ենք Տիրոջ տված մեր բազում օրհնություններ ի համար։ Մենք անչափ երախտապարտ ենք Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի մասին ձեր վկայությունների և այն զոհաբերությունների համար, որոնք դուք կատարել եք Նրա ուխտի ուղու վրա մնալու կամ այդ ուղին վերադառնալու համար, և Նրա Եկեղեցում ձեր նվիրված ծառայության համար։

Այսօր, ես հարկադրված եմ ձեզ հետ խոսել մեծ կարևորություն ունեցող հարցի մասին։ Մի քանի շաբաթ առաջ ես հայտարարություն արեցի Եկեղեցու անվան ուղղման վերաբերյալ։[1] Ես դա արեցի, քանի որ Տերը ինձ հուշում տվեց անվանման կարևորության մասին, որը Նա կարգել է Իր Եկեղեցու համար, այն է՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի։[2]

Ինչպես և սպասվում էր, այս հայտարարության և վերանայված ուղեցույցի [3] մասին արձագանքները տարբեր են եղել։ Անդամներից շատերն անմիջապես շտկեցին Եկեղեցու անունն իրենց բլոգներում և սոցիալական լրատվամիջոցներում։ Ոմանք էլ հարցնում էին, թե ինչո՞ւ այն ամենի հետ մեկտեղ, ինչ կատարվում է աշխարհում, անհրաժե՞շտ էր ընդգծել այդպիսի «անկարևոր» մի բան։ Իսկ, ոմանք մտածում էին, որ դա չի կարող իրականացվել, ապա ինչո՞ւ փորձել։ Թույլ տվեք բացատրել, թե ինչո՞ւ է այդ հարցն այդքան կարևոր մեզ համար։ Բայց, նախ թույլ տվեք ասել, թե դա իրենից ինչ *չի* ենթադրում.

- Դա անվանման փոփոխություն չէ։
- Այն ավելի գրավիչ չենք դարձնում։
- Դա արտաքին փոփոխություն չէ։
- Դա քմահաճույք չէ։
- Եվ դա անկարևոր չէ։

Հակառակը՝ այն ուղղում է։ Դա Տիրոջ հրամանն է։ Ջոզեֆ Սմիթը Եկեղեցին չի անվանակոչել, ոչ էլ Մորմոնն է դա արել։ Փրկիչն ինքն ասաց. «Քանզի այսպես պիտի կոչվի իմ եկեղեցին վերջին օրերին, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի»։[4]

Նույնիսկ, ավելի վաղ, 34-րդ տարում, մեր հարություն առած Տերը նման հրահանգ տվեց իր Եկեղեցու անդամներին, երբ նրանց այցելեց Ամերիկա մայրցամաք։ Այդ ժամանակ նա ասաց.

«Դուք պիտի կոչեք եկեղեցին իմ անունով։ . . .

Եվ ի՞նչպես կլինի այն իմ եկեղեցին, եթե այն կոչված չլինի իմ անունով։ Քանզի, եթե մի եկեղեցի կոչվի Մովսեսի անունով, ուրեմն դա կլինի Մովսեսի եկեղեցին. կամ եթե այն կոչված լինի մարդու անունով, ուրեմն դա կլինի մարդու եկեղեցի. բայց եթե այն կոչված լինի իմ անունով, ուրեմն դա իմ եկեղեցին է»։[5]

Այսպիսով, Եկեղեցու անունը սակարկելի չէ։ Երբ Փրկիչը հստակ ասում է, թե ինչ պետք է լինի Նրա Եկեղեցու անունը, և նույնիսկ նախորդում է Նրա հայտարարությունը, «Քանզի այսպես պիտի կոչվի իմ եկեղեցին», ապա Նա լուրջ է խոսում։ Եվ եթե թույլ տանք, որ մականուն օգտագործվի, ընդունենք կամ նույնիսկ ինքներս տարածենք այդ մականունները, ապա կվիրավորենք Նրան։

Ի՞նչ արժեք ունի անունը կամ այս դեպքում՝ մականունը։ Երբ խոսքը գնում է Եկեղեցու մականունների մասին, ինչպես՝ «ՎՕՍ Եկեղեցի», «Մորմոնական Եկեղեցի» կամ «Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի»,

ամենակոպիտ բացթողումը Փրկիչի անվան *բացակայությունն* է: Տիրոջ անունը Տիրոջ Եկեղեցու վրայից հանելով սատանան մեծ հաղթանակ է տանում: Երբ *հեռացնում* ենք Փրկիչի անունը, մենք նրբորեն *անտեսում ենք* այն ամենը, ինչ Հիսուս Քրիստոսը արել է մեզ համար, անգամ՝ Նրա Քավությունը:

Դիտարկենք դա Նրա տեսանկյունից. Նախաերկրային կյանքում Նա Եհովան էր, Հին Կտակարանի Աստվածը: Իր Հոր ղեկավարության ներքո Նա ստեղծեց այս և մյուս աշխարհները:[6] Նա Իր կամքը հնազանդեցրեց Հոր կամքին և ինչ-որ բան արեց Աստծո բոլոր զավակների համար, որը մեկ այլ մարդ չէր կարող անել: Թողնելով Իր փառքը Երկիր գալու համար՝ որպես մարմնով Հոր Միածին, Նրան դաժանորեն անարգեցին, ծաղրեցին, թքեցին Նրա վրա և ծեծեցին: Գեթսեմանի պարտեզում մեր Փրկիչն Իր վրա վերցրեց *ամեն* ցավ, *ամեն* մեղք և *բոլոր* տառապանքերն ու չարչարանքները, որոնք *երբևէ* ունեցել ենք ես և դուք և բոլոր նրանց, ովքեր երբևէ ապրել են կամ կապրեն: Այդ տանջալից բեռի տակ Նա արյունահոսեց յուրաքանչյուր ծակոտիից:[7] Այդ տառապանքն ուժգնացավ, քանի որ Նա դաժանորեն խաչվեց Գողգոթայի խաչին:

Այս տանջալից փորձառությունների և Նրա հետագա Հարության շնորհիվ, Իր անսահման Քավության շնորհիվ, Նա անմահություն տվեց բոլորին և մեզանից յուրաքանչյուրին փրկագնեց մեղքի հետևանքներից՝ մեր ապաշխարելու պայմանով:

Փրկիչի Հարությունից և Նրա Առաքյալների մահվանից հետո աշխարհը հարյուրամյակներ շարունակ խավարի մեջ մնաց: Ապա, 1820 թ-ին Աստված Հայրը և Նրա Որդին, Հիսուս Քրիստոսը, հայտնվեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթին՝ Տիրոջ Եկեղեցու Վերականգնումը սկսելու համար:

Այն բոլորից հետո, ինչ Նա տարավ, այն բոլորից հետո, ինչ Նա արեց մարդկության համար, խորը ափսոսանքով ես գիտակցում եմ, որ մենք ակամայից համաձայնվել ենք, որ Տիրոջ վերականգնված Եկեղեցին կոչվի ուրիշ անուններով, որոնցից յուրաքանչյուրը հեռացնում է Հիսուս Քրիստոսի սուրբ անունը:

Ամեն կիրակի արժանիորեն ընդունելով հաղորդությունը, մենք կրկին Երկնային Հորը սրբազան խոստում ենք տալիս, որ պատրաստ ենք վերցնել մեզ վրա Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունը:[8] Մենք խոստանում ենք հետևել Նրան, ապաշխարել, պահել Նրա պատվիրանները և *միշտ* հիշել Նրան:

Երբ անտեսում ենք Նրա անունը Իր Եկեղեցուց, մենք անզգուշաբար հեռացնում ենք *Նրան* մեր կյանքի կիզակետից:

Փրկիչի անունը մեր վրա վերցնելը ներառում է մեր գործողությունների և մեր խոսքերի միջոցով քարոզել ուրիշներին և վկայել, որ Հիսուսը Քրիստոսն է: Արդյո՞ք մենք այնքան ենք վախեցել *վիրավորել* մեկին, ով մեզ «Մորմոններ» է կոչել, որ չենք *պաշտպանել* Փրկիչին՝ պաշտպանելով Նրան այն անունով, որով Նրա Եկեղեցին կոչվում է:

Եթե որպես ժողովուրդ և որպես անհատներ, մենք պետք է ունենանք Հիսուս Քրիստոսի Քավության զորությունը, որ մաքրի և բժշկի մեզ, ամրացնի և զորացնի մեզ և ի վերջո՝ վեհացնի մեզ, ապա ակնհայտորեն մենք պետք է ընդունենք Նրան, որպես այդ զորության աղբյուր: Մենք կարող ենք սկսել և կոչել Նրա Եկեղեցին այն անունով, որը Նա կարգել է:

Աշխարհի մեծ մասի համար Տիրոջ Եկեղեցին ներկայումս քողարկված է որպես «Մորմոնների եկեղեցի»: Բայց մենք, որպես Տիրոջ Եկեղեցու անդամներ, գիտենք, թե ով է կանգնած նրա գլխին. Ինքը՝ Հիսուս Քրիստոսը: Ցավոք, շատերը, ովքեր լսում են *Մորմոն* բառը, կարող են մտածել, որ մենք երկրպագում ենք Մորմոնին: Այդպես չէ: Մենք մեծարում ու հարգում ենք Ամերիկա մայրցամաքում ապրած այդ հրաշալի մարգարեին:[9] Բայց մենք Մորմոնի աշակերտները *չենք:* Մենք Տիրոջ աշակերտներն ենք:

Վերականգնված Եկեղեցու վաղ օրերին, *Մորմոնների Եկեղեցի* և *Մորմոններ*[10] եզրույթները հաճախ օգտագործվում էին որպես մականուններ՝ որպես դաժան, վիրավորական եզրույթներ, որոնք ստեղծվել էին Հիսուս Քրիստոսի Եկեղեցուց Աստծո ազդեցությունը թաքցնելու նպատակով:[11]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, կան աշխարհիկ շատ փաստարկներ՝ Եկեղեցու ճիշտ անունը վերականգնելու դեմ: Քանի որ թվային աշխարհում, որտեղ մենք ապրում ենք և որոնիչի օպտիմալացումն օգնում է մեզ բոլորիս տվյալները գտնել գրեթե անմիջապես, ներառյալ Տիրոջ Եկեղեցու մասին տվյալներ, քննադատներն ասում են, որ այս դեպքում ուղղումներն անխոհեմ են: Մյուսները կարծում են, քանի որ մենք այնքան լայնորեն հայտնի ենք որպես «Մորմոններ» և որպես «Մորմոնների եկեղեցի», մենք պետք է օգտվենք դրանից և ընդունենք դա:

Եթե սա լիներ մարդու կողմից ստեղծված կազմակերպության ապրանքանիշի ներկայացման քննարկում, ապա այդ

փաստարկները համոզիչ կլինեին: Բայց այս վճռական հարցում մենք նայում ենք Նրան, ում Եկեղեցին է սա, և հասկանում ենք, որ Տիրոջ ճանապարհները չեն նմանվել և չեն նմանվի մարդու ճանապարհներին: Եթե մենք համբերատար լինենք և լավ կատարենք գործի մեր բաժինը, Տերը կառաջնորդի մեզ այս դժվարին խնդրի լուծման գործում: Ի վերջո, մենք գիտենք, որ Տերն օգնում է նրանց, ովքեր ձգտում են կատարել Իր կամքը, ճիշտ այնպես, ինչպես Նա օգնեց Նեփիին իրագործել առաջադրանքը և նավ կառուցել ծովը հատելու համար:[12]

Մենք կցանկանանք լինել քաղաքավարի և համբերատար այս սխալներն ուղղելու մեր ջանքերում: Պատասխանատու լրատվամիջոցները բարեհաճ կլինեն մեր խնդրանքին արձագանքելիս:

Նախորդ Գերագույն համաժողովում Երեց Բենջամին դե Հոյոսը խոսեց նման դեպքի մասին: Նա ասել է.

«Մի քանի տարի առաջ, երբ Մեքսիկայում ծառայում էի Եկեղեցու հանրային կապերի գրասենյակում, [ինձ ու զուգընկերոջս] հրավիրեցին մասնակցելու ռադիո թոք-շոուի: [Ծրագրի ռեժիսորներից մեկը] հարցրեց մեզ. «Ինչո՞ւ Եկեղեցին այդքան երկար անվանում ունի»: . . .

Ի պատասխան այդ հրաշալի հարցին ես և իմ ուղեկիցը ժպտացինք, ապա սկսեցինք բացատրել, որ եկեղեցու անվանումը մարդկանց կողմից չի ընտրվել: Այն տրվել էր Փրկիչի կողմից: . . . Հաղորդավարն անմիջապես և հարգանքով պատասխանեց. «Այդ դեպքում մենք կկրկնենք այն մեծ հաճույքով»:[13]

Այդ հաշվետվության մեջ օրինաչափություն կա: Որպես անհատներ մեր լավագույն ջանքերը կպահանջեն մեկ առ մեկ ուղղել այն սխալները, որոնք տարիների ընթացքում ընդունելի են դարձել:[14] Մնացած աշխարհը կարող է հետևել կամ չհետևել մեր օրինակին՝ մեզ կոչելով ճիշտ անվամբ: Բայց մեր կողմից անազնիվ կլինի հուսահատվել, որ աշխարհի մեծ մասը Եկեղեցին և նրա անդամներին կոչում է սխալ անուններով, եթե մենք էլ նույնն ենք անում:

Մեր ոճի վերանայված ուղեցույցը օգտակար է: Այնտեղ ասվում է. «Առաջին վկայակոչման մեջ Եկեղեցու լրիվ անվանումը ներկայացված է որպես «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի»: Երբ անհրաժեշտ է կարճ [երկրորդ] վկայակոչում, խրախուսվում է օգտագործել «Եկեղեցի» կամ «Հիսուս Քրիստոսի Եկեղեցի» եզրույթները: «Հիսուս Քրիստոսի Վերականգնված Եկեղեցի» անվանումը ևս ճշգրիտ է և օգտագործումը խրախուսվում է:[15]

Եթե մեկը հարցնի, «Դո՞ւք Մորմոն եք», կարող եք պատասխանել, «Եթե դուք հարցնում եք, թե արդյոք ես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի անդամ եմ, ապա այո՛»:

Եթե մեկը հարցնի, «Դո՞ւք Վերջին Օրերի Սուրբ եք»,[16] դուք կարող եք պատասխանել. «Այո, դա այդպես է: Ես հավատում եմ Հիսուս Քրիստոսին և Նրա վերականգնված Եկեղեցու անդամ եմ»:

Իմ սիրելի եղբայրներ ու քույրեր, ես խոստանում եմ ձեզ, որ եթե մենք անենք հնարավոր ամեն բան Տիրոջ Եկեղեցու ճիշտ անունը վերականգնելու համար, Նա, ում պատկանում է այս Եկեղեցին, Իր զորությունն ու բազմաթիվ օրհնությունները կհեղի Վերջին Օրերի Սրբերի վրա,[17] ինչպիսիք երբևէ չենք տեսել նախկինում: Մենք կունենանք Աստծո գիտելիքն ու զորությունը, որոնք կօգնեն մեզ տանել Հիսուս Քրիստոսի ավետարանի օրհնությունները բոլոր ազգերին, ցեղերին, լեզուներին ու մարդկանց և պատրաստել աշխարհը Տիրոջ Երկրորդ Գալուստին:

Այսպիսով, ի՞նչ արժեք ունի անունը: Երբ խոսքը վերաբերում է Տիրոջ Եկեղեցու անվանը, պատասխանն է՝ «Ամենամեծ արժեքը»: Հիսուս Քրիստոսը ցուցում է տվել Եկեղեցին կոչել Իր անունով, որովհետև սա Իր Եկեղեցին է՝ լցված Իր զորությամբ:

Ես գիտեմ, որ Աստված ապրում է: Հիսուսը Քրիստոսն է: Նա առաջնորդում է Իր Եկեղեցին այսօր: Ես դա վկայում եմ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Տերը ինձ հուշում տվեց անվանման կարևորության մասին, որը Նա հայտնությամբ տվել է Իր Եկեղեցու համար, այն է՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի: Մեր առջև աշխատանք է դրված՝ ներդաշնակել մեր կամքը Նրա կամքի հետ: Վերջին շաբաթների ընթացքում Եկեղեցու տարբեր ղեկավարներ և բաժանմունքներ անհրաժեշտ քայլեր են ձեռնարկել դա իրականացնելու համար: Այս կարևոր հարցի շուրջ լրացուցիչ տեղեկություն կտրամադրվի հետագա ամիսների ընթացքում»: (Ռասսել Մ. Նելսոն, «Եկեղեցու անվանումը» [պաշտոնական հայտարարություն, օգոստոսի 16, 2018], mormonnewsroom.org):
2. Եկեղեցու նախագահող Նախագահները նման հարցումներ են արել: Օրինակ, Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթն ասել է. «Մի հիասթափեցրեք Տիրոջը՝ անվանելով սա Մորմոնի Եկեղեցի: Նա այն չի կոչել Մորմոնի Եկեղեցի» (in Conference Report, Apr. 1948, 160):
3. Տես «Ոճի ուղեցույց. Եկեղեցու անվանումը», mormonnews.am:
4. Վարդապետություն և Ուխտեր 115.4
5. 3 Նեփի 27.7–8
6. Տես Մովսես 1.33:
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 19.18:

8. Տես Մորոնի 4.3, Վարդապետություն և Ուխտեր 20.37, 77:
9. Մորմոնը՝ Մորմոնի Գրքի չորս խոշոր գրողներից էր, մյուսները՝ Նեփին, Հակոբը և Մորոնին էին: Նրա ոգեշնչված թարգմանիչ Մարգարե Զոզեֆ Սմիթի նման բոլորը տեսել էին Տիրոջը:
10. Նույնիսկ, *Մորմոնացիներ* եզրույթը ծաղրում էին (see *History of the Church,* 2:62–63, 126):
11. Այլ մականուններ, կարծես թե, հանդիպում են Նոր Կտակարանի ժամանակներում: Փելիքս կուսակալի առաջ Պողոս Առաքյալի դատի ժամանակ, ասում էին, որ Պողոսը «Նազովրեցիների աղանդի առաջնորդն է» (Գործք Առաքելոց 24.5): Ինչ վերաբերում է «Նազովրեցիներ» բառին, մի մեկնաբան գրել է. «Այս անունը սովորաբար տրվել է քրիստոնյաներին՝ արհամարհանք արտահայտելու համար: Նրանք այդպես էին կոչվում, որովհետև Հիսուսը Նազովրեցի էր» (Albert Barnes, *Notes, Explanatory and Practical, on the Acts of the Apostles* [1937], 313):

Նմանապես, մեկ այլ մեկնաբան նշում է. «Ինչպես մեր Տիրոջն էին արհամարհանքով կոչում «Նազովրեցի» (Մատթ. xxvi.71), այնպես էլ հրեաները նրա աշակերտներին բնութագրում էին «Նազովրեցիներ»: Նրանք չէին ընդունում, որ աշակերտները քրիստոնյա են, *այսինքն,* Մեսիայի աշակերտներն են» (*The Pulpit Commentary: The Acts of the Apostles*, ed. H. D. M. Spence and Joseph S. Exell [1884], 2:231):

Նմանապես, Երեց Նիլ Ա. Մաքսվելը նկատել է. «Սուրբ գրքի պատմության միջոցով մենք տեսնում ենք նրանց հեռացնելու նպատակով մարգարեներին ստորացնելու կրկնվող ջանքերը՝ պիտակավորելով նրանց, որպեսզի նվաստացնեն նրանց: Սակայն, հիմնականում նրանք անտեսվում են իրենց ժամանակակիցների և աշխարհիկ պատմության կողմից: Ի վերջո, վաղ քրիստոնյաները պարզապես կոչվում էին «Նազովրեցիների աղանդ»:» (Գործք Առաքելոց 24.5)» («Out of Obscurity," *Ensign,* Nov. 1984, 10):
12. Տես 1 Նեփի 18.1–2:
13. Բենջամին դե Հոյոս, «Կանչված՝ լինելու Սրբեր», *Լիահոնա,* մայիս 2011, 106:
14. Թեև մենք չենք վերահսկում, թե այլ մարդիկ ինչպես կարող են մեզ կոչել, մենք լիովին վերահսկում ենք, թե ինչպես ենք կոչում ինքներս մեզ: Ինչպես կարող ենք ակնկալել, որ ուրիշները հարգեն Եկեղեցու ճիշտ անունը, եթե մենք՝ նրա անդամները չենք անում դա:
15. «Ոճի ուղեցույց. Եկեղեցու անվանումը», mormonnews.am:
16. *Սրբեր* եզրույթը հաճախ է կիրառվում Սուրբ Աստվածաշնչում: Օրինակ, Եփեսացիներին գրած Պողոսի նամակում նա յուրաքանչյուր գլխում *սրբեր* բառը օգտագործել է առնվազն մեկ անգամ: Սուրբը մի մարդ է, ով հավատում է Հիսուս Քրիստոսին և փորձում է նմանվել Նրան:
17. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.33:



Կիրակի ցերեկային նիստ | 7 հոկտեմբերի, 2018թ.

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Փորձիր, փորձիր, փորձիր

Փրկիչն Իր անունը դնում է ձեր սրտերում: Եվ դուք զգում եք Քրիստոսի մաքուր սերը ձեր և մյուսների հանդեպ:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ես երախտապարտ եմ այս համաժողովին ձեզ հետ խոսելու հնարավորության համար: Այս համաժողովը ոգեշնչող էր և դաստիարակչական ինձ համար: Հնչած երաժշտությունը և ասված խոսքերը Սուրբ Հոգու միջոցով հասցվեցին մեր սրտերին: Աղոթում եմ, որ ինչ որ ասեմ, հաղորդվի ձեզ այդ նույն Հոգու կողմից:

Շատ տարիներ առաջ ես Միացյալ Նահանգների արևելյան մի շրջանի նախագահի խորհրդական էի: Ամեն անգամ, երբ մենք վարում էինք մեքենան դեպի մեր փոքրիկ ճյուղերը, նա ասում էր ինձ. «Հալ, երբ հանդիպեք մեկին, վարվեք նրա հետ այնպես, կարծես նա խորը վշտի մեջ է և դու հիմնականում ճիշտ կլինես»: Նա ճիշտ էր, և ես տարիների ընթացքում հասկացա, որ նա խիստ ցածր էր իր գնահատականի մեջ: Այսօր ես կամենում եմ քաջալերել ձեզ այն դժվարությունների մեջ, որոնց դիմակայում եք:

Մեր մահկանացու կյանքը նախագծված է սիրառատ Աստծո կողմից, որպեսզի այն լինի ստուգարք և զարգացման աղբյուր մեզանից յուրաքանչյուրի համար: Դուք հիշում եք Աստծո խոսքերը, որոնք վերաբերում են Իր զավակներին աշխարհի ստեղծման ժամանակ. «Եվ դրանով մենք նրանց կստուգենք, որպեսզի տեսնենք, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կպատվիրի նրանց»:[1]

Սկզբից ի վեր ստուգարքները հեշտ չեն եղել: Մենք փորձություններին ենք դիմակայում, որոնք գալիս են մահկանացու մարմիններ ունենալուց: Մենք բոլորս ապրում ենք մի աշխարհում, որտեղ սատանայի պատերազմը ճշմարտության դեմ և մեր անձնական երջանկության դեմ դառնում է ավելի լարված: Աշխարհը և ձեր կյանքը կարող է թվալ ձեզ ահագնացող ցնցումների մեջ:

Իմ համոզմունքն այն է, որ սիրառատ Աստված, ով թույլ է տվել այդ ստուգարքները ձեզ համար, նախատեսել է մի ապահով ուղի դրանց միջով անցնելու համար: Երկնային Հայրն այնքան սիրեց աշխարհը, որ Նա ուղարկեց Իր Սիրելի Որդուն օգնելու մեզ:[2] Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, տվեց Իր կյանքը մեզ համար: Հիսուս Քրիստոսը Գեթսեմանիում ու խաչի վրա կրեց մեր բոլոր

մեղքերի ծանրությունը: Նա տարավ բոլոր վշտերն ու ցավերը և մեր մեղքերի հետևանքները, որպեսզի կարողանար մխիթարել և զորացնել մեզ կյանքի յուրաքանչյուր ստուգարքի ընթացքում:[3]

Դուք հիշում եք, որ Տերն ասաց Իր ծառաներին.

«Հայրը և ես մեկ ենք: Ես Հոր մեջ եմ և Հայրը՝ իմ մեջ. և որքան որ դուք ընդունել եք ինձ, դուք իմ մեջ եք, և ես՝ ձեր մեջ:

Ուստի, ես ձեր մեջ եմ, և ես եմ բարի հովիվը և Իսրայելի քարը: Նա, ով կառուցում է այդ վեմի վրա, երբեք չի ընկնի»:[4]

Մեր մարգարեն՝ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը, նույնպես տվել է այդ նույն հավաստիացումը: Ավելին, Նա նկարագրել է մի ուղի, որով մենք կարող ենք կառուցել այդ վեմի վրա և դնել Տիրոջ անունը մեր սրտերում՝ ուղղորդելու մեզ մեր փորձություններին ժամանակ:

Նա ասել է. «Դուք, որ, հնարավոր է, վայրկենապես հուսալքվեք, հիշեք՝ նախատեսված չէ, որ կյանքը հեշտ կլինի: Փորձությունները պետք է կրել և վշտին դիմանալ ճանապարհի ընթացքում: Երբ դուք հիշեք, որ «Աստուծոյ առաջին ոչ մի բան անկարելի չէ:» (Ղուկաս 1.37), իմացեք, որ Նա ձեր Հայրն է: Դուք Նրա պատկերով ստեղծված որդի եք կամ դուստր, իրավազոր՝ ձեր արժանավորությամբ ստանալու հայտնություն, ձեր արդար ձգտումներին օգնելու համար: Դուք կարող եք ձեզ վրա վերցնել Տիրոջ սուրբ անունը: Դուք կարող եք արժանանալ Աստծո սրբազան անունով խոսելու պատվին (տես ՎԵՈՒ 1.20)»:[5]

Նախագահ Նելսոնի խոսքերը հիշեցնում են մեզ այն խոստման մասին, որը գտնվում է հաղորդության աղոթքում, մի խոստում, որը մեր Երկնային Հայրը կատարում է, երբ մենք անում ենք այն, ինչ փոխարենը խոստանում ենք:

Լսեք խոսքերը. «Ո՜վ Աստված, Հա՛յր Հավերժական, խնդրում ենք քեզ, քո Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով, օրհնիր և սրբացրու այս հացը բոլոր նրանց հոգիների համար, ովքեր ճաշակում են այն, որ

նրանք կարողանան ուտել, ի հիշատակ Որդուդ մարմնի, և վկայեն քեզ, ո՜վ Աստված, Հա՛յր Հավերժական, որ նրանք հոժար են իրենց վրա վերցնել անունը քո Որդու և միշտ հիշել նրան և պահել նրա պատվիրանները, որոնք նա տվել է իրենց. որպեսզի նրանք նրա Հոգին միշտ իրենց հետ ունենան: Ամեն»:[6]

Ամեն անգամ, երբ մենք ասում ենք *ամեն* բառը, երբ այդ աղոթքը մատուցվում է մեր անունից, մենք խոստանում ենք, որ ճաշակելով հացը, մենք հոժար ենք մեր վրա վերցնել Հիսուս Քրիստոսի սուրբ անունը, միշտ հիշել Նրան և պահել Նրա պատվիրանները: Իր հերթին, մեզ խոստացվում է, որ մենք կարող ենք միշտ նրա Հոգին մեզ հետ ունենալ: Այս խոստումների շնորհիվ Փրկիչն է վեմը, որի վրա մենք կարող ենք կանգնել ապահով և առանց վախի ամեն փոթորիկի ժամանակ, որին մենք դիմակայում ենք:

Երբ ես խորհում էի ուխտի խոսքերի մասին և խոստացված համապատասխան օրհնությունների մասին, ես մտորում էի, թե ինչ է նշանակում հոժարակամ մեր վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը:

Նախագահ Դալլին Հ. Օուքսը բացատրել է. «Կարևոր է, որ երբ մենք ճաշակում ենք հաղորդությունը, մենք չենք վկայում, որ մենք *վերցնում ենք մեզ վրա* Հիսուս Քրիստոսի անունը: Մենք վկայում ենք, որ *հոժարակամ ենք* այդպես վարվել: (Տես ՎԵՈՒ 20.77:) Փաստը, որ մենք վկայում ենք միայն մեր հոժարակամության մասին, հուշում է, որ մեկ ուրիշ բան պիտի տեղի ունենա, նախքան մենք փաստացի վերցնենք այդ սրբազան անունը մեզ վրա կարևորագույն իմաստով»:[7]

Հայտարարությունը, որ մենք «հոժար [ենք մեզ] վրա վերցնել» Նրա անունը, ասում է մեզ, որ երբ մենք առաջին անգամ մկրտվելիս վերցրեցինք Փրկիչի անունը, չի նշանակում, որ Նրա անուն վերցնելը ավարտվում է մկրտությամբ: Մենք պետք է շարունակաբար աշխատենք վերցնել Նրա անունը ողջ կյանքի ընթացքում, ներառյալ, երբ նորոգում ենք ուխտերը հաղորդության սեղանի մոտ և ուխտեր կապում Տիրոջ սուրբ տաճարներում:

Այսպիսով մեզանից յուրաքանչյուրի համար կարևոր է դառնում երկու հարց. «Ի՞նչ պետք է անեմ Նրա անունը ինձ վրա վերցնելու համար» և «Ինչպե՞ս կիմանամ, երբ եմ առաջընթաց ունենում»:

Նախագահ Նելսոնի հայտարարությունը հուշում է մի օգտակար խորհուրդ: Նա ասել է, որ մենք կարող ենք վերցնել Փրկիչի անունը մեզ վրա և որպեսզի կարողանանք խոսել Նրա համար: Երբ մենք խոսում ենք Նրա համար, մենք ծառայում ենք Նրան: «Քանզի ի՞նչպես է մարդ ճանաչում իր տիրոջը, որին նա չի ծառայել, և որն օտար է նրան և հեռու է նրա սրտի մտքերից և խորհուրդներից»:[8]

Նրա համար խոսելը պահանջում է հավատքի աղոթք: Ջերմեռանդ աղոթք է պահանջվում՝ ուղղված Երկնային Հորը, որ իմանանք, թե ինչ խոսքերով խոսենք, որպեսզի Փրկիչին օգնենք Իր աշխատանքում: Մենք պետք է որակավորվենք այդ խոստման համար. «Լինի դա իմ իսկ ձայնով, թե իմ ծառաների ձայնով՝ միևնույն է»:[9]

Այնուամենայնիվ, ավելի շատ բան է պահանջվում, քան խոսելը Նրա համար, որպեսզի վերցնենք Նրա անունը մեզ վրա: Կան զգացմունքներ մեր սրտերում, որոնց համար մենք պետք է որակավորվենք՝ որպես Նրա ծառաներ:

Մորմոն մարգարեն նկարագրում է այն զգացմունքները, որոնք որակավորում են մեզ և հնարավորություն տալիս մեզ վերցնելու Նրա անունը մեզ վրա: Այդ զգացմունքները ներառում են հավատքը, հույսը և գթությունը, որը Քրիստոսի մաքուր սերն է:

Մորմոնը բացատրել է.

«Բայց, ահա, իմ սիրելի՛ եղբայրներ, ես դատում եմ ձեր մասին ավելի լավ բաներ, քանզի ես դատում եմ, որ դուք ունեք հավատք առ Քրիստոս, ձեր հեզության պատճառով. քանզի եթե դուք չունենաք հավատք առ նա, ապա դուք պիտանի չեք՝ համարվելու նրա եկեղեցու ժողովրդի թվում:

Եվ բացի դրանից, իմ սիրելի եղբայրներ, ես կկամենայի խոսել ձեզ հետ հույսի վերաբերյալ: Ի՞նչպես կարող եք դուք ձեռք բերել հավատք, եթե դուք չունենաք հույս:

Եվ ի՞նչն է, որի համար դուք պիտի հույս ունենաք: Ահա, ես ասում եմ ձեզ, որ դուք կունենաք հույս, Քրիստոսի քավության և նրա հարության զորության միջոցով, բարձրացվելու դեպի հավերժական կյանք, և դա՝ ձեր հավատքի շնորհիվ առ նա՝ խոստումի համաձայն:

Ուստի, եթե մարդ ունի հավատք, նա անպայման պետք է ունենա հույս. քանզի առանց հավատքի չի կարող լինել որևէ հույս:

Եվ դարձյալ, ահա ես ասում եմ ձեզ, որ նա չի կարող ունենալ հավատք և հույս, եթե նա չլինի հեզ և սրտով խոնարհ:

Եթե այդպես է, նրա հավատքը և հույսը զուր է, քանզի ոչ մեկն ընդունելի չէ Աստծո առաջ, բացի հեզից և սրտով խոնարհից. և եթե մարդ հեզ է ու սրտով խոնարհ, և խոստովանում է Սուրբ Հոգու զորությամբ, որ Հիսուսը Քրիստոսն է, նա անպայման պետք է ունենա գթություն. քանզի եթե նա չունի գթություն, նա ոչինչ է. ուստի, նա անպայման պետք է ունենա գթություն»:

Գթությունը նկարագրելուց հետո Մորմոնը շարունակում է՝ ասելով.

«Բայց գթությունը Քրիստոսի մաքուր սերն է, և այն տևում է հավերժ. և ով որ օժտված լինի դրանով վերջին օրը, նրա համար լավ կլինի:

Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ, աղոթեք Հորը, սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով, որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն են. որ դուք կարողանաք դառնալ Աստծո որդիները. որպեսզի երբ նա հայտնվի, մենք լինենք նրա նման. քանզի մենք պիտի տեսնենք նրան, ինչպես որ ինքն է. որ մենք կարողանանք ունենալ այդ հույսը. որ մենք կարողանանք մաքրվել, ճիշտ ինչպես նա է մաքուր: Ամեն»:[10]

Ես վկայում եմ, որ Փրկիչը դնում է Իր անունը ձեր սրտերում: Ձեզանից շատերի հավատքը Նրա հանդեպ մեծանում է: Դուք ավելի շատ հույս և լավատեսություն եք զգում: Եվ դուք զգում եք Քրիստոսի մաքուր սերը մյուսների և ձեր հանդեպ:

Ես տեսնում եմ դա միսիոներների մեջ, ովքեր ծառայում են ամբողջ աշխարհում: Ես տեսնում եմ դա անդամների մեջ, ովքեր խոսում են իրենց ընկերների և ընտանիքի անդամների հետ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մասին: Տղամարդիկ, կանայք, երիտասարդները և նույնիսկ երեխաները սպասավորում են Փրկիչի հանդեպ և իրենց մերձավորների հանդեպ սիրուց ելնելով:

Անդամները, աշխարհի տարբեր անկյուններից աղետների հաղորդագրություններ ստանալով, երբեմն օվկիանոսն անցնելով, առանց խնդրանք ստանալու, ծրագրեր են կազմում գնալ փրկելու: Նրանք երբեմն դժվարանում են սպասել, մինչև ավերված տարածքները կարողանան իրենց ընդունել:

Ես հասկանում եմ, որ ձեզանից ոմանք, ովքեր լսում են այսօր, զուցե զգաք, որ ձեր դժվարությունները հաղթում են ձեր հավատքն ու հույսը: Եվ դուք, զուցե, ձգտում եք սեր զգալ:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, Տերը հնարավորություններ ունի ձեր կողքին լինել, որպեսզի զգաք և կիսվեք Նրա սիրով: Դուք կարող եք աղոթել վստահությամբ, որպեսզի Տերն առաջնորդի ձեզ սիրել որևէ մեկին հանուն Նրա: Նա պատասխանում է այնպիսի հեզ կամավորների աղոթքներին, ինչպիսին դուք եք: Դուք կզգաք Աստծո սերը ձեր հանդեպ և այն անձնավորության հանդեպ, ում դուք ծառայում եք հանուն Նրա: Երբ դուք օգնեք Աստծո զավակներին իրենց դժվարություններում, ձեր դժվարություններն ավելի թեթև կթվան: Ձեր հավատքն ու ձեր հույսը կամրանան:

Ես ականատեսն եմ այդ ճշմարտության: Ողջ կյանքի ընթացքում կինս խոսել է հանուն Տիրոջ և ծառայել մարդկանց հանուն Նրա: Ինչպես արդեն նշեցի, մեր Եպիսկոպոսներից մեկը մի անգամ ասաց ինձ. «Զարմանում եմ: Ամեն անգամ, երբ լսում եմ, որ ինչ-որ մեկին դժբախտություն է պատահել, շտապում եմ օգնության: Սակայն մինչև իմ ժամանելը, միշտ թվում է, ձեր կինն արդեն այնտեղ եղել է»: Դա վերաբերում է այն բոլոր վայրերին, որտեղ մենք ապրել ենք 56 տարիների ընթացքում:

Հիմա նա կարողանում է խոսել ընդամենը մի քանի բառ օրվա ընթացքում: Նրան այցելում են մարդիկ, ում նա սիրել է հանուն Տիրոջ: Ամեն գիշեր և առավոտյան ես հիմներ եմ երգում նրա հետ և մենք աղոթում ենք: Ես ստիպված եմ լինել ձայն աղոթքներում և երգելիս:

Երբեմն ես տեսնում եմ, թե ինչպես է նա արտաբերում օրհներգերի բառերը: Նա նախընտրում է երեխաների երգերը: Զգացումը, որը նա, կարծես, ամենաշատն է սիրում, ամփոփված է «Ես փորձում եմ լինել Հիսուսի նման» երգում:[11]

Նախորդ օրը, «Սիրեք միմյանց, ինչպես Հիսուսն է սիրում ձեզ» կրկներգի խոսքերը երգելուց հետո, «Փորձիր բարություն ցույց տալ բոլոր բաներում, որ դու անում ես»,- ասաց նա մեղմ, բայց հստակ,- «Փորձիր, փորձիր, փորձիր»: Կարծում եմ, երբ կինս տեսնի Նրան, կպարզի, որ մեր Փրկիչը դրել է Իր անունը նրա սրտում, և ինքը դարձել է Նրա նման: Այժմ Նա տանում է նրան իր դժվարությունների միջով, ինչպես Նա կտանի ձեզ՝ ձեր դժվարությունների միջով:

Ես բերում եմ ձեզ իմ վկայությունը, որ Փրկիչը ճանաչում և սիրում է ձեզ: Նա գիտի ձեր անունը և դուք գիտեք Նրանը: Նա գիտի ձեր դժվարությունները: Նա անցել է այդ փորձառություններով: Իր Քավությամբ Նա հաղթել է աշխարհին: Նրա անունը ձեր վրա վերցնելու ձեր հոժարակամությամբ, դուք կբարձրացնեք անհամար մարդկանց բեռները: Եվ ժամանակի ընթացքում դուք կպարզեք, որ դուք ավելի լավ եք ճանաչում Փրկիչին և ավելի շատ եք սիրում Նրան: Նրա անունը կլինի ձեր սրտում և ամրագրված ձեր հիշողության մեջ: Դա է այն անունը, որով դուք կկոչվեք: Այսպես եմ ես վկայում, երախտագիտությամբ՝ իմ հանդեպ, իմ սիրելիների հանդեպ և ձեր հանդեպ Նրա սիրառատ բարության համար, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Աբրահամ 3.25:
2. Տես Հովհաննես 3.16–17:
3. Տես Ալմա 7.11–12:
4. Վարդապետություն և Ուխտեր 50.43–44
5. Russell M. Nelson, "With God Nothing Shall Be Impossible," *Ensign,* May 1988, 35.
6. Վարդապետություն և Ուխտեր 20.77
7. Dallin H. Oaks, "Taking upon Us the Name of Jesus Christ," *Ensign,* May 1985, 81.
8. Մոսիա 5.13
9. Վարդապետություն և Ուխտեր 1.38
10. Մորոնի 7.39–44, 47–48
11. Տես «Փորձում եմ լինել Հիսուսի նման», *Մանկական երգարան,* 78–79:

Բրայըն Ք. Էշթոն
Կիրակնօրյա Դպրոցի Գերագույն Նախագահության Երկրորդ Խորհրդական

Հայրը

Մեզանից յուրաքանչյուրը ներուժ ունի դառնալ Հոր նման: Դա անելու համար, մենք պետք է երկրպագենք Հորը Որդու անունով:

Իր ողջ կյանքի ընթացքում իմ կինը՝ Մելինդան, փորձել է իր ամբողջ սրտով լինել Հիսուս Քրիստոսի հավատարիմ աշակերտը: Սակայն, սկսած իր երիտասարդությունից, նա իրեն արժանի չէր զգում Երկնային Հոր սիրուն և օրհնություններին, քանի որ սխալ էր հասկացել Նրա էությունը: Բարեբախտաբար, տխրությանը հակառակ, Մելինդան շարունակում էր պահել պատվիրանները: Մի քանի տարի առաջ նա մի շարք փորձառություններ ունեցավ, որոնք օգնեցին նրան ավելի լավ հասկանալ Աստծո էությունը, այդ թվում՝ Նրա սերը Իր զավակների հանդեպ և երախտագիտությունը՝ Իր աշխատանքը կատարելու մեր անկատար ջանքերի համար:

Մելինդան բացատրում է, թե դա ինչպիսի ազդեցություն է ունեցել իր վրա. «Ես հիմա համոզված եմ, որ Հոր ծրագիրը աշխատում է, որ Նա անձամբ օգնել է մեզ հաջողության հասնել, և Նա մեզ դասեր ու փորձառություններ է տալիս, որոնք անհրաժեշտ են Նրա ներկայություն վերադառնալու համար: Ես իմ և ուրիշների մեջ ավելի շատ ներուժ եմ տեսնում, ինչպես որ Աստված է տեսնում դա մեր մեջ: Ես կարողանում եմ ծնող լինել, ուսուցանել և ծառայել ավելի մեծ սիրով և ավելի պակաս վախով: Ես զգում եմ խաղաղություն եւ վստահություն, այլ ոչ թե անհանգստություն և անապահովություն: Քննադատված զգալու փոխարեն, ես աջակցված եմ զգում: Իմ հավատքն ավելի հաստատ է: Ես իմ Հոր սերն ավելի հաճախակի ու ավելի խորն եմ զգում»:[1]

«[Երկնային Հոր] բնավորության, կատարյալ լինելու և հատկանիշների մասին *ճիշտ* պատկերացումը» կարևոր է բավարար հավատք կիրառելու համար, որպեսզի ստանաք վեհացում:[2] Երկնային Հոր բնավորության մասին ճիշտ

պատկերացումը կարող է փոխել այն, թե ինչպես ենք մենք տեսնում ինքներս մեզ և ուրիշներին, և կարող է օգնել մեզ հասկանալ Իր զավակների հանդեպ ունեցած Աստծո մեծ սերը և Նրա մեծ ցանկությունը՝ օգնել մեզ դառնալ Իր նման: Նրա էության մասին սխալ տեսակետը կարող է մեզ զգացնել տալ, որ մենք անկարող ենք երբևէ վերադառնալ Նրա ներկայություն:

Իմ նպատակն այսօր Հոր մասին հիմնական վարդապետական կետերն ուսուցանելն է, որոնք թույլ կտան բոլորիս, բայց հատկապես նրանց, ովքեր կասկածներ ունեն իրենց հանդեպ Աստծո սիրո մասին, ավելի լավ հասկանալ Նրա ճշմարիտ բնավորությունը և ավելի մեծ հավատք գործադրել՝ Նրա, Նրա Որդու և մեզ համար Նրա ունեցած ծրագրի հանդեպ:

Նախաերկրային կյանքը

Նախաերկրային կյանքում մենք ծնվել ենք որպես հոգիներ Երկնային ծնողներից և նրանց հետ ապրել ենք որպես ընտանիք:[3] Նրանք ճանաչում էին մեզ, ուսուցանում և սիրում էին մեզ:[4] Մենք շատ էինք ցանկանում նմանվել մեր Երկնային Հորը: Սակայն մենք հասկացանք, որ դա անելու համար պետք է.

1. Ձեռք բերենք փառավորված, անմահ, ֆիզիկական մարմիններ,[5]
2. Ամուսնանանք և ընտանիքներ կազմենք քահանայության կնքման զորությամբ,[6] և
3. Ձեռք բերենք բոլոր գիտելիքները, զորությունը և աստվածային հատկանիշները:[7]

Հետևաբար, Հայրը ստեղծեց մի ծրագիր, որը թույլ կտար մեզ որոշակի պայմաններով[8] ձեռք բերել ֆիզիկական մարմիններ, որոնք Հարության ժամանակ կդառնան անմահ և փառավորված, ամուսնանալ և ընտանիքներ կազմել մահկանացու կյանքում, կամ մահկանացու կյանքից հետո այն հավատարիմների համար, ովքեր հնարավորություն չեն ունենա այս կյանքում,[9] առաջընթաց ապրել դեպի կատարելություն և, ի վերջո, վերադառնալ մեր Երկնային ծնողների և ընտանիքների մոտ և ապրել նրանց հետ վեհացման ու հավերժական երջանկության մեջ:[10]

Սուրբ գրություններն անվանում են դա փրկության ծրագիր:[11] Մենք այնքան երախտապարտ էինք այս ծրագրի համար, որ երբ այն մեզ ներկայացվեց, մենք բացականչեցինք ուրախությունից:[12] Մեզանից յուրաքանչյուրն ընդունեց ծրագրի պայմանները, այդ թվում մահկանացու կյանքի փորձառություններն ու դժվարությունները, որոնք կօգնեին մեզ զարգացնել աստվածային հատկանիշներ:[13]

Մահկանացու կյանքը

Մահկանացու կյանքում Երկնային Հայրն ապահովում է այն պայմանները, որոնք պետք են Նրա ծրագրում առաջընթաց ունենալու համար: Հայրը դրեց Հիսուս Քրիստոսին մարմնի մեջ[14] և աստվածային օգնություն տվեց Նրան՝ կատարելու Իր մահկանացու առաքելությունը: Նմանապես, Երկնային Հայրը կօգնի մեզանից յուրաքանչյուրին, եթե մենք ձգտենք պահել Նրա պատվիրանները:[15] Հայրը տալիս է մեզ ազատ կամք:[16] Մեր կյանքը Նրա ձեռքերում է և մեր «օրերը հայտնի են» և «տարիները չեն կրճատվի»:[17] Եվ Նա հավաստիացնում է, որ ամեն բան լավ կլինի նրանց համար, ովքեր սիրում են Իրեն:[18]

Երկնային Հայրն է տալիս մեզ հանապազօրյա հացը,[19] որը բաղկացած է այն սնունդից, որն ուտում ենք և այն ուժից, որն անհրաժեշտ է Նրա պատվիրանները պահելու համար:[20] Հայրը տալիս է բարի պարգևներ:[21] Նա լսում և պատասխանում է մեր աղոթքներին:[22] Երկնային Հայրն ազատում է մեզ չարից, եթե մենք թույլ ենք տալիս Նրան:[23] Նա լալիս է, երբ մենք տառապում ենք:[24] Ի վերջո, մեր բոլոր օրհնությունները Հայրն է տալիս:[25]

Երկնային Հայրն առաջնորդում է մեզ և մեր ուժեղ կողմերից, թույլ կողմերից և ընտրություններից ելնելով, մեզ տալիս է այնպիսի փորձառություններ, որ մենք կարողանանք բարի պտուղ բերել:[26] Անհրաժեշտության դեպքում, Հայրը մեզ խրատում է, քանի որ Նա սիրում է մեզ:[27] Նա «Խորհրդի Մարդ է»,[28] ով մեզ հետ խորհուրդ կանի, եթե խնդրենք Նրան:[29]

Երկնային Հայրն է ուղարկում Սուրբ Հոգու ազդեցությունը և պարգևը մեր կյանքում:[30] Սուրբ Հոգու պարգևի միջոցով Հոր փառքը, կամ բանականությունը, լույսը և զորությունը կարող են բնակվել մեր մեջ:[31] Եթե մենք ձգտենք զարգանալ լույսի և ճշմարտության մեջ և մեր աչքն ուղղված լինի միայն Աստծո փառքին, Երկնային Հայրը կուղարկի խոստումի Սուրբ Հոգին, որպեսզի կնքի մեզ հավերժական կյանքի համար և Իր երեսը հայտնի դարձնի մեզ՝ ինչպես այս կյանքում, այնպես էլ գալիք կյանքում:[32]

Հետմահկանացու կյանք

Հետմահկանացու հոգևոր աշխարհում Երկնային Հայրը շարունակում է սփռել Սուրբ Հոգին և ուղարկում է միսիոներներին նրանց մոտ, ովքեր ունեն ավետարանի կարիքը: Նա պատասխանում է աղոթքներին և օգնում նրանց, ովքեր չեն կարողանում ինքնուրույն ստանալ փոխարինող փրկարար արարողությունները:[33]

Հայրը բարձրացրեց Հիսուս Քրիստոսին և Հարությունը իրականացնելու զորություն տվեց,[34] որի միջոցով մենք ձեռք ենք բերում անմահ մարմիններ: Փրկիչի Քավությունը և Հարությունը մեզ վերադարձնում են Հոր ներկայությունը, որտեղ մենք դատվելու ենք Հիսուս Քրիստոսի կողմից:[35]

Այն մարդիկ, ովքեր ապավինում են «Սուրբ Մեսիայի արժանիքներին, ողորմությանը և շնորհին»,[36] կստանան Հոր նման փառավորված մարմիններ[37] և կապրեն Նրա հետ «երբեք չվերջացող երջանկության մի վիճակում»:[38] Այնտեղ Հայրը կսրբի բոլոր արտասուքը[39] և կօգնի մեզ շարունակել մեր ճամփորդությունը և դառնալ Նրա նման:

Ինչպես տեսնում եք, Երկնային Հայրը միշտ կանգնած է մեր կողքին:[40]

Հոր բնավորությունը

Հորը նմանվելու համար մենք պետք է զարգացնենք Նրա բնավորության գծերը: Երկնային Հոր

կատարելությունն ու հատկանիշները հետևյալն են.

- Հայրը «Անվերջ ու Հավերժական է»:[41]
- Նա կատարյալ ձևով արդար է, ողորմած է, բարի է, երկայնամիտ է և ցանկանում է միայն այն, ինչ լավագույնն է մեզ համար:[42]
- Երկնային Հայրը սեր է:[43]
- Նա պահում է Իր ուխտերը:[44]
- Նա փոփոխական չէ:[45]
- Նա չի կարող ստել:[46]
- Հայրը անաչառ է:[47]
- Նա սկզբից ի վեր գիտի բոլոր բաները՝ անցյալը, ներկան, ապագան:[48]
- Երկնային Հայրն ավելի խելացի է,[49] քան մենք բոլորս:[50]
- Հայրն ունի ամբողջ զորությունը[51] և անում է այն ամենը, ինչ Իր սրտում մտադրվում է անել:[52]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մենք կարող ենք վստահել և ապավինել Հորը: Քանի որ Նա ունի հավերժական հեռանկար, Երկնային Հայրը կարող է տեսնել այնպիսի բաներ, որոնք մենք չենք կարող տեսնել: Նրա ուրախությունը, գործը և փառքն է՝ իրականացնել անմահությունն ու վեհացումը:[53] Ամեն բան, ինչ Նա անում է, մեր օգուտի համար է: Նա «[մեր] հավերժական երջանկությունն ավելի շատ է ուզում, քան՝ [մենք]»:[54] Եվ Նա «չի պահանջի [մեզանից] դժվարության մեկ պահ իսկ ավելի տանել, եթե բացարձակապես անհրաժեշտություն չլինի [մեր] անձնական օգտի կամ նրանց օգտի համար, ում [մենք] սիրում ենք»:[55] Արդյունքում, նա կենտրոնանում է մեզ օգնելու վրա, որ առաջընթաց ունենանք, ոչ թե դատելու և դատապարտելու վրա:[56]

Դառնալ մեր Հոր նման

Որպես Երկնային Հոր հոգևոր որդիներ ու դուստրեր, մեզանից յուրաքանչյուրը ներուժ ունի դառնալ Հոր նման: Դա անելու համար, մենք պետք է երկրպագենք Հորը Որդու անունով:[57] Մենք դա անում ենք, ձգտելով հնազանդվել Հոր կամքին, ինչպես Փրկիչն էր հնազանդ, [58] և շարունակաբար ապաշխարելով:[59]

Երբ անում ենք այդ բաները, մենք ստանում ենք «շնորհ՝ շնորհի տեղ», մինչև որ ստանանք Հոր լիությունը[60] և օժտվում ենք «նրա բնավորությամբ, կատարելությամբ և հատկանիշներով»:[61]

Հաշվի առնելով մեր՝ մահկանացուներիս և մեր Երկնային Հոր միջև եղած տարբերությունը, զարմանալի չէ, որ ոմանք կարծում են, թե Հորը նմանվելն անհնարին է: Սակայն սուրբ գրությունները հստակ են: Եթե մենք հավատարիմ մնանք Քրիստոսի հավատքում, ապաշխարենք և հնազանդության միջոցով փնտրենք Աստծո շնորհը, ի վերջո մենք կդառնանք Հոր նման: Ես մեծ սփոփանք եմ զգում այն փաստից, որ նրանք, ովքեր ձգտում են հնազանդ լինել «*կստանան* շնորհ՝ շնորհի տեղ» և ի վերջո «*կստանան* նրա լիությունը»:[62] Այլ կերպ ասած, մենք Հոր նման չենք դառնա մեր ուժերով:[63] Փոխարենը, այն կստանանք շնորհի պարգևի միջոցով, մի մասը մեծ, բայց հիմնականում փոքր պարգևներ, որոնք իրար վրա ավելացնելով կունենանք լիությունը: Բայց, եղբայրնե՛ր և քույրե՛ր, ի վերջո, այդ լիությունը կստանանք:

Ես հրավիրում եմ ձեզ վստահել, որ Երկնային Հայրը գիտի, թե ինչպես վեհացնել ձեզ. փնտրեք Նրա ամենօրյա օգնությունը և Քրիստոսի հանդեպ հավատքով առաջ մղվեք նույնիսկ այն ժամանակ, երբ դուք չեք զգում Աստծո սերը:

Մենք շատ բան չենք հասկանում Հոր նման դառնալու մասին:[64] Բայց համոզված կարող եմ ասել, որ Հոր նման դառնալու ձգտումն արժե ամեն զոհաբերություն:[65] Այն զոհաբերությունները, որոնք կատարում ենք մահկանացու կյանքում, անկախ նրանից, թե որքան մեծ են դրանք, պարզապես անհամեմատելի են այն անսահման ուրախության, երջանկության և սիրո հետ, որ մենք կզգանք Աստծո ներկայության մեջ:[66] Եթե դժվարանում եք հավատալ, որ ձեզ պատվիրված զոհաբերություններն արժե կատարել, Փրկիչը կանչում է ձեզ և ասում. «Դուք դեռ չեք հասկացել, թե որքան մեծ օրհնություններ ունի Հայրը . . . ձեզ համար պատրաստած, . . . դուք չեք կարող տանել բոլոր բաներն այժմ, այնուամենայնիվ, ուրախ եղեք, քանզի ես ձեր ուղեկիցը կլինեմ»:[67]

Ես վկայում եմ, որ ձեր Երկնային Հայրը սիրում է *ձեզ* և ցանկանում է, որ *դուք* նորից ապրեք Իր հետ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Notes in possession of the author; see also D. Melinda Ashton, “The Holy Ghost: Direction, Correction, and Warning” (Brigham Young University Women’s Conference, Apr. 28, 2016), byutv.org.
2. *Lectures on Faith* (1985), 38.
3. Տես «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա*, մայիս 2017, 145, Mother in Heaven,” Gospel Topics, topics.lds.org:
4. Պողոս Առաքյալը նշել է, որ մենք այնքան լավ էինք ճանաչում Հորը, որ մեր հոգիները դեռ փորձում են կոչել նրան *Աբբա,* որը նշանակում է «Հայրիկ», մի եզրույթ, որը կիրառվում է այն հայրերի դեպքում, ում մենք շատ ծանոթ ենք (տես Հռովմեացիս 8.15):
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 130.22:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 132.19–20:
7. Տես Մատթեոս 5.48, տես նաև Բ Պետրոս 1.3–8:
8. Այդ պայմանները ներառում էին մեր առաջին վիճակը (տես Աբրահամ 3.26) այնուհետև, մահկանացու կյանքում հավատք գործադրելով Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ, ապաշխարելով, մկրտվելով Աստծո քահանայության լիազորությամբ, ընդունելով Սուրբ Հոգու պարգևը, և դիմանալով մինչև վերջ (տես 3 Նեփի 27.16–20):

9. Նախագահ Դալլին Հ. Օուքսն ուսուցանել է. «Ոմանք, ովքեր լսում են այս ուղերձը, հավանաբար հարցնում են, «Իսկ ե՞ս»: Մենք գիտենք, որ շատ արժանի և հրաշալի Վերջին Օրերի Սրբերի մոտ ներկայումս բացակայում է նրանց առաջընթացի համար անհրաժեշտ կատարյալ հնարավորությունները և հիմնական պայմանները: Մենակությունը, զավակ չունենալը, մահը և ամուսնալուծությունը խորտակում են իդեալները և հետաձգում են խոստացված օրհնությունները: . . . Բայց այդ հուսախաբությունները միայն ժամանակավոր են: Տերը խոստացել է, որ հավերժության մեջ ոչ մի օրհնություն չի ժխտվի՝ իր պատվիրանները պահող, իրենց ուխտերին հավատարիմ և ճշմարտությանը ձգտող իր որդիների ու դուստրերի համար» (“The Great Plan of Happiness,” *Ensign,* Nov. 1993, 75):
10. Տես Մոսիա 2.41:
11. Տես Ալմա 42.5, այն նաև կոչվում է փրկագնման ծրագիր (օրինակ տես Հակոբ 6.8) և երջանկության ծրագիր (տես Ալմա 42.8, 16):
12. Տես Հոբ 38.4–7:
13. Օրինակ՝ Եբրայեցիս 5.8, 12.11, Եթեր 12.27: Համենայնդեպս, մահկանացու կյանքում հանդիպող մարտահրավերներից մի քանիսը մեր սահմանափակ հասկացողությամբ, կարող են թվալ, որ նրանք խանգարում են մեզ ձեռք բերել խոստացված օրհնությունները, որոնց համար հույս ենք տածել: Չնայած այս թվացյալ հակասություններին, Աստված կտա մեզ ամեն խոստացված օրհնություն, եթե հավատարիմ մնանք:
14. Տես Ղուկաս 1.31–35, Հովհաննես 1.14, 1 Նեփի 11.18–21, Սուրբ գրքերի ուղեցույց, «Հիսուս Քրիստոս», scriptures.lds.org:
15. Տես Վարդապետություն և Ուխտեր 93.4–5, 16–17, 19–20:
16. Տես Մովսես 7.32:
17. Վարդապետություն և Ուխտեր 122.9
18. Տես Հռովմեացիս 8.28:
19. Տես Մատթեոս 6.11:
20. See N. Eldon Tanner, “The Importance of Prayer,” *Ensign,* May 1974, 50–53.
21. Տես Ղուկաս 11.10–13, Հակոբոս 1.17:
22. Տես Ղուկաս 11.5–10, Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ղուկաս 11.5–6 (Ղուկասի 11.5, տողատակի գրառում *ա*), 3 Նեփի 13.6:
23. Տես Մատթեոս 6.13:
24. Տես Մովսես 7.31–40:
25. Տես Հակոբոս 1.17:
26. Տես Հովհաննես 15.1–2, Վարդապետություն և Ուխտեր 122.6–7:
27. Տես Եբրայեցիս 12.5–11, Վարդապետություն և Ուխտեր 95.1:
28. Մովսես 7.35
29. Տես Ալմա 37.12, 37:
30. Տես Հովհաննես 14.26, 2 Նեփի 31.12:
31. Տես Հովհաննես 17.21–23, 26, Վարդապետություն և Ուխտեր 93.36:
32. Տես Վարդապետություն և Ուխտեր 76.53, 88.67–68:
33. Տես Ա Պետրոս 4.6: Երեց Մելվին Ջ. Բալլարդը, խոսելով այն մասին, թե ինչու է իր մկրտված մարդը միացել Եկեղեցուն, ասաց. «Ինձ հայտնի է

դարձել, որ հոգևոր աշխարհում իր նախնիները տարիներ առաջ ընդունել են Ավետարանը և աղոթել են, որ իրենց ընտանիքի անդամներից մեկը Երկրի վրա բացի դուռը նրանց համար, և նրանց աղոթքները հասան իրենց նպատակին և Տերն առաջնորդեց միսիոներներին այդ մարդու դռան մոտ» (in Melvin R. Ballard, *Melvin J. Ballard, Crusader for Righteousness* [1966], 250):
34. Տես Մորմոն 7.5–6, տես նաև Հովհաննես 5.21, 26, Ա Կորնթացիս 6.14, 2 Նեփի 9.11–12, Ալմա 40.2–3, 3 Նեփի 27.14:
35. Տես Հովհաննես 5.22, Հակոբ 6.9, Ալմա 11.44, Հելաման 14.15–18: Քրիստոսի Քավությունը հաղթահարում է Ադամի անկման բոլոր հետևանքները, ներառյալ՝ ֆիզիկական և հոգևոր մահը, որ երկուսն էլ անհրաժեշտ է հաղթահարել, որպեսզի հնարավորություն տրվի վերադառնալ մեր Երկնային Հոր ներկայություն: Նրանք, ովքեր ապաշխարել են իրենց մեղքերի համար, կապրեն Հոր և Որդու հետ հավերժության մեջ: Սակայն, այն մարդիկ, ովքեր չապաշխարեն, կտառապեն երկրորդ մահից, որը կբերվի իրենց մեղքերի պատճառով (տես Հելաման 14.15–18):
36. 2 Նեփի 2.8:
37. Տես Վարդապետություն և Ուխտեր 76.56, 88.28–29:
38. Մոսիա 2.41
39. Տես Հայտնություն 7.17:
40. Տես Մովսես 7.30: Երկնային Հայրը Հիսուս Քրիստոսի և այլ երկնային արարածների սպասավորության միջոցով շարունակում է հետևել և օգնել նույնիսկ թերեստրիալ արքայությունում գտնվողներին (տես Վարդապետություն և Ուխտեր 76.77, 87) և թելեստիալ արքայությունում գտնվողներին՝ Սուրբ Հոգու և հրեշտակների սպասավորության միջոցով (տես Վարդապետություն և Ուխտեր 76.86, 88):
41. Մովսես 7.35, տես նաև Սաղմոս 90.2:
42. Տես Սաղմոս 103.6–8, Ղուկաս 6.36, Մովսես 7.30:
43. Տես Ա Հովհաննես 4.16:
44. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.40:
45. Տես Հակոբոս 1.17:
46. Տես Գիրք Թվոց 23.19:
47. Տես Գործք Առաքելոց 10.34–35:
48. Տես 1 Նեփի 9.6, Վարդապետություն և Ուխտեր 130.7:
49. Dictionary.com կայքը *բանականությունը* սահմանում է որպես «սովորելու, դատողություն անելու, հասկանալու և մտավոր գործունեության նման ձևերի ունակություն, ճշմարտությունը, հարաբերությունները, փաստերը, իմաստները կլանելու ընդունակություն և այլն» և «գիտելիք»:
50. Տես Աբրահամ 3.19: Հիսուս Քրիստոսը, որպես փառավորված, կատարյալ էակ, ավելի բանական է, քան մենք բոլորս:
51. Տես Հայտնություն 21.22:
52. Տես Աբրահամ 3.17:
53. Տես Մովսես 1.39:
54. Richard G. Scott, “Trust in the Lord,” *Ensign,* Nov. 1995, 17.
55. Richard G. Scott, “Trust in the Lord,” 17.
56. Տես Հովհաննես 5.22, Մովսես 1.39: Սատանան և մենք ինքներս ենք դատապարտելու մեզ (տես Հայտնություն 12.10, Ալմա 12.14):
57. Տես Հովհաննես 4.23, Վարդապետություն և Ուխտեր 18.40, 20.29:
58. Տես 3 Նեփի 11.11, Վարդապետություն և Ուխտեր 93.11–19:
59. Ապաշխարությունն այն գործընթացն է, որով մենք փոխում ենք մեր էությունը, որպեսզի դառնանք Աստծո նման: Այսպիսով, մենք պետք է շարունակաբար ապաշխարենք, ոչ թե պարզապես ապաշխարենք, երբ «ինչ-որ սխալ բան անենք»:
60. Տես Վարդապետություն և Ուխտեր 93.19–20:
61. *Lectures on Faith,* 38, տես նաև Մորոնի 7.48, 10.32–33, Վարդապետություն և Ուխտեր 76.56, 94–95, 84.33–38:
62. Վարդապետություն և Ուխտեր 93.20, շեշտադրումն ավելացված է:
63. Տես Մորոնի 10.32–33, Վարդապետություն և Ուխտեր 76.69, 94–95:
64. Ինչո՞ւ Աստված չի կարող կամ չի հայտնի ավելին՝ Իրեն նմանվելու գործընթացի մասին: Անկեղծ ասած, ես չգիտեմ բոլոր պատճառները: Սակայն, կան առնվազն երկուսը, որոնք ես հասկանում եմ: Առաջինն այն է, որ որոշ բաներ պարզապես անհասկանալի են մեր մահկանացու վիճակում (տես Վարդապետություն և Ուխտեր 78.17): Դա նման է նրան, որ փորձեք համացանցը բացատրել միջնադարում ապրող մարդուն: Բովանդակությունն ու հեռանկարն այդտեղ բացակայում են: Եվ երկրորդն այն է, որ շնորհի պարգևները մեզ հաճախ տրվում են հենց այն բանի համար, որ մենք պետք է տանջվենք ու պայքարենք անհայտի միջով:
65. Այն զոհաբերությունները, որոնք մեզ խնդրել են կատարել, կարող են էական լինել կատարելության հասնելու համար (տես Ջոզեֆ Սմիթ թարգմանություն, Եբրայեցիս 11.40 [Եբրայեցիս 11.40, տողատակի գրառում *ա*]):
66. Տես Հռովմեացիս 8.18:
67. Վարդապետություն և Ուխտեր 78.17–18

Երեց Ռոբերտ Ք. Գա
Յոթանասունի Նախագահությունից

Մեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը

Թող որ մենք հավատարմորեն մեզ վրա վերցնենք Հիսուսի անունը՝ տեսնելով, ինչպես Նա է տեսնում, ծառայելով, ինչպես Նա է ծառայել և վստահելով, որ Նրա շնորհը բավարար է։

Իմ ընկեր եղբայրնե՛ր և քույրե՛ր, վերջերս, երբ ես խոսում էի Եկեղեցին իր հայտնի դարձված անունով կոչելու Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հանձնարարության շուրջ, ես բացեցի այն տեղը, որտեղ Փրկիչը հրահանգեց նեփիացիներին Եկեղեցու անվան վերաբերյալ։[1] Երբ կարդացի Փրկիչի խոսքերը, ես ցնցվեցի, թե ինչպես Նա նաև ասաց ժողովրդին, որ «դուք պետք է ձեզ վրա վերցնեք Քրիստոսի անունը»։[2] Սա ստիպեց ինձ նայել ինքս ինձ և հարցնել. «Արդյոք ես վերցնում եմ ինձ վրա Փրկիչի անունը, ինչպես Նա կկամենար, որ ես անեի»։[3] Այսօր ես կկամենայի կիսվել այն տպավորություններից մի քանիսով, որոնք ես ստացել եմ՝ ի պատասխան իմ հարցին։

Առաջինը, մեզ վրա վերցնել Քրիստոսի անունը, նշանակում է մենք հավատարմորեն ձգտում ենք տեսնել, ինչպես Աստված է տեսնում։[4] Ինչպե՞ս է տեսնում Աստված։ Ջոզեֆ Սմիթն ասել է. «Մինչ մարդկային ցեղի մի մասը դատում է և դատապարտում մյուսին առանց ողորմածության, տիեզերքի Մեծ Ծնողը նայում է ողջ մարդկային ընտանիքին հայրական հոգատարությամբ և ծնողական ուշադրությամբ», քանի որ «Նրա սերն անսահման է»։[5]

Մի քանի տարի առաջ իմ մեծ քույրը հեռացավ կյանքից։ Նա դժվար կյանք էր ունեցել։ Նա մաքառում էր ավետարանի հետ և երբեք իսկապես ակտիվ չէր եղել։ Նրա ամուսինը լքեց նրան և թողեց նրան չորս մանկահասակ երեխաների հետ։ Նրա մահանալու օրը երեկոյան, մի սենյակում, որտեղ ներկա էին նրա երեխաները, ես նրան օրհնություն տվեցի, որպեսզի խաղաղ վերադառնար տուն։ Այդ պահին ես հասկացա, որ շատ հաճախ ես բնորոշել էի քրոջս կյանքը նրա փորձությունների և անգործության տեսանկյունից։ Երբ այդ երեկո ես ձեռքերս դրեցի նրա գլխին,մի խիստ դիտողություն ստացա Հոգու կողմից։ Հոգին ինձ փաստորեն տեղյակ պահեց նրա բարության մասին և ինձ թույլ տրվեց տեսնել նրան, ինչպես Աստված էր տեսնում նրան՝ ոչ թե մեկին, ով մաքառում էր ավետարանի և կյանքի հետ, այլ մեկը, ով գործ էր ունեցել դժվար խնդիրների հետ, որոնք ես չէի ունեցել։ Ես տեսա նրան, որպես հոյակապ մոր, ով չնայած մեծ խոչընդոտներին, մեծացրել էր չորս զեղեցիկ, հրաշալի երեխաներ։ Ես տեսա նրան, որպես ընկեր մեր մոր համար, ով ժամանակ էր հատկացնում հսկելու և ընկերակից լինելու նրա հետ մեր հոր՝ կյանքից հեռանալուց հետո։

Իմ քրոջ հետ այդ վերջին երեկոյի ընթացքում համոզված եմ, որ Աստված հարցնում էր ինձ. «Մի՞թե չես տեսնում, որ շուրջ բոլորդ ամեն մեկը սրբազան էակ է»։

Բրիգամ Յանգն ուսուցանել է.

«Ես կամենում եմ կոչ անել Սրբերին . . . հասկանալ տղամարդկանց և կանանց ինչպես որ նրանք կան, և ոչ թե հասկանալ նրանց, ինչպես որ դուք եք։[6]

Որքան հաճախ է ասվել. «Այդ անձնավորությունը սխալ է գործել, և նա չի կարող Սուրբ լինել»։ . . . Մենք լսում ենք, որ ոմանք հայհոյում են և ստում . . . [կամ] խախտում կիրակին։ . . . Մի դատեք այդպիսի մարդկանց, որովհետև դուք չգիտեք Տիրոջ նախագիծը նրանց վերաբերյալ»։ . . . [ավելի շուտ] դիմացեք նրանց»։[7]

Միթե՞ որևէ մեկը ձեզանից կարող է պատկերացնել, որ մեր Փրկիչը թույլ կտա, որ դուք և ձեր բեռներն

աննկատ անցնեն Նրա կողքով: Փրկիչը նույն աչքով նայեց Սամարացուն, շնացողին, հարկահավաքին, բորոտին, հոգեկան հիվանդին և մեղսագործին: Բոլորը Նրա Հոր զավակներն էին: Բոլորը ենթակա էին փրկագնման:

Արդյոք կարո՞ղ եք պատկերացնել, որ Նա շրջանցում է ինչ-որ մեկին, ով կասկածներ ունի Աստծո արքայությունում իրեն հատկացված տեղի մասին կամ որևէ կերպ տառապող մեկին:[8] Ես չեմ կարող: Քրիստոսի աչքում յուրաքանչյուր հոգի անսահման արժեք է: Ոչ ոքի համար նախասահմանված չէ ձախողում: Հավերժական կյանքը հնարավոր է բոլորի համար:[9]

Քրոջս անկողնու մոտ Հոգու նախատինքից ես սովորեցի մի մեծ դաս, որ երբ տեսնում ենք, ինչպես Նա է տեսնում, մերը կլինի կրկնակի հաղթանակը՝ փրկագնումը նրանց, ում մենք ենք հպվում և մեր սեփական փրկագնումը:

Երկրորդը, մեզ վրա վերցնելով Քրիստոսի անունը, մենք ոչ միայն պետք է տեսնենք այնպես, ինչպես Աստված է տեսնում, այլև պետք է կատարենք Նրա աշխատանքը և ծառայենք, ինչպես Նա ծառայեց: Մենք կիրառում ենք երկու մեծ պատվիրանները՝ ենթարկվում Աստծո կամքին, հավաքում Իսրայելը և թողնում, որ մեր լույսը «շողա մարդկանց առաջին»:[10] Մենք ընդունում ենք և ապրում Նրա վերականգնված Եկեղեցու ուխտերով և արարողություններով:[11] Երբ մենք անում ենք այս, Աստված օժտում է մեզ զորությամբ՝ օրհնելով մեզ, մեր ընտանիքներին և ուրիշների կյանքը:[12] Հարցրեք ինքներդ ձեզ. «Արդյո՞ք գիտեմ ինչ-որ մեկին, ով երկնքի զորությունների կարիքը չունի իր կյանքում»:

Աստված հրաշքներ կգործի մեր մեջ, երբ մենք սրբագործենք ինքներս մեզ:[13] Մենք սրբագործում ենք ինքներս մեզ՝ մաքրագործելով մեր սրտերը:[14] Մենք մաքրագործում ենք մեր սրտերը, երբ մենք լսում ենք Նրան,[15] ապաշխարում մեր մեղքերի համար,[16] դառնում դարձի եկած,[17] և սիրում, ինչպես նա է սիրում:[18] Փրկիչը հարցրեց մեզ. «Որովհետև, եթե ձեզ սիրողներին սիրէք, ինչ վարձք ունիք»:[19]

Ես վերջերս իմացա մի փորձառության մասին, որն ունեցել էր Երեց Ջեյմս Ի. Թալմիջը, որն ինձ ստիպեց կանգ առնել և մտածել, թե ինչպես եմ ես սիրում ու ծառայում նրանց, ովքեր իմ շրջապատում են: Երբ նա երիտասարդ դասախոս էր, նախքան Առաքյալ դառնալը, 1892 թվականին դիֆթերիայի համաճարակը գագաթնակետին էր հասել, և Երեց Թալմիջը հայտնաբերեց անծանոթ մի ընտանիքի՝ Եկեղեցու ոչ անդամների, ովքեր ապրում էին իրեն մոտիկ և տառապում էին այդ հիվանդությամբ: Ոչ ոք չէր ուզում իրեն վտանգի ենթարկել՝ ներս մտնելով այդ տունը: Սակայն Երեց Թալմիջը անմիջապես տուն մտավ: Նա գտավ չորս երեխաների՝ մեկը՝ երկուս ու կես տարեկան, որը մահացել էր մահճակալի վրա, մեկը հինգ, մյուսը՝ տասը տարեկան, որոնք ուժեղ ցավերի մեջ էին, և մի տասներեք տարեկանի, որը թուլացել էր հիվանդությունից: Ծնողները տառապում էին վշտից և ուժասպառ էին եղել:

Երեց Թալմիջը հագցրեց մահացածին և ողջերին, ավլեց սենյակները, և դրսումայրեց հիվանդությունից կեղտոտված ցնցոտիները: Նա աշխատեց ամբողջ օրը և ապա վերադարձավ հաջորդ առավոտ: Գիշերը տասը տարեկանը մահացել էր: Նա բարձրացրեց և գրկեց հնգամյա աղջկան: Աղջիկը հազաց արյունախառն լորձով, որը թռավ նրա երեսին և հագուստներին: Նա գրել է. «Ես չէի կարողանում վար դնել նրան», և գրկում պահեց նրան, մինչև մահացավ իր ձեռքերի մեջ: Նա օգնեց թաղել բոլոր երեք երեխաներին և ուտելիք և մաքուր հագուստներ պատրաստեց սգացող ընտանիքի համար: Տուն վերադառնալով Եղբայր Թալմիջը հանեց իր հագուստները, լողացավ ցինկի լուծույթով, իրեն մեկուսացրեց իր ընտանիքից և տառապեց այդ հիվանդության մեղմ ախտահարումից:[20]

Մեր շուրջն այնքան շատ կյանքեր են վտանգի տակ: Սրբերը վերցնում են Փրկիչի անունը իրենց վրա՝ դառնալով սուրբ և սպասավորելով բոլորին՝ անկախ նրանից, թե որտեղ են կամ ինչպես են կանգնած, կյանքեր են փրկվում, երբ մենք այդպես ենք վարվում:[21]

Ի վերջո, ես հավատում եմ, որ վերցնելով մեզ վրա Նրա անունը,

մենք պետք է վստահենք Նրան: Ժողովի ժամանակ, որին ես մասնակցում էի մի կիրակի, մի երիտասարդ կին հարցրեց նմանատիպ մի բան. «Ես և իմ ընկերը վերջերս բաժանվեցինք, և նա ընտրեց հեռանալ Եկեղեցուց: Նա ասում է, որ երբեք այդքան երջանիկ չէր եղել: Ինչպես կարող է սա լինել»:

Փրկիչը պատասխանել է այդ հարցին, երբ Նա ասել է Նեփիացիներին. «Բայց եթե [ձեր կյանքը] կառուցված չլինի իմ ավետարանի վրա, և կառուցված լինի մարդկանց գործերի վրա, կամ դևի գործերի վրա, ճշմարիտ եմ ասում ձեզ, [դուք] ուրախություն կունենաք [ձեր] գործերում միառժամանակ, և շուտով գալիս է վերջը, և նրանք կտրվում են, և գցվում կրակի մեջ, որտեղից չկա վերադարձ»:[22] Պարզապես Հիսուս Քրիստոսի ավետարանից դուրս չկա հարատև ուրախություն:

Այդ ժողովի ժամանակ, այնուամենայնիվ, ես մտածեցի իմ իմացած բազմաթիվ լավ մարդկանց մասին, ովքեր պայքարում են մեծ բեռների և պատվիրանների հետ, որոնք ամենից առավել են վիատեցնում նրանց: Ես հարցրեցի ինքս ինձ. «Էլ ի՞նչ կասեր Փրկիչը նրանց»:[23] Համոզված եմ, Նա կհարցներ. «Դուք վստահո՞ւմ եք ինձ»:[24] Արյան խնդիր ունեցող կնոջը Նա ասաց. «Քո հաւատքն ազատեց քեզ, գնա խաղաղությամբ»:[25]

Իմ սիրելի սուրբ գրություններից մեկը Հովհաննես 4.4-ն է, որն ասում է. «Եւ պէտք էր որ Սամարիայի միջովն անցնէր»:

Ինչո՞ւ եմ սիրում այդ հատվածը: Որովհետև Հիսուսը *չպետք* է գնար Սամարիա: Նրա օրերի հրեաները արհամարհում էին սամարացիներին և ճամփորդում էին՝ շրջանցելով Սամարիան: Բայց Հիսուսն ընտրեց գնալ այնտեղ՝ հայտարարելու ողջ աշխարհին առաջին անգամ, որ Ինքը խոստացված Մեսիան էր: Այդ ուղերձի համար Նա ընտրեց ոչ միայն մի վտարված խմբի, այլ նաև մի կնոջ, և ոչ թե ուղղակի որևէ կնոջ, այլ մի կնոջ, ով մեղքի մեջ էր ապրում, մեկին, ում այդ ժամանակ համարում էին ցածրագույնից ցածրագույնը: Համոզված եմ, որ Հիսուսն արեց այդպես, որպեսզի մեզանից յուրաքանչյուրը կարողանար միշտ հասկանալ, որ Նրա սերն ավելի մեծ է, քան մեր երկյուղները, մեր վերքերը, մեր կախվածությունները, մեր կասկածները, մեր գայթակղությունները, մեր մեղքերը, մեր խորտակված ընտանիքները, մեր ընկճախտն ու սրտնեղությունները, մեր խրոնիկական հիվանդությունը, մեր աղքատությունը, մեր հիասթափությունը և մեր մենակությունը:[26] Նա կամենում է, որ բոլորն իմանան՝ չկա մի բան և չկա մեկը, որին Նա չկարողանա բժշկել և տալ հարատև ուրախություն:[27]

Նրա շնորհը բավարար է:[28] Նա միայնակ իջավ բոլոր բաներից ցած: Նրա Քավության զորությունը ամեն բեռ հաղթահարելու զորությունն է մեր կյանքում:[29] Ջրհորի մոտ կանգնած կնոջ ուղերձն այն է, որ Նա գիտի մեր կյանքի իրավիճակները,[30] և որ մենք կարող ենք միշտ քայլել Նրա հետ, անկախ նրանից, թե որտեղ ենք կանգնած: Նրան և մեզանից յուրաքանչյուրին Նա ասում է. «Ամեն այդ ջրիցը խմողը դարձեալ կծարաւի. բայց ով որ խմէ այն ջրիցը, որ ես կտամ նորան, նա յաւիտեան չի ծարաւիլ: Այլ այն ջուրը, որ ես կտամ նորան, աղբիւր կլինի նորանում, որ յաւիտենական կեանքի համար կբղխէ:[31]

Կյանքի ամեն ճամփորդություններում ինչո՞ւ պիտի դուք երբևէ հեռանաք միակ Փրկիչից, ով ունի ողջ զորությունը բժշկելու և ազատելու ձեզ: Ինչ գին էլ որ վճարեք Նրան վստահելու համար, արժե: Իմ եղբայրնե՛ր և քույրե՛ր, եկեք ընտրենք մեծացնել մեր հավատքը Երկնային Հոր և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի հանդեպ:

Իմ հոգու խորքից ես բերում եմ վկայություն, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Փրկիչի Եկեղեցին է, որն ուղղորդվում է կենդանի Քրիստոսի կողմից ճշմարիտ մարգարեի միջոցով: Ես աղոթում եմ, որ մենք հավատարմորեն մեզ վրա վերցնենք Հիսուսի անունը՝ տեսնելով, ինչպես Նա է տեսնում, ծառայելով, ինչպես Նա է ծառայել և վստահելով, որ Նրա շնորհը բավական է մեզ տուն և հարատև ուրախության հասցնելու համար: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես 3 Նեփի 27.3–8:
2. Տես 3 Նեփի 27.5–6, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 20.77 և հաղորդության ուխտը:
3. See Dallin H. Oaks, *His Holy Name* (1998)

for a comprehensive study about taking upon ourselves and being a witness of the name of Jesus Christ.

4. Տես Մոսիա 5.2–3: Թագավոր Բենիամինի ժողովրդի մեջ, ովքեր իրենց վրա վերցրին Քրիստոսի անունը, սրտի զորեղ փոփոխության մասն էր կազմում այն, որ նրանց աչքերը բացվեցին դեպի «մեծ պատկերացումներ»: Նրանք, ովքեր ժառանգում են սելեստիալ արքայությունը, այն անձնավորություններն են, ովքեր «տեսնում են, ինչպես իրենք են տեսնվում» (Վարդապետություն և Ուխտեր 76.94):
5. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 39:
6. Brigham Young, in *Journal of Discourses,* 8:37.
7. *Discourses of Brigham Young,* sel. John A. Widtsoe (1954), 278.
8. Տես 3 Նեփի 17.7:
9. Տես Հովհաննես 3.14–17, Գործք 10.34, 1 Նեփի 17.35, 2 Նեփի 26.33, Վարդապետություն և Ուխտեր 50.41–42, Մովսես 1.39: Երեց Դ. Թոդ Քրիսթոֆերսոնը նույնպես ուսուցանել է. «Մենք վստահաբար վկայում ենք, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը նախատեսված էր և, ի վերջո, կփոխհատուցի բոլոր նրանց զրկանքներն ու կորուստները, ովքեր դիմում են Նրան: Ոչ մեկի համար նախասահմանված չէ, որ ավելի քիչ ստանա, քան այն ամենը, ինչ Հայրն ունի Իր զավակների համար» («Ինչո՞ւ ամուսնություն, ինչո՞ւ ընտանիք», *Լիահոնա,* մայիս 2015, 52):
10. Տես Մատթեոս 5.14–16, 22.35–40; Մոսիա 3.19, Վարդապետություն և Ուխտեր 50.13–14, 133.5, տես նաև Ռասսել Մ.Նելսոն, «Ցրված Իսրայելի հավաքումը», *Լիահոնա,* նոյեմբեր 2006, 79–81:
11. Տես Ղևտացոց 18.4, 2 Նեփի 31.5–12, Վարդապետություն և Ուխտեր 1.12–16, 136.4, Հավատո Հանգանակ 1.3–4:
12. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.20–21. 110.9:
13. Տես Յեսու 3.5, Վարդապետություն և Ուխտեր 43.16, տես նաև Հովհաննես 17.19: Փրկիչը սրբագործեց Իրեն, որպեսզի զորություն ունենար՝ օրհնելու մեզ:
14. Տես Հելաման 3.35, Վարդապետություն և Ուխտեր 12.6–9, 88.74:
15. Տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17, Մարգարե Ջոզեֆ Սմիթին տեսիլքում Աստծո կողմից տրված առաջին հրամանը, տես նաև 2 Նեփի 9.29, 3 Նեփի 28.34:
16. Տես Մարկոս 1.15, Գործք 3.19, Ալմա 5.33, 42.22–23, Վարդապետություն և Ուխտեր 19.4–20: Խորհեք մեղքի վերաբերյալ այս երկու մտքերի շուրջ: Առաջինը՝ Հյու Նիբլին գրում է. «Մեղքը թափոն է: Դա այն է, որ մի բան անում եք մեկ այլ բանի փոխարեն, ընդ որում, ավելի լավ բաների, որի համար դուք ունեք կարողություն» (*Approaching Zion,* ed. Don E. Norton [1989], 66): Ջոն Ուեսլիի մայրը՝ Սուսաննա Ուեսլին գրել է իր որդուն. «Ընտրիր այս կանոնը. Այն ինչ թուլացնում է քո բանականությունը, վնասում է քո խղճի զգայունությանը, մթագնում է Աստծո քո զգացողությունը, վերացնում է հոգևոր բաների հանդեպ քո համի զգացումը, այն ամենը ինչ մեծացնում է մարմնի իշխանությունը մտքիդ վրա, այդ բանը մեղք է քո համար, որքան էլ այն ինքնըինքստյան անմեղ թվա» (*Susanna Wesley: The Complete Writings* ed. Charles Wallace Jr. [1997], 109):
17. Տես Ղուկաս 22.32, 3 Նեփի 9.11, 20:
18. Տես Հովհաննես 13.2–15, 34: Իր Քավության նախօրեին Փրկիչը լվաց մեկի ոտքերը, ով դավաճանել էր Իրեն, մյուսինը, ով ուրացել էր Իրեն և մյուսներինը, ովքեր ննջել էին Իրեն ամենաանհրաժեշտ ժամին: Նա այդ ժամանակ ուսուցանեց. «Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրէք. ինչպես ես ձեզ սիրեցի»:
19. Մատթեոս 5.46:
20. See John R. Talmage, *The Talmage Story: Life of James E. Talmage—Educator, Scientist, Apostle* (1972), 112–14.
21. Տես Ալմա 10.22–23, 62.40:
22. 3 Նեփի 27.11:
23. Մատթեոս 11.28–30, Տերն ասում է. «Ինձ մօտ եկէք, ամեն վաստակածներ եւ բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ կ'տամ ձեզ: Որովհետեւ իմ լուծը քաղցր է, եւ իմ բեռը՝ թեթեւ»: . . . Նաև դիտարկեք Բ Կորնթացիս 12.7–9. Պողոսը նկարագրում է տառապանքը՝ որպես շատ հզոր «փուշ մարմնում», որի համար նա աղոթում էր, որ հեռացվեր: Քրիստոսն ասաց նրան. «Բավական է քեզ իմ շնորհքը, որովհետև իմ զօրությունը տկարության մեջ է կատարվում»: Տես նաև Եթեր 12.27:
24. Տես Մոսիա 7.33, 29.20, Հելաման 12.1, Վարդապետություն և Ուխտեր 124.87:
25. Տես Ղուկաս 8.43–48, Մարկոս 5.25–34: Արյան հետ խնդիր ունեցող կինը անհուսալի կարիքի մեջ էր և այլընտրանք չուներ: Նա տառապել էր 12 տարի, իր ունեցածը ծախսել էր բժիշկների վրա և գնալով ավելի էր վատանում: Իր ժողովրդի և ընտանիքի կողմից վտարված, նա նպատակասլացորեն իր ուղին էր բացում մի մեծ բազմության մեջ և նետվեց դեպի Փրկիչը: Նա լիակատար վստահություն ուներ Փրկիչի հանդեպ, և Նա զգաց նրա հպումը Իր հագուստի քղանցքին: Այդ հավատքի շնորհիվ Նա վայրկենապես և լիովին բժշկեց նրան: Նա այդ ժամանակ կոչեց նրան «դուստր»: Նա այլևս վտարանդի չէր, այլ Աստծո ընտանիքի անդամ: Նրա բժշկումը ֆիզիկական էր, հասարակական, հուզական և հոգևոր: Մարտահարվերները կարող են ձգվել տարիներ կամ ողջ կյանքի ընթացքում, բայց բժշկության նրա խոստումը վստահելի է ու բացարձակ:
26. Տես Ղուկաս 4.21, Հովհաննես 4.6–26: Ղուկասը, և ոչ թե Հովհաննեսն է արձանագրել, որ Հիսուսի ծառայության վաղ շրջանում Նա գնաց Իր իսկ ժողովատունը Նազարեթում, կարդաց մի հատված Մեսիայի վերաբերյալ Եսայիայի մարգարեությունից և հետո հայտարարեց. «Այսօր այս գիրքը կատարուեցաւ ձեր ականջներումը»: Սա առաջին նկարագրված պահն է, երբ Փրկիչը խոսում է Իր մասին որպես Մեսիա: Սակայն Հակոբի ջրհորի մոտ Հովհաննեսը արձանագրում է առաջին անգամ, որ Հիսուսը հրապարակավ հայտարարում է Իր Մեսիականության մասին: Այս միջավայրում, քանի որ սամարացիները համարվում էին ոչ հրեա, Հիսուսը նաև ուսուցանեց, որ Իր ավետարանը բոլորի համար է, ինչպես հրեայի, այնպես էլ հեթանոսի: Այս հայտարարությունը տեղի է ունենում «վեցերորդ ժամին» կամ կեսօրին, երբ երկրագունդը ստանում է լիակատար լույսը արևից: Հակոբի ջրհորը նույնպես դաշտավայրում էր ճշգրիտ կետի մոտ, որտեղ Իսրայելը ծիսակատարությամբ ուխտ կապեց Տիրոջ հետ խոստումի երկիր մտնելուց հետո: Հետաքրքիր է, որ դաշտավայրի մի կողմում չոր սար է, իսկ սարի մյուս կողմում կյանք տվող ջրով լի աղբյուրներ են:
27. Երեց Նիլ Ա. Մաքսվելն ասել է. «Երբ լարվածության պահերին մենք մտորում ենք, թե կա՞ արդյոք ավելին մեր մեջ տալու համար, մենք կարող ենք հանգստանալ, իմանալով, որ Աստված, ով կատարելապես գիտի մեր կարողությունը, դրել է մեզ այստեղ՝ հաջողության հասնելու համար: Ոչ ոք չի նախակարգվել ձախողվելու կամ ամբարիշտ լինելու համար: . . . Երբ մենք համակված ենք վշտով, եկեք հիշենք հավաստիացումը, որ Աստված չի վերածրագրավորի մեզ» (“Meeting the Challenges of Today” [Brigham Young University devotional, Oct. 10, 1978], 9, speeches.byu.edu):
28. Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է.

    «Գալիք մի օր, դուք կներկայանաք Փրկիչի առջև: Դուք ցնցված կլինեք արտասվելու աստիճան Նրա սուրբ ներկայության մեջ լինելու համար: Դուք կդժվարանաք խոսքեր գտնել, որ Նրան շնորհակալություն հայտնեք ձեր մեղքերի համար վարձահատույց լինելու, ուրիշների հանդեպ ձեր ցանկացածանբարյացկամություն ներելու, ձեր վնասվածքներից և այս կյանքի անարդարություններից բժշկելու համար:

    Դուք շնորհակալություն կհայտնեք Նրան անհնարինը կատարելիս ձեզ զորացնելու համար, ձեր թուլությունները ուժեղ կողմեր դարձնելու համար, և ձեզ համար Իր հետ և ձեր ընտանիքի հետ հավերժ ապրելը հնարավոր դարձնելու համար: Նրա ինքնությունը, Նրա Քավությունը և Նրա հատկանիշները անձնական և իրական կդառնան ձեզ համար» (“Prophets, Leadership, and Divine Law” [worldwide devotional for young adults, Jan. 8, 2017], broadcasts.lds.org):
29. Տես Եսայիա 53.3–5, Ալմա 7.11–13, Վարդապետություն և Ուխտեր 122.5–9:
30. Տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17, Էլեյն Ս. Դալտոն, «Նա գիտի ձեզ անունով», *Լիահոնա,* մայիս 2005, 109–11:
31. Հովհաննես 4.14:

Երեց Մեթյու Լ. Քարփենթեր
Յոթանասունից

Կամենու՞մ ես առողջ լինել։

Հիսուս Քրիստոսի քավության շնորհիվ, եթե մենք ապաշխարենք և մեր սրտերը լիովին դարձնենք դեպի Փրկիչը, նա հոգևորապես կբուժի մեզ։

Ի քանի ամիս գտնվելով իր միսիայում, մեր կրտսեր որդին և նրա միսիոներական զուգընկերը ավարտում էին իրենց ուսումնասիրությունը, երբ մեր որդին մի բութ ցավ զգաց գլխում։ Նա տարօրինակ էր զգում իրեն. սկզբում ձախ թևը չզգաց, իսկ հետո լեզուն անզգայացավ։ Նրա դեմքի ձախ կողմը սկսեց թուլանալ։ Նա դժվարանում էր խոսել։ Նա հասկացավ, որ ինչ-որ բան սխալ էր։ Բայց նա չգիտեր, որ իր ուղեղի երեք մասը կաթվածահար էր եղել։ Վախը սկսեց պատել նրան, երբ նա մասամբ անզգայացավ։ Կաթվածի ենթարկված մարդը որքան արագ է բուժում ստանում, այնքան զգալիորեն արդյունավետ է լինում նրա ապաքինումը։ Նրա հավատարիմ միսիոներական զուգընկերը վճռականորեն գործեց։ 911 զանգելուց հետո նա քահանայության օրհնություն տվեց նրան։ Հրաշքով շտապօգնությունը ընդամենը հինգ րոպե հեռավորության վրա էր։

Երբ մեր որդուն արագ հասցրին հիվանդանոց, բժշկական անձնակազմը արագ գնահատեց իրավիճակը և որոշեց, որ նա պետք է մի դեղահաբ ընդուներ, որը կարող է հնարավորինս և աստիճանաբար փոխել կաթվածի անշարժացնող հետևանքները։[1] Սակայն, եթե մեր որդու մոտ կաթված չլիներ, այդ դեղահաբը կարող էր ծանր հետևանքներ թողնել, օրինակ՝ ուղեղի արյունահոսություն։ Մեր որդին ստիպված էր ընտրություն կատարել։ Նա որոշում կայացրեց ընդունել դեղահաբը։ Թեև լիարժեք վերականգնումը պահանջում էր

ավելի շատ վիրահատություններ և շատ ամիսներ, մեր որդին, ի վերջո, վերադարձավ և ավարտեց իր միսիան, երբ կաթվածի հետևանքները զգալիորեն վերականգնվեցին։

Մեր Երկնային Հայրն ամենակարողն ու ամենագիտակն է։ Նա տեղյակ է մեր ֆիզիկական մաքառումների մասին։ Նա տեղյակ է հիվանդության, տարիքի, դժբախտ պատահարների կամ ծննդաբերության խանգարումների ժամանակ առաջացած մեր ֆիզիկական ցավերից։ Նա տեղյակ է անհանգստության, մենակության, ընկճախտի կամ հոգեկան հիվանդության հետ կապված զգացմունքային մաքառումների մասին։ Նա ճանաչում է յուրաքանչյուր մարդու, ով տառապել է անարդարության կամ չարաշահումների պատճառով։ Նա գիտի մեր թուլությունները, հակումներն ու գայթակղությունները։

Մահկանացու կյանքում մենք փորձվում ենք, որպեսզի պարզվի, թե արդյոք նախընտրում ենք բարին չարից։ Նրանք, ովքեր պահում են Նրա պատվիրանները, կապրեն Նրա հետ «երբեք չվերջացող երջանկության վիճակում»։[2] Որպեսզի օգնի մեզ նմանվել Իրեն, Երկնային Հայրը տվել է ողջ զորությունը և գիտելիքներն Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին։ Չկա որևէ ֆիզիկական, զգացմունքային կամ հոգևոր հիվանդություն, որը Քրիստոսը չի կարող բուժել։[3]

Փրկիչի մահկանացու ծառայությունից սուրբ գրությունները պատմում են բազմաթիվ հրաշքների մասին, որտեղ Հիսուս Քրիստոսն Իր աստվածային զորության շնորհիվ բուժել է նրանց, ովքեր տառապել են ֆիզիկապես։

Հովհաննեսի ավետարանը պատմում է մի մարդու մասին, ով 38 տարի շարունակ տառապել էր անբուժելի հիվանդությամբ։

«Երբոր Յիսուսը նորան պառկած տեսաւ, եւ գիտաց, թէ արդէն շատ ժամանակից է, նորան ասեց. Կամենո՞ւմ ես առողջ լինիլ»։

Տկար մարդը պատասխանեց, որ ոչ ոք չուներ, որ օգներ իրեն կարիքի պահին։

«Հիսուսը նորան ասաց. «Վեր կաց, մահիճդ առ և ման եկ։

«Եվ մարդն *իսկոյն* ողջացավ, և վեր առավ իր մահիճը և ման էր գալիս»:[4]

Ուշադրություն դարձրեք այն զուգադրմանը, թե որքան երկար էր այդ մարդը ինքնուրույն տառապել, 38 տարի, և որքան արագ բուժվեց Փրկիչի մասնակցությամբ: Բուժումն «*իսկույն էր*»:

Մեկ այլ օրինակում, մի կին, ով 12 տարի արյան խնդիր էր ունեցել, ով «իր բոլոր ինչքը բժիշկների ծախսելով , . . . Սա մօտ եկաւ ետեւիցը, նորա հանդերձի ծայրին դպաւ և *իսկոյն* նրա արյունի վազելը *[կանգնեց]*: . . .

Եւ Յիսուսը ասեց, . . . Մեկը դպաւ ինձ. որովհետեւ ես իմացայ՝ որ զօրութիւն դուրս եկաւ ինձանից:

Եւ երբոր տեսաւ կինը, որ ծածուկ չմնաց, . . . եւ բոլոր ժողովրդի առաջին պատմեց նորան, . . . թէ ինչպէս *իսկոյն* բժշկուեցաւ:[5]

Իր ծառայության ժամանակ Քրիստոսն ուսուցանում էր, որ զորություն ուներ ֆիզիկական մարմնի դեմ: Մենք չենք կարող վերահսկել այն ժամանակը, թե Քրիստոսը երբ կբուժի մեր ֆիզիկական հիվանդությունները: Ապաքինումը տեղի է ունենում Նրա կամքով և իմաստությամբ: Սուրբ գրություններում ոմանք տասնամյակներ շարունակ տառապել են, մյուսները՝ ամբողջ մահկանացու կյանքը: Մահկանացու տկարությունները կարող են մաքրել մեզ և մեծացնել մեր կախվածությունն Աստծուց: Բայց երբ մենք թույլ տանք Քրիստոսը մասնակցի, Նա միշտ հոգևորապես կուժեղացնի մեզ, որպեսզի ավելի շատ ունակություն ունենանք՝ մեր բեռները տանելու համար:

Ի վերջո, մենք գիտենք, որ ամեն ֆիզիկական հիվանդություն, տկարություն կամ անկատարություն կբժշկվի Հարության մեջ: Հիսուս Քրիստոսի քավության շնորհիվ դա պարգև է բոլոր մարդկանց:[6]

Հիսուս Քրիստոսը կարող է ավելին բուժել, քան մեր ֆիզիկական մարմիններն են: Նա կարող է բուժել նաև մեր հոգին: Սուրբ գրություններից մենք սովորում ենք, թե ինչպես Քրիստոսն օգնեց նրանց, ում հոգիները թույլ էին և առողջացրեց նրանց:[7] Երբ մտածում ենք այդ փորձառությունների մասին, մեր հույսն ու հավատը մեծանում է մեր կյանքն օրհնելու Փրկիչի զորության հանդեպ: Հիսուս Քրիստոսը կարող է փոխել մեր սրտերը, բուժել մեզ անարդարության կամ չարաշահման հետևանքներից, ավելի մեծ ուժ տալ կրելու մեր կորուստը և խոր վիշտը, և տալ մեզ խաղաղություն՝ օգնելով դիմանալ մեր կյանքի փորձություններին և բժշկել մեր զգացմունքները:

Քրիստոսը կարող է բուժել մեզ, երբ մեղք ենք գործում: Մենք մեղք ենք գործում, երբ գիտակցաբար խախտում ենք Աստծո օրենքներից մեկը:[8] Երբ մեղք ենք գործում, մեր հոգին դառնում է անմաքուր: Ոչ մի անմաքուր բան չի կարող բնակվել Աստծո ներկայության մեջ:[9] «Մեղքից մաքրվելը հոգևորապես բժշկվելն է»:[10]

Հայր Աստված գիտի, որ մենք մեղք կգործենք, բայց նա ուզի է պատրաստել մեր փրկագնման համար: Երեց Լին Գ. Ռոբբինսն ուսուցանել է. «Ապաշխարությունը [Աստծո] պահուստային ծրագիրը չէ այն դեպքերի համար, երբ հնարավոր է, ձախողվենք: *Ապաշխարությունը* Նրա ծրագիրն է, իմանալով հանդերձ, որ մենք ձախողվելու ենք»:[11] Երբ մենք մեղք ենք գործում, մենք հնարավորություն ունենք տարբերել բարին չարից: Մեղքից հետո մենք բարին ենք ընտրում, երբ ապաշխարում ենք: Հիսուս Քրիստոսի և Նրա քավիչ զոհաբերության շնորհիվ կարող ենք փրկագնվել մեր մեղքերից և վերադառնալ Հայր Աստծո ներկայությունը, եթե մենք ապաշխարենք: Հոգևոր ապաքինումը միակողմանի չէ, այն պահանջում է Փրկիչի փրկագնող զորությունն ու անկեղծ ապաշխարությունը մեղավորի կողմից: Նրանք, ովքեր չեն ընտրում ապաշխարության ճանապարհը, մերժում են բժշկելու Քրիստոսի առաջարկը: Նրանց համար, կարծես, ոչ մի փրկագնում չէր արվել:[12]

Ուրիշներին ապաշխարելու խորհուրդ տալիս, ես միշտ զարմացել եմ, որ մեղքի մեջ ապրող մարդիկ դժվարանում են ճիշտ որոշումներ կայացնել: Սուրբ Հոգին լքում էր նրանց, և նրանք հաճախ դժվարանում էին այնպիսի ընտրություններ կատարել, որոնք նրանց ավելի կմոտեցնեին Աստծուն: Նրանք ամիսներ կամ տարիներ շարունակ պայքարում էին՝ ամաչելով կամ վախենալով իրենց մեղքերի հետևանքներից: Հաճախ նրանք զգում էին, որ երբեք չեն կարող փոխվել կամ ներվել: Հաճախ ինձ պատմել են, որ վախենում են նրանից, որ եթե իրենց սիրելիները բացահայտեն իրենց արարքը, նրանք կդադարեն սիրել կամ կհեռանան: Երբ նրանք այդպես էին մտածում, որոշում էին կայացնում պարզապես լռել և հետաձգել իրենց ապաշխարությունը: Նրանք սխալմամբ կարծում էին, որ ավելի լավ է չապաշխարել հիմա, որպեսզի այլևս ցավ չպատճառեն իրենց սիրելիներին: Իրենց մտքում ավելի լավ էր տառապել այս կյանքից հետո, քան հիմա՝ ապաշխարության ընթացքի միջոցով: Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ձեր ապաշխարության

հետաձգումը երբեք լավ գաղափար չէ: Հակառակորդը հաճախ օգտագործում է վախը, որպեսզի խանգարի մեզ անմիջապես կիրառել Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատը:

Երբ սիրելիները լսում են մեղավոր վարքի մասին ճշմարտությունը, թեև նրանք կարող են խորապես վիրավորվել, նրանք հաճախ ցանկանում են օգնել անկեղծորեն ապաշխարող մեղավորին փոխվել և հաշտվել Աստծո հետ: Անշուշտ, հոգևոր ապաքինումն արագանում է, երբ մեղավորը խոստովանում է և շրջապատված է նրանց կողմից, ովքեր սիրում և օգնում են նրան՝ թողնելու իր մեղքերը: Խնդրում ենք հիշել, որ Հիսուս Քրիստոսը զորեղ է և նաև բուժում է անմեղ զոհերին, ովքեր դիմում են Նրա օգնությանը:[13]

Նախագահ Բոյդ Ք. Փաքերն ասել է. «Մեր հոգիները վնասվում են, երբ մենք կատարում ենք սխալներ և գործում մեղքեր: Բայց ի տարբերություն մեր մահկանացու մարմինների, երբ ապաշխարության գործընթացն ավարտվում է, ոչ մի սպի չի մնում Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ: Սա է խոստումը. «Ահա, ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես Տերս, այլևս չեմ հիշում դրանք» [Վարդապետություն և Ուխտեր 58.42]»:[14]

Երբ ապաշխարում եք «սրտի ողջ նվիրվածությամբ»,[15] ձեր կյանքում «փրկագնման մեծ ծրագիրն *անհապաղ* պիտի իրագործվի ձեզ համար»:[16] Փրկիչը կբուժի մեզ:

Կաթվածից տուժած մեր որդուն օգնություն ցուցաբերած միսիայի զուգընկերը և մասնագիտական բժշկական անձնակազմը արագ արձագանքեցին: Մեր որդին ստացավ կաթվածը վերականգնող դեղահաբը: Վերկանգնվեցին անշարժացնող հետևանքները, որոնք կարող էին նրան ուղեկցել իր ողջ մահկանացու կյանքի ընթացքում: Նմանապես, որքան շուտ ապաշխարենք և Հիսուս Քրիստոսի Քավությունը մեր կյանք բերենք, այդքան շուտ կարող ենք բուժվել մեղքի հետևանքներից:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հետևյալ հրավերն է հղել. «Եթե դուք դուրս եք եկել այդ ուղուց, թույլ տվեք

հրավիրել՝ . . . ետ վերադարձեք: Անկախ ձեր մտահոգություններից, անկախ ձեր խնդիրներից, Տիրոջ այս Եկեղեցում ձեզ համար տեղ կա: Դուք և դեռ չծնված սերունդները կօրհնվեք, եթե դուք այժմ վերադառնաք ուխտի ուղու վրա»:[17]

Մեր հոգևոր ապաքինման համար անհրաժեշտ է ընդունել այն պայմանները, որոնք մեր Փրկիչն է կարևորել: Մենք չպիտի հետաձգենք: Մենք պիտի այսօր գործենք: Գործեք հիմա, որպեսզի հոգևոր կաթվածը չխանգարի ձեր հավերժական առաջընթացին: Իմ ելույթի ժամանակ, եթե զգացել եք, որ պետք է ներողություն խնդրեք ինչ-որ մեկից, ապա ես հրավիրում եմ ձեզ գործել: Նրանց պատմեք, թե ինչ եք արել: Հայցեք նրանց ներումը: Եթե որևէ մեղք եք գործել, որն ազդում է ձեր տաճարային արժանավորության վրա, ես հրավիրում եմ այսօր նեթ խորհուրդ անել ձեր եպիսկոպոսի հետ: Մի հետաձգեք:

Իմ եղբայրնե՛ր և քույրե՛ր, Աստված մեր սիրող Երկնային Հայրն է: Նա ողջ զորությունը և գիտելիքները տվել է Իր Սիրելի Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Նրա շնորհիվ ամբողջ մարդկությունը մի օր կապաքինվի բոլոր ֆիզիկական հիվանդություններից: Հիսուս Քրիստոսի քավության շնորհիվ, եթե մենք ապաշխարենք և մեր սրտերը լիովին դարձնենք դեպի Փրկիչը, նա հոգևորապես կբուժի մեզ: Այդ ապաքինումը կարող է սկսվել անմիջապես: Ընտրությունը՝ մերն է: *Կամենո՞ւմ ենք առողջ լինել:*

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը վճարեց գինը, որ մենք կարողանանք առողջ լինել: Բայց մենք պիտի որոշում կայացնենք՝ ընդունելու Նրա ապաքինող դեղահաբը: Ընդունե՛ք այն այսօ՛ր: Մի հետաձգեք: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Այդ դեղահաբը կոչվում է tPA (հյուսվածքի պլազմինոգեն ակտիվատոր):
2. Մոսիա 2.41
3. Տես Մատթեոս 4.24: Քրիստոսը բուժեց բոլոր հիվանդներին, նույնիսկ «ամեն հիվանդներին», «կերպ կերպ ցավերով», «դիվահարներին» և «լուսնոտներին»:
4. Տես Հովհաննես 5.5–9, շեշտադրումն ավելացված է:
5. Տես Ղուկաս 8.43–47, շեշտադրումն ավելացված է:
6. Տես Ալմա 40.23, Հելաման 14.17:
7. Տես Ղուկաս 5.20, 23–25, տես նաև Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ղուկաս 5.23 (Ղուկաս 5.23, տողատակի գրառում *ա*). «Մեղքեր ներելը արդյո՞ք ավելի ուժ է պահանջում, քան հիվանդին ստիպելը վեր կենալ և քայլել»:
8. Տես Ա Հովհաննես 3.4:
9. Տես 3 Նեփի 27.19:
10. «Հիսուս Քրիստոսի ավետարանը», *Քարոզիր իմ ավետարանը. Միսիոներական ծառայության ուղեցույց*, փոփ. հրտ. (2018), lds.org/manual/missionary:
11. ԼԻՆ Գ. Ռոբբինս, «Մինչև յոթանասուն անգամ յոթը», *Լիահոնա,* մայիս 2018, 22:
12. Տես Մոսիա 16.5:
13. Շատ դեպքերում ես ականատես եմ եղել այն անձանց արագացված ապաքինմանը, երբ ընտանիքի անդամները հավաքվել են այն մարդու շուրջ, ով խախտել է հավատարմության և վստահության խոստումները, և օգնել են նրան լիարժեք դառնալ դեպի Փրկիչը իր կյանքում Նրա բժշկող զորությունը ստանալու համար: Եթե իսկապես ապաշխարող հոգին անկեղծորեն ձգտում է փոխվել, ընտանիքի անդամները, օգնելով նրան ավետարանի ուսումնասիրության, անկեղծ աղոթքի և Քրիստոսանման ծառայության մեջ, ոչ միայն օգնում են մեղավորին փոխվել, այլև բացում են դուռն իրենց կյանքում Փրկիչից ավելի լիարժեք ապաքինում ստանալու համար: Անհրաժեշտության դեպքում, անմեղ զոհերը կարող են օգնել մոլորված մեղավորին՝ փնտրելով երկնային առաջնորդություն, թե ինչ ուսումնասիրել, ինչպես ծառայել և ներգրավել ընտանիքի անդամներին՝ աջակցելու և ամրապնդելու ապաշխարող հոգուն, որպեսզի փոխվի և օգտվի Հիսուս Քրիստոսի փրկագնող զորությունից:
14. Բոյդ Ք.Փաքեր, «Երջանկության Ծրագիրը», *Լիահոնա,* մայիս 2015, 28:
15. 3 Նեփի 18.32
16. Ալմա 34.31, շեշտադրումն ավելացված է:
17. Ռասսել Մ. Նելսոն, «Միասին առաջ ընթանալով», *Լիահոնա,* ապրիլ 2018, 7:

Երեց Դեյլ Գ. Ռենլանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ընտրեք այս օրը

Մեր հավերժական երջանկության չափը կախված է կենդանի Աստծուն ընտրելուց և Նրա գործում Նրան միանալուց։

Շեքիաթային կերպար Մերի Փոպինսը տիպիկ անգլիական դայակ է, ով պարզվում է, կախարդական ուժ ունի։[1] Նա թռչում է արևելյան քամու զորությամբ և օգնության հասնում Էդվարդյան Լոնդոնում Չերի Թրի Լեյն փողոցի համար 17 տանը բնակվող ահաբեկված Բանքեր ընտանիքին։ Նրա խնամքին են հանձնում երեխաներին՝ Ջեյնին և Մայքլին։ Հաստատակամորեն, բայց բարյացակամությամբ նա սկսում է հմայիչ հպումով արժեքավոր դասեր ուսուցանել նրանց։

Ջեյնը և Մայքլը նշանակալի առաջընթաց են ունենում, բայց Մերին որոշում է, որ իր հեռանալու ժամանակն է։ Բեմադրության մեջ Մերիի ծխնելույզ մաքրող ընկեր Բերթը փորձում է տարհամոզել նրան, որ չմեկնի։ Նա պնդում է. «Բայց նրանք լավ երեխաներ են Մերի»։

Մերին պատասխանում է. «Միթե՞ ես կանհանգստանայի նրանց համար, եթե նրանք լավը չլինեին։ Բայց ես չեմ կարող օգնել նրանց, եթե նրանք չեն կամենում թույլ տալ ինձ և չի կարող լինել ոչ մեկը, ում այնքան դժվար լիներ ուսուցանել, որքան այն երեխան, ով գիտի ամեն ինչ»։

Բերթը հարցնում է. «Ուրե՞մն»։

Մերին պատասխանում է. «Ուրեմն նրանք պետք է հաջորդ քայլն ինքնուրույն անեն»։[2]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, Ջեյն և Մայքլ Բանքերի նման, մենք «լավ երեխաներ ենք», ում մասին արժե անհանգստանալ։ Երկնային Հայրը ցանկանում է օգնել և օրհնել մեզ, բայց մենք միշտ չէ, որ թույլ ենք տալիս Նրան։ Երբեմն մենք նույնիսկ գործում ենք այնպես, կարծես, արդեն գիտենք ամեն ինչ։ Եվ մենք ևս պետք է ինքնուրույն անենք «հաջորդ քայլը»։ Այդ պատճառով ենք մենք եկել երկիր նախամահկանացու երկնային տնից։ Մեր «քայլը» ներառում է ընտրություններ կատարել։

Դաստիարակելիս մեր Երկնային Հոր նպատակն այն չէ, որ Իր զավակներն *անեն* այն, ինչը ճիշտ է, այլ որ Իր զավակներն ընտրեն անել այն, ինչը ճիշտ է և, ի վերջո, դառնան Իր նման։ Եթե Նա պարզապես կամենար, որ մենք հնազանդ լինեինք, Նա կօգտագործեր անհապաղ պարգևատրումներ և պատիժներ մեր վարքագծի վրա ազդելու համար։

Բայց Աստված շահագրգռված չէ, որ Իր զավակներն ուղղակի դառնան վարժեցված և հնազանդ «սիրված կենդանիներ», ովքեր չեն ծամի Իր հողաթափերը սելեստիալ հյուրասենյակում։[3] Ոչ, Աստված կամենում է, որ Իր զավակներն աճեն և միանան Իրեն ընտանեկան գործում։

Աստված հիմնադրել է մի ծրագիր, որի միջոցով մենք կարող ենք դառնալ Իր արքայության ժառանգներ, ուխտի մի արահետ, որն առաջնորդում է մեզ դառնալ Իր նման, որպեսզի ունենանք այնպիսի կյանք, ինչպիսին Ինքն ունի և ապրենք հավերժ՝ որպես ընտանիքներ Նրա ներկայության մեջ։[4] Անհատական ընտրությունը այս ծրագրի համար կենսական էր և է, որի մասին մենք սովորել ենք մեր նախաերկրային գոյության ընթացքում։ Մենք ընդունել ենք ծրագիրը և եկել ենք երկիր։

Հավաստիանալու համար, որ մենք հավատք կգործադրենք և կսովորենք պատշաճորեն օգտագործել մեր ազատ կամքը, մեր մտքերի վրա մոռացության վարագույր է քաշվել, որպեսզի մենք չհիշենք Աստծո ծրագիրը։ Առանց այդ վարագույրի, Աստծո նպատակները չէին իրականանա, որովհետև մենք չէինք առաջադիմի և դառնա վստահելի այն ժառանգները, որոնք Նա կամենում է, որ մենք լինենք։

Մարգարե Լեքին ասել է.«Ուստի, Տեր Աստված տվեց մարդուն, որ նա գործի ինքնուրույն։ Ուստի, մարդը չէր կարող գործել ինքնուրույն, մինչև որ չհրապուրվեր մեկի կամ մյուսի կողմից։»[5] Հիմնական մակարդակում մեկ տարբերակ ներկայացվում է Հոր Միածնի՝ Հիսուս Քրիստոսի կողմից։ Մյուս տարբերակը ներկայացվում է սատանայի՝ Լյուցիֆերի կողմից, ով կամենում է կործանել ազատ կամքը և զավթել իշխանությունը։[6]

Հանձին Հիսուս Քրիստոսի, «մենք բարեխոս ունենք Հոր մոտ»։[7] Իր քավիչ զոհաբերությունն ավարտելուց հետո Հիսուսը «համբարձվեց երկինք . . . հայցելու Հորից ողորմության իր իրավունքները, որոնք նա ունի մարդկանց զավակների հանդեպ»։ Եվ ողորմության իրավունքները հայցելուց հետո «նա բարեխոսում է մարդկանց զավակների գործի համար»։[8]

Հոր մոտ Քրիստոսի բարեխոսությունը մեզ համար ընդդիմադիր չէ։ Հիսուս Քրիստոսը, ով թույլ տվեց, որ Իր կամքը կուլ գնար Հոր կամքին,[9] չէր պաշտպանի որևէ այլ բան, բացի

նրանից, ինչ Հայրն է միշտ կամեցել: Երկնային Հայրն անկասկած ողջունում է և ծափահարում մեր հաջողությունների համար:

Քրիստոսի բարեխոսությունը որոշ չափով մեզ հիշեցնելու համար է, որ Նա վճարել է մեր մեղքերի համար, և ոչ ոք վտարված չէ Աստծո ողորմության հասանելիությունից:[10] Նրանց համար, ովքեր հավատում են Հիսուս Քրիստոսին, ապաշխարում են, մկրտվում և համբերում մինչև վերջ՝ մի գործընթաց է, որը տանում է դեպի հաշտեցում՝[11] Փրկիչը ներում է, բժշկում և բարեխոսում: Նա է մեր օգնականը, մխիթարիչը և միջնորդը՝ հավաստելով և երաշխավորելով մեր հաշտեցումը Աստծո հետ:[12]

Ճիշտ հակառակը, Լյուցիֆերը մեղադրող է կամ դատախազ: Հովհաննես Հայտնողը նկարագրում է Լյուցիֆերի վերջնական պարտությունը. «Եվ մի մեծ ձայն լսեցի, որ ասում էր երկնքում. Հիմա եկել է մեր Աստծո փրկությունը և զորությունը և թագավորությունը, և նրա Քրիստոսի իշխանությունը»: Ինչո՞ւ: Որովհետև «մեր եղբայրներին մեղադրողը վայր է գցվել, որն օր ու գիշեր նրանց մեղադրում էր մեր Աստծո առաջ: Եվ նրանք հաղթեցին սատանային «Գառի արիւնովը եւ իրենց վկայութեան խօսքովը»:[13]

Լյուցիֆերն է այդ մեղադրողը: Նա մեր դեմ խոսեց նախամահկանացու գոյության ժամանակ և շարունակում է դատապարտել մեզ այս կյանքում: Նա ձգտում է մեզ վար քաշել: Նա ցանկանում է, որ մենք ճաշակենք անվերջ վայ: Նա է, ով ասում է մեզ, որ մենք համարժեք չենք, նա է ով ասում է մեզ, որ մենք բավականին լավը չենք, նա է ով ասում է մեզ, որ չկա վերականգնում սխալից: Նա է ծայրահեղ անառակը, որը ոտնահարում է մեզ, երբ մենք ընկնում ենք:

Եթե Լյուցիֆերը սովորեցնում է երեխային քայլել և երեխան սայթաքում է, նա ճչում է երեխայի վրա, պատժում նրան և ասում, որ հրաժարվի փորձել: Լյուցիֆերի ուղիները, ի վերջո և միշտ, բերում են վիատություն և հուսահատություն: Ստերի այս հայրը հիմնական մատակարարն է կեղծիքի[14] և խորամանկորեն

աշխատում է խաբել և շեղել մեզ, «քանզի նա ջանում է, որ բոլոր մարդիկ լինեն թշվառ, ինչպես ինքը»:[15]

Եթե Քրիստոսն է սովորեցնում երեխային քայլել և երեխան սայթաքում է, Նա օգնում է երեխային վեր կենալ և քաջալերում է, որ հաջորդ քայլը կատարի:[16] Քրիստոսը օգնականն է և մխիթարիչը: Նրա ուղիները, ի վերջո և միշտ, բերում են ուրախություն և հույս:

Աստծո ծրագիրը ներառում է ուղղորդումներ մեզ համար, որոնք նշվում են սուրբ գրություններում որպես պատվիրաններ: Այս պատվիրանները ոչ քմահաճ շարք են, ոչ էլ հարկադրական կանոնների ինքնակամ հավաքածու, որոնք նախատեսված են միայն մեզ վարժեցնելու համար, որ հնազանդ լինենք: Դրանք կապված են մեր մեջ բարեպաշտության հատկանիշներ զարգացնելու, մեր Երկնային Հոր մոտ վերադառնալու և հարատև ուրախություն ստանալու հետ: Նրա պատվիրաններին հնազանդվելը կուրություն չէ, մենք գիտակցաբար ենք ընտրում ենք Աստծուն և Նրա արահետը դեպի տուն: Մեզ համար ձևը նույնն է, ինչպես այն Ադամի և Եվայի համար էր. «Աստված տվեց նրանց պատվիրաններ փրկագնման ծրագիրը նրանց հայտնի դարձնելուց հետո»:[17] Թեև Աստված կամենում է, որ մենք լինենք ուխտի արահետի վրա, Նա տալիս է մեզ ընտրելու արժանապատվություն:

Աստված իսկապես կամենում է, ակնկալում և ուղղորդում, որ Իր զավակներից յուրաքանչյուրն ինքնուրույն ընտրի: Նա չի ստիպում մեզ: Ազատ կամքի պարգևի միջոցով Աստված թույլ է տալիս Իր զավակներին «գործելու ինքնուրույն և չներգործվելու»:[18] Ազատ կամքը թույլ է տալիս մեզ ընտրել՝ մտնել արահետ, թե՝ ոչ: Այն թույլ է տալիս մեզ դուրս գալ կամ ոչ: Ինչպես մեզ չեն կարող ստիպել հնազանդվել, այնպես էլ մեզ չեն կարող ստիպել չհնազանդվել: Ոչ ոք չի կարող առանց մեր համագործակցության մեզ հեռացնել ճանապարհից: (Արդ, սա չպետք է շփոթել նրանց հետ, ում ազատ կամքը ոտնահարվել է: Նրանք արահետից դուրս չեն, նրանք զոհեր են: Նրանք ստանում են Աստծո ըմբռնումը, սերը և կարեկցանքը:)

Բայց, երբ մենք դուրս ենք գալիս արահետից, Աստված տխրում է, որովհետև Նա գիտի, որ դա, ի վերջո, բայց անխուսափելիորեն, կտանի դեպի երջանկության նվազման և օրհնությունների կորստի: Սուրբ գրություններում արահետից դուրս գալը համարվում է մեղք, իսկ երջանկության նվազման արդյունքն ու կորցրած օրհնությունները կոչվում են պատիժ: Այս իմաստով Աստված չի պատժում մեզ, պատիժը մեր ընտրությունների հետևանքն է, ոչ թե Նրա:

Երբ մենք հայտնաբերում ենք, որ արահետից դուրս ենք եկել, մենք կարող ենք մնալ դրսում, կամ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ կարող ենք փոխել մեր քայլերը և ետ դառնալ: Սուրբ գրություններում դեպի արահետ փոխվելու և վերադառնալու գործընթացը կոչվում է ապաշխարություն: Երբ ապաշխարելիս ձախողվում ենք, նշանակում է, որ մենք ընտրում ենք ինքներս մեզ զրկել այն օրհնություններից, որոնք Աստված կամենում է տալ մեզ: Եթե մենք «չենք կամենում վայելել այն, ինչ մենք [կարող էինք] ստանալ, մենք կվերադառնանք . . . [մեր] սեփական տեղը, վայելելու այն, ինչ [մենք] կամենում ենք ստանալ»՝[19] մեր ընտրությունը, ոչ թե Աստծո:

Անկախ նրանից, թե որքան ժամանակ ենք արահետից դուրս եղել և թե որքան հեռու ենք թափառել, այն պահին, երբ մենք որոշում ենք փոխվել, Աստված օգնում է մեզ վերադառնալ:[20] Աստծո տեսանկյունից անկեղծ ապաշխարության միջոցով և անսասան առաջ մղվելով Քրիստոսում, երբ վերադառնանք արահետ, կլինի այնպես, կարծես երբեք չէինք հեռացել:[21] Փրկիչը վճարում է մեր մեղքերի համար և ազատում մեզ երջանկության և օրհնությունների նշմարվող նվազումից: Սուրբ գրություններում սա կոչվում է ներում: Մկրտությունից հետո բոլոր անդամները սայթաքում են արահետից, մեզանից ոմանք նույնիսկ անհետանում են: Ուստի մեկանգամյա իրադարձություններ չեն հավատք գործադրելն առ Հիսուս Քրիստոս, ապաշխարելը, Նրանից օգնություն ստանալ և ներված լինելը, այլ կյանքի շարունակական գործընթացներ են, գործընթացներ, որոնք անընդհատ կրկնվում են: Ահա թե ինչպես ենք «համբերում մինչև վերջ»:[22]

Մենք պետք է ընտրենք, թե ում ենք մենք ծառայելու:[23] Մեր հավերժական երջանկության չափը կախված է կենդանի Աստծուն ընտրելուց և Նրա գործում Նրան միանալուց: Երբ մենք ձգտում ենք «անել հաջորդ քայլը» ինքնուրույն, մենք գործադրում ենք մեր ազատ կամքը՝ ճիշտ օգտագործելով այն: Ինչպես նախկին Սփոփող Միության Գերագույն Նախագահներն են ասել, մենք չպետք է լինենք «մանկիկներ, ովքեր միշտ կարիք ունեն փաղաքշանքի և ուղղման»:[24] Ոչ, Աստված կամենում է, որ մենք դառնանք հասուն չափահասներ և կառավարենք ինքներս մեզ:

Միակ ուղին Հոր ծրագրին հետևելու ընտրությունն է, որով կարող ենք դառնալ ժառանգորդներ Նրա արքայությունում, միայն այդ ժամանակ Նա կարող է վստահել մեզ՝ նույնիսկ չխնդրել այն, ինչը հակառակ է Իր կամքին:[25] Բայց մենք պետք է հիշենք, որ «չկա մեկը, որին այնքան դժվար լինի ուսուցանել, որքան այն երեխային, ով գիտի ամեն ինչ»: Այսպիսով, մենք պետք է պատրաստ լինենք ուսուցանվել Տիրոջ ուղիներում Տիրոջ և Նրա ծառաների կողմից: Մենք կարող ենք վստահել, որ մենք Երկնային Ծնողների սիրելի զավակներն ենք[26] և արժանի ենք, որ մեր մասին «անհանգստանան» և համոզված եղեք, որ «ինքնուրույն» երբեք չի նշանակում «միայնակ»:

Ինչպես Մորմոնի Գրքի Հակոբ մարգարեն է ասել, ասում եմ նրա հետ.

«Հետևաբար, ուրախացրեք ձեր սրտերը, և հիշեք, որ դուք ազատ եք՝ ինքնուրույն գործելու՝ ընտրելու հավիտենական մահվան ճանապարհը կամ հավերժական կյանքի ճանապարհը:

Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ [և քույրեր], հաշտվեք Աստծո կամքի և ոչ թե դևի ու մարմնի կամքի հետ . . . և հիշեք, հետո, երբ դուք հաշտվեք Աստծո հետ, որ դա միայն Աստծո շնորհով և շնորհիվ է, որ դուք փրկվում եք»:[27]

Այսպիսով, ընտրեք հավատքն առ Քրիստոս, ընտրեք ապաշխարություն, ընտրեք մկրտվել և ստանալ Սուրբ Հոգին, ընտրեք բարեխղճորեն պատրաստվել և արժանիորեն ճաշակել հաղորդությունը, ընտրեք ուխտեր կապել տաճարում և ընտրեք ծառայել կենդանի Աստծուն և Նրա զավակներին: Մեր ընտրություններն են որոշում, թե ով ենք մենք և ինչ ենք դառնալու:

Ես եզրափակում եմ Հակոբի օրհնության մնացած մասով. «Ուստի, թող Աստված բարձրացնի ձեզ . . . հավիտենական մահից, քավության զորությամբ, որպեսզի դուք կարողանաք ընդունվել Աստծո հավերժական արքայությունում»:[28] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մերի Փոպինսի գեղարվեստական կերպարը կյանք է առել Փ.Լ. Թրավերսի գրվածքների շնորհիվ: Նրա գրքերը հիմք հանդիսացան 1964 թվականին երաժշտական ֆանտաստիկ ֆիլմի ստեղծման համար, որն արտադրվեց Ուոլթ Դիսնեյի կողմից, իսկ ավելի ուշ փուլում տեղի ունեցավ ֆիլմի հարմարեցումը:
2. The stage play contains the scene described. See *Libretto to Mary Poppins: The Broadway Musical,* 70.
3. Տես Սպենսեր Վ. Քիմբալ, Բրիսբեյնի տարածքային համաժողով 1976, 19:

Նախագահ Քիմբալը ենթադրել է. «Առաջին բանը, որ այստեղ մեր կյանքը սկսելուց առաջ, Տերն ասել է. «Ես պատրաստվում եմ տալ ձեզ ձեր ազատ կամքը: Ես կարիք ունեմ տղամարդկանց և կանանց, ովքեր ուժեղ են, որովհետև ճիշտ է ուժեղ լինելը: Ես կարիք չունեմ թուլամորթների, ովքեր արդար են միայն այն պատճառով, որ ստիպված են արդար լինել»:

4. Տես, օրինակ Ռասսել Մ. Նելսոն, «Միասին առաջ ընթանալով», *Լիահոնա,* ապրիլ 2018: Ուլտի արահետը նաև կոչվում է որպես երջանկության ծրագիր (տես Ալմա 42.8, 16) և փրկագնման ծրագիր (տես Ալմա 12.25–35):
5. 2 Նեփի 2.16
6. Տես Մովսես 4.3:
7. Ա Հովհաննես 2.1, տես նաև Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Ա Հովհաննես 2.1 (Ա Հովհաննես 2.1, ծանոթություն *ա*):
8. Մորոնի 7.27, 28
9. Տես Մոսիա 15.7:
10. Տես Ա Հովհաննես 2.2:
11. Տես Բ Կորնթացիս 5.16–21, Կողոսացիս 1.19–23, 2 Նեփի 10.24:
12. Դատապաշտպանի համար հունարեն (*paraklētŏs*) բառը նշանակում է միջնորդ, օգնական, մխիթարող կամ սփոփող (տես Ա Հովհաննես 2.1, footnote *b*; *The New Strong's Expanded Exhaustive Concordance of the Bible* [1984], Greek dictionary section, 55; 2 Նեփի 10.23–25, Վարդապետություն և Ուխտեր 45.3–5):
13. Հայտնություն 12.10–11
14. Տես Եթեր 8.25:
15. 2 Նեփի 2.27, տես նաև 2 Նեփի 2.6–8, 16, 26:
16. See Fiona and Terryl Givens, *The Christ Who Heals* (2017), 29, 124. For original citation, see Anthony Zimmerman, *Evolution and the Sin in Eden* (1998), 160, citing Denis Minns, *Irenaeus* (2010), 61.
17. Ալմա 12.32
18. 2 Նեփի 2.26, տես նաև 2 Նեփի 2.16:
19. Վարդապետություն և Ուխտեր 88.32
20. Տես Ալմա 34.31:
21. Տես 2 Նեփի 31.20, Մոսիա 26.29–30, Վարդապետություն և Ուխտեր 58.42–43, Բոյդ Կ. Փաքեր, «Երջանկության ծրագիրը», *Լիահոնա,* մայիս 2015, 28: Նախագահ Փաքերն ասել է. «Երբ ապաշխարության գործընթացն ավարտվում է, ոչ մի սպի չի մնում Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ»:
22. 2 Նեփի 31.20
23. Տես Յեսու 24.15:
24. Ջուլի Բ. Բեք, «Եվ այն օրերին իմ Հոգին դուրս կթափեմ աղախինների վրա», *Լիահոնա,* մայիս 2010, 12, Քույր Բեքը մեջբերումներ է անում Էլիզա Ռ. Սնոուի ելույթից: Lehi Ward Relief Society, Oct. 27, 1869, Lehi Ward, Alpine (Utah) Stake, in Relief Society, Minute Book, 1868–79, Church History Library, Salt Lake City, 26–27:
25. Տես 2 Նեփի 4.35, Հելաման 10.5:
26. Տես «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա, մայիս* 2017, 145:
27. 2 Նեփի 10.23–24
28. 2 Նեփի 10.25

Երեց Ջեք Ն. Ջերարդ
Յոթանասունից

Հիմա է ժամանակը

Եթե ինչ-որ բան կա ձեր կյանքում, որ դուք պետք է փոխեք, հիմա է ժամանակը:

Մի քանի տարի առաջ, մինչ պատրաստվում էի գործուղման, կրծքավանդակիս շրջանում ցավ զգացի: Մտահոգված իմ վիճակից, կինս որոշեց ընկերակցել ինձ: Մեր առաջին իսկ թռիչքի ընթացքում ցավն այնքան ուժգնացավ, որ դժվարանում էի շնչել: Վայրէջքից հետո մենք օդանավակայանից գնացինք տեղի հիվանդանոցը, որտեղ մի շարք ստուգումներից հետո բժիշկը հայտնեց, որ մենք կարող էինք ապահով շարունակել մեր ճամփորդությունը:

Մենք վերադարձանք օդանավակայան և պատրաստվեցինք մեր հաջորդ թռիչքին: Երբ վայրէջք էինք կատարում, օդաչուն ներքին հեռախոսակապով խնդրեց ինձ ներկայացնել իմ փաստաթղթերը: Թռիչքի ուղեկցողը մոտեցավ, ասաց, որ իրենք հենց նոր շտապ օգնությունից զանգ են ստացել և ասաց ինձ, որ շտապ օգնության մեքենան սպասում է օդանավակայանում, որ ինձ հիվանդանոց տանի:

Մեզ արագ տեղափոխեցին հիվանդանոց: Այնտեղ մեզ դիմավորեցին երկու մտահոգ բժիշկներ և բացատրեցին, որ ինձ սխալ ախտորոշում էր տրվել, իսկ իրականում ես ունեի

թոքերի լուրջ խնդիր, որը պահանջում էր անհապաղ բժշկական միջամտություն: Բժիշկները տեղեկացրին մեզ, որ շատ հիվանդներ դուրս չեն գալիս այս վիճակից: Իմանալով, որ մենք հեռու ենք գտնվում տանից և վստահ չլինելով, որ մենք պատրաստ ենք կյանքի նման փոփոխության, բժիշկն ասաց, որ եթե ինչ-որ բան կա մեր կյանքում, որ մենք պետք է փոխենք, հիմա է ժամանակը:

Ես լավ հիշում եմ, թե ինչպես, գրեթե ակնթարթորեն, այդ մտահոգ պահին իմ ողջ հեռանկարը փոխվեց: Այն, ինչ շատ կարևոր էր թվում բոպեներ առաջ, այժմ ինձ շատ քիչ էր մտահոգում: Իմ միտքն արագ սլացավ այս կյանքի հարմարավետություններից ու հոգսերից դեպի հավերժական հեռանկարները. մտքեր ընտանիքի, երեխաների, իմ կնոջ և ամենակարևորը՝ իմ իսկ կյանքի գնահատման վերաբերյալ:

Արդյո՞ք ամեն բան կարգին էր մեր ընտանիքում և մեր անձնական կյանքում: Արդյո՞ք մենք ապրում էինք մեր կյանքը համաձայն մեր կապած ուխտերի և Տիրոջ սպասելիքների, կամ գուցե մենք աննկատորեն թույլ էինք տվել, որ աշխարհի հոգսերը շեղեն մեզ ամենակարևոր բաներից:

Ես հրավիրում եմ ձեզ խորհել մի կարևոր դասի շուրջ, որ կարող ենք սովորել այդ փորձառությունից. մի պահ մոռացեք աշխարհիկ հոգսերը և գնահատեք ձեր կյանքը: Կամ, ինչպես բժիշկն է ասել, եթե ինչ-որ բան կա ձեր կյանքում, որ դուք պետք է փոխեք, հիմա է ժամանակը:

Գնահատելով մեր կյանքը

Մենք ապրում ենք տեղեկատվությամբ գերծանրաբեռնված աշխարհում, որտեղ գերակշռում են անընդհատ աճող շեղումները, որոնք ավելի ու ավելի են դժվարացնում կողմնորոշումը այս խառնաշփոթ կյանքում և կենտրոնացումը հավերժական արժեքների վրա: Առօրյա կյանքում մենք անընդհատ բախվում ենք մեր ուշադրությունը գրավող հայտարարություններին, որոնք մատուցվում են արագ փոփոխվող տեխնոլոգիաների միջոցով:

Եթե մենք ժամանակ չհատկացնենք խորհելուն, գուցե չգիտակցենք այս արագընթաց միջավայրի ազդեցությունը մեր ամենօրյա կյանքի և մեր կատարած ընտրությունների վրա: Գուցե մենք տեսնենք, որ մեր կյանքը վատնում ենք համացանցի, տեսանյութերի և մեր ուշադրությունը գրավող նման այլ միջոցների վրա: Չնայած դրանք հետաքրքիր ու զվարճալի են, դրանց մեծ մասը շատ քիչ են կապված մեր հավերժական առաջընթացի հետ, սակայն դրանք մեծ ազդեցություն են ունենում մեր մահկանացու կյանքի փորձառությունների վրա:

Աշխարհի այս շեղումները կարող են համեմատվել Լեքիի երազի հետ: Մինչ մենք առաջ ենք ընթանում ուխտի ճանապարհով, երկաթյա ձողից ամուր բռնած, մենք լսում և տեսնում ենք նրանց, ովքեր մեծ ու ընդարձակ շենքից ծաղրում և մատով ցույց են տալիս մեզ (1 Նեփի 8.27): Գուցե մենք գիտակցաբար չենք վարվում այդպես, սակայն երբեմն կանգ ենք առնում և սևեռում մեր ուշադրությունը, որ տեսնենք, թե ինչ է կատարվում աշխարհում: Մեզանից ոմանք գուցե նաև թողնում են երկաթյա ձողը և մոտենում, որ ավելի լավ տեսնեն: Ոմանք էլ, գուցե, ընդմիշտ հեռանան «նրանց պատճառով, ովքեր ծաղրի էին ենթարկում իրենց» (1 Նեփի 8.28):

Փրկիչը զգուշացրել է մեզ. «Զգույշ կացեք . . . մի գուցէ ձեր սրտերը ծանրանան . . . ապրուստի հոգսերով» (Ղուկաս 21.34): Ժամանակակից հայտնությունը հիշեցնում է մեզ, որ շատերն են կանչված, բայց քչերն են ընտրված: Նրանք ընտրված չեն, «որովհետև նրանց սրտերը . . . դրված են այս աշխարհի բաների վրա և տենչում են մարդկանց գովասանքները» (Վարդապետություն և Ուխտեր 121.35, տես նաև հատված 34): Գնահատելով մեր կյանքը,մենք կտրվում ենք աշխարհից, ուշադրություն դարձնում, թե որտեղ ենք գտնվում ուխտի ուղու վրա, և անհրաժեշտության դեպքում, շտկումներ կատարում, որպեսզի համոզվենք, որ ամուր բռնել ենք ձողից և մեր հայացքը հառել հավերժական կյանքին:

Վերջերս երիտասարդների համաշխարհային հավաքի ժամանակ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հրավիրեց երիտասարդներին կտրվել աշխարհից և սոցիալական լրատվամիջոցներից յոթ օր ծոմ պահելու միջոցով: Եվ հենց անցած երեկո, համաժողովի կանանց նիստի ժամանակ նա նմանատիպ մի հրավեր հղեց քույրերին: Ապա նա խնդրեց երիտասարդներին ուշադրություն դարձնել ցանկացած փոփոխության վրա, թե ինչ են զգում, ինչ են մտածում կամ նույնիսկ ինչպես են նրանք մտածում: Ապա նա հրավիրեց նրանց. «Տիրոջ հետ անցկացրեք կյանքի մանրակրկիտ գնահատում . . . որպեսզի համոզվեք, որ ձեր ոտքերն ամուր կանգնած են ուխտի ուղու վրա»: Նա խրախուսեց նրանց, որ եթե իրենց կյանքում կան բաներ, որ պետք է փոխել, «այսօր է փոփոխություններ կատարելու հրաշալի ժամանակը»:[1]

Երբ մեր կյանքում գտնենք բաներ, որոնք պետք է փոխել, մենք կարող ենք տալ մեզ գործնական մի հարց. Ինչպե՞ս ենք մենք հաղթահարում այս աշխարհի շեղող բաները և կենտրոնացած մնում մեր առջև բացվող հավերժության վրա:

Նախագահ Դալլին Հ. Օուքսը 2007թ. համաժողովի «Լավ, ավելի լավ, ամենալավ» վերնագրված ելույթում ուսուցանում է, թե որ ընտրություններին տալ առաջնահերթությունը մեր

բազում հակամարտող աշխարհիկ պահանջների մեջ: Նա խորհուրդ է տվել. «Մենք պետք է հրաժարվենք որոշ լավ բաներից, որպեսզի ընտրենք ավելի լավը կամ լավագույնը, որովհետև դրանք զարգացնում են Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատը և ամրացնում մեր ընտանիքները»:[2]

Թույլ տվեք խորհուրդ տալ, որ այս կյանքում լավագույն բաները կենտրոնացած են Հիսուս Քրիստոսի և հավերժական ճշմարտությունները հասկանալու վրա, թե ով է Նա և ովքեր ենք մենք Նրա հետ մեր հարաբերություններում:

Փնտրենք ճշմարտությունը

Մինչ մենք փորձում ենք ճանաչել Փրկչին, մենք չպետք է անտեսենք հիմնական ճշմարտությունը, թե ով ենք մենք և ինչու ենք այստեղ: Ամուղեկը հիշեցնում է մեզ, որ «այս կյանքն է ժամանակը նախապատրաստվելու՝ հանդիպելու Աստծուն», ժամանակ, «որը տրված է մեզ, որ նախապատրաստվենք հավերժության համար» (Ալմա 34.32–33): Ինչպես մեզ հիշեցնում է հայտնի աքսիոման. «Մենք մարդկային էակներ չենք, որոնք հոգևոր փորձառություն են ունենում: Մենք հոգևոր էակներ ենք, որոնք մարդկային փորձառություն են ունենում»:[3]

Մեր աստվածային էության ըմբռնումը խիստ կարևոր է մեր հավերժական առաջընթացի համար և կարող է ազատել մեզ այս կյանքի շեղող բաներից: Փրկիչն ուսուցանել է.

«Եթէ դուք իմ խօսքի մէջ կենաք, ճշմարտապէս իմ աշակերտներն էք:

«Եւ ճշմարտութիւնը կ'ճանաչէք. Եւ ճշմարտութիւնը կ'ազատէ ձեզ» (Հովհաննես 8.31–32):

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը հայտարարել է. «Ամենամեծ նվաճումը, որ կարող է մարդկությունն ունենալ այս աշխարհում, աստվածային ճշմարտության հետ խորապես ծանոթանալն է, այնքան կատարելապես, որ աշխարհում ապրող ոչ մի կենդանի էակի օրինակ կամ վարք չհեռացնի նրանց իրենց ձեռք բերած գիտելիքից»:[4]

Այսօր աշխարհում ճշմարտության մասին բանավեճը հասել է այն մակարդակի, որ բոլոր կողմերն իրենցն են պնդում և կատարում իրենց սեփական մեկնաբանությունները: Պատանի Ջոզեֆ Սմիթը նկատում է, որ իր կյանքում «այնքան մեծ էին . . . տարաձայնություններն ու վիճաբանությունները, որ անհնար էր որոշակի եզրակացության գալ, թե ով է ճիշտ և ով է սխալ» (Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.8): «Խոսքերի պատերազմի և տարաձայնությունների այդ աղմուկի մեջ» էր, որ նա սկսեց փնտրել աստվածային առաջնորդություն ճշմարտությունը փնտրելու միջոցով (Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.10):

Ապրիլի համաժողովին Նախագահ Նելսոնն ուսուցանել է. «Եթե պիտի որևէ հույս ունենանք անհամար ձայների և մարդկանց փիլիսոփայությունների միջից մաղել ճշմարտությունը, մենք պետք է սովորենք հայտնություն ստանալ»:[5] Մենք պետք է սովորենք ճշմարտության հոգուն ապավինել, որը «աշխարհքս կարող չէ ընդունել. որ չէ տեսնում նորան. եւ ոչ էլ ճանաչում նորան» (Հովհաննես 14.17):

Մինչ այս աշխարհն արագ շարժվում է դեպի աղավաղված ճշմարտությունը, մենք պետք է հիշենք Հակոբի խոսքերը, որ «Հոգին խոսում է ճշմարտությունը և չի ստում: Ուստի, այն խոսում է բաների մասին, ինչպես դրանք իրականում կան, բաների մասին, ինչպես դրանք իրականում լինելու են. ուստի, այս բաները մեզ հայտնի են դարձվում հստակորեն՝ մեր հոգիների փրկության համար» (Հակոբ 4.13):

Երբ մենք կտրվում ենք աշխարհից և գնահատում մեր կյանքը, հիմա է ժամանակը խորհելու համար, թե մենք ինչ փոփոխություններ պետք է կատարենք: Մենք կարող ենք մեծ հույս ունենալ, իմանալով, որ մեր Օրինակը՝ Հիսուս Քրիստոսը, մեկ անգամ ևս ցույց է տվել ուղին: Իր մահից և Հարությունից առաջ, մինչ Նա աշխատում էր օգնել Իր շուրջը գտնվողներին հասկանալ Իր աստվածային դերը, Նա հիշեցրեց նրանց, «որ ինձանում խաղաղութիւն ունենաք. աշխարհքումը նեղութիւն կունենաք. բայց քաջացէք, ես յաղթել եմ աշխարհքին» (Հովհաննես 16.33): Նրա մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Russell M. Nelson, "Hope of Israel" (worldwide youth devotional, June 3, 2018), HopeofIsrael.lds.org.
2. Դալլին Հ. Օուքս, «Լավ, ավելի լավ, ամենալավ», *Լիահոնա,* նոյ. 2007, 107:
3. Often attributed to Pierre Teilhard de Chardin.
4. *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ* (1998), էջ 42:
5. Ռասսել Մ. Նելսոն, «Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Լիահոնա,* մայիս 2018, 96:

Երեց Գարի Ի. Սթիվենսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հոգիներին հովվություն անել

Մենք սիրով օգնության ենք հասնում մարդկանց, քանի որ մեր Փրկիչն է պատվիրել մեզ այդպես վարվել։

Վերջերս, ընկերոջ հետ զրուցելիս, նա ասաց, որ երբ երիտասարդ էր՝ Եկեղեցու նոր մկրտված անդամ, հանկարծակի զգացել էր, թե կարծես իր ծխում այլևս լավ չի զգում։ Նրան ուսուցանած միսիոներները տեղափոխվել էին, և նա զգում էր, որ ինքը շրջագծից դուրս է։ Ճյուղում չունենալով ընկերներ, նա գտավ իր հին ընկերներին և սկսեց նրանց հետ ժամանակ անցկացնել ու եկեղեցի չգնալ, այնպես որ սկսեց խուսափել հոտից։ Արցունքներն աչքերին՝ նա ասաց, որ խորապես երախտապարտ էր, երբ ծխի ընկերակից անդամներից մեկը նրան սպասավորության ձեռք մեկնեց և ջերմությամբ ու ընդգրկելով հրավիրեց նրան վերադառնալ։ Մի քանի ամսից նա վերադարձել էր անվտանգ հոտը՝ ամրապնդելով ուրիշներին, ինչպես նաև ինքն իրեն։ Մի՞թե մենք երախտապարտ չենք Բրազիլիայում ապրող այդ հովվի համար, ով գնաց այդ երիտասարդի՝ Երեց Կառլոս Ա. Գոդոյի հետևից, որն այժմ նստում է իմ ետևում՝ որպես Յոթանասունի Նախագահության անդամ։

Մի՞թե ուշագրավ չէ, թե ինչպես կարող են նմանատիպ փոքր ջանքերը հավերժական հետևանքներ ունենալ։ Այս ճշմարտությունը Եկեղեցու սպասավորության ջանքերի առանցքն է։ Երկնային Հայրը կարող է վերցնել մեր պարզ, ամենօրյա ջանքերը և դրանք հրաշքի վերածել։ Ընդամենը վեց ամիս է անցել այն օրից, երբ Նախագահ Ռասել Մ. Նելսոնը հայտարարեց, որ «Միմյանց հանդեպ հոգ տանելու եղանակների վերաբերյալ Տերը կարևոր ճշգրտումներ է արել»,[1] բացատրելով, որ «Մենք կիրականացնենք ուրիշների մասին հոգ տանելու և սպասավորելու ավելի նոր, ավելի սուրբ մոտեցում։ Այդ ջանքերը մենք պարզապես կանվանենք «սպասավորություն»»։[2]

Նախագահ Նելսոնը նաև բացատրել է. «Տիրոջ ճշմարիտ և կենդանի Եկեղեցու առանձնահատկությունը միշտ կլինի Աստծո զավակներին և նրանց ընտանիքներին ծառայելու կազմակերպված և ուղղված ջանքերը։ Քանի որ սա Նրա Եկեղեցին է, մենք՝ Նրա ծառաները, կծառայենք անհատին, ինչպես Նա ծառայեց։ Մենք կծառայենք Նրա անունով, Նրա զորությամբ և իշխանությամբ և Նրա սիրառատ բարությամբ»։[3]

Հայտարարության ձեր արձագանքը անհավանական է եղել։ Մենք տեղեկություններ ենք ստանում աշխարհի գրեթե բոլոր ցցերում այդ փոփոխությունները կյանքի կոչելու մեծ հաջողությունների մասին։ Մի քանի օրինակներից են այն, որ ընտանիքներին սպասավորող եղբայրներ ու քույրեր են նշանակվում, գործընկերություններ են կազմվում, ներառելով երիտասարդ տղամարդկանց ու երիտասարդ կանանց, և սպասավորության հարցազրույցներ են անցկացվում։

Կարծում եմ, «Ավետարանի նոր հավասարակշռված և կապակցված ուսուցում տանը և եկեղեցում»[4] նամակով երեկ տարածված հայտարարությունից վեց ամիս առաջ «սպասավորության» վերաբերյալ տրված հայտնությունը պատահականություն չէր։ Հունվարի սկզբից, երբ մենք ավելի քիչ ժամանակ ծախսենք մեր եկեղեցական երկրպագության վրա, այն ամենը, ինչ սովորեցինք սպասավորություն անելիս, կօգնի մեզ համաչափ ձևով այդ բացը լրացնել՝ ավելի բարձր ու ավելի սուրբ տնակենտրոն Հանգստության օր վայելելով ընտանիքի անդամների և հարազատների հետ։

Կազմակերպչական հարցերը կարգավորելուն զուգահեռ կարող է հարց առաջանալ, թե ինչպես կարող ենք իմանալ, որ սպասավորում ենք Տիրոջ նշմարած ուղիով։ Արդյոք մենք նեցո՞ւկ ենք Բարի Հովվին այն ձևով, ինչպես Նա է ցանկանում։

Վերջերս ունեցած զրույցի ժամանակ նախագահ Հենրի Բ. Այրինգը գովաբանեց Սրբերին այդ ուշագրավ փոփոխությունների կատարման մեջ, բայց նաև իր անկեղծ հույսը հայտնեց, որ անդամները կգիտակցեն, որ սպասավորությունը ավելին է, քան «բարեկիրթ շփումը»։ Դա չի նշանակում, որ բարեկիրթ լինելը նշանակություն չունի, բայց նրանք, ովքեր հասկանում են սպասավորության իրական ոգին, գիտակցում են, որ այն բարեկիրթ լինելուց ավելին է։ Տիրոջ ուղիով սպասավորելը կարող է բարու երկարատև ազդեցություն թողնել, որի ալիքները կարող են հասնել հավերժություն, ինչպես Երեց Գոդոյի դեպքում է։

Փրկիչն Իր օրինակով ցույց տվեց, թե ինչ է նշանակում սպասավորել, երբ . . . ծառայեց սիրուց դրդված: Նա . . . ուսուցանեց, աղոթեց, մխիթարեց և օրհնեց շրջապատող մարդկանց՝ հրավիրելով բոլորին հետևել Իրեն: Երբ Եկեղեցու անդամները սպասավորեն [ավելի բարձր, ավելի սուրբ ձևով], նրանք աղոթքով կձգտեն ծառայել Նրա նման . . . «միշտ հսկել եկեղեցու վրա, լինել նրա հետ և ամրապնդել այն», «այցելել յուրաքանչյուր անդամի տուն» և օգնել բոլորին դառնալ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտը»:[5]

Մենք գիտակցում ենք, որ ճշմարիտ հովիվը սիրում է իր հոտը, անունով ճանաչում է յուրաքանչյուրին և «անձնապես հետաքրքրված է նրանցով»:[6]

Իմ հին ընկերներից մեկը ողջ կյանքում խաշնարած է եղել՝ կատարելով անասուններ և ոչխարներ պահելու ծանր աշխատանք Ռոքիի խորդուբորդ լեռներում: Մի անգամ նա ինձ հետ կիսվեց ոչխարներ պահելու հետ կապված մարտահրավերներով ու վտանգներով: Նա նկարագրեց, որ գարնան սկզբին, մեծածավալ լեռնաշղթայի ձնհալից հետո, նա ամառային արոտի համար սար էր բարձրացրել մոտ 2000 գլուխ ոչխարների հոտ: Այնտեղ նա հոգում էր ոչխարների մասին, մինչ ուշ աշուն, երբ նրանք ամառային արոտից անցնում էին տափաստանի ձմեռային արոտի: Նա նկարագրեց, թե որքան դժվար է ոչխարի խոշոր հոտի խնամքը վաղ առավոտից մինչև ուշ գիշեր, և պահանջվում է արևածագից առաջ արթնանալ և մինչև ուշ երեկո աշխատել: Այդ աշխատանքը հնարավոր չէ միայնակ անել:

Հոտը խնամող այլ օգնականներ կային, սկսած փորձառու խաշնարածներից մինչև երիտասարդ օգնականները, որոնք օգտվում էին իրենց գործընկերների իմաստությունից: Նա ապավինում էր նաև երկու տարեց ձիերի,վարժեցման փուլում գտնվող երկու քուռակների, երկու տարեց հովվաշների և երկու կամ երեք հովվաշան ձագերի օգնությանը: Ամռանը ընկերս իր ոչխարների հետ դիմակայում էր քամիներին ու անձրևամրրիկներին, հիվանդություններին, վնասվածքներին, երաշտին և ամեն տեսակ դժվարությանը, որ հնարավոր է պատկերացնել: Լինում էին տարիներ, երբ ոչխարներին կենդանի պահելու համար նրանք ստիպված էին լինում ջուր կրել ողջ ամռան ընթացքում: Այնուհետև, ամեն տարի ուշ աշնանը, երբ ձմեռը վրա հասնելու ժամանակ ոչխարներին սարից իջեցնում էին ու հաշվում, սովորաբար ավելի քան 200 ոչխար կորած էին լինում:

Գարնան սկզբին սար բարձրացած 2000 ոչխարներրը ուշ աշնանը նվազում՝ 1800-ից էլ քիչ էին դառնում: Բացակայող ոչխարների մեծ մասը *չէր* կորում հիվանդության կամ բնական մահի պատճառով, այլ ընձառյուծների ու դաշտագայլերի բաժին էր դառնում: Այդ գիշատիչները, սովորաբար, հայտնաբերում էին միայնակ գառներին, որոնք հեռացել էին հոտի անվտանգությունից ու հովվի պաշտպանությունից: Այժմ կարո՞ղ եք մի պահ մտածել իմ նկարագրածի մասին հոգևոր համատեքստում: Ո՞վ է հովիվը: Ո՞վ է հոտը: Ո՞վքեր են հովվի օգնականները:

Ինքը՝ Տեր Հիսուս Քրիստոսն է ասել. «Ես եմ բարի Հովիւը, և ես իմիններին ճանաչում եմ . . . իր անձը դնում եմ ոչխարների համար»:[7]

Նմանապես, մարգարե Նեփին ուսուցանել է, որ Հիսուսը «պիտի կերակրի իր ոչխարներին, և նրանում նրանք արոտ կգտնեն»:[8] Ես տևական խաղաղություն եմ գտնում, իմանալով, որ «Տերն է *իմ* հովիվը»,[9] և որ Նա ճանաչում է յուրաքանչյուրիս ու հոգում է մեր մասին: Երբ դիմակայում ենք կյանքի քամիներին ու անձրևամրրիկներին, հիվանդություններին, վիրավորանքներին ու երաշտներին, Տերը՝ մեր Հովիվը, սպասավորություն կանի մեզ համար: Նա կվերականգնի մեր հոգին:

Ճիշտ այնպես, ինչպես իմ ընկերը իր ոչխարներին հովվում էր երիտասարդ և փորձառու խաշնարածների, ձիերի ու հովվաշների օգնությամբ, Տերը նույնպես օգնություն է պահանջում *Իր* հոտի ոչխարների մասին հոգալու դժվարին աշխատանքում:

Որպես սիրող երկնային Հոր զավակներ և որպես Իր հոտի ոչխարներ, մենք վայելում ենք Հիսուս Քրիստոսի կողմից անհատապես սպասավորություն ստանալու օրհնությունը: Միևնույն ժամանակ, մենք պատասխանատվություն ենք կրում՝ որպես հովիվներ, ինքներս սպասավորության օգնություն տրամադրել մեզ շրջապատող մարդկանց: Մենք ականջալուր ենք Տիրոջ խոսքերին. «դու պիտի ծառայես ինձ և առաջ գնաս իմ անունով, և . . . ի մի հավաքես իմ ոչխարներին»:[10]

Ո՞վ է հովիվը: Յուրաքանչյուր տղամարդ, կին ու երեխա Աստծո արքայությունում հովիվ է: Դրա համար կոչում չի պահանջվում: Մկրտության ջրերից դուրս գալու պահից ի վեր մենք հանձնառություն ունենք այս աշխատանքի համար: Մենք սիրով օգնության ենք հասնում մարդկանց, քանի որ մեր Փրկիչն է պատվիրել այդպես վարվել: Ալման շեշտված հարց է տվել. «Քանզի, ո՞ր հովիվը . . . ունենալով շատ ոչխարներ, չի հսկում նրանց վրա, որպեսզի գայլեր չմտնեն ու չհոշոտեն իր հոտը . . . Մի՞թե նա դուրս չի քշում դրանց»:[11] Երբ մեր հարևանները նյութական կամ հոգևոր փորձանքի մեջ են, մենք օգնության ենք վազում: Մենք կրում ենք մեկս մյուսի բեռները, որ դրանք թեթև լինեն: Մենք սգում ենք նրանց հետ, ովքեր սգում են: Մենք մխիթարում են նրանց, ովքեր մխիթարության կարիք ունեն:[12] Տերը սիրով ակնկալում է դա մեզանից: Եվ կգա օրը, երբ մենք պատասխանատու կհամարվենք Իր հոտը սպասասավորելու պարտականության համար:[13]

Իմ հովիվ ընկերը կիսվել է արոտի ոչխարների պահպանման մեկ այլ կարևոր տարրով: Նա նկարագրել է, որ գիշատիչների վտանգների նկատմամբ առանձնապես խոցելի են կորած ոչխարները: Փաստորեն, նրա և իր թիմի ընդհանուր ժամանակի 15 տոկոսը նվիրվում էր կորած ոչխարներին գտնելու գործին: Որքան շուտ գտնեին կորած ոչխարին, քանի դեռ նա չափազանց հեռու չէր հոտից, այնքան նրա չվնասվելու հավանականությունը մեծ էր: Կորած ոչխարին վերադարձնելու համար մեծ

Անդրդվելի հովվաշունը առաջնորդում է կորած ոչխարներին դեպի իրենց հովիվն ու անվտանգ հոտը։

համբերություն ու կարգապահություն էր պահանջվում։

Մի քանի տարի առաջ տեղական օրաթերթում մի հոդված կարդացի, որն այնքան հետաքրքիր էր, որ պահեցի այն։ Առաջին էջում որպես խորագիր գրված էր. «Անդրդվելի շունը չլքեց կորած ոչխարին»։[14] Այս հոդվածում խոսվում էր ընկերոջս սեփականությունից ոչ հեռու գտնվող մի ռանչոյի մասին, որի ոչխարներից մի քանիսը ամառային արոտից հետ էին մնացել։ Երկու կամ երեք ամիս անց այդ ոչխարները կորել էին սարերում ու մնացել էին ձյան մեջ։ Երբ ոչխարները հետ էին մնացել, հովվաշունը մնացել էր նրանց հետ, որովհետև իր պարտքն էր համարել հոգ տանել և պաշտպանել ոչխարներին։ Նա չէր դադարել հսկել նրանց։ Շունը մնացել էր կորած ոչխարների մոտ ամիսներ շարունակ, ցրտին ու ձյանը, պաշտպանելով նրանց դաշտագայլերից, ընձառյուծներից և ոչխարներին սպառնացող այլ գիշատիչներից։ Նա այնքան էր մնացել, մինչև կարողացել էր ոչխարներին առաջնորդել դեպի հովիվն ու անվտանգ հոտը։ Հոդվածի առաջին էջում տպագրված նկարի մեջ այդ հովվաշան աչքերում կարելի է նշմարել նրա բնութագիրն ու վարքը։

Նոր Կտակարանում մի առակ ու հրահանգ ենք գտնում Փրկիչի կողմից, որը լրացուցիչ ըմբռնում է հաղորդում կորած ոչխարների հանդեպ մեր պատասխանատվության վերաբերյալ, որպես հովիվներ՝ որպես սպասավորող քույրեր և եղբայրներ.

«Ձեզանից ո՞վ է այն մարդը, որ հարիւր ոչխար ունենայ, և նորանցից մէկը կորցնէ. չի՞ թողիլ իննսուն և ինը անապատումը, և այն կորածի ետեւից գնալ, մինչեւ որ գտնէ նորան։

և երբոր գտնէ, ուրախանալով իր ուսերի վերայ կդնէ նորան։

Եվ տուն գալով, բարեկամներին և դրացիներին կկանչէ, և նրանց կասէ. Ուրախացեք ինձ հետ. որովհետև իմ կորած ոչխարը գտա»։[15]

Ամփոփելով առակում ուսուցանվող դասը, գտնում ենք հետևյալ արժեքավոր խորհուրդը.

1. Մենք հայտնաբերում ենք կորած ոչխարներին։
2. Մենք փնտրում ենք, մինչև գտնում ենք կորածին։
3. Գտնելուց հետո, հնարավոր է, կարիք լինի նրանց մեր ուսերին դնել և տուն բերել։
4. Վերադարձնելով տուն, մենք նրան շրջապատում ենք ընկերներով։

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մեր մեծագույն մարտահրավերները և մեծագույն պարգևները կարող են գալ, երբ մենք ծառայում ենք կորած ոչխարներին։ Մորմոնի գրքում Եկեղեցու անդամները «հսկում էին իրենց ժողովրդի վրա և սնուցում էին նրանց արդարությանը պատկանող բաներով»։[16] Մենք կարող ենք հետևել նրանց օրինակներին և հիշենք, որ սպասավորությունը «առաջնորդվում է Հոգու կողմից . . . ճկուն է և հարմարեցված . . . յուրաքանչյուր անդամի կարիքներին»։ Էական է նաև, որ մենք «ձգտենք օգնել անդամներին ու ընտանիքներին նախապատրաստվել իրենց հաջորդ արարողությանը, պահել իրենց . . . ուխտերը և դառնալ ինքնապահով»։[17]

Յուրաքանչյուր հոգի թանկ է մեր Երկնային Հոր համար։ Սպասավորելու անհատական հրավերը Նրա համար ունի մեծ արժեք ու կարևորություն, քանի որ դրանում է Նրա գործն ու փառքը։ Դա բառացիորեն հավերժության գործն է։ Նրա տեսանկյունից, Իր զավակներից յուրաքանչյուրը անսահման ներուժ ունի։ Նա *ձեզ* սիրում է մի սիրով, որը նույնիսկ վեր է մեր ըմբռնումից։ Ինչպես նվիրված հովվաշունը, Տերը ևս կմնա լեռներում, որ պաշտպանի *ձեզ* քամուց, անձրևից, մրրիկից, ձյունից և *ամեն* շատ բաներից։

Վերջին համաժողովին նախագահ Նելսոնը ուսուցանել է. «Աշխարհին ուղված [կավելացնեմ նաև «սպասավորվող հոտին ուղղված»] մեր ուղերձը պարզ ու անկեղծ է. մենք հրավիրում ենք *վարագույրի երկու կողմերում* գտնվող Աստծո զավակներին գալ դեպի Փրկիչը, ստանալ սուրբ տաճարի օրհնությունները, ունենալ

հարատև ուրախություն և արժանանալ հավերժական կյանքի»:[18]

Թող որ մենք բարձրացնենք մեր հայացքը ու տեսնենք մարգարեական տեսիլքը, որպեսզի կարողանանք հովվել հոգիներին դեպի տաճարը և, ի վերջո, դեպի մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսը: Նա մեզանից չի պահանջում հրաշքներ գործել: Նա միայն խնդրում է, որ մեր եղբայրներին ու քույրերին Իր մոտ բերենք, քանի որ *Նա* նրանց հոգին փրկագնելու զորություն ունի: Այդ գործը անելով՝ մենք կարող ենք երաշխիք ստանալ այս խոստման համար. «Եւ երբոր Հովուապետն կ'երեւի, փառքի անթառամ պսակը կ'ընդունէք»:[19] Ես վկայում եմ այդ մասին, ինչպես նաև Հիսուս Քրիստոսի մասին, որպես մեր Փրկիչ ու մեր Քավիչ, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Նախագահ ՌասսելՄ. Նելսոն, «Եկեք առաջ շարժվենք», *Լիահոնա,* մայիս 2018թ., 118:
2. Ռասսել Մ. Նելսոն, «Սպասավորություն», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 100:
3. Ռասսել Մ. Նելսոն, «Սպասավորել Աստծո զորությամբ և իշխանությամբ», *Լիահոնա,* մայիս 2018, 69:
4. Ռասսել Մ. Նելսոն, «Բացման խոսք», *Լիահոնա,* նոյեմբեր 2018, 8
5. «Սպասավորել ամրապնդված Մելքիսեդեկյան քահանայության քվորումներով և Սփոփող միություններով», 2018 թվականի ապրիլի 2-ի Առաջին Նախագահության նամակի հավելված, ministering.lds.org; Մոսիա 18.9, Վարդապետություն և Ուխտեր 20.51, 53; տես նաև Հովհաննես 13:35:
6. Տես James E. Talmage, *Jesus the Christ* (1916), 417:
7. Հովհաննես 10.14–15
8. 1 Նեփի 22.25
9. Սաղմոս 23.1, շղագիրն ավելացված է:
10. Մոսիա 26.20
11. Ալմա 5.59
12. Տես Մոսիա 18.8–9:
13. Տես Մատթեոս 25.31–46:
14. Տես John Wright, "Safe or Stranded? Determined Dog Won't Abandon Lost Sheep," *Logan Herald Journal,* Jan. 10, 2004, hjnews.com:
15. Ղուկաս 15.4–6
16. Մոսիա 23.18
17. «Սպասավորել ամրապնդված Մելքիսեդեկյան քահանայության քվորումներով և Սփոփող միություններով», 4, 5, ministering.lds.org:
18. Ռասսել Մ. Նելսոն, «Եկեք առաջ շարժվենք», Լիահոնա, մայիս 2018թ., 118–119; շեշտադրումն ավելացված է:
19. Ա Պետրոս 5.4



Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Դառնալ օրինակելի Վերջին Օրերի Սրբեր

Ես թողնում եմ իմ սերը և օրհնությունը ձեր վրա, որ դուք կարողանաք սնվել Տիրոջ խոսքով և կիրառել Նրա ուսմունքները ձեր անձնական կյանքում:

Այս համաժողովը ոգեշնչող և պատմական էր: Մենք նայում ենք ապագային ոգևորությամբ: Մենք ոգևորվել ենք *անել* ավելի լավ և *լինել* ավելի լավը: Մեր Բարձրագույն Իշխանավորներիի և բարձրագույն պաշտոնյաների կողմից այս բեմից հնչեցրած հրաշալի ելույթներն ու երաժշտությունը հոյակապ էին: Ես կոչ եմ անում ձեզ ուսումնասիրել այս ուղերձները սկսած այս շաբաթից:[1] Այդ ուղերձներն այսօր արտահայտում են Տիրոջ միտքը և կամքը Նրա ժողովրդի համար:

Տնակենտրոն Եկեղեցու և Եկեղեցու կողմից աջակցվող ուսումնական նոր ծրագիրը ներուժ ունի բացահայտելու ընտանիքների զորությունը, երբ յուրաքանչյուր ընտանիք բարեխղճորեն և ուշադիր հետևի ու իր տունը դարձնի հավատքի սրբավայր: Ես խոստանում եմ, որ եթե դուք ջանասիրաբար ձգտեք ձեր տունը վերածել ավետարանի ուսուցման կենտրոն, ժամանակի ընթացքում *ձեր* հանգստության օրերն իսկապես կդառնան բերկրանք: *Ձեր* երեխաները ոգևորված կսովորեն և կապրեն Փրկիչի ուսմունքներով, իսկ հակառակորդի ազդեցությունը *ձեր* կյանքի և *ձեր* տան վրա, կնվազի: Փոփոխությունները ձեր ընտանիքներում կլինեն նշանակալից և շարունակական:

Այս համաժողովի ընթացքում մենք ամրապնդեցինք մեր վճռականությունը՝ անհրաժեշտ ջանքեր գործադրել *ամեն* անգամ Նրա Եկեղեցին վկայակոչելիս Տեր Հիսուս Քրիստոսին պատվելու համար: Ես ձեզ խոստանում եմ, որ մեր խստապահանջ ուշադրությունը Փրկիչի Եկեղեցու և նրա անդամների ճիշտ անունը օգտագործելու հանդեպ առաջ կբերի ավելի մեծ հավատք և ավելի մեծ հոգևոր զորություն Նրա Եկեղեցու անդամների համար:

Այժմ, եկեք խոսենք տաճարների թեմայից: Մենք գիտենք, որ տաճարում մեր ժամանակը շատ կարևոր է՝ մեր փրկության և վեհացման, ինչպես նաև մեր ընտանիքի անդամների փրկության և վեհացման համար:

Տաճարային անհատական արարողությունները ստանալուց և Աստծո հետ սուրբ ուխտեր կապելուց հետո մեզանից յուրաքանչյուրը կարիք ունի շարունակական հոգևոր զորացման և կրկնուսուցման, որը հնարավոր է *միայն* Տիրոջ տանը: Եվ մեր նախնիներին անհրաժեշտ է, որ մենք փոխարինողներ հանդես գանք նրանց համար:

Մտածեք Աստծո մեծ ողորմության ու արդարության մասին, ով մինչ աշխարհի ստեղծումը միջոցներ է ձեռնարկել տաճարային օրհնություններ տալու նրանց, ովքեր մահացել են առանց ավետարանի մասին գիտելիքների: Տաճարային այդ սրբազան ծեսերը հին ժամանակներից են: Ինձ համար այդ վաղեմությունը հուզիչ է և ևս մեկ ապացույց է դրանց իսկության:[2]

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, հակառակորդի հարձակումներն աճում են մեծ ուժգնությամբ, հաճախականությամբ և բազմազանությամբ:[3] Տաճարում պարբերաբար լինելու կարիքը երբեք այսքան մեծ չի եղել: Աղաչում եմ, որ աղոթքով քննեք, թե ինչպես եք ծախսում ձեր ժամանակը: Ձեր ժամանակը ներդրեք ձեր և ձեր ընտանիքի ապագայի մեջ: Եթե տաճարը ողջամտորեն մոտ է գտնվում ձեզ, ես կոչ եմ անում գտնել եղանակներ Տիրոջ հետ պարբերաբար պայմանավորվածություններ ձեռք բերելու համար, լինել Նրա սուրբ տանը, իսկ հետո պահել այդ պայմանավորվածությունները ճշգրտությամբ և ուրախությամբ: Ես ձեզ խոստանում եմ, որ երբ զոհաբերություններ կատարեք, ծառայեք և երկրպագեք Տիրոջ տաճարներում, Նա ցույց կտա հրաշքներ, որոնք, Նրա կարծիքով, ձեզ անհրաժեշտ են:

Ներկայումս մենք ունենք 159 նվիրագործված տաճարներ: Այդ տաճարների հանդեպ պատշաճ հոգածությունը և պահպանումը մեզ համար շատ կարևոր է: Ժամանակի ընթացքում տաճարներն անխուսափելիորեն թարմացման և նորացման կարիք են ունենում: Այդ նպատակով այժմ ծրագրեր են կատարվում Սոլթ Լեյքի Տաճարի և այլ ռահվիրա սերունդների տաճարների նորոգման և վերանորոգման ուղղությամբ: Այս նախագծերի մասին մանրամասները կներկայացվեն դրանց մշակումից հետո:

Այսօր, մենք ուրախ ենք հայտարարել 12 նոր տաճարների կառուցման ծրագրերի մասին: Այդ տաճարները կկառուցվեն հետևյալ վայրերում. Մենդոզա (Արգենտինա), Մալվադոր (Բրազիլիա), Յուբա Սիթի (Կալիֆորնիա), Պնոմպեն (Կամբոջա), Պրայա (ՔեյփՎերդե), Յիգո (Գուամ), Պուեբլա (Մեքսիկա), Okland (Նոր Զելանդիա), Լագոս (Նիգերիա), Դավաո (Ֆիլիպիններ), Սան Խուան (Պուերտո Ռիկո) և Վաշինգտոն Քաունթի (Յուտա):

Տաճարների շինարարությունը և պահպանումը կարող է չփոխել ձեր կյանքը, բայց տաճարում անցկացրած ձեր ժամանակն, անշուշտ, կարող է փոխել ձեր կյանքը: Նրանք, ովքեր երկար ժամանակ բացակայել են տաճարից, ես հորդորում եմ ձեզ պատրաստվել և որքան հնարավոր է, շուտ վերադառնալ այնտեղ: Ապա, ես հրավիրում եմ ձեզ երկրպագել տաճարում և աղոթել խորապես, որպեսզի զգաք Փրկիչի անսահման սերը ձեր հանդեպ, որպեսզի բոլորդ կարողանաք ստանալ այն վկայությունը, որ Նա է ղեկավարում այս սուրբ ու հավերժական աշխատանքը:[4]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ես շնորհակալություն եմ հայտնում ձեր հավատքի և հաստատող ջանքերի համար: Ես թողնում եմ իմ սերը և օրհնությունը ձեր վրա, որ դուք կարողանաք սնվել Տիրոջ խոսքով և կիրառել Նրա ուսմունքները ձեր անձնական կյանքում: Ես ձեզ հավաստիացնում եմ, որ հայտնությունը շարունակվում է Եկեղեցում և կշարունակվի, մինչև «Աստծո նպատակներն իրականացվեն, և Մեծ Եհովան ասի՝ աշխատանքը կատարված է»:[5]

Օրհնում եմ ձեզ, որ ավելի մեծ հավատք ունենաք Նրա և Նրա սուրբ աշխատանքի հանդեպ, հավատքով և համբերությամբ դիմանաք ձեր կյանքի դժվարություններին: Ես օրհնում եմ, որ դուք դառնաք օրինակելի Վերջին Օրերի Սրբեր: Ես օրհնում եմ և բերում եմ իմ վկայությունը, որ Աստված ապրում է: Հիսուսը Քրիստոսն է: Սա Նրա Եկեղեցին է: Մենք Նրա ժողովուրդն ենք, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Համաժողովի ելույթները տես առցանց՝ LDS.org և Gospel Library հավելվածներում: Դրանք կտպվեն *Ensign* և *Լիահոնա* ամսագրերում: Եկեղեցու ամսագրերը, այդ թվում *New Era* և *Friend,* որոնք առաքվում են Է-փոստով կամ առցանց ներբեռնելիս, կարևոր մասն են կազմում տներում կենտրոնացած ավետարանի ձեր ծրագրի:
2. Օրինակ, տես Ելից 28, 29, Ղևտացոց 8:
3. Տես Մոսիա 4.29:
4. Տես Վիլֆորդ Վուդրուֆի «The Law of Adoption» դասախոսությունը, որը ներկայացվել է Եկեղեցու գերագույն համաժողովում ապրիլի 18-ին, 1894թ.: Նախագահ Վուդրուֆն ասել է. «Մենք չենք վերջացրել հայտնությունները ստանալ: Մենք չենք վերջացրել Աստծո աշխատանքը: . . . Այն չի ավարտվի, մինչև չկատարելագործվի» (*Deseret Evening News*, Apr. 14, 1894, 9):
5. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 142

Ստորև տրվում է գերագույն համաժողովի ելույթներից ընտրված փորձառությունների մի ցանկ, որը կարելի է օգտագործել անձնական ուսումնասիրության, ընտանեկան երեկոների և ուսուցումների ժամանակ։ Համարը ցույց է տալիս ելույթի առաջին էջը։

Խոսնակ	Պատմություն
Նիլ Լ. Անդերսեն	(83) Հասկանալով, որ Փրկիչը տեղյակ է իր տառապանքից, հավատարիմ միսիոները հաղթահարում է հուսահատությունը՝ բուժվելով ահաբեկչական ռմբակոծությունից ստացած վերքերից: Դստեր մահից հետո Ռասսել Մ. Նելսոնը վստահեցնում է, որ Հիսուս Քրիստոսը կօգտագործի հարության բանալիները բոլոր նրանց համար, ովքեր մահանում են: Ռասսել Մ. Նելսոնը վկայում է Պուերտո Ռիկոյի անդամներին, որ «մենք կարող ենք ուրախություն գտնել նույնիսկ մեր ամենավատ հանգամանքներում»:
Բրայըն Ք. Էշթոն	(93) Բրայըն Ք. Էշթոնի կինը սկսում է ավելի լավ հասկանալ Աստծո բնույթը և Նրա սերն ու երախտագիտությունը Իր զավակների հանդեպ:
Մ. Ռասսել Բալլարդ	(71) Ունենալով վշտի ծանր զգացում ընտանիքի անդամների և միլիոնավոր մարդկանց մահվան կապակցությամբ, ովքեր մահացել են պատերազմի դաշտերում կամ հիվանդության հետևանքով, Ջոզեֆ Ֆ. Սմիթը ստանում է «մահացածների փրկագնման տեսիլքը»:
Սթիվեն Ռ. Բանգերթեր	(15) Սթիվեն Ռ. Բանգերթերի թոռները թաղում են քարերը, որոնց վրա գրել են երջանիկ կյանքի հիմքը՝ Հիսուս Քրիստոսին ներկայացնող ուղերձներ: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հիշեցնում է ծնողներին երեխաներին ուսուցանելու իրենց պարտականության մասին: Սթիվեն Ռ. Բանգերթերի որդին առաջարկում է օգնել իր ծնողներին պատրաստվել ծառայելու միսիայում: Սուրբ Հոգին առաջնորդում է տարեց մարդուն հետ՝ դեպի Եկեղեցի և դեպի նրա մանկության հոգևոր ապահովությունը:
Շեյն Մ. Բոուեն	(80) Մորմոնի Գրքի զորությամբ մի մարդու դարձը դեպի Եկեղեցի մեծ ազդեցություն է թողնում Շեյն Մ. Բոուենի վրա:
Մ. Ջոզեֆ Բրոու	(12) Ալյասկայում (ԱՄՆ) ունեցած փորձառության շնորհիվ Մ. Ջոզեֆ Բրոուն սովորում է, որ Աստծո հետ անհնարին բան չկա: Մի ցցի նախագահ հասկանում է, որ խաղաղությունը գալիս է ներման հետ՝ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Միսիայում ծառայելու ցանկություն հայտնելով, Մ. Ջոզեֆ Բրոուի դուստրը սովորեցնում է հորը, թե ինչպես է պետք կատարել դժվար գործերը:
Մեթյու Լ. Քարփենթեր	(101) Մեթյու Լ. Քարփենթերի որդին ավարտում է իր լիաժամկետ միսիան ինսուլտից ապաքինվելուց հետո:
Դ. Թոդ Քրիստոֆերսոն	(30) Չնայած տառապանքին, Եկեղեցու չորս անդամներն անսասան են մնում Քրիստոսի հանդեպ իրենց հավատքում և ստանում են Նրա աջակցությունը:
Քվենթին Լ. Քուք	(8) *Եկ, հետևիր ինձ. Անհատների և ընտանիքների համար* նյութը զորացնում է Բրազիլիայից մի ընտանիքի հավատքը, վկայությունը և ավետարանի ըմբռնումը:
Բոննի Հ. Քորդոն	(74) Մի երիտասարդ կին և մեծահասակ քույր ընկերանում են, ինչն օրհնում է նրանց կյանքը: Բոննի Հ. Քորդոնը և նրա սպասավորության զուգընկերը սիրով են շրջապատում մի քրոջ, որին այցելում են: Սպասավորող մի եղբայր մտերմություն և վստահություն է հաստատում մի եղբոր հետ, որի կինն ինքնասպանության փորձ էր արել:
Մայքլ Դ. Քրեյգ	(52) Կամիլլա Քիմբալն ուսուցանում է ծխի անդամին «երբեք չզսպել մեծահոգի միտքը»:
Դին Մ. Դեյվիս	(34) Նախագահ Գորդոն Բ. Հինքլին կանխատեսում է, թե որտեղ պետք է կառուցվի Վանկուվերի Բրիտանական Կոլումբիա տաճարը:
Հենրի Բ. Այրինգ	(58) Հենրի Բ. Այրինգը զարմանում է, թե ինչպես է մայրը ժամանակ ու եռանդ ունեցել Պողոս Առաքյալի ճանփորդությունների քարտեզը կազմելու համար: (90) Հենրի Բ. Այրինգը սովորում է մարդկանց հետ վարվել այնպես, կարծես նրանք «խորը վշտի մեջ են»: Փրկիչը հոգ է տանում Հենրի Բ Այրինգի կնոջ մասին, մինչ նա դժվարությունների մեջ է:
Քրիստինա Բ. Ֆրանկո	(55) Քրիստինա Բ. Ֆրանկոն իմանում է, որ Երեխաների Միության իր ուսուցչի շոկոլադե տորթի գաղտնի բաղադրիչներն են սերն ու զոհաբերությունը:
Ռոբերտ Ս. Գայ	(97) Սուրբ Հոգին օգնում է Ռոբերտ Ս. Գային տեսնել իր ավագ քրոջն այնպես, ինչպես Աստված է տեսնում նրան: Ջեյմս Ի. Թալմիջը սպասավորում է դիֆթերիայով վարակված մի ընտանիքի:
Ջեք Ն. Ջերարդ	(107) Այն բանից հետո, երբ Ջեք Ն. Ջերարդին ախտորոշեցին լուրջ հիվանդություն, նա կյանքը տեսնում է հավերժության տեսանկյունից:
Ջերիթ Վ. Գոնգ	(40) Երեց Ռիչարդ Գ. Սքոթը և Ջերիթ Վ. Գոնգը քննարկում են հավատքը՝ ջրաներկերով հավատի կրակ նկարելիս: Մի քահանայություն կրող օգնում է ոչ ակտիվ մի զույգի վերադառնալ Եկեղեցի:
Ջեֆրի Ռ. Հոլլանդ	(77) Սպասավորելուն ուղղված երեխաների խնդրանքը օգնում է մի հոր ներել ու վերադառնալ Եկեղեցի, ինչի արդյունքում ընտանիքին օրհնություններ է ստանում:
Ջոյ Դ. Ջոնս	(50) Ջոյ Դ. Ջոնսը և նրա ամուսինը հարատև ընկերական հարաբերություններ են հաստատում ոչ ակտիվ մի ընտանիքի հետ, երբ սովորում են ծառայել՝ Տիրոջ հանդեպ սիրուց դրդված:
Ռասսել Մ. Նելսոն	(6) Մի մայր սիրում է եկեղեցին իր տանն ունենալ, քանի որ ամեն կիրակի հաղորդությունն օրհնելը ստիպում է իր ամուսնուն ավելի պարկեշտ բառապաշար օգտագործել տանը: (68) Ռասսել Մ. Նելսոնը պատահաբար ակնարկում է իրեն որպես մայր: Մի տղա շնորհակալություն է հայտնում մորը այն բանից հետո, երբ Սուրբ Հոգին հուշում է մորը փոխել տղայի սմարթֆոնը սովորական հեռախոսով: (87) Բենջամին Դե Հոյոսը բացատրում է ռադիոհաղորդման մի տնօրենի, որ Եկեղեցու երկար անունը ընտրված է Փրկիչի կողմից:
Դալլին Հ. Օուքս	(61) Մի երիտասարդ փախստական բանտարկվում է, երբ պատասխան է տալիս նրանց, ովքեր հրահրում են իրեն:
Փոլ Բ. Փայփեր	(43) Մի երիտասարդ կին, ով պատրաստվում է մկրտվել, ասում է, որ Հիսուս Քրիստոսի անունը մեր վրա վերցնել նշանակում է՝ «ես կարող եմ ունենալ Սուրբ Հոգին»:
Ռոնալդ Ա. Ռասբանդ	(18) Ռոնալդ Ա. Ռասբանդի դուստրը և փեսան հաղթահարում են երեխաներ լույս աշխարհ բերելու հետ կապված իրենց վախը:
Գարի Ի. Սթիվենսոն	(110) Ծխի անդամը սպասավորող ձեռք է մեկնում մոլորվող Կառլոս Ա. Գոդոյին: Ֆերմերը 200 ոչխար կորցնում է գիշատիչների պատճառով: Հովվաշունը կորած ոչխարներին ապահով հետ է բերում:

Նախագահ Նելսոնը առաջնորդում է ուղին

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը խորհուրդ է տվել յուրաքանչյուրիս լինել ավելի բարի, Քրիստոսանման և հոգևոր, երբ մենք սպասավորում ենք ուրիշներին, և նա օրինակ է հանդիսացել իր սպասավորությամբ, որը կատարել է անցյալ գերագույն համաժողովից ի վեր:

2018 թվականի ապրիլի գերագույն համաժողովից կարճ ժամանակ անց Նախագահ Նելսոնը մեկնել է շրջագայության Անգլիա, Իսրայել, Քենիա, Զիմբաբվե, Հնդկաստան, Թաիլանդ, Չինաստան, Հավայան կղզիներ, ԱՄՆ: Նրա հետ են եղել կինը՝ Վենդին և Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը կնոջ՝ Պատրիշայի հետ:

Շետագա ճանապարհորդությունների ժամանակ Նախագահ Նելսոնը հանդիպել է Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան Կանադայի, Սիեթլի, Վաշինգտոնի (ԱՄՆ) և Դոմինիկյան Հանրապետության Եկեղեցու անդամների, միսիոներների, ղեկավարների և ընկերների հետ, որտեղ նա երկարատև ելույթ է ունեցել իսպաներեն լեզվով, դա առաջին անգամն էր, երբ Եկեղեցու Նախագահը ընդարձակ քննարկում է ունեցել անգլերենից բացի այլ լեզվով:

Հանդիպումների և հոգևոր երեկոների ժամանակ Նախագահ Նելսոնն ուսուցանել է Եկեղեցու ճիշտ անվանման մասին, մարդկանց հետ կիսվել է ավետարանով, փառաբանելով Մորմոնի Գիրքը, պատմել է, թե ինչպես է բարելավվում կյանքը, երբ ապրում ենք ավետարանով, ինչպես է Քրիստոսի ուղին հանդիսանում ուրախության և երջանկության ուղի՝ այժմ և հավերժության մեջ, պատմել է աղոթքի մասին, տունը երեխաների համար սրբավայր դարձնելու, այն մասին, թե ազատ կամքը գործածելով ինչպես հաղթահարել գայթակղությունները և հետևել Փրկիչին, հոգ տանել ուրիշների մասին և պատրաստվել ու ստանալ տաճարի օրհնությունները:

Նախագահ և Քույր Նելսոնները նաև ելույթ են ունեցել 2018 թվականի հունիսի 3-ի համաշխարհային երիտասարդական հոգևոր հավաքին, որտեղ Նախագահ Նելսոնն ասել է, որ երիտասարդները, ովքեր հավաքագրվել են «Տիրոջ գումարտակում» և օգնում են հավաքել Իսրայելը, հնարավորություն ունեն լինել մասը «մի մեծ, հսկա և հրաշալի բանի»: Նա քաջալերել է երիտասարդներին հեռանալ սոցիալական մեդիայի մշտական կախումից, որոշ ժամանակ զոհաբերել Տիրոջը, կատարել կյանքի մանրամասն գնահատում Տիրոջ հետ, աղոթել ամեն օր, որ Աստծո բոլոր զավակները կարողանան ստանալ ավետարանը և լույս լինեն աշխարհին: ■

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի սպասավորության վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար այցելեք՝ ***prophets.lds.org****: Երիտասարդների հոգևոր հավաքի հեռարձակումն ամբողջությամբ կարող եք դիտել* ***HopeofIsrael.lds.org*** *կայքում:*

Նորություններ տաճարների վերաբերյալ

Եկեղեցին ծրագրում է կառուցել 12 նոր տաճարներ, հայտարարել է Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը գերագույն համաժողովի իր եզրափակիչ ելույթի ժամանակ (տես էջ 113): Նա նաև հայտարարել է Սոլթ Լեյքի և «ռահվիրաների սերնդի» այլ տաճարների վերանորոգման մասին, հավելելով, որ մանրամասները կտրամադրվեն ավելի ուշ:

Տաճարներ կկառուցվեն Մենդոզայում (Արգենտինա), Սալվադորում (Բրազիլիա), Յուբա Սիթիում (Կալիֆորնիա, ԱՄՆ), Պնոմպենում (Կամբոջա), Պրայայում (ՔեյփՎերդե), Ցիգոյում (Գուամ), Պուեբլայում (Մեքսիկա), Օքլենդում (Նոր Զելանդիա), Լագոսում (Նիգերիա), Դավաոյում (Ֆիլիպիններ), Սան Խուանում (Պուերտո Ռիկո) և Վաշինգտոն Քաունթիում (Յուտա, ԱՄՆ):

Շուտով կնվիրագործվեն չորս տաճարներ. հոկտեմբեր 28-ին՝ Կոնսեպսիոն Չիլի Տաճարը, դեկտեմբերի 9-ին՝ Բարանքուիլա Կոլումբիա Տաճարը, մարտի 10-ից մինչև մարտի 17-ն ընկած շաբաթվա մեջ՝ Հռոմ Իտալիա Տաճարը և 2019թ. ապրիլի 14-ին՝ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության Կինշասա Տաճարը:

Վերջերս նվիրագործվել են երկու տաճարներ՝ Հյուսթոն Տեխաս Տաճարը վերանվիրագործվել է 2018թ. ապրիլի 22-ին և Յուտայի Ջորդան Ռիվեր Տաճարը վերանվիրագործվել է 2018թ. մայիսի 20-ին: ■

Մանրամասները տես՝ ***temples.lds.org****-ում:*

Փոփոխություններ, որոնք կօգնեն հավասարակշռել ավետարանի ուսուցումը տանը և Եկեղեցում

Որպես շարունակական ջանքերի մի մաս, որոնք կնպաստեն, որ Վերջին Օրերի Սրբերը «սովորեն վարդապետությունը, ամրապնդեն հավատքը և խթանեն անձնական երկրպագությունը», Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հայտարարեց փոփոխությունների մասին, որոնք կօգնեն հավասարակշռել ու կապակցել ուրույն և կարևոր եղանակները, որոնցով անդամները երկրպագում, սովորում և ապրում են Փրկիչի ավետարանով եկեղեցում կտանը:

Եկեղեցու ղեկավարները հայտարարել են կիրակնօրյա ժողովների ժամանակացույցում կատարվող փոփոխությունների մասին, որոնք ուժի մեջ կմտնեն 2019 թվականի հունվարից, կապված նոր՝ տնակենտրոն, Եկեղեցու կողմից աջակցվող ուսումնական ծրագրի թողարկման հետ: Այս և մյուս փոփոխությունները, հիմնված մի քանի նախորդ նախաձեռնությունների վրա, որոնք Եկեղեցին առաջ է քաշել վերջին տարիներին, նախատեսված են օգնելու անդամներին իրենց կյանքն ավելի լիարժեք կենտրոնացնել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի վրա և խորացնել հավատքը Նրանց հանդեպ: Այս նախաձեռնությունները ներառում են՝ կենտրոնանալ տանն ավետարանի ավելի իմաստալից ուսումնասիրության վրա, պատվել Տիրոջը՝ Հանգստության օրը սուրբ պահելով և միմյանց մասին հոգ տանելով, ինչպես Փրկիչը կաներ և ինչպես ուղղորդվում ենք Հոգու կողմից:

Նպատակ ունենալով պատրաստել Տիրոջ ժողովրդին Նրա վերադարձին, այս փոփոխություններն ուղղված են անհատական դարձի խորացմանը, ինչպես բացատրել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Քվենթին Լ. Քուքը, ներկայացնելով փոփոխությունները գերագույն համաժողովի շաբաթ առավոտվա նիստին:

«Մենք գիտենք, թե հոգևոր ինչ ազդեցություն կարող է լինել և հաստատուն ու տևական ինչպիսի դարձ կարող է տեղի ունենալ տան միջավայրում . . . », ասել է նա: «Մեր նպատակն է հավասարակշռել Եկեղեցու և տան փորձն այնպես, որ մեծանա հավատքը, հոգևորությունը և ամրապնդվի դարձը դեպի Երկնային Հայրը և Տեր Հիսուս Քրիստոսը»:

Փոփոխություններ տանը

Եկեղեցու ղեկավարները հրավիրում են ավելի մեծ ուշադրություն դարձնել տանն անհատական և ընտանեկան կրոնական երկրպագությանը, ներառյալ ավետարանի տնային ուսումնասիրությանը կիրակի օրը և շաբաթվա ընթացքում, ինչպես նաև փոփոխություններ տնային երեկոյի անցկացման վերաբերյալ:

Թե՛ որպես դասարան, թե՛ գործնական առումով, տունը ավետարանն ուսումնասիրելու և դրանով ապրելու կարևոր կենտրոն է: Կիրակի օրը և շաբաթվա ընթացքում ավետարանի անհատական և ընտանեկան տնային ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս գտնելու հոգևոր ուժ առօրյայում և ճկունություն է ապահովում անհատական ուսումնասիրության և հայտնության համար: Ավետարանի ուսուցման համար Եկեղեցում գտնվելու սահմանափակ ժամանակին ապավինելը անհավասարակշռություն է առաջացնում, որը ցանկալի չէ հաստատուն և հարատև դարձի նպատակի համար:

«Մեզանից յուրաքանչյուրը պատասխանատու է իր հոգևոր աճի համար»,- ասել է Նախագահ Նելսոնը: «Եվ սուրբ գրությունները հստակ ասում են, որ երեխաներին վարդապետությունն ուսուցանելու առաջնային պարտականությունը ծնողներինն է»:

Փոփոխությունները ներառում են ծանոթացում ավետարանի տնային ուսուցման նոր նյութի հետ անհատների և ընտանիքների համար: Անհատները և ընտանիքները ցանկության դեպքում կարող են օգտագործել նոր՝ *Եկ, հետևիր ինձ. Անհատների և ընտանիքների համար* նյութը, ուղղորդելով ավետարանի ուսումնասիրության իրենց փորձառությունը Եկեղեցուց դուրս: Նոր նյութը, զուգորդվելով Կիրակնօրյա Դպրոցի և Երեխաների Միության ուսուցիչների համար գոյություն ունեցող մյուս նյութերի հետ, համախմբում է կիրակնօրյա դասերը սուրբ գրությունների տնային ուսումնասիրության հետ և

առաջարկներ տալիս տնային երեկոյի համար:

Ավետարանի ուսուցումը քաջալերելու հետ մեկտեղ, Եկեղեցու ղեկավարները թարմացրեցին իրենց հրավերը, ուղղված բոլորին՝ Հանգստության օրը և շաբաթվա ընթացքում մասնակցել ընտանեկան խորհուրդներին, ընտանեկան երեկոներին, ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքին, սպասավորությանը, անձնական երկրպագության և ընտանեկան ուրախ ժամանցին:

Մասնակիցներին և ղեկավարներին ուղարկված նյութերը բացատրում են, որ Եկեղեցու ղեկավարները խրախուսում են անդամներին կիրակի օրը կամ մեկ ուրիշ օր կազմակերպել ընտանեկան երեկո և սուրբ գրությունների ուսումնասիրություն անհատների և ընտանիքների ընտրությամբ: Ընտանեկան միջոցառման երեկո կարելի է անցկացնել երկուշաբթի օրը կամ մեկ այլ օր: Այդ նպատակով, ղեկավարները պետք է շարունակեն երկուշաբթի երեկոն ազատ պահել Եկեղեցու ժողովներից և միջոցառումներից: Այնուամենայնիվ, ավետարանի տնային ուսումնասիրության և անհատական ու ընտանեկան միջոցառումների վրա ծախսված ժամանակը ծրագրվում է ըստ անհատական հանգամանքների:

Եկեղեցում Աստծուն երկրպագելը, այնտեղ սուրբ արարողություններին մասնակցելը և միասին հավաքելը՝ միմյանց ուսուցանելու, ամրապնդելու և ծառայելու համար, հավատքը խորացնելու և անձնական դարձի կարևոր տարրերն են: Եկեղեցում անցկացվող ժամանակահատվածի կրճատումը կարող է հակառակ ազդեցություն ունենալ, եթե անհատներն ու ընտանիքները չձգտեն ամրապնդել իրենց տները:

Նախագահ Նելսոնն ուսուցանել է. «Որպես Վերջին Օրերի Սրբեր, մենք սովոր ենք մտածել «եկեղեցու» մասին որպես մի բանի, որը տեղի է ունենում մեր հավաքատներում և աջակցվում է այն ամենով, ինչը տեղի է ունենում մեր տներում: Մենք պետք է ճշգրտումներ կատարենք այդ օրինաչափության մեջ: Ժամանակն է ունենալ *տնակենտրոն Եկեղեցի*, որն աջակցվում է այն ամենով, ինչը տեղի է ունենում ճյուղերի, ծխերի և ցցերի շինությունների ներսում»:

Փոփոխություններ Եկեղեցում

Եկեղեցուն վերաբերող փոփոխությունները նախատեսված են աջակցել տանը ավետարանի ուսումնասիրության լավացմանը և ավետարանով ապրելուն: Այս փոփոխությունները վերաբերում են կիրակնօրյա շաբաթական ժամանակացույցին, մասնավորապես.

- 60 րոպեանոց հաղորդության ժողով
- 10 րոպեանոց անցումային ժամանակ
- 50 րոպեանոց դասաժամ, ինչպես տրվում է ստորև ժամանակացույցում.

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՍԿՍԱԾ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻՑ	
60 րոպե	Հաղորդության ժողով
10 րոպե	Անցում դասերին
50 րոպե	Դասեր չափահասների, երիտասարդների և Երեխաների Միության համար

50 րոպեանոց դասաժամերը կընդգրկեն ամեն շաբաթ Երեխաների Միություն երեխաների համար և միմյանց հաջորդող դասեր՝ երիտասարդների և չափահասների համար, հետևյալ կերպ.

- Առաջին և երրորդ կիրակիներ՝ Կիրակնօրյա Դպրոց
- Երկրորդ և չորրորդ կիրակիներ՝ քահանայության քվորումներ, Սփոփող Միության և Երիտասարդ Կանանց դասաժամեր:
- Հինգերորդ կիրակիները՝ երիտասարդների և չափահասների ժողովներ եպիսկոպոսի ղեկավարությամբ:

Եթե Երեխաների Միությունը բավականաչափ մեծ է, որ կարելի է առանձնացնել կրտսեր և ավագ խմբերը, ապա ղեկավարները պետք է փոխեն հետևյալ ժամանակացույցը երեխաների կեսի համար և հարմարեցնեն ժամանակը ինչպես որ հարմար է:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ՝ ՍԿՍԱԾ 2019Թ. ՀՈՒՆՎԱՐԻՑ	
25 րոպե	Աղոթք, սուրբ գրության հատված կամ հավատո հանգանակ, ելույթ (5 րոպե): Երգեցողության ժամ. Երաժշտություն, որն առնչվում է դասարանում սովորած սուրբ գրության հատվածների հետ (20 րոպե)
5 րոպե	Անցում դասերին
20 րոպե	Դասեր. դաս *Եկ, հետևիր ինձ. Երեխաների Միության համար* ձեռնարկից

Ուսումնական ծրագրի փոփոխություններ

Ժողովների ժամանակացույցի այս ճշգրտումը գործում է Եկեղեցու նորագույն *Եկ, հետևիր ինձ* ուսումնական ծրագրի հետ ներդաշնակ: Մկսած հունվարից այս տնակենտրոն, Եկեղեցու կողմից աջակցվող ծրագիրը կհամախմբի այն, ինչ չափահասները, երիտասարդները և երեխաները սովորում են կիրակնօրյա դպրոցի և Երեխաների Միության դասերին, հեշտացնելով ընտանիքների համար շաբաթվա ընթացքում ընտանեկան տնային ուսումնասիրությունը:

Հրահանգները, դասերի ծրագրերը և նյութերը կարող եք գտնել՝

- *Եկ, հետևիր ինձ. Երեցների Քվորումի և Սփոփող Միության համար* (առկա է 2018թ. նոյեմբերի *Ensign* կամ *Լիահոնա*-ում)։
- *Եկ, հետևիր ինձ. Սհարոնյան քահանայության քվորումների համար*
- *Եկ, հետևիր ինձ. Երիտասարդ Կանանց համար*
- *Եկ, հետևիր ինձ. Կիրակնօրյա Դպրոցի համար*
- *Եկ, հետևիր ինձ. Երեխաների Միության համար*

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **comefollowme.lds.org** կայքը։

Մյուս էական փոփոխությունները ներառում են հետևյալը.

- Ուսուցիչների խորհրդի ժողովները կանցկացվեն եռամսյակային, այլ ոչ թե ամսական ժամանակացույցով։
- Երեցների քվորումների և Սփոփող Միության դասերի ծրագրերը այլևս չեն ընդգրկի առաջին կիրակի օրվա խորհրդի ժողով կամ չորրորդ կիրակի օրվա հատուկ թեմա։ Դասերը կկենտրոնանան վերջին գերագույն համաժողովի ուղերձների շուրջ։
- Երգեցողության ժամը կփոխարինի միացյալ ժամին։ *Միացյալ ժամի ծրագիրը* կդադարեցվի։
- Ավետարանի սկզբունքներ դասընթացը կդադարեցվի։ Բոլոր անդամները և հետաքրքրվող ընկերները կհրավիրվեն մասնակցելու համապատասխանաբար չափահասների կամ երիտասարդների Կիրակնօրյա դասին։
- Ընտրովի դասընթացները, ինչպիսիք են՝ ամուսնության և ընտանիքի ամրապնդման համար, տաճարային նախապատրաստման, միսիոներական նախապատրաստման և ընտանեկան պատմության վերաբերյալ, չեն անցկացվի կիրակնօրյա դասի ժամանակ։ Այս դասընթացները կարող են ուսուցանվել այլ ժամանակ, ելնելով անհատների, ընտանիքների կամ խմբերի տեղական կարիքներից և եպիսկոպոսի հայեցողությամբ։

Այդ փոփոխությունների նպատակը

Եկեղեցու ղեկավարները, հատուկ նպատակով, ձգտում են ստեղծել նոր հավասարակշռություն և ավելի մեծ կապ՝ Եկեղեցու և տնային փորձառությունների ուրույն ազդեցությունների միջև։

«Այս փոփոխությունը շատ ավելին է, քան պարզապես հավաքատան կիրակնօրյա ժամանակացույցի կրճատում . . .», ասել է Երեց Քուքը։ «Նպատակները և օրհնությունները, որոնք կապված են այս և վերջին այլ փոփոխությունների հետ, հետևյալն են.

- Խորացնել դարձը դեպի Երկնային Հայրը և Տեր Հիսուս Քրիստոսը և ամրացնել հավատքը Նրանց հանդեպ։
- Զորացնել անհատներին և ընտանիքներին տնակնետրոն, Եկեղեցու կողմից աջակցվող ուսումնական ծրագրի միջոցով, որը նպաստում է ավետարանով ապրելու ուրախությանը։
- Պատվել Հանգստության օրը՝ կենտրոնանալով հաղորդության արարողության վրա։
- Օգնել վարագույրի երկու կողմերում գտնվող Երկնային Հոր բոլոր զավակներին միսիոներական աշխատանքի, ինչպես նաև արարողությունները, ուխտերը և տաճարի օրհնությունները ստանալու միջոցով»։

Այս փոփոխությունների մասին հայտարարությունը տես՝ Ռասսել Մ. Նելսոն՝ «Ներածական ելույթ», որն այս ամսագրի 6-րդ էջում է և Քվենթին Լ. Քուք՝ «Հաստատուն և հարատև դարձ դեպի Երկնային Հայրը և Տեր Հիսուս Քրիստոսը», էջ 8։ Այս փոփոխությունների վերաբերյալ ավելին իմանալու համար այցելեք **sabbath.lds.org** կայք։ Այստեղ կգտնեք Առաջին Նախագահության նամակը, հաճախակի տրվող հարցերի պատասխանները և լրացուցիչ նյութեր, որոնք կօգնեն անհատներին և ընտանիքներին պատվել Հանգստության օրը։ ■

Ներգրավվեք նոր երգարանի ստեղծման գործում

Եկեղեցին պատրաստում է *Հիմների* և *Երեխաների երգարանի* նոր հրատարակություն և առաջարկների կարիք ունի ամբողջ աշխարհի Եկեղեցու անդամներից:

NewMusic.lds.org/hye էջում դուք կարող եք.

Ներկայացնել առաջարկություններ ներառելու համար ներկայիս ձեր սիրելի հիմները կամ մանկական երգերը, վերջին օրերի սուրբ կամ ոչ վերջին օրերի սուրբ օրհներգերը կամ մանկական երգերը, առաջարկներ ներկայիս այն օրհներգերի կամ երգերի մասին, որոնք չեք ցանկանում, որ ընդգրկվեն, ներկայիս երաժշտական գրքերի հետ կապված դժվարությունները և այլ կարծիքներ:

Ներկայացնել բնագիր նյութեր՝ հիմներ, հիմների բառեր, մանկական երգեր կամ մանկականի երգերի բառեր: Երաժշտությունը պետք է պատշաճ լինի երկրպագության ծառայությունների համար: Բոլոր լեզուներով և մշակութային ոճերով նյութերը կդիտարկվեն: 18 տարեկանից ցածր անձինք կարող են առաջարկ ներկայացնել, եթե տրամադրեն ծնողի կամ խնամակալի թույլտվությունը: Առաջարկությունները պետք է ուղարկվեն մինչև 2019թ. հուլիսի 1-ը: ■

Երեց Բրուք Պ. Հեյլս

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Երեց Բրուք Պ. Հեյլսը ութ կամ ինը տարեկան էր, երբ մասնակցում էր ծոմի և վկայության մի ժողովի, որտեղ նրա հայրը ղեկավարող եպիսկոպոսն էր: Նրա հայրը հրավիրեց հավաքվածներին բերել իրենց վկայությունները, և գրեթե բոլոր ներկա գտնվողները վկայություն բերեցին: «Թերևս դա առաջին անգամն էր, երբ ես զգացի, որ Հոգին վկայում է ինձ ավետարանի ճշմարտացիության մասին», - հիշում է Երեց Հեյլսը:

Դրանից հետո նա զգացել է այդ վկայությունը բազմաթիվ անգամներ, հատկապես 2008 թվականից ի վեր, երբ ծառայել է որպես Առաջին Նախագահության քարտուղար: Երբ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հաստատվել էր որպես մարգարե և Եկեղեցու Նախագահ, և կրկին, երբ նախագահ Ռասսել Մ. Նելսոնն էր հաստատվել, նա վկայել է, որ «մարգարեի թիկնոցը այս տղամարդկանցից յուրաքանչյուրի վրա է, և ես անկասկած գիտեմ, որ նրանք ընտրվել և կանչվել են որպես Եկեղեցու Նախագահ իրենց հատուկ ժամանակահատվածի համար»:

Երեց Հեյլսը Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական է կանչվել 2018թ. մայիսի 17-ին և հաստատվել է՝ 2018թ. հոկտեմբերի 6-ին: Նա կշարունակի լինել Առաջին Նախագահության քարտուղարը:

Երեց Հեյլսը ծնվել է Օգդենում (Յուտա, ԱՄՆ) 1956թ. ապրիլի 7-ին, Կլի և Գլենն Ֆիլիպ Հեյլսերի ընտանիքում: 1980 թվականին նա ստացել է բանկային և ֆինանսական աստիճան Վեբերի պետական քոլեջում (այժմ՝ Վեբերի Պետական Համալսարան): Ավարտելուց հետո նա աշխատել է առևտրային բանկերի ոլորտում և Եկեղեցու Ֆինանսների ու գրանցումների բաժնում: 1981թ. նա ամուսնացել է Դենիզ Այմլեյ Հեյլսի հետ և նրանք ունեն չորս զավակներ: Երեց Հեյլսը ծառայել է որպես լիաժամկետ միսիոներ Ֆրանսիայի Փարիզ միսիայում, որպես եպիսկոպոսության խորհրդական, քահանայապետերի խմբի ղեկավար, եպիսկոպոս, ցցի նախագահ, քահանայության երգեհոնահար, կիրակնօրյա դպրոցի ուսուցիչ և տաճարում՝ որպես կնքող:

Իր պատանեկության այդ օրը Երեց Հեյլսը չբերեց իր վկայությունը: Սակայն նրա վկայությունն ավելի ամուր է դարձել այդ օրվանից ի վեր: «Հիսուս Քրիստոսի ավետարանը վերականգնվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով, Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, Աստված սիրում է մեզ կատարելապես և ցանկանում է օրհնել մեզ, Հիսուսը մեր Փրկիչն է, և մենք օրհնված ենք, ունենալով Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը, երբ արժանի ենք»,- ասում է նա: ■

ԵԿ, ՀԵՏԵՎԻՐ ԻՆՁ

Երեցների Քվորումի և Սփոփող Միության համար

Հոկտեմբեր 2018

Գտեք այս նյութերը Աստվածաշընչի գրադարան հավելվածում և comefollowme.lds.org:

Ինչո՞ւ ենք մենք անցկացնում Քվորումի և Սփոփող Միության ժողովներ:

Այս վերջին օրերում Աստված վերականգնեց քահանայությունը և կազմավորեց քահանայության քվորումներն ու Սփոփող Միությունը, որպեսզի օգնի իրականացնել փրկության Իր աշխատանքը: Այս պատճառով, յուրաքանչյուր կիրակի, երբ հավաքվում ենք երեցների քվորումի և Սփոփող Միության ժողովներում, մենք քննարկում և պլանավորում ենք, թե ինչ ենք անելու, որպեսզի իրականացնենք Աստծո աշխատանքը: Արդյունավետ լինելու համար այս ժողովները պետք է ավելին լինեն, քան պարզապես դասեր: Դրանք հնարավորություն են ընձեռում միասին խորհրդակցել փրկության աշխատանքի մասին, այդ մասին սովորել Եկեղեցու ղեկավարների ուսմունքներից և պլանավորել ու կազմակերպել ինքներս մեզ այն իրականացնելու համար:

Հոկտեմբեր-դեկտեմբեր 2018-ի **Ծրագիրը**

2018 թվականին երեցների քվորումի և Սփոփող Միության կիրակնօրյա ժողովները տեղի կունենան այսպիսի ամսական ժամանակացույցով.

Առաջին կիրակի. Միասին խորհրդակցեք տարածքի պարտականությունների, հնարավորությունների և դժվարությունների շուրջ և կազմեք գործելու ծրագիր:

Երկրորդ և երրորդ կիրակի. Ուսումնասիրեք վերջին գերագույն համաժողովի ուղերձները, որոնք կընտրվեն նախագահության անդամների, իսկ երբեմն՝ եպիսկոպոսի կամ ցցի նախագահի կողմից:

Չորրորդ կիրակի. Քննարկեք որևէ հատուկ թեմա՝ ընտրված Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից: 2018 թվականի հոկտեմբերից մինչև դեկտեմբեր ամիսների թեման սուրբ գրությունների ուսումնասիրությունն է՝ անհատապես և ընտանիքով:

Հինգերորդ կիրակի. Եպիսկոպոսության ղեկավարության ներքո:

Նոր Ծրագիր 2019թ. համար

2019թ. հունվարից երեցների քվորումի և Սփոփող Միության ժողովները տեղի կունենան ամսվա միայն երկրորդ և չորրորդ կիրակի օրերին: Այդ ժողովները կկենտրոնանան վերջին գերագույն համաժողովի ուղերձների վրա: Այդ ժողովների համար նախատեսված ուսուցման առաջարկներ կարելի է գտնել *Լիահոնա* մայիս և նոյեմբեր ամսվա ամսագրերում և Ավետարանի Գրադարան հավելվածում:

Այլ փոփոխություններ, որոնք տեղ կգտնեն սկսած 2019 թվականից, ներառում են հետևյալը.

- Առաջին կիրակի օրը անցկացվող խորհրդի ժողովները կդադարեցվեն: Սակայն, անհրաժեշտության դեպքում, երեցների քվորումները և Սփոփող Միությունները կարող են օգտագործել երկրորդ կամ չորրորդ կիրակնօրյա ժողովների մի մասը, որպեսզի խորհրդակցեն կարևոր թեմայի շուրջ:
- Բացման վարժությունները, որոնց ընթացքում Ահարոնյան և Մելքիսեդեկյան Քահանայության քվորումները հավաքվում են միասին, կամ Սփոփող Միության քույրերը և երիտասարդ աղջիկներն են հավաքվում միասին, այլևս տեղի չեն ունենա:
- Երեցների քվորումի և Սփոփող Միության ժողովները չեն սկսվի բացիչ օրհներգով կամ աղոթքով, բայց կփակվեն փակման աղոթքով:

Մենք հույս ունենք, որ դուք կխորհրդակցեք միասին և հայտնություն կփնտրեք՝ այս փոփոխությունները իրականացնելիս . . . [Կիրակնօրյա նոր ժամացուցակը] մեծ օրհնություններ կբերի նրանց, ովքեր եռանդուն կընդունեն այն և կփնտրեն Սուրբ Հոգու առաջնորդությունը: Մենք ավելի կմոտենանք մեր Երկնային Հորը և մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսին:

Երեց Քվենթին Լ. Քուք
Տասներկու Առաքյալների Քվորում

Սովորել գերագույն համաժողովի ուղերձներից (2018 և 2019)

Ապրող մարգարեների, տեսանողների և հայտնողների ուսմունքները կարող են ոգեշնչված առաջնորդություն ապահովել երեցների քվորումների և Սփոփող Միությունների աշխատանքի համար: Այն շաբաթների համար, երբ ուսումնասիրվելու են համաժողովի ուղերձները, երեցների քվորումի կամ Սփոփող Միության նախագահությունը կընտրեն համաժողովի որևէ ուղերձ ուսումնասիրման համար՝ ելնելով անդամների կարիքներից: Երբեմն եպիսկոպոսը կամ ցցի նախագահը նույնպես կարող են խորհուրդ տալ ուսումնասիրել որոշակի ուղերձ: Ղեկավարները պետք է շեշտը դնեն Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամների ուղերձների վրա: Ինչևէ, նախագահության անդամները կարող են ընտրել վերջին համաժողովի ցանկացած ուղերձ, հիմնվելով տեղի Սրբերի կարիքների և Հոգու ոգեշնչման վրա:

Ղեկավարները և ուսուցիչները պետք է ուղիներ գտնեն, խրախուսելով անդամներին նախօրոք կարդալ ընտրված ուղերձները: Նրանք պետք է խրախուսեն անդամներին պատրաստված գալ ժողովներին, կիսվելու իրենց սովորած ավետարանական ճշմարտություններով և իրենց գաղափարներով, թե ինչպես գործել համաձայն այդ ճշմարտությունների: Ստորև տրված ուսուցման վարժությունները, որոնք հիմնված են *«Ուսուցանել Փրկչի ձևով»* ձեռնարկի սկզբունքների վրա, կօգնեն անդամներին սովորել գերագույն համաժողովի ուղերձներից:

Քվենթին Լ. Քուք, *«Հաստատուն և հարատև դարձ դեպի Երկնային Հայրը և Տեր Հիսուս Քրիստոսը»*
Անդամներին կարող է հետաքրքիր լինել միմյանց լսելը, թե ինչպիսին է եղել նրանց առաջին արձագանքը, երբ լսել են փոփոխությունների մասին, որոնք նկարագրված են Երեց Քուքի ուղերձում: Եթե այլ հավատքի նրանց ընկերը հարցնի նրանց, թե ինչու է Եկեղեցին կատարում այդ փոփոխությունները, ի՞նչ կասեին նրանք: Խրախուսեք նրանց որոնել հնարավոր պատասխանները Երեց Քուքի ուղերձում: Մենք ի՞նչ կարող ենք անել որպես անհատներ և ընտանիքներ, որպես քվորում կամ Սփոփող Միություն, որպեսզի համոզվենք, որ փոփոխություններն օգնում են իրականացնել այն, ինչ նախատեսում է Տերը: Որպես այդ քննարկման մաս դուք կարող եք նաև կիսվել Նախագահ Նելսոնի բացման խոսքի որոշ մտքերով, որոնք ոգեշնչում են անդամներին «խանդավառությամբ ընդունել» այդ փոփոխությունները:

Ռոնալդ Ա. Ռասբենդ, *«Մի խռովվեք»*
Երեց Ռասբենդի ուղերձն ընդգծում է մի քանի սուրբ գրություններ, որոնք կարող են օգնել մեզ հեռացնել բոլոր վախերը, որ մենք կարող ենք ունենալ այն վտանգավոր ժամանակներում, որ մենք ապրում ենք: Խնդրեք անդամներին ուսումնասիրել այդ սուրբ գրությունները, որպեսզի կարողանան խորհրդով կիսվել մեկի հետ, ով մտահոգված է ապագայով: Ուրիշ ի՞նչ մտքերով նրանք կարող են կիսվել Երեց Ռասբենդի ուղերձից: Ինչպե՞ս կարող է վախը «սահմանափակել Աստծո զավակների հեռանկարը»: Հրավիրեք անդամներին կիսվել, թե ինչպես են սովորել հաղթահարել իրենց վախերը և ապրել հավատքով:

Դեյվիդ Ա. Բեդնար, *«Ամեն բան բովանդակուի Քրիստոսումը»*
Բերեք պարան և ստուգաթերթիկ ցուցադրման համար:: Հրավիրեք անդամներին քննարկել ավետարանական ճշմարտությունները և Եկեղեցու ծրագրերը որպես պարան դիտարկելու և դրանք որպես առանձին թեմաների և հանձնարարությունների ստուգաթերթիկ դիտարկելու միջև տարբերությունը: Խրախուսեք անդամներին որոնել գաղափարներ Երեց Բեդնարի ուղերձում տրված օրինակներում: Ի՞նչ է նշանակում «ամեն բան բովանդակուի Քրիստոսումը» (տես Եփեսացիս 1.10): Մենք ի՞նչ պիտի անենք, որ ստանանք խոստումը, որ տրված է Երեց Բեդնարի ելույթի վերջում:

Դալլին Հ. Օուքս, *«Ճշմարտությունը և ծրագիրը»*
Ինչպե՞ս է մեզ օգնում «վերականգնված ավետարանի ճշմարտությունների» ըմբռնումը, երբ մենք հակադրության ենք հանդիպում մեր հավատքի և սովորությունների հետ կապված: Այս հարցին պատասխանելու համար անդամները կարող են վերանայել հիմնական ճշմարտությունների օրինակները Նախագահ Օուքսի ուղերձի II բաժնում: Նրանք կարող են նաև վերանայել օրինակները, թե ինչպես են կիրառվել այդ ճշմարտությունները (տես III բաժինը): Անդամները կարող են դերախաղով ցույց

տալ, թե ինչպես կարող են օգտագործել այս հիմնական ճշմարտություններից մի քանիսը, որպեսզի արձագանքեն Եկեղեցու ուսմունքների կամ սովորույթների դեմ քննադատությանը:

Դ. Թոդ Քրիստոֆերսոն, *«Կայուն և հաստատուն Քրիստոսի հավատքում»*
Այս ուղերձի շուրջ քննարկում սկսելու համար դուք կարող եք գրատախտակին գծել մի գիծ, որի մի ծայրում գրված է *Հասարակության կողմից խրախուսվող* , իսկ մյուս ծայրում՝ *Քրիստոսանման պարտավորություն* արտահայտությունները: Հրավիրեք անդամներին կարդալ պարբերությունը, որը սկսվում է հետևյալ խոսքերով. «Մեզանից շատերն այս պահին զգում են, որ գտնվում են անվերջության. . . » և խորհել, թե իրենց կարծիքով, իրենք այդ անվերջության որ մասում են գտնվում: Մենք ի՞նչ ենք սովորում Երեց Քրիստոֆերսոնի ուղերձի օրինակներից, որոնք ոգեշնչում են մեզ լինել ամուր և հաստատուն մեր չարչարանքների մեջ (տես նաև Ալմա 36.27-28): Խրախուսեք անդամներին կիսվել օրինակներով իրենց ծանոթ մարդկանց մասին, ովքեր ցուցաբերել են Քրիստոսանման պարտականություն ավետարանի հանդեպ, նույնիսկ երբ հանդիպել են չարչարանքների:

Ուլիսես Սոարես, *«Մեկ Քրիստոսում*
Համաձայն Երեց Սոարեսի, ինչպե՞ս է Ամազոն գետը ներկայացնում Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցու անդամներին: Այս համեմատությունից մենք ի՞նչ ենք սովորում ազդեցության մասին, որ նոր անդամները կարող են ունենալ Եկեղեցու վրա: Ինչպե՞ս կարող ենք մենք որպես քվորում կամ Սփոփող Միություն հետևել Երեց Սոարեսի խորհրդին՝ քաջալերելով, աջակցելով և սիրելով նորադարձներին (տես Մորոնի 6.4-5): Հավանաբար մի քանի անդամներ կարող են կիսվել որոշ դժվարություններով, որոնց նրանք հանդիպել են որպես Եկեղեցու նոր անդամներ և ինչպես են այլ անդամներ օգնել իրենց: Կարող եք նաև քննարկել ուղիները, որոնցով նոր անդամներն ամրացրել են ձեր ծուխը կամ ճյուղը:

Ջերիթ Վ. Գոնգ, *«Մեր հավատի կրակը»*
Խորհեք խարույկի նկար ցուցադրելու և որևէ մեկին հրավիրելու մասին, որ կիսվի փորձառությամբ, երբ նա երախտապարտ է եղել խարույկ ունենալու համար: Խնդրեք անդամներին քննարկել, թե ինչ նկատի ուներ Երեց Գոնգը, երբ խոսում էր «հավատի կրակի» մասին: Ապա անդամներին կարող եք խմբերի բաժանել և հրավիրել յուրաքանչյուր խմբին վերանայել և կիսվել հինգ ուղիներից մեկով, որ ըստ Երեց Գոնգի խորհրդի, «հավատի կրակը» կարող է խրախուսել մեզ: Ժամանակ տվեք անդամներին խորհելու, թե նրանք ինչպես են ամրացրել իրենց հավատը կամ իրենց ծանոթներից մեկի հավատը:

Դիտեր Ֆ. Ուխդորֆ, *«Հավատացեք, սիրեք, գործեք»*
Այս ուղերձի շուրջ քննարկում սկսելու համար դուք կարող եք գրատախտակին գրել *Հուսահատություն* և *Երջանկություն*: Հրավիրեք անդամներին փնտրել ուղերձում հատկանիշներ և համոզմունքներ, որոնք տանում են հուսահատության և երջանկության և գրեք դրանք գրատախտակին: Հրավիրեք անդամներին կիսվել ուղիներով, որոնց շնորհիվ նրանք երջանկություն են ճաշակել, որը բխում է հավատքից, սիրուց և գործելուց, ինչպես ուսուցանում է Երեց Ուխդորֆը: Խրախուսեք անդամներին քաջալերող հատված գտնել ուղերձում, որպեսզի փակցնեն իրենց տանը կամ կիսվեն ընկերոջ հետ:

Ջոյ Դ. Ջոնս, *«Նրա համար»*
Կիսվեք Քույր Ջոնսի ուղերձի սկզբում գտնվող պատմությունով, և խնդրեք անդամներին մտածել պահերի մասին, երբ նրանց ծառայությունը և սպասավորելու ջանքերը գուցե «աննկատ կամ . . . չգնահատված կամ նույնիսկ անցանկալի» են թվացել: Պատմությունը քննարկելուց հետո գրատախտակին կարող եք գրել *Մենք ինչո՞ւ պետք է ծառայենք:* Հրավիրեք անդամներին պատասխանել այդ հարցին, վերանայելով Քույր Ջոնսի ուղերձի շարունակությունը և գաղափարներ փնտրելով (տես նաև Վարդապետություն և Ուխտեր 59.5): Ինչպե՞ս կարող է Քույր Ջոնսի խորհուրդը փոխել միմյանց հանդեպ հոգ տանելու և ծառայելու եղանակը:

Միշել Դ. Քրեյգ, *«Աստվածային դժգոհություն»*
Քույր Քրեյգն ասել է. «Մենք մի անդունդ ենք տեսնում այն բաների միջև, թե որտեղ ենք և ով ենք մենք և որտեղ ու ով ենք ցանկանում դառնալ»: Ի՞նչ է Աստված ցանկանում, որ մենք զգանք, այդ անդունդի հետ կապված: Ի՞նչ է սատանան ցանկանում, որ մենք զգանք դրա հետ կապված: Յուրաքանչյուր անդամ կարող է ուսումնասիրել Քույր Քրեյգի ուղերձի երեք բաժիններից մեկը , որպեսզի գտնի այդ հարցերի պատասխանը: Ի՞նչ կարող ենք անել վստահ լինելու համար, որ մեր «Աստվածային դժգոհությունը» չի վերածվում «անդամալուծող հուսահատության»:

Քրիստինա Ֆրանկո,
«Անշահախնդիր ծառայության ուրախությունը»
Քույր Ֆրանկոն, որպեսզի ուսուցանի, որ «սերը սրբագործվում է զոհաբերությամբ», կիսվում է երկու պատմություններով, մեկը՝ Վիկտորիայի, իսկ մյուսը՝ որբևայրու մասին: Կարող եք խնդրել երկու անդամների գալ պատրաստված և կիսվել, թե ինչ են սովորում սիրո և զոհաբերության վերաբերյալ այդ պատմություններից: Ուրիշ ի՞նչ փորձառություններով կարող ենք կիսվել, որոնք ուսուցանում են նույն սկզբունքը: Տեսանյութի ցուցադրումը, որտեղ Փրկիչը ծառայում է ուրիշներին (ինչպես օրինակ «Լուսավորեք աշխարհը. հետևեք Հիսուս Քրիստոսի օրինակին» LDS.org-ում) կարող է առաջ բերել քննարկում, թե ինչպես մենք կարող ենք հետևել «սիրով և զոհաբերությամբ զուգորդվող ծառայության» Նրա օրինակին:

Հենրի Բ. Այրինգ, *«Կանայք և ավետարանի տնային ուսումնասիրությունը»*
Սուրբ գրության հատվածները և «Ընտանիք. հայտարարություն աշխարհին» հռչակագրի մեջբերումները, որոնք Նախագահ Այրինգն օգտագործում է իր ուղերձում, ապահովում են տանը կանանց ազդեցության կարևորության

վերաբերյալ գաղափարներ: Անդամները կարող են միասին աշխատել և գտնել այդ հատվածներն ու մեջբերումները և քննարկել, թե ինչ սովորեցին: Ի՞նչ հրավերներ է հղում Նախագահ Այրինգը: Ի՞նչ խոստումներ է նա տալիս: Խորհեք, թե տան մասին երգ երգելով կամ կարդալով, ինչպես օրինակ «Տունը կարող է երկինք լինել երկրի վրա» (*Հիմներ,* h. 298), ինչպե՞ս կարող եք ծավալուն քննարկում սկսել:

Դալլին Հ. Օուքս, *«Ծնողներ և զավակներ»*
Երբ դուք նախապատրաստվեք ուսուցանել, խորհեք, թե Նախագահ Օուքսի ուղերձի որ բաժինն է ավելի համապատասխան ձեր քվորումի կամ Սփոփող Միության մարդկանց: Ահա հնարավոր հարցեր, որոնք կարող եք տալ, որպեսզի քննարկում ծավալեք նրա ուղերձի շուրջ. Նախագահ Օուքսի ելույթի I բաժնում նշված ժամանակակից միտումներն ինչպե՞ս են գործում Երկնային Հոր ծրագրի դեմ: Հավատարիմ կանանց ի՞նչ օրինակներով կարող ենք կիսվել, որոնք հանդիսանում են կանանց վերաբերյալ II բաժնում նշված հայտարարությունների օրինակը: Ինչպե՞ս կարող ենք խրախուսել մեզ ծանոթ երիտասարդ կանանց հետևել նրանց ուղղված Նախագահ Օուքսի հատուկ խորհրդին III բաժնում:

Ռասսել Մ. Նելսոն, *«Քույրերի մասնակցությունը Իսրայելի հավաքման գործում»*
Եթե դուք ուսուցանում եք Սփոփող Միությունում, կարող եք բաժանել քույրերին չորս խմբի և խնդրել յուրաքանչյուր խմբի կարդալ Նախագահ Նելսոնի ուղերձի չորս հրավերներից մեկի մասին: Խմբերը կարող են քննարկել, թե հրավերում ինչն է տպավորություն գործում նրանց վրա, փորձառությունները, որոնք նրանք ունեցել են դրանց համաձայն գործելով և գաղափարներ, թե ինչպես գործել դրանց համաձայն ապագայում: Ապա յուրաքանչյուր խումբը կարող է կիսվել բոլորի հետ, թե ինչի մասին են իրենք խոսել: Եթե դուք ուսուցանում եք քահանայություն կրողների, կարող եք խնդրել նրանց Նախագահ Նելսոնի ուղերձում գտնել նախադասություններ, որոնք նշում են, թե ինչ է զգում Երկնային Հայրն Իր դուստրերի հանդեպ: Ի՞նչ կարող ենք անել մենք, որպեսզի աջակցենք և խրախուսենք քույրերի մասնակցությունը Իսրայելի հավաքման մեջ:

Մ. Ռասսել Բալլարդ, *«Մահացածների փրկագնման տեսիլքը»*
Դուք կարող եք հրավիրել անդամներին ընդունել Նախագահ Բալլարդի հրավերը և կարդալ Վարդապետություն և Ուխտեր 138 գլուխը՝ նախքան ձեր քննարկումը: Խնդրեք անդամներին ժողովի ընթացքում կիսվել իրենց փորձառություններով և մտքերով այդ հատվածից: Նման հարցերը կարող են օգնել անդամներին հասկանալ այդ հայտնության կարևորությունը. Ինչպե՞ս է այդ հայտնությունը մխիթարություն բերում մեզ: Ի՞նչ ճշմարտություններ է պարունակում այդ հայտնությունը, որ կարող է ազդել «մեր ամենօրյա կյանքի ապրելակերպի վրա»:

Քույր Բոննի Հ. Քորդոն, *«Հովիվ դառնալ»*
Որպեսզի օգնեք անդամներին խորհել ուղիների վերաբերյալ, թե ինչպես կարող են բարելավել ծառայելու իրենց ջանքերը, կարող եք բաժանել նրանց երեք խմբի և խնդրել յուրաքանչյուր խմբին կարդալ Քույր Քորդոնի ուղերձի երեք վերնագրված բաժիններից մեկը: Հրավիրեք նրանց կիսվել ծառայելու սկզբունքներով, որոնք նրանք սովորել են: Ինչպե՞ս կարող է այդ սկզբունքներին հետևելու ձգտումն օգնել մեզ «դառնալ այն հովիվները, որոնց կարիքն ունի Տերը»: Հրավիրեք անդամներին կիսվել փորձառություններով, երբ մեկ ուրիշին ծառայելը օգնել է նրանց զգալ ճանաչված և սիրված Փրկիչի կողմից:

Ջեֆրի Ռ. Հոլլանդ, *«Հաշտության ծառայությունը»*
Դուք կարող եք սկսել Երեց Հոլլանդի ուղերձի շուրջ քննարկումը հրավիրելով անդամներին մտածել իրենց կյանքում առկա հարաբերությունների մասին, որ կարիք ունեն ապաքինման կամ հաշտության: Ապա նրանք կարող են ուսումնասիրել Երեց Հոլլանդի ուղերձը, փնտրելով, թե ինչպես Բրադ և Փամ Բովենները կարողացան օգնել իրենց հորը ապաքինվել: Ի՞նչ օրինություններ բխեցին այդ ջանքերից: Ի՞նչ գաղափարներ են ձեռք բերում անդամները, որ կարող է օգնել նրանց բժշկել իրենց փոխհարաբերությունները:

Նիլ Լ. Անդերսեն, *«Վիրավորված»*
Որպեսզի ներկայացնեք Երեց Անդերսենի ուղերձը, դուք կարող եք միասին կարդալ Ղուկաս 10.30-35 կամ դիտել «Բարի Սամարացու առակը» տեսանյութը (LDS.org): Ինչո՞վ ենք մենք բոլորս նման այն մարդուն, ով ընկավ ավազակների ձեռքը: Համաձայն Երեց Անդերսենի, ի՞նչ առումով է Հիսուս Քրիստոսը հանդիսանում «մեր Բարի Սամարացին»: Մենք ինչպե՞ս կարող ենք ընդունել Նրա բժշկությունը: Հավանաբար դուք կարող եք հրավիրել անդամներին կիսվել ուղիներով, որոնցով Փրկիչը բժշկել է նրանց վերքերը կամ նրանց սիրելիների վերքերը: Նրանք կարող են նաև ուսումնասիրել Երեց Անդերսենի խոսքերը և գտնել խրախուսող ուղերձ, որով կարող են կիսվել մեկի հետ, ով վիրավորված է:

Ռասսել Մ. Նելսոն, *«Եկեղեցու ճիշտ անունը»*
Հիսուս Քրիստոսը պատվիրեց, որ Եկեղեցին կոչվի Իր անունով: Դուք կարող եք օգնել անդամներին մեծացնել իրենց ցանկությունը հետևելու այդ խոսքերին, հրավիրելով նրանց

ուսումնասիրել Նախագահ Նելսոնի ուղերձը, փնտրելով պատճառները, թե ինչու «Եկեղեցու անունը ենթակա չէ քննարկման»: Ապա հրավիրեք նրանց ուսումնասիրել Նախագահ Նելսոնի ուղերձի վերջաբանը և գտնել խոստումը, որը կգա, երբ մենք աշխատենք «վերականգնել Տիրոջ Եկեղեցու ճիշտ անունը»: Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի մեր ներդրումն ունենանք այդ գործում:

Հենրի Բ. Այրինգ, *«Փորձիր, փորձիր, փորձիր»*
Նախագահ Այրինգը տալիս է «երկու կարևոր հարց». «Ի՞նչ պետք է անեմ, որ ինձ վրա վերցնեմ [Փրկիչի] անունը» և «Ինչպե՞ս կիմանամ, երբ եմ առաջընթաց ունենում»: Հավանաբար դուք կարող եք գրատախտակին գրել այդ հարցերը և հրավիրել անդամներին կիսվել իրենց ձեռք բերած մտքերով այդ հարցերի շուրջ, որոնք գալիս են Երեց Այրինգի ուղերձից և Քույր Այրինգի օրինակից: Նախագահ Այրինգը նաև անդրադառնում է «Փորձում եմ նմանվել Հիսուսին» երգին (*Երեխաների երգարան,* 78-79): Այս երգի բառերն ինչպե՞ս են լրացնում քննարկումը:

Երեց Դեյլ Գ. Ռենլանդ, *«Ընտրեք այս օրը»*
Անդամները կարող են մտածել մեկի մասին, ում կցանկանային քաջալերել հետևել Երկնային Հոր ծրագրին, ինչպես օրինակ ընտանիքի անդամը կամ մեկը, ում նրանք ծառայում են: Ապա նրանք կարող են վերանայել Երեց Ռենլանդի ուղերձը, թե ինչ են զգում Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը մեր վերաբերյալ: Ինչպե՞ս են Նրանք օգնում մեզ հնազանդություն ընտրել: Ի՞նչ է հուշում Նրանց օրինակն այն մասին, թե ինչպես մենք կարող ենք ավելի մեծ ջանքեր ներդնել մեր ընտանիքում և մեր ծառայության մեջ:

Գարի Ի. Սթիվենսոն, *«Հոգիներին հովվություն անել»*
Նրանք, ում դուք ուսուցանում եք, գուցե տան Երեց Ստիվենսոնի ուղերձի նմանատիպ մի հարց. «Ինչպե՞ս կարող ենք իմանալ, որ ծառայում ենք Տիրոջ ձևով»: Գուցե օգտակար լինի նրանց համար այս ուղերձում գտնվող հարցի շուրջ հնարավոր պատասխանների քննարկումը: Դուք կարող եք նաև բերել Փրկիչի նկարը, որտեղ Նա հանդես է գալիս որպես հովիվ (տես *Ավետարանի պատկերագիրքը* [2009], h. 64) և հրավիրել անդամներին կիսվել ճշմարտությամբ Երեց Ստիվենսոնի ուղերձից, որը ներկայացնում է նկարը: Այնուհետև անդամները կարող են կիսվել, թե ինչ են ոգեշնչվել անել քննարկման արդյունքում:

Չորրորդ կիրակի օրվա ժողովներ
(հոկտեմբեր-դեկտեմբեր 2018)
ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի չորրորդ կիրակի օրերին երեցների քվորումները և Մփոփող Միությունները կքննարկեն սուրբ գրությունների անձնական և ընտանեկան ուսումնասիրությունը: Ղեկավարները կամ ուսուցիչները կարող են իրենց ընտրությամբ վարել քննարկումներ հետևյալ սկզբունքներից որևէ մեկի շուրջ:

Սուրբ գրությունների անձնական ուսումնասիրություն
Որպեսզի օգնեք ոգեշնչել անդամներին կանոնավոր ուսումնասիրել սուրբ գրությունները, հրավիրեք յուրաքանչյուր անդամի ընտրել հետևյալ հատվածներից մեկը և կարդալ. Հեսու 1.8, Բ Տիմոթեոս 3.15-17, 1 Նեփի 15.23-25, 2 Նեփի 32.3, Կարդապետություն և Ուխտեր 11.22-23, 33.16-18: Կարդալուց և խորհելուց հետո նրանք կարող են սենյակում գտնվող մեկ այլ մարդու հետ կիսվել, թե ինչ է սովորեցնում իրենց հատվածը սուրբ գրությունների ուսումնասիրության մասին:

Դուք կարող եք նաև հրավիրել անդամներին կիսվել իրենց վկայություններով այն օրհնությունների մասին, որոնք նրանք ստանում են, երբ ուսումնասիրում են սուրբ գրությունները: Անդամների համար օգտակար կարող է լինել նաև միմյանց լսելը, մինչ կկիսվեն, թե ինչ են անում սուրբ գրությունների անձնական ուսումնասիրությունն իմաստալից դարձնելու համար (որոշ օրինակներ տես «Գաղափարներ սուրբ գրությունների ձեր անձնական ուսումնասիրությունը բարելավելու համար» վերնագրի ներքո *«Եկ, հետևիր ինձ», Անհատների և ընտանիքների համար բաժնում*): Անդամների հետ կարող եք կիսվել նաև Երեց Քվենթին Լ. Քուքի մտքերով, որոնք վերաբերում են «նպատակներին և օրհնություններին, որոնք կապված են [Կիրակնօրյա դպրոցի բարելավումների] և վերջերս տեղ գտած այլ փոփոխությունների հետ» (տես «Խորը և հարատև դարձ դեպի Երկնային Հայրը և Տեր Հիսուս Քրիստոսը», *Լիահոնա,* նոյեմբեր 2018): Անդամները կարող են քննարկել, թե սուրբ գրությունների ուսումնասիրությունը բարելավելու մեր ջանքերն ինչպե՞ս կարող են օգնել իրականացնել այդ նպատակները: LDS.org-ում գտնվող հետևյալ տեսանյութերը նույնպես կարող են ոգեշնչել

անդամներին. «Զրույցներ ընկերների հետ», «Սուրբ գրության օրինությունները», «Հանապազօրյա հաց. օրինակ» և «Ինչ նշանակություն ունեն ինձ համար սուրբ գրությունները»:

Հետևողական լինել Ավետարանն ուսումնասիրելիս

Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը սուրբ գրությունների ընտանեկան կանոնավոր ուսումնասիրությունները և այլ արդար սովորություններ համեմատել է վրձնահարվածների հետ, որոնց արդյունքում ստանում ենք գեղեցիկ նկար: Որպեսզի օգնեք անդամներին հասկանալ Երեց Բեդնարի ուսուցանածը, հավանաբար դուք կարող եք ցուցադրել մի նկար, որտեղ տեսանելի են նկարչի վրձնահարվածները: Ապա անդամները կարող են կարդալ Երեց Բեդնարի օրինակը «Ավելի ջանասեր և մտահոգ տան համար» ելույթում (*Լիահոնա,* նոյեմբեր 2009, 19-20), ապա քննարկել, թե ինչո՞վ են այդ նկարի վրձնահարվածները նման սուրբ գրությունների ուսումնասիրությանը: Մեզ ի՞նչն է օգնել հաղթարահել սուրբ գրությունների կանոնավոր ուսումնասիրության խոչընդոտները, լինի դա անձնական, թե ընտանեկան ուսումնասիրության ժամանակ: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ի՞նչ է խոստանում նրանց, ովքեր «ջանասիրաբար աշխատում են վերափոխել [իրենց տները] և դարձնել ավետարանի ուսումնասիրության կենտրոն» (տես «Դառնալ օրինակելի Վերջին Օրերի Սրբեր», *Լիահոնա,* նոյեմբեր 2018): Անդամներին ժամանակ տրամադրեք, որպեսզի խորհեն և կիսվեն, թե ինչ են ոգեշնչվել անել այսօրվա սովորածի արդյունքում:

Ավետարանական զրույցներ տանը և եկեղեցում

Որպեսզի օգնեք անդամներին հասկանալ տանը և եկեղեցում անցկացվող ավետարանական զրույցների կարևորությունը, մի երեխայի ու ծնողի հրավիրեք երգել «Ցույց տուր ինձ, որ լույսով քայլեմ» երգը (*Հիմներ,* հ. 304): Ի՞նչ է մեզ սովորեցնում երեխայի և ծնողի զրույցը այս երգում ավետարանն ուսումնասիրելու վերաբերյալ: Հավանաբար որոշ անդամներ կցանկանան կիսվել իրենց մտքերով, թե ինչպես ավետարանական զրույցները դարձնել ընտանեկան կյանքի բնական և կանոնավոր մաս: Հետևյալ սուրբ գրությունները կարող են գաղափարներ տրամադրել. Երկրորդ Օրինաց 11.18-20, Ա Պետրոս 3.15, Մոսիա 18.9, Մորոնի 6.4-5, 9, Վարդապետություն և Ուխտեր 88.122: Ինչպե՞ս կարող են տանը և եկեղեցում անցկացրած մեր զրույցները մեզ ավելի մոտեցնել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

2019 թվականին բոլոր անդամներն ուսումնասիրելու են Նոր Կտակարանը տանը, Կիրակնօրյա դպրոցում և Երեխաների Միությունում: Քվորումի և Սփոփող Միության ժողովների ժամանակ ղեկավարները և ուսուցիչները պետք է հիշեցնեն անդամներին հաջորդ շաբաթվա սուրբ գրությունների օրակարգը Եկ, հետևիր ինձ. Անհատների և ընտանիքների համար Ծրագրում, որպեսզի նրանք կարողանան ուսումնասիրել տանը: Այդ պարզ հիշեցումը կարող է արվել գրավոր կամ բանավոր կամ երկուսը միասին:

Երեցների քվորումի և Սփոփող Միության ղեկավարները և ուսուցիչները կարող են խրախուսել այդ սուրբ գրությունների ուսումնասիրությունը, հնարավորություններ գտնելով ակնարկել Նոր Կտակարանի գաղափարները երեցների քվորումի և Սփոփող Միության ժողովներում: Օրինակ, երեցների քվորումի և Սփոփող Միության ղեկավարները և ուսուցիչները կարող են.

- Նկատել, թե ինչպես են սուրբ գրությունների իրենց ուսումնասիրության պատմությունները կամ վարդապետությունը վերաբերում երեցների քվորումի կամ Սփոփող Միության դասին: Ղեկավարները և ուսուցիչները կարող են կիսվել այդ գաղափարներով կիրակնօրյա ժողովի ժամանակ:
- Կիսվել անդամների հետ, թե ինչպես են Նոր Կտակարանի պատմությունները կամ վարդապետությունը վերաբերում երեցների քվորումի կամ Սփոփող Միության դասին:
- Կիսվել անդամների հետ դրական փորձառություններով, որոնք նրանք ունեցել են տանը Նոր Կտակարանն ուսումնասիրելիս և խրախուսել անդամներին կիսվել նաև իրենց փորձառություններով:

© ANNIE HENRIE NADER, ԲԱԶՄԱՑՈՒՄՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

«Մեր Տերը և Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, Իր Քավության անզուգական պարգևի շնորհիվ ոչ միայն փրկում է մեզ մահից և ապաշխարության միջոցով մեզ ներում առաջարկում մեր մեղքերի համար, այլև պատրաստ է փրկել մեզ մեր վիրավոր հոգու ցավերից ու վերքերից:

Փրկիչը մեր Բարի Սամարացին է, ով ուղարկված է «սրտով կոտրուածներին բժշկելու» [Ղուկաս 4.18]: Նա մոտենում է մեզ այն ժամանակ, երբ մյուսներն անցնում են մեր կողքով: Նա կարեկցանքով բուժիչ բալասան է քսում ու փաթաթում է մեր վերքերը: Նա տանում է մեզ ձեռքերի վրա: Նա հոգ է տանում մեր մասին: Նա հրավիրում է մեզ. «Եկեք ինձ մոտ և . . . ես կբժշկեմ [ձեզ]» [3 Նեփի 18.32]:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսեն, «Խոցվածը», 84-85:

Բարի Սամարացին,
Էննի Հենրի Նեյդեր

«Տնակենտրոն, Եկեղեցու կողմից աջակցվող ուսումնական նոր ծրագիրը ներուժ ունի բացահայտելու ընտանիքների զորությունը, երբ յուրաքանչյուր ընտանիք բարեխղճորեն և ուշադիր հետևի ու իր տունը դարձնի հավատքի սրբավայր»,- ասել է Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը Եկեղեցու 188-րդ Կիսամյա գերագույն համաժողովի փակման նիստին: «Ես խոստանում եմ, որ եթե դուք ջանասիրաբար ձգտեք ձեր տունը վերափոխել ավետարանի ուսուցման կենտրոնի, ժամանակի ընթացքում *ձեր* Հանգստության օրերը կդառնան բերկրանք: *Ձեր* երեխաները ոգևորված կսովորեն և կապրեն Փրկիչի ուսմունքներով, իսկ հակառակորդի ազդեցությունը *ձեր* կյանքի և *ձեր* տան վրա կնվազի: Փոփոխությունները ձեր ընտանիքներում կլինեն նշանակալից և շարունակական»:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 021485532014